Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 16-ի N 353 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2011-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՐՏԱՇԱՏ 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ	4
	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	6
1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
2.	ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	13
3.	ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ	16
4.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	31
4.1.	Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն	31
4.2.	Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	39
4.3.	ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն	40
4.4.	Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները	43
4.5.	ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնախնդիրները	44
4.6..	Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման առաջնահերթությունները	46
5.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	49
5.1.	Կրթություն	49
5.1.1.	Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն	49
5.1.2.	Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	60
5.2.	Մշակույթ	65
5.2.1	Մշակույթի ոլորտի իրավիճակի վերլուծություն	65
5.2.2.	Մշակույթի ոլորտի ռազմավարություն	75
5.3.	Սպորտ և երիտասարդության հարցեր	77
5.3.1.	Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի իրավիճակի վերլուծություն	77
5.3.2.	Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի ռազմավարություն	82
5.4.	Առողջապահություն	83
5.4.1.	Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն.	83
5.4.2	Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	94
5.5.	Սոցիալական պաշտպանություն	101
5.5.1.	Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն	101
5.5.2	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	133
5.6.	Երեխաների իրավունքների պաշտպանություն	138

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ **140**

6.1. Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծությունը 140

6.2 Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը 153

7. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ **156**

7.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն 156

7.2. Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը 163

8. ՋՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ **165**

8.1. Ջրոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը 165

8.2. Ջրոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը 168

9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ **169**

9.1. Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում 169

9.2. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում 170

9.3. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում 172

9.4 Մշակութային օբյեկտների հիմնանորոգում 173

9.5 Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում 173

9.6. Մարզական օբյեկտների հիմնանորոգում 173

9.7 Բազմաբնակարան բնակելի շենքեր և բնակելի տներ, Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ 174

9.8. Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում 175

9.9. Հրշեջ փրկարարական ջոկատների կառույցների հիմնանորոգում 176

10. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ **176**

10.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն 176

10.2. Ճանապարհաշինություն 176

10.3 Ջրամատակարարում 180

10.4. Գազամատակարարում 184

11. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ **187**

11.1. Տարածքային կառավարում 187

11.1.1 Վարչատարածքային բաժանում 187

11.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ 188

11.1.3 Մարզպետարանի կառավարում 189

11.1.4 Քաղաքացիական ծառայություն 192

11.1.5 Էլեկտրոնային կառավարում 192

11.2. Տեղական ինքնակառավարում 194

11.2.1 Համայնքային խնդիրներ 194

11.2.2 Համայնքային ծառայություն 194

11.2.3 Տեխնիկական ապահովվածություն 201

11.2.4 Համայնքների զարգացում 201

11.3.	Քաղաքացիական հասարակություն	204
12.	**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**206**
12.1	Մարզի առավել վտանգավոր տարածքներ	206
12.2	Բնական աղետներ	208
12.3	Տեխնածին աղետներ	208
12.4	Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում	209
13.	**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**	**209**
14.	**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2011-2014թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**	**215**
15.	**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**	**217**

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ

Արարատի մարզը իր զարգացած գյուղատնտեսությամբ, արդյունաբերությամբ և իր տնտեսական ներուժով Հայաստանի Հանրապետության կարևորագույն մարզերից է: Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող Արարատի մարզի զարգացումը միշտ էլ կարևորվել է ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության կողմից:

Արարատի մարզի տնտեսական զարգացման հեռանկարները, Արարատի մարզի տարբեր համայնքներում ՀՀ նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ բարձրացված հիմնախնդիրները և նրանց լուծման ուղիները ներառվել են ՀՀ նախագահի 2008թ. հուլիսի 30-ի կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում: Դրանց զգալի մասն իրենց լուծումը ստացել են, իսկ չլուծված խնդիրները ընդգրկվել են Արարատի մարզի զարգացման սույն ծրագրում:

Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրին: Արարատի մարզի զարգացման ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի համաձայն:

Հավատարիմ մնալով՝ «Հայացքով դեպի գյուղական համայնքներ» կարգախոսին՝ ծրագրի իրականացումը կնպաստի մարզի 93 գյուղական

համայնքների մարտահրավերներին դիմակայելուն և նրանց կողմից առաջնահերթության սկզբունքներով ներկայացրած հիմնախնդիրների լուծմանը:

Արարատի մարզի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող սույն ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է «2008-2012թթ. Արարատի մարզի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի» հիմնական ուղղությունները, ինչպես նաև մարզային զարգացման հանձնաժողովում, ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկված մասնագետների հարուստ փորձը:

Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործում զգալի աջակցություն է ցուցաբերել ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ինչպես նաև համագործակցությունը ճյուղային նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման այլ մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ:

Մասնակցային գործընթացի ապահովման համատեքստում, ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Մարզի զարգացման ծրագիրը Արարատի մարզում ներդրումներ կատարելու առաջարկ է նաև՝ ուղղված միջազգային, դոնոր կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Արարատի մարզպետարանն ակնկալում է, որ ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկությունները հետաքրքրություն կներկայացնեն նշված շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների համար և պատրաստ է բոլոր ներդրողների հետ փոխշահավետ համագործակցության՝ հանուն Արարատի մարզի կայուն զարգացման:

Համոզված եմ, որ այս և նմանատիպ այլ ծրագրերի հետևողական և արդյունավետ իրականացման շնորհիվ կապահովվի Արարատի մարզի տնտեսության զարգացման հզոր և կայուն առաջընթաց:

Ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, Արարատի մարզի խորհրդի անդամներին, Մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված ոլորտային աշխատանքային խմբերին, աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի անունից հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

ՀՀ Արարատի մարզպետ՝ Է.Բարսեղյան

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՀՏԶԾ	«Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր»
ՀՍՆՀ	«Հայաստանի սոցիալական ներդրումների » հիմնադրամ
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԱԿ ՀՊԾ	ՄԱԿ-ի համաշխարհայն պարենի ծրագիր
ՄԱԶՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԳ	Մարզային զարգացման գործակալություն
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՄՈՒՀ	Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄՎ	Մոնիտորինգ և վերլուծություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ	Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՄԶԾ	Մարզային զարգացման ծրագիր
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏՀԻ	Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ
ՏՀՏ	Տարածքային հարկային տեսչություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատվեց Կայուն զարգացման ծրագիրը: Ծրագրի հիմնական ռազմավարական գերակայությունները ներառում են կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովումը, նպատակային սոցիալական քաղաքականությունը և պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը: ԿԶԾ-ը ըստ էության հանդիսանում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր և այստեղ կարևորվում է, ոչ միայն աղքատության հաղթահարումը, այլև երկրում տևական տնտեսական աճի քաղաքականության ապահովումը:

2. ԿԶԾ-ում ուշադրության են արժանացել նաև Հայաստանում տնտեսական աճի արագացմանը զուգընթաց խորացող տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման խնդիրները: Տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա չվերահսկվող աճը խիստ անցանկալի է, քանի որ անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը:

3. ԿԶԾ-ի տարածքային զարգացումն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի էականորեն արագացնել մարզերի տնտեսական զարգացման տեմպերը, դրանք մոտեցնելով Երևանի զարգացման տեմպերին, իսկ 2015 թվականից սկսած այնպես անել, որ հասնեն և անցնեն Երևանի տնտեսական աճի տեմպերին: Նախատեսվում է նաև մարզերի զարգացման տեմպերի մոտեցում, որի արդյունքում կմեղմվեն նաև կենսամակարդակի միջմարզային տարբերությունները: Այդ տեմպերն ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնց մեջ էական դեր կխաղա ինչպես պետական, այնպես էլ, հատկապես մասնավոր ներդրումների վերաուղղումը Երևանից դեպի մարզեր, ինչպես նաև դրանց միջմարզային բաշխման հավասարեցման խրախուսումը: Համաձայն ԿԶԾ-ում ներկայացված փորձագիտական գնահատումների՝ 2000-2006թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը Երևանում կազմել է 16.8%՝ նույն ժամանակահատվածում երկրում արձանագրված միջին տարեկան 11.5% տնտեսական աճի պարագայում: Ըստ մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների վերլուծությունները վկայում են, որ տնտեսական զարգացման մակարդակների տարբերության խորացման միտումը Երևանի և մարզերի միջև բնորոշ է եղել գրեթե բոլոր մարզերին: Ինչ վերաբերում է Արարատի մարզին, ապա մարզի զարգացման աճի տեմպերը հետ չեն մնում միջին հանրապետական ցուցանիշներից: Չնայած Արարատի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և

արդյունաբերությամբ և հանդիսանալով Հայաստանի Հանրապետության խոշոր տնտեսական միավորներից մեկը, ունի սակայն սոցիալ-տնտեսական զարգացման լուրջ հիմնախնդիրներ: Այս առումով Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման սույն ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովումն է:

4. Արարատի ՄԶԾ-ը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի: Ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է մարզպետարանի կողմից մշակված 2004թ. «Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների» և 2008թ. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2008-2012թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» կազմման ժամանակ Արարատի մարզպետարանի կուտակած փորձը:

5. ՄԶԾ առանցքը մարզի բոլոր համայնքների հիմնախնդիրներն են, որոնց լուծման գործընթացը մշտապես գտնվել է Արարատի մարզպետի ուշադրության կենտրոնում: Մարզպետի դերը զգալի է եղել նաև մարզի զարգացման խնդիրների լուծման մեջ մասնակցության գործընթացի ապահովման ուղղությամբ: 2008-2009 թվականների ընթացքում Արարատի մարզպետը մարզի քաղաքային և գյուղական բոլոր համայնքներում անձամբ հանդիպել է բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ, լսել նրանց առաջարկությունները, դիտողությունները, դրանք հանձնարարականների տեսքով ներկայացրել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և պահանջել մշակել հիմնախնդիրների լուծման ծրագրեր: Բացի այդ, մարզում պարբերաբար կազմակերպվել են մարզպետարանի աշխատանքային խմբերի հանդիպումներ համայնքների բնակչության հետ, որոնց հիմնական նպատակն էր մարզի բնակչության իրական սոցիալ-տնտեսական վիճակի բացահայտումը, բնակիչներին մտահոգող և նրանց կողմից առաջ քաշված կարևորագույն հարցերի քննարկումը, հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև մարզի զարգացման խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը: Արդյունքում մարզի հիմնախնդիրները մարզպետի կողմից ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը և եղել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ղեկավարության ուշադրության կենտրոնում: Այսպես՝ ՀՀ Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում ներառվել են նաև Արարատի մարզի մի շարք համայնքներում Նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ արծարծված հիմնախնդիրները, որոնք նույնպես ներկայացված են ՄԶԾ-ում:

6. Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը: Ոլորտային խնդիրները քննարկվել են ճյուղային նախարարություններում, հանրապետական գործադիր և պետական կառավարման մարմիններում:

7. Մարզի զարգացման ծրագրի կազմման աշխատանքներն ընթացել են հետևյալ հերթականությամբ՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2009թ.

ապրիլի 20-ի N 46 որոշմամբ ստեղծվել են Արարատի մարզային զարգացման հանձնաժողովը, մարզի զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը, ոլորտային աշխատանքային խմբերը:

8. Նշված ինստիտուցիոնալ կառույցները հետևյալներն են`

1) Արարատի մարզային զարգացման հանձնաժողով /կազմը 18 հոգի/ ,

2)Արարատի ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ /կազմը 10 հոգի/,

3) Արարատի ՄԶԾ մասնավոր հատվածի ՓՄՁ զարգացման ոլորտային աշխատանքային խումբ /կազմը` 7 հոգի/,
4) Արարատի ՄԶԾ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման աշխատանքային խումբ /կազմը` 10 - հոգի/,
5) Արարատի ՄԶԾ գյուղատնտեսության, բնապահպանության և գյուղական համայնքների զարգացման աշխատանքային խումբ /կազմը` 8 հոգի/,
6) Արարատի ՄԶԾ սոցիալական հատվածի և առողջապահության զարգացման աշխատանքային խումբ /կազմը` 12 հոգի/,
7) Արարատի ՄԶԾ կրթության, մշակույթի և սպորտի զարգացման աշխատանքային խումբ /կազմը` 9 հոգի/,
8) Արարատի ՄԶԾ-ի քաղաքաշինության զարգացման աշխատանքային խումբ /կազմը` 12 հոգի/:

9. Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարությունները քննարկվել են Մարզային զարգացման հանձնաժողովի կողմից, ընդգրկվել են ծրագրում և ծրագրի նախնական տարբերակը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի միջոցով ներկայացվել է ճյուղային նախարարություններին ու պետական կառավարման այլ մարմիններին: Ծրագրի նախագծի նախնական տարբերակը քննարկման է դրվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության և հասարակայնության հետ: Նախարարություններից, պետական կառավարման մարմիններից և հասարակայնությունից ստացված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա ծրագրի նախագիծը մարզպետարանում լրամշակվել է: ՄԶԾ-ի վերջնական տարբերակը հաստատվել է ՄԶՀ նախագահի` ՀՀ Արարատի մարզպետի կողմից և ներկայացվել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարին: Այս քննարկումներից և լրամշակումներից հետո ՄԶԾ վերջնական տարբերակը հաստատման է ներկայացվել ՀՀ կառավարություն:

10. Արարատի մարզի զարգացման ծրագրի կառուցվածքը: Մարզի ընդհանուր համառոտ բնութագրից հետո, 3-րդ գլխում տրվում է աղքատության գնահատականը, վերլուծվում են դրա հիմնական պատճառները, վերջին տարիների միտումները և նախանշվում են այն ոլորտները, որտեղ որոշ ներդրումային ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա առավել նպատակային և արդյունավետ ձևով կրճատել աղքատության մակարդակը:

11. Մարզի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղղությունը գործարար ակտիվության բարձրացումն է, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրությանը աջակցության միջոցով (Գլուխ 4)։ Այս գլխում վերլուծվում է մարզի տնտեսության ներկայիս իրավիճակը, փոքր ու միջին ձեռնարկատիրության և մասնավոր հատվածի իրավիճակը, զարգացման նպատակները, հնարավորությունները, առաջնահերթությունները, ոլորտի զարգացման համար առաջարկվող միջոցառումները։

12. Մարզի սոցիալական ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրները և զարգացման համար առաջարկվող միջոցառումները (Գլուխ 5) նպատակաուղղված են այդ ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը։ Այս ուղղությամբ վերջին տարիներին բավականաչափ ծրագրեր են իրագործվել, սակայն ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրագործելու համար զգացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման, կառավարության ու դոնորների առավել համակարգված գործունեության անհրաժեշտություն։

13. Մարզի գյուղատնտեսության իրավիճակը և ոլորտի ռազմավարությունը վերլուծված է գլուխ 6-ում։ Այս ոլորտում կարևոր նպատակ է ֆերմերների եկամուտների ավելացումը և որպես արդյունք՝ գյուղական աղքատության կրճատումը, հիվանդությունների կանխարգելումը ,գյուղական ենթակառուցվածքների զարգացումը, ֆերմերներին մատուցվող ուսուցողական-խորհրդատվական ծառայությունների բարելավումը, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության աճի ապահովումը։

14. 7-րդ գլխում ներկայացված է բնապահպանությունը, որտեղ առաջնային խնդիր է համարվում Արարատի մարզում արդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների խորը, այլընտրանքային վերլուծությունը, դրանց համադրումը, միասնական արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական հզորացմանը։ Այստեղ ներկայացված են բնապահպանական իրավիճակը, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ այլընտրանքային և էկոլոգիապես անվտանգ արդյունաբերության, բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացումը, արոտավայրերի վիճակի գնահատումը և նրանց բարելավման միջոցառումների մշակումը և այլն։

15. 8-րդ գլխում ներկայացված է քաղաքաշինությունը, որտեղ ընդգրկված են մարզի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման գործի բարելավման և այլ քաղաքաշինական խնդիրներ։

16. 9-րդ գլխում ներկայացված է Արարատի մարզում դեռևս թույլ զարգացած, սակայն զարգացման ներուժ և հեռանկար ունեցող զբոսաշրջության ոլորտը։ Այստեղ

կարևորվել է մարզի զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Նշված է, որ արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և ոլորտը կարող է առաջնային տեղ զբաղեցնել արդյունաբերության և գյուղատնտեսության կողքին:

17.10-րդ գլուխը նվիրված է մարզային և համայնքային ենթակառուցվածքներին: Այստեղ կարևորվել են մարզի և համայնքների ճանապարհային, ջրամատակարարման և գազամատակարարման ցանցերի զարգացումը, մարզի համայնքների գազիֆիկացման գործընթացի ավելի արագ շարունակումը և այլն:

18. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն ու քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված խնդիրները ներկայացված են 11-րդ գլխում: Այստեղ կարևորվել է տարածքային կառավարման և ՏԻ բնագավառի օրենսդրության կատարելագործումը, համայնքների, ինչպես նաև մարզպետարանի կարողությունների հզորացումը, քաղաքացիական հասարակության հետ հարաբերություններում մասնակցային գործընթացի ապահովումը՝ մարզային և համայնքային մակարդակի որոշումների ընդունման, ծրագրերի կազման և իրագործման գործընթացում:

19. 13-րդ գլուխը նվիրված է ՄԶԾ իրագործման ընթացքի մոնիտորինգին և գնահատմանը: Այստեղ հիմնավորված է այս գործառույթների անհրաժեշտությունը՝ զարգացման ծրագրի արդյունավետ կառավարման, հետագայում նրանում անհրաժեշտ շտկումներ և փոփոխություններ անելու առումով: Ծրագրի արդյունավետ իրագործման երաշխիքը այս գործառույթների գծով մարզպետարանի կարողությունների բարձրացումն է, ինչի ուղղությամբ նախատեսված են որոշակի միջոցառումներ: Այս գլխում առանձին աղյուսակով ներկայացված են ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, դրանց իրագործումից ակնկալվող արդյունքը և արդյունքի մոնիտորինգի ցուցանիշները, ինչպես նաև մարզի տնտեսական զարգացումը և աղքատությունը բնութագրող համալիր ցուցանիշները:

20. Ծրագրի բոլոր հիմնական բաժինները շարադրված են հետևյալ տրամաբանական կառուցվածքով.

1) Ոլորտի ներկա իրավիճակի վերլուծությունը
2) Ոլորտի զարգացման հիմնախնդիրների բացահայտումը
3) Ծրագրի նպատակները և ռազմավարությունը
4) Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ միջոցառումները:

21. Յուրաքանչյուր ոլորտի զարգացման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է 1-րդ գլխում: Ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 143 մլրդ 721 մլն 169.2 հազ.դրամ:

22. Մարզի զարգացման ծրագրի գաղափարախոսությունը, ռազմավարությունը համահունչ են ԿԶԾ-ին, Հազարամյակի զարգացման նպատակներին և թիրախներին:

23. Ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տնական և կայուն քաղաքականության իրականացման ապահովման շնորհիվ մարզի կայուն զարգացումն է: Ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները՝

1)Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում.

2)Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում

3) Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

4)Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում

5)Ազգաբնակչության բնակարանային պայմանների բարելավում

6)Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում

7)Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում

8)Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում

9)Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում

10)Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում

11)Մարզպետարանի կարողությունների ուժեղացում

12)Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում

13)Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում

14) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվությունների ներկայացման սկզբունքների արմատավորում

15)Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում

16) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

2. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

24. Արարատի մարզը կազմավորվել է 1995թ. դեկտեմբերի 4-ին:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի տարածքը - 2096 քառ. կմ

Գյուղատնտեսական հողատարածքը	–	156760 հա
այդ թվում՝ վարելահողեր	–	2690053 հա
Մարզկենտրոնը	–	Արտաշատ քաղաք
Քաղաքային համայնքներ	–	4
Գյուղական համայնքներ	–	93
Բնակչությունը	–	277.600 հազ. մարդ
(մշտական, 2009թ. հունվարի 1-ի դրությամբ)		
այդ թվում՝		
քաղաքային	–	81.700 հազ. մարդ (29.4 %)
գյուղական	–	195.900 հազ. մարդ (70.6 %)

25. Արարատի մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում: Մարզը հյուսիսից սահմանակից է մայրաքաղաքին, Արմավիրի և Կոտայքի մարզերին, արևելքից՝ Գեղարքունիքի մարզին, հարավ - արևմուտքից՝ Վայոց ձորի մարզին և հարավից պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:

26. Արարատի մարզի տարածքը բաժանված է հավասար մասերի՝ լեռնային և հարթավայրային: Արարատյան դաշտավայրը գրավում է մարզի տարածքի 40%-ը:

Մարզն ընդգրկում է Ազատ և Վեդի գետի ջրավազանը, Գեղամա լեռնաշղթայի հարավ արևմտյան լանջերը՝ մինչև կատարային գոտին: Մարզի ամենաբարձր կետը Սպիտակասարի գագաթն է՝ 3555մ բարձրությամբ, որը հավերժ պատված է ձյունով:

27. Մարզում են սկիզբ առնում Ազատ և Վեդի գետերը: Մարզի տարածքով են անցնում Արաքս և Հրազդան գետերը:

28. Արարատի մարզը ունի չոր և խիստ ցամաքային կլիմա: Ձմռանը համեմատաբար ցուրտ է, հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10^0 C-ից 20^0 C ցուրտ, իսկ ամռանը շոգ է լինում, հուլիս ամսին օդի միջին ջերմաստիճանը 28^0 C-ից 33^0 C է (առավելագույնը 41^0C) :

29. Մարզի ընդհանուր տարածքը՝ 2096 քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7 %-ը, բնակչությունը՝ 277.6 հազ. մարդ կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության 8.2 %-ը:

30. Գյուղական բնակչությունը՝ 210.3 հազ. մարդ՝ ամբողջ բնակչության 70.6%, քաղաքայինը՝ 80.6 հազ. մարդ, 29.4%: Բնակչության խտությունը՝ 141 մարդ՝ 1 քկմ-ի վրա: Տնտեսությունների թիվը՝ 58228:

31. Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան - Երասխ –Լեռնային Ղարաբաղ ավտոմայրուղին, և Երևան - Երասխ երկաթուղին:

32. Մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, 6 քոլեջ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ «Արտաշատ» համալսարանը, 55 առողջապահական հիմնարկներ՝ 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 49 բուժամբուլատորիա, մշակույթի օջախներ, Արտաշատ քաղաքում Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Պարույր Սևակի և Սպարապետ Վ.Սարգսյանի տուն թանգարանները, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը: Մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան Հայոց գավառի մի մասը: Այստեղ են գտնվում հին Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքները:

33. Ուշագրավ է Խոր Վիրապ պատմաճարտարապետական հուշարձանը, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվում հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի հետ:

34. Խոր Վիրապ պատմաճարտարապետական՝ XIII դ. վանք-ամրոց համալիրը, եղել է հայոց ուխտատեղիներից մեկը և հանդիսացել է դպրության կենտրոն: Ունեցել է վարպետատուն, ուսուցչապետեր են եղել Վարդան Այգեկցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին: Հնում այստեղ է գտնվել պատմական Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը:

35. Մարզի տարածքում գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին: «Խոսրովի անտառ» պետական արգելոցը ձևավորվել է 1958թ-ին: Այն ունի 29.0 հազ. հա տարածք՝ 1800 տեսակ բարձրակարգ բուսատեսակներով, ձկների՝ 7, փափկամորթների՝ 60, սողունների՝ 30, թռչունների՝ 130, կաթնասունների 40 տեսակներով: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքի 18 %-ը անտառածածկ է:

36. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ:

37. Մարզի գյուղատնտեսության տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ծավալում կազմում է 16.6 %:

38. Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ծավալի 8.0 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու- կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, «Արարատ – ցեմենտ», «Ոսկու կորզման ֆաբրիկան», Արտաշատի, Արարատի պահածոների, «Մասիս տոբակո», «Ինտերնեշնլ Մասիս տոբակո» գործարանները:

39. Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

40. Մարզը ունի 4 քաղաքային /Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս/, 93 գյուղական համայնք:

41*. Արտաշատ քաղաքը (25.3հազ. բնակիչ)* մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10կմ հյուսիս արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածք:

42. Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքներ), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը՝ կղմինդրի, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

43*. Արարատ քաղաքը (20.7 հազ. բնակիչ)* գտնվում է Երևանից 47կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերություն է, որի մեջ գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը՝ ցեմենտի, կրի և ազբոցեմենտային իրերի արտադրությունը:

44*. Վեդի քաղաքը (13.5 հազ. բնակիչ)* գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերություն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում

բնական քարերից երեսապատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասսաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

45*. Մասիս քաղաքը (22.2 հազ. բնակիչ)* գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերություն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթից և ստվարաթղթից արտադրատեսակների արտադրություն և ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

46. Հայաստանի Հանրապետության առջև ինչպես ցանկացած նմանատիպ զարգացող պետության, ծառացած է երրորդ հազարամյակի կարևորագույն և հրատապ խնդրի լուծումը՝ աղքատության վերացումը: Այդ իսկ պատճառով դեռևս 2003թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» կազմումը և իրականացումը:

47. Հայաստանի Հանրապետության բնակչության բարեկեցությունը, կենսամակարդակի կայուն աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը մնում են Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության համար գերակա և հրատապ ուղղություններ, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ ընդունված «Կայուն զարգացման ծրագրում»:

48. Աղքատության վերացման հիմնական ուղղությունները տեղ են գտել նաև, որպես գլոբալ նպատակներ՝ «Հազարամյակի զարգացման նպատակներ» ծրագրում, որի գլխավոր նպատակն է մինչև 2015թ. վերացնել ծայրահեղ աղքատությունն ու սովը:

49. Աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային տարրական պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է՝.

1) եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ, անձնական գույքի անբավարարություն
2) կրթական ցածր ցենզ և առողջական խնդիրներ ունեցողներ
3) տարբեր ռիսկերի՝ /աշխատանքի կորուստ, հիվանդություն, բնական աղետներ/, նկատմամբ անվտանգության ցածր մակարդակ
4) ազդեցության /ձայնազրկություն/ ցածր մակարդակ

50. Աղքատության հակված են.

1) կանայք և կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները

2) բազմանդամ, շատ երեխաներից՝ հատկապես անչափահաս, բաղկացած տնային տնտեսությունները
3) միայն կենսաթոշակառուներից և հաշմանդամներից բաղկացած տնային տնտեսությունները
4) կրթություն, առողջություն չունեցողները
5) գործազուրկներն ու ցածր աշխատավարձով աշխատողները:

51. Աղքատությանը հակված են մայրաքաղաքից և քաղաքներից հեռու գտնվող, սահմանամերձ, ծովի մակերևույթից բարձր, մինչև 500 բնակիչ ունեցող, անբարենպաստ ժողովրդագրական /երեխաներ, ծերեր/ կազմով, թերզարգացած ենթակառուցվածքներով համայնքները:

52. Ելնելով աղքատության հասկացության սահմանումից, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի աղքատության գնահատումը կատարվել է երեք հիմնական ուղղություններով՝ մարզի բնակչության կենսաբանական, սոցիալական և հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման իրավիճակի վերլուծության միջոցով:

53. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տնային տնտեսությունների կենսամակարդակի վերաբերյալ իրականացված հետազոտությունների արդյունքների համաձայն աղքատության ցուցանիշներով Արարատի մարզը միջին աղքատության շրջանում է (աղյուսակ 3.1.): Ուսումնասիրու-թյան տվյալների վերլուծությամբ փաստվում է, որ աղքատ բնակչության թիվը՝ 24.9 բարձր է հանրապետական միջինից՝ 23.5: Արարատի մարզում աղքատության խորությունը՝ 3.6 զիջում է միայն Լոռու՝ 4.6, Կոտայքի՝ 4.5 և Շիրակի՝ 4.2 մարզերին, իսկ հանրապետական միջինը՝ 3.1 է: Նույնպիսի համեմատության դեպքում կարելի է արձանագրել, որ աղքատության սրացումը Արարատի մարզում 0.9 է, որը գերազանցում է հանրապետական միջինը՝ 0.8 և զիջում է միայն Շիրակի՝ 1.1 և Կոտայքի՝ 1.1 մարզերին:

Աղյուսակ 3.1. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևան, 2008թ..

Մարզեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ-ների մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ	Աղքատությ ան խորու-թյուն	Աղքատու-թյան սրացում
ք. Երևան	3.2	19.7	28.4	33.9	2.6	0.7
Արագածոտն	1.5	20.7	3.6	4.1	1.5	0.3
Արարատ	2.8	24.9	8.6	8.2	3.6	0.9
Արմավիր	2.6	26.7	9.7	8.6	3.2	0.8
Գեղարքունիք	1.2	24.8	7.2	6.8	1.4	0.2
Լոռի	4.1	25.1	10.1	9.5	4.6	1.4
Կոտայք	3.2	29.5	12.3	9.7	4.5	1.1
Շիրակ	6.0	30.6	11.7	9.0	4.2	1.1
Սյունիք	1.7	19.6	3.6	4.4	1.8	0.4
Վայոց Ձոր	1.1	16.6	1.4	1.9	2.0	0.5
Տավուշ	2.6	19.8	3.4	4.1	1.9	0.4
Ընդամենը՝	3.1	23.5	100	100	3.1	0.8

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը », 2009թ., էջ 35

54. Աղքատության գործոնների վերլուծությունը արժեքավորելու նպատակով ներկայացվում է տեղական ինքնակառավարման և պետական կառավարման՝ տվյալ դեպքում ԱՎԾ-ի, միացյալ տեսակետը:

55. ԱՎԾ-ի 1998-2008թթ տնային տնտեսությունների ուսումնասիրության տվյալներով Արարատի մարզի և հանրապետության աղքատության համեմատությունն ունի հետևյալ միտումը:

56. Եթե 1998թ մարզի աղքատությունը ցածր է հանրապետական միջինից



3.8%-ով, ապա 2008թ՝ բարձր է 0.4%-ով:

57. Աղքատության երևույթի գլոբալ վերլուծությունները վկայում են, որ աշխարհի աղքատ բնակչությունը գլխավորապես գյուղաբնակ է: Աղքատների շուրջ 75%-ը գյուղական բնակչությունն է, ըստ որում գյուղական աղքատության կրճատումը համաշխարհային մակարդակով համարվում է հիմնախնդրային՝ կապված գյուղում տնտեսվարման բարձր ռիսկայնության, եկամուտների ու զբաղվածության սեզոնային բնույթի, ֆիզիկական ու սոցիալական ենթակառուցվածքների համեմատաբար ցածր հասանելիության և այլ առանձնահատկությունների հետ:

58. Ցանկացած երկրի մարդկային զարգացման մակարդակը գնահատվում է իր փոքր և միջին քաղաքների բարգավաճմամբ և դրանցում ապրող բնակչության բարեկեցությամբ: Այդ բացատրությամբ էլ քաղաքների աղքատությունը 2003թ-ից 1.2 անգամ պակասեց գյուղականից: Դրան նպաստեց նաև քաղաքաբնակներին իրենց բնակարանների անվճար սեփականաշնորհումը: Այսպիսով կարելի է ասել , որ տեղի ունեցած տնտեսական աճը գյուղական բնակչության աղքատության կրճատման գործոն չի հանդիսացել:

Աղյուսակ 3.2. Արարատի մարզում մշտական բնակչության բաշխվածությունը՝ ըստ տարածաշրջանների 2009թ. դրությամբ

	ք. Արարատ	Արտաշատ	Մասիս	Վեդի	Արարատի

				մարզ
Բնակչության թիվը	20.8	103.4	79.5	74.0 277.7
Տոկոսային ցուցանիշը (ընդհանուր թվից)	7.5	37.2	28.6	26.7 100

59. Մարզի եկամուտների հիմնական մասը առաջանում է գյուղատնտեսական գործունեությունից: Չնայած մարզի գյուղացիական տնտեսությունների 96.1%-ը ունի սեփական հող, 92.2%-ը՝ սեփական առանձնատուն և մարզի գյուղատնտեսական ուղղվածությանը՝ գյուղացիական տնտեսությունները ետ են մնում քաղաքային տնտեսություններից և՛ եկամտային, և՛ մարդկային աղքատության առումով: Վերը նշված հիմնական կապիտալների առկայությունը չի նպաստում աղքատության կրճատմանը:

60. Մարզի գյուղերը խիստ տարբերակված են աշխարհագրական դիրքով, կլիմայական պայմաններով, տարբեր կադաստրային գնահատականներ ունեցող հողերով, մի քանիսում ոռոգման ջրի բացակայությամբ, որոնք էլ հանգեցնում են նյութական կամ եկամտային աղքատության հակվածության տարբեր մակարդակների և հանրային ծառայությունների ոչ հավասար մատչելիության: Այդ տեսանկյունով բաժանվում են լեռնային՝ ծովի մակերևույթից 1200մ-ից բարձր գտնվող գյուղեր և հարթավայրային: Վերջիններս իրարից տարբերվում են իրենց սահմանային, մայրաքաղաքին, հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհներին մոտ գտնվելու աշխարհագրական դիրքով: Լեռնային գյուղերում միջհամայնքային վատ վիճակում գտնվող ճանապարհները հիմնականում փակվում են համեմատաբար երկար տևող ձմռանը: Այս տարածքում տեղեկատվության աղբյուրները սուղ են, դժվար հասանելի, բնակիչները մեկ-երկու հեռուստաալիք դիտելու հնարավորություն ունեն, իսկ զանգվածային լրատվական միջոցներից միայն մարզային թերթ են ստանում, այն էլ համայնքապետարանները: Բնակչությունը զբաղված է միայն անասնապահությամբ: Սեփական արտադրանքի իրացման շուկան դժվար հասանելի է: Այդ տարածքում դեռևս տարածված է տնտեսության վարման բնամթերային կացութաձևը:Բարեբախտաբար մարզի գյուղերի 8.6%-ն է լեռնային, ցրված փոքր գյուղեր, որտեղ ապրում են գյուղական բնակչության 2.2%-ը:

61. Բոլորի գյուղերի համար, անկախ դիրքից, տեղից, բնութագրական է կոյուղագծեր չունենալը (աշխատող գործարանների կոյուղագծերին մոտ գտնվող որոշ տնային տնտեսություններ օգտվում են այդ ծառայությունից, որը մարզում տոկոս չի կազմում) և մշակույթի տների վատ շենքային պայմանները, որն էլ հիմնականում դրանց չգործելու պատճառ է հանդիսանում /մշակույթի տների վերանորոգումը մտել է հազարամյակի նպատակները իրականացնելու համար մարզից ներկայացված առաջարկությունների մեջ/:

62. Ընդհանրապես ՀՀ Արարատի մարզն ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները բազմաճյուղ տնտեսություն ստեղծելու համար: Հանրապետության

համախառն արտադրանքի ծավալում մեծ է Արարատի մարզի թե գյուղատնտեսական և թե արդյունաբերական ծավալների ցուցանիշները:

63. 2008 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 8.0%-ը բաժին է ընկել Արարատի մարզի արդյունաբերական կազմակերպություններին: 2008թ-ին 2006թ.-ի նկատմամբ 0.9 %-ով աճել է մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ընդհանուր հանրապետական ծավալում:

64. Մարզի արդյունաբերության ընդգծված առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է, որը ապահովում է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 86.0 %-ը (ՀՀ ծավալում՝ 85.6%):

65. Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2008թ.-ին կազմել է 82.3 մլրդ. դրամ, որը կազմում է Հայաստանի Հանրապետության ծավալի 15.1 %-ը:

Աղյուսակ 3.3. Մարզի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի բաժինը հանրապետության համախառն արտադրանքի ծավալներում, 2005-2008թթ.

Մարզի տեսակարար կշիռը	2005թ.		2006թ		2007թ.		2008թ.	
	գումարը	%	գումարը	%	գումարը	%	գումարը	%
ՀՀ արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալը /մլն.դրամ/	651919.6	100	644862.5	100	716549.3	100	751251.3	100
ա. թ. Արարատի մարզ	46277.8	7.1	54015.8	8.4	52450.6	7.3	59431.7	8.0
ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը /մլրդ. դրամ/	493.0	100	555.9	100	633.9	100	637.3	100
ա. թ. Արարատի մարզ	64.7	15.2	72.3	15	82.4	15.2	82.3	15.1

66. Հարթավայրային գյուղերում հանրապետական ճանապարհներին և մայրաքաղաքին մոտ գտնվելը նպաստում է ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածության տարածմանը՝ գյուղատնտեսությունից զատ զբաղվում են փայտամշակությամբ, կահույքագործությամբ, դեղաբույսերի մթերումով, ձկնաբուծությամբ: Տեղեկատվությունը որպես արտադրական ենթակառուցվածք, շուտ է հասնում այստեղ և օգնում է պահանջարկին համապատասխան ապրանք արտադրել: Սակայն բացի դրական գործոններից մարզի տնտեսության վրա ազդում են նաև որոշ բացասական երևույթներ: Բացի տնտեսության վրա ազդող բնակլիմայական ռիսկայնությունից, մարզի գյուղատնտեսությունը ունի հիմնահարցեր կապված ոռոգման համակարգի, պարարտանյութերի, մեխանիզացիոն պարկի մաշվածության, կտրտված հողերի փոքր չափերի հետ և այլն:

67. Աղքատության թիրախներից են բնակչության խոցելի խմբերը, որոնք չունեն մնացած մարդկանց հետ հավասար մեկնարկային պայմաններ և սոցիալական պաշտպանվածության առավել կարիք ունեն: Երբ մարդու

աշխատանքի հնարավորությունները պակաս են, կարողությունները չեն վերարտադրվում, չի վերարտադրվում նաև նրա հասարակական դիրքը՝ մարդը դառնում է խոցելի: Թե որքանով և ինչ գործոններով է պայմանավորված մարզի խոցելիությունը, երևում է աղյուսակ 3.4-ում:

Աղյուսակ 3.4

	Որքանով է մարզի խոցելիությունը պայմանավորված հետևյալ գործոններով	փորձագետների միջին գնահատ.+	ՄՁԱՀ-ի տվյալները
1	Բազմանդամ ընտանիքների առկայություն	2.8	տ/տ-ի 33.6%
2	Բազմազավակ ընտանիքների առկայություն	2.9	տ/տ-ի 12.6%
3	Կին գլխավոր ունեցող ընտանիքների առկայություն (տղամարդկանց միգրացիա)	3.35	տ/տ-ի 24.8%
4	Նորաստեղծ երիտասարդ ընտանիքների առկայություն	4.4	---
5	Աշխատունակ կամ աշխատանքային տարիքի անդամ չունեցող ընտանիքների առկայություն	4.4	տնտ.միջին թիվ-4.7 աշխ.տարիք—3.0
6	Հաշմանդամ և/կամ երեխա հաշմանդամ ունեցող ընտանիքների առկայություն	3.05	բնակչության 6.2%
7	Փախստականների ու ներքին տեղահանվածների առկայություն	2.15	---
8	Ժամանակավոր շինություններում բնակվողների, տնազուրկների առկայություն	2.9	տնտ-ի 6.0%-ը իր սեփականությունում չի ապրում
9	Միայնակ տարեցների առկայություն	2.95	առկա բնակչ. 13.2%
10	Երիտասարդների միգրացիա	4.9	--
11	Սահմանամերձ տարածքների առկայություն	2.55	---
12	Բարձր լեռնային ու լեռնային տարածքների առկայություն	2.9	առկա բնակչ. 2.0%
13	Բնական աղետների, կամ դրանց վտանգի առկայություն	5.05	--
14	Էկոլոգիական աղետների, կամ դրանց վտանգի առկայություն	3.8	--
15	Ծնողազուրկ երեխաների առկայություն	2.9	--
16	Աշխատատեղերի պակաս	6.15	զբաղված է 16-ից բարձր տարիքի 53.9%
17	Տեղեկատվական մեկուսացվածություն (հեռախոս, հեռուստատեսություն, մամուլ, ինտերնետ, փոստ և այլն)	4.35	տնտ-ի 48%-ը ունի հեռախոս, 1.4%-ը՝ համակարգիչ, 85%-ը՝ հեռուստացույց, 2.4%-ը՝ բջջային
18	Ֆիզիկական մեկուսացվածություն (տրանսպորտային խնդիրներ, ճանապարհների բացակայություն կամ վատ վիճակ)	4	--
19	Ազգային փոքրամասնությունների առկայություն	1	բնակչ. 3.2%-ը եզդի, ասորի, այլ

20	Հողազրկություն	2.85	տնտ.-ի 2.9%
21	Ոռոգման հիմնախնդիրների առկայություն	4.8	ոռոգվում է հողերի 86.5%-ը
22	Կրթական ծառայությունների անմատչելիություն	4.35	դպրոցական տարիքի 13.0%-ի 18-22 տարեկանների՝ 40.9%-ի 23-29 տարեկանների՝ 42.0%-ի համար

68. Խոցելի են խմելու մաքուր ջրից զրկվածները (Մասիսի տարածաշրջանում, հիմնականում, որպես խմելու ջուր օգտագործում են արտեզյան ջուրը), մշտական բնական աղետների ենթարկվող տարածքների բնակիչները (գյուղական տնտեսությունների 46% -ի համար մշտապես վտանգավոր են բնական աղետների առկայությունը, որոնց համար գյուղատնտեսությունը որպես եկամտի հիմնական աղբյուր է), տրանսֆերտներով ապրողները, իսկ տնտեսությունների 6.3%-ի համար տրանսֆերտները հիմնական եկամուտ են , առողջության պահպանման խնդիր ունեցողները, օրենքների անկատարությունից և երկակիությունից տուժածները, այն գյուղերի բնակչությունը, որոնք զրկված են կոմունալ պայմաններից (այստեղ պետք է ավելացնել, որ Մասիս, Վեդի քաղաքներում կենտրոնացված ջրահեռացումից օգտվում են տնտեսությունների 80%-ը) ֆիլտրացիոն կայաններ չունեցող գործարանների հարևանությամբ ապրողները (Արարատ քաղաքի ցեմենտի, ոսկու գործարանները):

69. Խոցելիության վրա ազդող գործոններից է նաև բնակչության անբարենպաստ կազմը: Տարեցների տեսակարար կշիռը մարզում 2008թ. կազմել է 11.4% (քաղաքային բնակչության մեջ այն կազմել է 9.9%, գյուղական բնակչության մեջ՝ 14.8%): Ընդ որում 2005-2008թթ. ընկած ժամանակաշրջանում և հանրապետությունում և Արարատի մարզում, մոտ 3%-ով նվազել է մինչև 19 տարեկանների թիվը, հավասարապես թե քաղաքային և թե գյուղական համայնքներում:

Աղյուսակ 3.5. Կենսաթոշակառուների թիվը ՀՀ Արարատի մարզում

Հ/Հ	Տարածաշրջան	2006թ.	2007թ.	2008թ.
1	Արարատի մարզ	44005	41796	41769
	1000 բնակչի հաշվով	152.9	151.5	150.7
2	Ընդամենը ՀՀ	527496	522662	522060
	1000 բնակչի հաշվով	163.8	162.0	161.6

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2009թ. էջ 101

70. Աղյուսակից երևում է, որ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Արարատի մարզում կենսաթոշակառուների թիվը տարեցտարի նվազում է: Ընդ

որում ժողովրդագրության տեսակետից մարզում ամենացավոտ հարցերից է բնակչության «ծերացումը»:Մարզի բնակչության15.07%-ը կենսաթոշակառուները են:

71. Նպաստառուների թիվը 2008թ.-ի տվյալներով կազմում է մարզի բնակչության 3.4%-ը: Աղյուսակ 3.4-ի տվյալները վկայում են, որ 2006-2008 թվականներին նպաստառուների թիվը ընդհանուր բնակչության թվի համեմատ նվազել է 1.2%-ով, որը պայմանավորված է բնակչության կենսապայմանների բարելավման և սոցիալական աջակցության համակարգում տեղի ունեցող փոփոխություններով: Նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես ավելի մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում: Նպաստառու է քաղաքային տնային տնտեսությունների 7,3%-ը, գյուղական տնային տնտեսությունների՝ ընդամենը 5.9%-ը:

Աղյուսակ 3.6. Նպաստառու ընտանիքների թիվը ՀՀ Արարատի մարզում

N/N	Տարածաշրջան	2006թ.	2007թ.	2008թ.
1	Արարատի մարզ աղքատության ընտանեկան նպաստ ստացող	8799	8429	8293
2	Ընդամենը ՀՀ աղքատության ընտանեկան նպաստ ստացող	130406	123792	111918

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2008թ. էջ 99, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2008թ., էջ 137

72. Ի տարբերություն քաղաքային տնային տնտեսությունների՝ գյուղական տնային տնտեսություններն ավելի բազմանդամ են: Ընտանիքի բազմանդամությունը նպաստում է աղքատության ռիսկի ավելացմանը: Բազմանդամ ընտանիքները, որոնք բաղկացած են մեծ թվով երեխաներից և ավելի քիչ կերակրողներից, ավելի աղքատ են, քան փոքր ընտանիքները: Երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքները կազմում են գյուղական տնային տնտեսությունների թվի 18.9%-ը, որը 0.5%-ով ավելի է հանրապետության միջին ցուցանիշից:

73. Տնային տնտեսությունների միջին չափի, տարիքային կառուցվածքի, ծանրաբեռնվածության պատկերը երևում է աղյուսակ 3.5-ում: Ընդ որում գյուղում ծանրաբեռնվածությունը 1.4 անգամ բարձր է քաղաքայինից:

Աղյուսակ 3.7. Ժողովրդագրական պատկերը

Արարատի մարզ	քաղաք	գյուղ
տ/տ միջին չափը /մարդ/	4.4	4.8
նպաստ ստացող տ/տ միջին թիվը /մարդ/	3.6	5.1
տ/տ-ում երեխաների միջին թիվը 0-15 /մարդ	0.9	1.2
տ/տ-ում աշխատունակ անձանց միջին թիվը 16-64 /մարդ/	3.0	2.9

տ/տ-ում ծերերի միջին թիվը 65+ /մարդ/	0.4	0.7
ընդհանուր ծանրաբեռնվածությունը %	45.1	63.5

74. Սա նշանակում է, որ 100 ակտիվ աշխատանքային տարիքի մարդու խնամակալության տակ գտնվում է 57.3 մարդու պատասխանատվություն:

75. Բազմանդամ և երեխաներով ծանրաբեռնված տնային տնտեսությունները հիմնականում գյուղերում են:

Աղյուսակ 3.8

տնային տնտեսություններ	ընդամենը մարզի տ/տ թվում %	որից՝ գյուղում %
3 և ավել երեխաներով տ/տ	12.6	73.0
5 և ավել անդամ ունեցող տ/տ	54.8	70.4

Աղյուսակ 3.9

տնային տնտեսություններ	աղքատ ընտանիքների թվում %	ծայրահեղաղքատ ընտանիքների թվում %
1 ծեր ունեցող	30.8	40.0
2 ծեր ունեցող	16.3	18.0
1 երեխա ունեցող	24.0	24.0
2 երեխա ունեցող	22.1	14.0
3 և ավել երեխա ունեցող	16.3	10.0
5 և ավելի անդամ ունեցող ընտանիքներ	55.7	36.0

76. Չքավոր համայնքներում մեծ է մինչև 15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը: Աղյուսակ 3.9-ում ներկայացված է աղքատությանը նպաստող երեխաների թվի, ծերերի թվի, ընտանիքի բազմանդամության միջև կապը:

77. Մարզի ընտանիքների 24.8%-ը գլխավորում են կանայք /այրիներ, ամուսնալուծվածներ, երկարատև ընտանիքից բացակայող ամուսիններ ունեցողներ/: Տնային տնտեսությունների 19.4%-ը չունի աշխատանքային տարիքի տղամարդ:

78. Հաշվարկները ցույց են տալիս, որ գյուղական բնակչության հիմնական մասը զուրկ է աղքատությունից խուսափելու համար բավարար նյութական միջոցներ ունենալու հնարավորությունից:

79. Աղյուսակ 3.10-ում ցուցադրվում է գյուղական տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի չափի: Չնայած հողերը փոքր են՝ դրանք օգտագործվում են ինտենսիվ: Բայց անհրաժեշտ է նշել, որ հողերի փոքր չափերը հնարավորություն չեն ընձեռում գյուղատնտեսությունում ինդուստրիալ տեխնոլոգիաների կիրառման համար, որը խոչընդոտում է բնագավառի վարման արդյունավետության բարձրացմանը:

Խոչընդոտ է նաև արտադրված մթերքի ցածր ապրանքայնության մակարդակը, որը նաև պայմանավորված է ոչ մասնագիտացված, պարզ վերարտադրությամբ զբաղվող տնտեսվարողներով: Խոչընդոտներից է արտադրանքի իրացման բարդությունը: Արտադրողին բաժին է ընկնում իր կողմից արտադրված գյուղմթերքի իրացումից ստացված եկամտի 20-25%-ը: Չնայած ավելի քան 15 տարի գյուղական տնտեսությունները պայքարում են հողի հետ, այնուամենայնիվ դրանց զգալի մասի ռազմավարությունը դեռևս մնում է ընտանիքի պարենային ապահովությունը, այլ ոչ թե` գյուղատնտեսության` որպես շուկայական տնտեսության կարևորագույն ճյուղի զարգացումը: Անասնապահության բաշխվածությունը լեռնային և հարթավայրային գյուղերում երևում է աղյուսակ 3.10.-ում:

Աղյուսակ 3.10

տնային տնտեսությունների տոկոսը ընդհանուր ուսումնասիրված առանձին-առանձին լեռնային և հարթավայրային գյուղական տնտեսությունների մեջ	լեռնային գյուղեր	հարթավ. գյուղեր	միջին գյուղակ. տնտեսութ.
միայն հողագործությամբ %	0	31.1	30.1
միայն անասնապահությամբ %	0	0.9	0.9
և' հողագործությամբ, և' անասնապահությամբ %	100	65.8	66.9
չեն զբաղվում ոչ հողագործությամբ, ոչ անասնապահությամբ %	0	2.2	2.1

80. Հայաստանի Հանրապետությունում աղքատության ցուցանիշների դինամիկան ներկայացված է ստորև աղյուսակ 3.11-ում

Աղյուսակ 3.11. Աղքատության ցուցանիշների դինամիկան ըստ մարզերի և ք. Երևան, 2004-2008թ.

Մարզեր	2004թ.		2005թ.		2006թ.		2007թ.		2008թ.		2008թ./2004թ.	
	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ
ք. Երևան	6.1	29.2	3.6	23.9	3.5	21.0	3.2	20.0	3.2	19.7	-47.6	-32.5
Արագածոտն	5.6	35.4	3.1	32.3	2.6	27.5	3.0	22.2	1.5	20.7	-72.8	-41.6
Արարատ	6.4	32.7	7.4	30.9	5.5	27.0	3.5	25.5	2.8	24.9	-55.6	-23.9
Արմավիր	6.6	36.0	3.8	31.6	3.4	30.8	3.8	30.7	2.6	26.7	-60.7	-25.8
Գեղարքունիք	4.5	41.9	2.9	36.8	2.6	29.8	2.5	29.6	1.2	24.8	-73.7	-40.8
Լոռի	4.5	31.3	5.8	28.8	5.5	27.0	3.6	26.8	4.1	25.1	-8.2	-19.7
Կոտայք	9.2	39.3	8.7	34.5	8.1	32.0	6.1	30.0	3.2	29.5	-65.3	-24.8
Շիրակ	10.4	48.8	4.3	42.5	3.7	37.3	6.0	32.1	6.0	30.6	-41.9	-37.3
Սյունիք	5.9	36.5	2.3	28.9	2.1	25.3	3.7	24.0	1.7	19.6	-71.6	-46.4
Վայոց Ձոր	4.1	28.9	1.8	19.2	1.3	11.4	2.3	13.7	1.1	16.6	-74.1	-42.6
Տավուշ	3.3	30.5	3.8	25.8	3.3	23.5	3.3	21.6	2.6	19.8	-21.5	-35.0

Ընդամենը՝	6.4	34.6	4.6	29.8	4.1	26.5	3.8	25.0	3.1	23.5	-51.2	-32.1

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը - 2009», 2009թ., էջ 35

81. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվը բաղկացած է կրթության, առողջապահության, անվտանգ խմելու ջրի անհասանելիության ու մշտական կացարանի բացակայության ցուցանիշների համակցությունից:

82. Թվարկված բաղադրիչների հիման վրա կառուցված մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվի հաշվարկների (Աղյուսակ 3.12) մարդկային աղքատության տեսակետից ՀՀ Արարատի մարզը 2004 թվականին իններորդն է Երևանից հետո:

Աղյուսակ 3.12. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվերը ՀՀ մարզերում ու դրանց դասակարգումն ըստ մարդկային աղքատության

Մարզերի դասակարգումն ամենափոքր մարդկային աղքատության համաթվից ամենամեծը		ՄԱՄՀ	Կրթական ծառայությունների անմատչելիություն	Առողջապահական ծառայությունների անմատչելիություն	Խմելու ջրի անվտանգ աղբյուրների ու մշտական կացարանի անհասանելություն
1	Երևան	0.325	0.096	0.225	0.005
2	Սյունիք	0.361	0.106	0.220	0.036
3	Կոտայք	0.414	0.084	0.263	0.067
4	Վայոց Ձոր	0.438	0.136	0.256	0.047
5	Արմավիր	0.517	0.125	0.212	0.181
6	Շիրակ	0.520	0.092	0.256	0.172
7	Լոռի	0.575	0.176	0.248	0.151
8	Տավուշ	0.624	0.169	0.263	0.195
9	Արարատ	0.626	0.178	0.285	0.163
10	Գեղարքունիք	0.634	0.211	0.242	0.182
11	Արագածոտն	0.753	0.215	0.283	0.256

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական միտումները» թիվ 5

83. Չնայած մարզի հանրակրթական համակարգի զարգացած ցանցին (տարրական, հիմնական, միջնակարգ, ավագ դպրոցներ, վարժարաններ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, ԲՈՒՀ-եր), որով պայմանավորված է մարզի բնակչության նկատելիորեն բարձր կրթամակարդակը, կրթական ծառայությունների անմատչելիության ինտեգրացված ցուցանիշով (0.178) ՀՀ Արարատի մարզը զբաղեցնում է 9-րդ տեղը:

84. Չնայած վերջին տարիներին մարզում իրականացված դպրոցաշինության ծրագրերին ու կրթական բարեփոխումներին, մարզում դեռևս շատ են այն դպրոցները, որոնց գույքային ու շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Շատ դպրոցներում գրեթե բացակայում են լաբորատոր պարագաները: Գրադարաններում հաշվառված գրքերի մոտ 20%-ն օգտագործելի չէ, քանի որ չի բավարարում ներկայիս ուսումնական ծրագրերի պահանջներին:

85. Կրթական համակարգի շահառուները նշում են հետևյալ հիմնախնդիրները.

1) Դպրոցների շենքերի և ենթակառուցվածքների անբավարար կամ ոչ բարվոք վիճակը

2) Դպրոցների ոչ բարվոքմթնոլորտը /միջավայրը/
3) Հին կամ ոչ բավարար կահույքը, սարքավորումները, գույքը և դիդակտիկ նյութերը
4) Գրադարանի անբավարարությունը
5) Լաբորատորիաների, համակարգչային սենյակների ոչ բավարար հագեցվածությունը կամ բացակայությունը
6) Մարզադահլիճի և արտաուսումնական ծրագրերի բացակայությունը կամ պայմանների անբավարարությունը
7) Մանկապարտեզների վիճակը
8) Աշակերտների առողջական խնդիրները
9) Սոցիալական կառույցների և ծնողական խորհուրդների անուշադիր վերաբերմունքը դպրոցի հանդեպ
10) Այլ հանգամանքներ՝ դպրոցի կառավարման մոտեցումները, բյուջեն:

86. Ներքոհիշյալ աղյուսակ 3.13-ում նկարագրված է կրթօղակներում ընդգրկվածությունը գյուղ-քաղաք կտրվածքով.

Աղյուսակ 3.13

Արարատի մարզ	քաղաք	գյուղ	ընդամենը
3-6 տարեկանների ընդգրկվածությունը նախադպրոցական մակարդակում %	44,8	6,9	20,0
3-6 տարեկանների ընդգրկվածությունը արվեստի, սպորտի, խմբակներում %	3,4	0	1
7-9 տարեկանների ընդգրկվածությունը տարրական դպրոց %	69,2	78,7	100
7-9 տար. աղջիկ/տղա համախառն ընդգրկվածության հարաբերակցությունը կրթահամակարգում	0.92	1.03	0.99
7-14 տարեկանների %	90.7	91.5	99.95
10-17 տար. աղջիկ/տղա համախառն ընդգրկվածության հարաբերակցությունը կրթահամակարգում	0.96	1.05	1.02
15-17 տարեկանների ընդգրկվածությունը կրթահամակարգում /դպրոցի 9-10 դասարաններ, քոլեջ, վարժարան/%	94.7	90.9	92.3
այդ թվում ավագ դպրոց /9-10դաս/	91.2	87.9	89.1
18-22 տարեկանների ընդգրկվածությունը կրթահամակարգում /քոլեջ, ԲՈՒՀ/ %	34.8	27	30.1
18-22 տար. աղջիկ/տղա համախառն ընդգրկվածության հարաբերակցությունը կրթական երրորդ համակարգում /միջն.մասն, քոլեջ, ԲՈՒՀ/	0.65	0.91	0.8
18-22 տար. ընդգրկվածությունը միայն ԲՈՒՀ-ում	24.2	13	17.5
15-24 տարեկաններ, որոնք ունեն տարրականից բարձր կրթամակարդակ %	100	97.9	98.7

87. Կրթությունը ազգապահպան դեր է կատարել և մեր բնակչության կրթամակարդակը շարունակում է համադրելի լինել զարգացած երկրների համապատասխան ցուցանիշերի հետ: «Կարևորության աստիճան» -- «Ուսումնասիրվածության աստիճան» հարաբերակցությամբ կրթության որակն առաջին տեղն է զբաղեցնում:

88. Կրթության որակի իրական գնահատականը, սակայն, պարզվում է միայն աշխատանքային շուկայում, այսինքն կրթահամակարգից դուրս, երբ գիտելիքի կիրառումն արդյունքներ է տալիս կրթություն ստացած անհատի և կրթական ծառայություն մատուցած հասարակության համար:



89. Մարդկային աղքատության կրթական բաղադրիչի գյուղական պատկերը երևում է վերոնշյալ գծապատկերում: Տարրական կրթություն չունեցողները հիմնականում ծերերն են:

90.Բնակչության հաճախելիությունն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ վերջին տարիներին սկսել է աճել, իսկ 2006թ.-ից սկսած, երբ առաջնային բուժօգնությունը դարձավ անվճար, այդ թիվն ավելի է աճել: 2008թ. ընթացքում պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում հիվանդների հաճախումների թիվը կազմել է 727900 (2005 թ.-ին` 518500): Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցներում և դիսպանսերներում ստացիոնար բուժում է ստացել 12644 հիվանդ (2006թ-ին` 11431):

91. ՄԱԶԾ-ի 2007թ.-ի հետազոտության ընթացքում առանձնացվել են առողջապահական համակարգի հետևյալ հիմնախնդիրները.

1) Տեղական առողջապահական ծառայությունների և դեղամիջոցների սահմանափակ մատչելիությունը
2) Տեղական բուժկետերի ենթակառուցվածքների սահմանափակությունը և ընթացիկ պահպանման խնդիրները
3) Գյուղից դուրս գտնվող առողջապահական հիմնարկներ դիմելու դժվարությունները

4) Տրանսպորտային դժվարությունները և շտապ օգնության մեքենաների անբավարար քանակությունը

5) Առողջապահական ծառայություններից օգտվելու համար ֆինանսական միջոցների պակասը

6) Շտապ օգնության ծառայության հետ կապված խնդիրները։

92. Առաջնային բուժօգնության օղակի ավելի հաճախակի այցելությունը կրճատում է բնակչության համար համեմատաբար թանկարժեք՝ հիվանդանոցային բուժօգնության կարիքը։ Մի քանի մարզերում կիրառվող «դեղերի շրջանառու ֆոնդ» փորձը նպաստել է ոչ միայն դեղերի, այլև մատուցվող բուժօգնության մատչելիությանը։ Դեղերի ԱԱՀ հարկելուց հետո առևտրական վերադիրները զգալիորեն բարձրացան։ Մաքսային սահմանից մինչև սպառողին հասնելը դեղերը թանկանում են ավելի քան 2.1 անգամ։ Սա հանգեցրեց միջազգային գների համեմատ ներքին շուկայում շրջանառվող դեղերի գների կտրուկ բարձրացմանը։ Բարձր գներն ու ցածր վճարունակությունը որոշ չափով հավասարակշռվում են դեղերի ստվերային շուկայի ընդլայնման, ինչպես նաև կեղծված ու որակի ստանդարտներին չհամապատասխանող դեղերի շրջանառության հաշվին։ Ներկայումս ՀՀ-ում չեն գործում դեղերի գների կանոնակարգման հստակ մեխանիզմներ և դրանց կարգավորումը հանձնված է ազատ շուկայի անկատար մրցակցությանը։ Պարզվում է նաև, որ գյուղական համայնքներում սակավաթիվ գործող դեղատներից ոչ միայն հնարավոր չէ ձեռք բերել այն անհրաժեշտ դեղերը, որոնք նշանակված են, այլև «Հիմնական դեղերի ցանկ»-ում ընդգրկված դեղերի մի մասը։ Այսինքն բուժօգնությունից օգտվելու ճանապարհին լուրջ խոչընդոտ է գյուղում, որոշ դեպքերում նաև փոքր քաղաքներում, դեղերի ֆիզիկական անհասանելիությունը դեղատների լիովին բացակայությունը կամ դեղերի «աղքատ» տեսականին է։

93. Նույնիսկ պետության կողմից երաշխավորված առողջապահական ծրագրերի շրջանակներում՝

1) հիվանդանոցային բուժօգնության համար պահանջվող դեղերի հիմնական մասը ձեռք է բերվում հիվանդի կողմից,
2) ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ընթացքում անհրաժեշտ դեղերը ձեռք են բերվում հիմնականում այցելուների կողմից՝ դեղատնային ցանցից
3) գրեթե չի գործում ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 8-ի N 396 որոշումը՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին։

94. Այս պայմաններում շատերը գերադասում են չիմանալ իրենց հիվանդության մասին, քան իմանալով՝ չկարողանալ բուժվել։ Վճարովի բժշկական ծառայությունների իրականացման, գնագոյացման հարցերը լրջորեն կանոնակարգված չեն, որի արդյունքում բուժաշխատողները սոցիալապես անապահովներից ակնկալելում, իսկ մնացածներից պահանջելում են ստվերային

վճարումներ: Այս պարագայում պետության կողմից երաշխավորված սոցիալական խմբերի ներկայացուցիչներն էլ հրաժարվում են բուժծառայություններից՝ դրանց դիմաց անխուսափելի վճարումներ կատարելու ճնշման տակ: Այս ամենի հետևանքը լայնորեն տարածված առողջապահության ստվերն է, որի չափերը 2 անգամ գերազանցում են երկրի ընդհանուր ստվերային տնտեսության գնահատված մակարդակը: Այսինքն անմատչելիության արմատները պետք է փնտրել ոչ միայն բնակչության ֆինանսական հնարավորությունների և աղքատության երևույթների մեջ, որքան առողջապահության հիմնախնդիրների հանգույցում: Օրախնդիր է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրումը:

95. Բժշկական որակյալ անձնակազմի հսկողության տակ ծննդաբերած կանանց և կյանքի առաջին տարում մահացած երեխաների թիվը հետևյալն է՝

Աղյուսակ 3.14

	կյանքի առաջին տարում մահացածների տեսակարար կշիռ %	բժշկի հսկողության տակ ծննդաբերած կանանց տեսակարար կշիռ %
Արարատ	3.0	98.8
Երևան	0.7	100

96. Հազարամյակի ցուցանիշներից մեկն էլ բժշկի հսկողության տակ ծննդաբերությունների թիվն է: Ծննդաբերությունների 99.5%-ը կատարվել են հիվանդանոցում: Մնացած 0.5% ծննդաբերությունները կատարվել են տանը բժշկի հսկողության տակ:

97. Բնակչության՝ բժշկի կարիք ունեցած, բայց չդիմածները 95.6% են՝ չդիմելու պատճառը բուժհիմնարկների օրինական վճարումների անմատչելիությունն է /այս հարցով գյուղն ու քաղաքը իրար նման են/: Բնակչության ստվար զանգվածի համար առողջապահական տարբեր ծառայությունները անմատչելի են կապված հիմնականում ֆինանսական հնարավորությունների հետ: Աղքատության պատճառով ատամների բուժման կարիք ունեցողների 75.1% չի դիմել բժշկի: Բուժման կարիք ունեցած երեխաների 62.9% -ը աղքատության պատճառով չի բուժվել /քաղաքում՝ 75.0 % , գյուղում 57.4% /:

98. Մարզում պետական բյուջեի և դոնորների միջոցներով իրականացվել են խմելու ջրամատակարարման բարելավման մի շարք ծրագրեր, որոնք դրական ազդեցություն են ունեցել ինչպես խմելու ջրի հասանելիության ապահովման, այնպես էլ որակի առումով: Այսպես ՏՀԻ հետազոտության տվյալներով՝ գյուղական համայնքներում իրականացված ծրագրերի ազդեցությունը, հետազոտված համայնքների 4%-ը գնահատել է գերազանց, 44%-ը լավ, 45%-ը բավարար, իսկ 7%-ի կարծիքով այդ աշխատանքները ոչ մի ազդեցություն չեն ունեցել համայնքի բնակչության բարեկեցության մակարդակի վրա: Այդ է պատճառը, որ մարզի համայնքների մեծ մասի 2010-2013թթ. քառամյա ծրագրերում ընդգրկված են խմելու

ջրատարների կառուցման և վերանորոգման, խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման ծրագրեր:

99. Ընդհանրապես գյուղացիական տնային տնտեսությունների եկամուտները երևում են աղյուսակ 3.15-ում: Տնտեսությունների 46%-ի համար եկամտի առաջին կարևորագույն աղբյուրը հանդիսանում է գյուղատնտեսական գործունեությունը, 19.1%-ի համար՝ աշխատավարձը, 13.7%-ի համա՝ կենսաթոշակը, 7.2%-ի համար՝ ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածությունը, 4.8%-ի համար՝ Հայաստանից դուրս գտնվող անձերից օգնությունը:

Աղյուսակ 3.15

	գյուղ.ինքնազբաղվ. որպես եկամտի ամենակարևոր աղբյուր նշած գյուղ. տ/տ %	աշխատավարձը որպես եկամտի ամենակարևոր աղբյուր նշած գյուղ. տ/տ %	ոչ գյուղ.ինքնազբաղվ. որպես եկամտի ամենակարևոր աղբյուր նշած գյուղ. տ/տ %	բոլոր տեսակի թոշակներն ու նպաստները որպես եկամտի ամենակարևոր աղբյուր նշած գյուղ. տ/տ %		մասնավոր տրանսֆերտները որպես եկամտի ամենակարևոր աղբյուր նշած գյուղ. տ/տ %	
				ընդամ	այդ թվում ընտան նպաստ	ընդամ	այդ թվում դրսից
Արարատ	46.0	19.1	7.2	16.7	2.7	6.3	4.8
ՀՀ	47.2	19.2	3.0	20.9	3.0	6.9	5.7

100. Գյուղացիական տնային տնտեսությունների ստացած եկամուտների երեք կարևորագույն աղբյուրները արտահայտված են աղյուսակ 3.16-ում:

Աղյուսակ 3.16

	գյուղատնտ ինքնազբ որպես եկամտի երեք կարևորագույն աղբյուր նշած գյուղ. տ/տ %	աշխատավարձը որպես եկամտի երեք կարևորագույն աղբյուր նշած գյուղ. տ/տ %	ոչ գյուղատնտ ինքնազբ որպես եկամտի երեք կարևորագույն աղբյուր նշած գյուղ. տ/տ %	բոլոր տեսակի թոշակն. ու նպաստները որպես եկամտի երեք կարևորագույն աղբյուր նշած գյուղ. տ/տ %	մասնավոր տրանսֆերտներ որպես եկամտի երեք կարևորագույն աղբյուր նշած գյուղ. տ/տ %
Արարատ	87.5	28.7	9.0	73.1	16.2
ՀՀ	87.8	31.5	5.0	77.2	19.6

101. Գյուղատնտեսական ինքնազբաղվածությունից ստացած եկամուտները՝ որպես եկամտի ամենակարևոր աղբյուր, նշած տնային տնտեսությունները կարևորությամբ երկրորդ և երրորդ եկամտի աղբյուրներ նշածները ներկայացված են աղյուսակ 3.17-ում:

Աղյուսակ 3.17

	աշխատավարձը որպես եկամտի երկրորդ ու երրորդ ամենակարևոր աղբյուր նշած գյուղական տ/տ %	ոչ գյուղատնտ. ինքնազբաղվածութ որպես եկամտի երկրորդ ու երրորդ ամենակարևոր աղբյուր նշած գյուղական տ/տ %	բոլոր տեսակի թոշակներն ու նպաստները որպես եկամտի երկրորդ ու երրորդ ամենակարևոր աղբյուր նշած գյուղական տ/տ %	մասնավոր տրանսֆերտները որպես եկամտի երկրորդ ու երրորդ ամենակարևոր աղբյուր նշած գյուղական տ/տ %
Արարատ	14.9	1.3	70.3	8.4
ՀՀ	19.1	1.6	62.4	12.3

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1. Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն

102. Արդյունաբերությունը հանդիսանում է Արարատի մարզի տնտեսության կարևորագույն և հիմնական ոլորտներից մեկը: Խորհրդային տարիներին ներկայիս Արարատի մարզն ընդգրկող քաղաքներում, շրջաններում առկա էր արդյունաբերական հզոր համալիր՝ որն ընդգրկում էր արդյունաբերության բոլոր ճյուղերը: Անկախության տարիների ընթացքում մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների, չնայած առաջատար է մնացել գյուղմթերքների մշակող արդյունաբերությունը, զգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը: Իրենց դիրքերը զիջել են մեքենաշինությունը և սարքաշինությունը: Մարզի արդյունաբերական համալիրում ըստ արտադրության ծավալի արդյունաբերության ներուժը կենտրոնացված է Արարատի տարածաշրջանում: Մարզում գործում են 78 արտադրական ձեռնարկություններ, գործող ձեռնարկություններից 10-ը խոշոր են, մնացած ձեռնարկություններն իրենցից ներկայացնում են փոքր ու միջին արտադրություններ: Փոքր և միջին արտադրությունների մոտ 45%-ը գյուղմթերքներ վերամշակող ու սննդի արտադրության ձեռնարկություններ են:

103. Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2008թ. հունվար- դեկտեմբերին՝ ըստ մարզում գործող արդյունաբերական կազմակերպությունների, ընթացիկ գներով կազմել է 59431.7 մլն դրամ, իրացվել է 61013.4 մլն դրամ, որից ԱՊՀ երկրներում՝ 18047.4 մլն դրամի, այլ երկրներում՝ 1293.2 մլն դրամի արտադրանք, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ինդեքսը 2007թ. նկատմամբ կազմել է 103.1%:

104. Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալները վերջին տարիներին, հատկապես 2007թ.-ից հետո, աճի զգալի միտում են արձանագրել: 2008թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2007թ. համեմատությամբ աճել է ավելի քան 7 մլրդ դրամով: Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 4.1.-ում:

Աղյուսակ 4.1.Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների

Արարատի մարզ	2007թ.	2008թ.	Աճի տեմպը %
թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով /մլն. դրամ/	52450.6	59431.7	113.3
այդ թվում ՝ մշակող արդյունաբերություն	45461.1	50836.1	111.8
Ընդերքօգտագործում	929.6	605.8	65.1
Էլեկտրոէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	6059.9	7989.8	131.8
պատրաստի արտադրանքի իրացումը ընթացիկ գներով /մլն. դրամ/	54624.5	61013.4	111.7
արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը %	97.6	103.1	105.6

105. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2008թ. հունվար - դեկտեմբերին հետևյալն է՝



106. Արարատի մարզի արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինն ընդհանուրի մեջ բավականին մեծ է և այն կազմում է 8%:

Աղյուսակ 4.2. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը

	2006թ.	2007թ.	2008թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	100	100	100
Ք.ԵՐԵՎԱՆ	44.6	48.5	49.0
ԱՐԱԳԱԾՈՏՆ	1.1	1.3	1.8
ԱՐԱՐԱՏ	8.4	7.3	8.0
ԱՐՄԱՎԻՐ	4.5	4.2	4.5
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	1.8	1.3	1.4
ԼՈՌԻ	7.1	6.0	5.7
ԿՈՏԱՅՔ	10.1	10.5	12.2
ՇԻՐԱԿ	2.1	2.3	2.4
ՍՅՈՒՆԻՔ	18.8	17.2	13.5
ՎԱՅՈՑ ՁՈՐ	0.8	0.8	0.8
ՏԱՎՈՒՇ	0.7	0.6	0.7

107. Մարզի արդյունաբերության մեջ կարևոր նշանակություն ունի մշակող արդյունաբերությունը, որի ծավալը տարեցտարի ավելացել է և 2008թ. կազմել է մարզի արդյունաբերական համախառն արտադրանքի մոտ 86%-ը: Մշակող արդյունաբերությունը ավելացել է ի հաշիվ սննդամթերքի արտադրության /47.7%/ և ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակում /30.5%/, մեծ ծավալ է կազմում ծխախոտի արտադրատեսակների արտադրությունը /11.4%/:

108. 2008թ. ընթացքում մարզի արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 26.9% և 52.6 %: Ըստ վիճակագրական մոնիտորինգի 79.5 % գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 13.3%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 12.8% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 83.0%:

109. Արարատի մարզում արդյունաբերական ձեռնարկությունները բաշխված են մարզի բոլոր 3 տարածաշրջաններում: Արտաշատի տարածաշրջանում ակտիվ են 30 ձեռնարկություններ, որոնց գործունեության մեջ հիմնականում գերակշռում են սննդամթերքի և խմիչքների, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակման` բնական քարերից երեսապատման սալիկների արտադրությունը: Արարատի տարածաշրջանում ակտիվ են 33 արդյունաբերական ձեռնարկություններ: Նրանց գործունեության մեջ գերակշռում է վերամշակող արդյունաբերությունը, մասնավորապես «Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան» և ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակում (ցեմենտի, կրի և ազբոցեմենտային իրերի արտադրությունը) և բնական քարերի վերամշակումը` երեսապատման սալիկների արտադրությունը, և պլաստմասե շինարարական իրերի արտադրությունը: Մասիսի տարածաշրջանում համեմատաբար ակտիվ են 25 ձեռնարկություններ, որոնց գերակշիռ մասը կրկին պատկանում է վերամշակման ոլորտին: Տարածաշրջանում

հատկապես զարգացած է ծխախոտի ֆերմենտացիան, փայտանյութի մշակումը, քիմիական արտադրանքի թողարկումը և այլն:

110. Արարատի մարզի արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ըստ տարածաշրջանների 2008թ. հունվար – դեկտեմբերին հետնյալն է՝



111. Արարատի մարզի տարածքում արդյունաբերական արտադրանքի թողարկման ոլորտում գործում են ինչպես խոշոր ընկերություններ («Արարատի ցեմենտի գործարան», «Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան», «Արտաշատի և Արարատի պահածոների գործարան», «Վեդի Ալկո», «Ավշարի գինու գործարան», «Ինթերնեյշնլ Մասիս Տաբակ», «ԱրմՎինկոն գինու գործարան» և այլն), որոնք ունեն մեծ քանակությամբ աշխատակիցներ և կայացած ընկերություններ են, այնպես էլ բազմաթիվ միջին և փոքր ձեռնարկություններ:

112. ***Մշակող արդյունաբերություն.*** Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետնյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակում (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արդյունահանում, քարի կտրում և վերամշակում):

Աղյուսակ 4.3. Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2008թ. հունվար-դեկտեմբեր	2007թ. հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպը տարեսկիզբից, %

Պանիր, տոննա	2074.5	2078.5	99.8
Կաթ և կաթնամթերք(վերահաշվարկված կաթի), տոննա	145.1	176.4	82.3
Ալյուր, տոննա	43429.5	506.57.2	85.7
Համակցված կեր, տոննա	15999.7	18193.4	87.9
Հաց և հացամթերք, տոննա	23911.7	21068.7	113.5
Օղի և օղու – լիկյորի արտադրանք, հազ. լիտր	4672.6	5614.5	83.2
Կոնյակ, հազ. լիտր	2715.5	2563.1	105.9
Գինի, հազ. լիտր	354.6	551.3	64.3
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	-	30.0	-
Պահածո, տոննա	9351.1	9105.6	102.7
Միս, տոննա	128.5	138.2	93.0
Մսամթերք ներառյալ երշիկեղեն, տոննա	126.9	133.4	95.1
Այլ մսամթերք, տոննա	1.6	4.8	33.3

113. ***Պահածոյագործություն:*** Սննդամթերքի և ըմպելիքների արտադրության մեջ առանձնակի տեղ ունի պահածոյագործությունը, որը հանդիսանում է տնտեսության ավանդաբար զարգացած ոլորտներից մեկը: Դրա նախապայմանն է հանդիսանում մարզում գյուղատնտեսության, մասնավորապես, բանջարեղենի և պտղի արտադրության զարգացվածության բավականին բարձր աստիճանը: Պահածոների արտադրությունը տեղակայված է հումքային բազայի կենտրոնում: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ մարզում արտադրվում է Հայաստանում արտադրվող պահածոների գերակշիռ մեծամասնությունը:

114. Արարատի մարզում պահածոների արտադրության ծավալները 2007թ. կազմել է 9105.6 հազ. դրամ, իսկ 2008թ.՝ 9351.1 հազ. դրամ: Արարատի մարզը՝ հատկապես վերջին տարիներին, դարձել է պահածոների արտադրության անվիճելի առաջատարը Հայաստանում: 2008թ. մարզի մասնաբաժինը Հայաստանի արտադրության ծավալների մեջ զգալիորեն մեծացել է:

115. Արարատի մարզի առաջատար դիրքը պահածոների արտադրության ոլորտում մեծապես պայմանավորված է Արտաշատի և Արարատի պահածոների գործարանների գործունեությամբ, որոնք հանդիսանում են ոլորտի խոշորագույն ընկերություններ ոչ միայն մարզում, այլև Հանրապետությունում: Ընկերությունները կայուն փոխհարաբերություններ են հաստատել արտերկրյա իր գործընկերների հետ և արտադրանքի հիմնական մասը արտահանում են: Արտաշատի և Արարատի պահածոների գործարանների հանդիսանում են մարզում արտադրվող պտղի և հատկապես բանջարեղենի հիմնական մթերողները: Արարատի մարզի պահածոյագործական ընկերությունները իրենց արտադրանքը հիմնականում արտահանում են արտաքին շուկաներ:Մնացած՝ արտադրանքի 30%-40% -ը իրացվում է ներքին շուկայում:

116. Արարատի մարզում գործում են նաև պահածոների արտադրության մի քանի միջին ձեռնարկություններ՝ իրենց մեծությամբ առանձնանում են «Մամիկոն և որդիներ» և «Ալիշան» ընկերությունները, որոնք ունեն 60-80 աշխատող սեզոնից կախված:

117. ***Ոգելից խմիչքների արտադրությունը:*** Հանդիսանում է տնտեսության զարգացած ոլորտներից մեկը: Արարատի մարզում 2007 - 2008թթ. օղու, գինու և կոնյակի արտադրական ծավալները ներկայացված են աղյուսակ 4.4. -ում:

Աղյուսակ 4.4.

Արարատի մարզ	2007թ.	2008թ.
Օղու արտադրություն	5614.5	4672.6
Գինու արտադրություն	551.3	354.6
Կոնյակի արտադրություն	2563.1	2715.5

118. Աղյուսակից երևում է, որ 2008թ. գինու և օղու արտադրության ծավալները մարզում նվազել են, ինչի հիմնական պատճառը խաղողի ցրտահարությունն է ու հումքի օգտագործումը այլ ուղղություններով, հիմնականում կոնյակի արտադրության մեջ: 2008թ. կտրուկ նվազել է Արարատի մարզի մասնաբաժինը գինու արտադրության ընդհանուր ծավալների մեջ, ինչը վկայում է այն մասին, որ ցրտահարությունը հատկապես ծանր հետևանքներ է ունեցել մարզի խաղողագործության վրա:

119. Կոնյակի արտադրության ծավալները շարունակել են աճել անկախ ցրտահարություններից: Կոնյակի արտադրության ծավալները աճել են այն պատճառով, որ այս ընկերությունները շարունակել են խաղողի մթերումները, նույնիսկ ցրտահարության հետևանքով բարձրացած գներով:

120. Մարզում գինու արտադրության ընկերությունները կենտրոնացած են հիմնականում Արտաշատի և Արարատի տարածաշրջաններում: Մասիսի տարածաշրջանում գործում է խաղողի մթերման և պահպանման մեկ կետ: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ խաղողի այգիների ծավալը Մասիսի տարածաշրջանում շատ փոքր է Արտաշատի տարածաշրջանի համեմատությամբ, որտեղ խաղողի տնկարքներ ունեն համայնքների մեծամասնությունը:

121. Արարատի մարզում շուրջ 20 ընկերություններ զբաղվում են խաղողի մթերումներով և ալկոհոլային խմիչքների արտադրությամբ: Դրանցից են «Վեդի-Ալկո»-ն, «Ավշարի գինու գործարան»-ը, «Արարատի գինու գործարան»-ը, «Գրեյդ Վելին»-ն, «Վան 77»-ը-ը , «Արտաշատի գինու – կոնյակի գործարան»-ը, «Տափերականի գինու գործարան»-ը, «Շահումյանի գինու - կոնյակի գործարան»-ը, «Քաղցրաշենի գինու - կոնյակի գործարան»-ը, «Մխչյանի գինու - կոնյակի գործարան»-ը, «Երասխի գինու գործարան»-ը և այլ ընկերություններ, ինչպես նաև «Երևանի կոնյակի գործարան»-ի և «Արարատ գինու - կոնյակի գործարան»-ի խաղողի մթերման կետերը:

122. Նշված ընկերությունների մի մասը փոքր են՝ ունեն 20-30 աշխատողներ, հիմնական մասը միջին են՝ մինչև 50 աշխատողներ, իսկ խոշորները ունեն 100-ից ավելի աշխատողներ:

123. Օղու իրացման հիմնական շուկան ներքին շուկան է: Այստեղ անառարկելի առաջատարներն են «Վեդի - Ալկո»-ն և «Ավշարի գինու գործարան»-ը, որոնք կառավարում են օղու տեղական շուկայի մոտ 50%-ը:

124. Ավանդաբար հայկական գինու խոշորագույն շուկան հանդիսացել է Ռուսաստանը և այս միտումը պահպանվել է առ այսօր: Արարատի մարզի գրեթե բոլոր ընկերությունները իրենց արտադրանքի շուրջ 80%-ը արտահանում են ռուսական շուկա:

125. Ալկոհոլային խմիչքներ արտադրող ընկերությունների համար ընդլայնման լուրջ հնարավորություն կարող է հանդիսանալ եվրոպական շուկան, որը լրջագույն պահանջներ է առաջադրում արտադրանքի որակական հատկանիշների, փաթեթավորման և արտաքին տեսքի համար:

126. Արարատի մարզի ալկոհոլային խմիչքներ արտադրող ընկերությունները լայնորեն համագործակցում են բանկերի և ֆինանսավորում իրականացնող այլ կառույցների հետ: Համեմատաբար խոշոր ընկերությունները տնօրինում են բավականին մեծ ֆինանսական ռեսուրսների, սակայն մթերումների սեզոնի ընթացքում նրանք նույնպես ունեն ֆինանսական որոշակի դժվարություններ: Ֆինանսական ռեսուրսներ են ներգրավում նաև միջազգային կառույցներից և անհատներից:

127*. **Ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակում:*** Արարատի մարզի տարածքում արտադրվում են մի շարք ոչ մետաղական օգտակար հանածոների տեսակներ, որոնց մեջ էական նշանակություն ունեն շինանյութերը: Շինանյութեր արտադրող խոշորագույն ձեռնարկությունը Արարատի ցեմենտի գործարանն է, որի հիմնական արտադրանքը ցեմենտն է: Քանի որ այս ձեռնարկությունը խոշորագույններից մեկն է Հայաստանում, այն որոշակի ազդեցություն ունի նաև մարզի տնտեսության զարգացման հեռանկարների վրա:

128. Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին շինանյութերի արտադրության ոլորտում աճել է ազբոցեմենտյա թիթեղների արտադրության ծավալները: Նվազել են ոչ հանքային շինանյութերի արտադրական ծավալները:

129. Շինանյութերի արտադրությամբ զբաղվող ընկերությունները հիմնականում տեղակայված են Արարատի և Արտաշատի տարածաշրջաններում: Բացի Արարատի ցեմենտի գործարանից, ոլորտում առանձնանում են նաև մի շարք այլ ընկերություններ՝ «Հայձենապակի», «Կավաշեն», «Գալիք», «Մոս», «Վեդի պլաստ» ՍՊԸ և այլն: Այս ընկերությունները թողարկում են ոչ հանքային շինանյութեր՝ գաջ, կիր, կլինկեր, ազբոցեմենտյա թիթեղներ, կղմինդրե սալիկներ, աղյուս, պլաստիկ խողովակներ և այլն: Նրանց թողարկած հիմնական արտադրատեսակները ներկայացված են աղյուսակ 4.5-ում:

Աղյուսակ 4.5. Ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակմամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2008թ.	2007թ.	Աճի տեմպը %

Կլինկեր, հազ. տոննա	0.8	41.6	1.9
Ցեմենտ, հազ. տոննա	554.9	500.1	111.0
Կիր, տոննա	2229.0	2751.0	81.0
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, խոր.մ.	321.7	231.9	138.7
Ազբոցեմենտյա թիթեղ /շիֆեր/, հազ. պայմ.սալիկ	223112.0	2479.2	90անգամ
Երեսպատման սալեր բնական քարից, քառ.մ/	49473.6	48912.7	101.1
Ոչ հանքային շինանյութեր, խոր.մ.	101647.4	207144.0	49.1
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, քառ.մ.	3662.8	3944.3	92.9
Պլաստմասսայե իրեր, տոննա	2087.6	3042.0	68.6

130. Շինանյութեր արտադրող կազմակերպությունների մեծ մասն աշխատում է հզորությունների ցածր ծանրաբեռնվածությամբ: Արտադրության ծավալները հնարավոր է աճեն միջին հաշվով 2-3 անգամ: Արտադրության հետագա զարգացման և գործունեության ընդլայնման հիմնական խոչընդոտների շարքում նշվում են պատվերների, ֆինանսական ռեսուրսների սակավությունը, արտաքին շուկա դուրս գալու դժվարությունները և այլն:

131. Շինանյութեր արտադրող ընկերությունների մեծ մասն օգտագործում են տեղական հումք: Բացառություն են կազմում պլաստիկ խողովակների և կղմինդրե սալիկների արտադրությունները, որոնց հումքային միջոցների հիմնական մասը ներկրվում է:

132. Արարատի մարզի շինանյութեր արտադրող ընկերությունների հիմնական իրացման շուկան Հայաստանն է: Պլաստիկ խողովակները, կիրը, գաջը և ոչ հանքային այլ շինանյութերն իրացվում են բացառապես ներքին շուկայում:

133. Մարզում շինանյութերի արտադրության ոլորտը զարգացման լավ հնարավորություններ ունի: Դրա հիմնավորումն այն է, որ առկա է իրացման շուկա, իսկ որոշ ընկերություններ ունեն արտահանման ներուժ և ներմուծվող արտադրանքը տեղական արտադրության շինանյութերով փոխարինելու հնարավորություն:

134. Արարատի մարզում օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման ոլորտը բավականին զարգացած է՝ քանի որ մարզի տարածքը հարուստ է տարբեր ապարների հանքերով, հիմնականում տրավերտին, մարմար և օնիքս: Բնազավառում գործում են ավելի քան 23 ընկերություններ, որոնց մեջ գերակշռում են Արարատի և Արտաշատի տարածաշրջանների ձեռնարկությունները: Համեմատաբար խոշոր ձեռնարկություններն են «Մուլտի Գրուպ Սթոուն»-ը և «Փասեպ Ինթերնեյշնլ» - ը:

135. Վերջին երկու տարիներին բավականին համեստ ցուցանիշներ են արձանագրվել երեսապատման սալիկների արտադրության ոլորտում, մասնավորապես՝ 2007թ. այն կազմել է՝ 48912.7քմ, իսկ 2008թ.՝ 49473.6քմ:

138. Նրանց գործունեության մեջ հիմնականում օգտագործվում են տեղական արտադրության հումք և նյութեր: Որոշ դեպքերում Արարատի մարզում արդյունահանված քարե բլոկները վերամշակվում են Հայաստանի այլ մարզերում:

139. Երեսպատման սալիկներ արտադրող ընկերությունները բավականին լավ արդյունքներ են արձանագրել արտադրանքի արտահանման տեսանկյունից, առաջատարն «Մուլտի Գրուպ Սթոուն» ընկերությունն է, որը միայն ԱՄՆ արտահանում է տարեկան 10 հազ. մ^2: Արտահանման ուղղություններ են նաև Ռուսաստանը, եվրոպական երկրները, դիտարկվում է Մերձավոր Արևելքի շուկա մտնելու հնրավորությունները:

140. Այս ոլորտում գործող ընկերությունները որոշակի առավելություններ ունեն այլ մարզերում գործող նույն ոլորտի մյուս ընկերությունների նկատմամբ, քանի որ Հայաստանում որոշ քարատեսակների հիմնական պաշարները կենտրոնացած են հենց Արարատի մարզում:

141*. **Արդյունաբերության այլ ոլորտներ.*** Ի լրումն ներկայացված ոլորտների, Արարատի մարզում կան արդյունաբերության մի շարք ճյուղեր, որոնք իրենց կարևոր դերն ունեն մարզի տնտեսության մեջ: Դրանցից մի մասը ներկայացված է արդեն կայացած և համեմատաբար խոշոր ձեռնարկություններով, իսկ մյուսը՝ դեռևս զարգացման փուլում գտնվող փոքր ձեռնարկություններով և անհատներով: Համեմատաբար խոշոր ձեռնարկություններով է ներկայացված քիմիական արդյունաբերությունը՝ «Քրաուն քեմիքլ» ՍՊԸ, ծխախոտի արտադրությունը՝ «Մասիս տոբակո» և «Ինթերնեյշնլ Մասիս տոբակ» ձեռնարկություններով, փաթեթավորման նյութերի արտադրությունը՝ «Մասիսի գոֆրոտարա» և այլն: Այս ընկերությունները համարվում են կայացած, տնօրինում են անհրաժեշտ ռեսուրսներ և ի վիճակի են զարգանալ առանց կողմնակի աջակցության: Աղյուսակ 4.6 –ում ներկայացված է այդ ոլորտների կազմակերպությունների կողմից թողարկված հիմնական արտադրատեսակները:

Աղյուսակ 4.6

	2008թ.	**2007թ.**	**Աճի տեմպը %**
Լաքաներկանյութեր, տոննա	1526.4	1368.3	110.1
Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ/տոն.	13.3	17.8	74.7
Սիգարետներ, մլն հատ	22.6	18.5	122.2
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	1395.0	1322.8	105.5
գոֆրե, ստվարաթուղթ, տոննա	29.2	9.6	3 անգամ
գոֆրե արկղեր, տոննա	568.2	1085.5	52.3
Սիգարետներ, մլն հատ	22.6	18.5	122.2
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	1395.0	1322.8	105.5

4.2. Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

142. Ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական հզորությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները։

1)Արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն

2) Ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինում

3) Միջազգային շուկայում տնտեսության այլ ճյուղերում ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում։

4) Օժանդակել Արարատի մարզի մի շարք (որքան հնարավոր է մեծ թվով) համայնքներում պտղի և բանջարեղենի վերամշակման փոքր արտադրությունների հիմնման և զարգացման գործընթացին։ Սա ԱԳՏ-ներին թույլ կտա նվազեցնել տրանսպորտային ծախսերը դիվերսիֆիկացնել մթերումները և դրանք իրականացնել ավելի բարձր գնով։

5) Օժանդակել ԱԳՏ-ների և վերամշակողների միությունների ձևավորմանը։ Սա թույլ կտա միավորել ջանքերն ընդհանուր խնդիրների լուծման նպատակով։

6) Օժանդակել պահածոների դիվերսիֆիկացիայի և նոր արտադրատեսակների (մսի, ձկնամթերքի սնկի, և այլ պահածոների, մրգի) ներկայացման գործընթացին։ Սա հիմնականում միտված է հզորությունների լիարժեք օգտագործմանը և սեզոնային տատանումները մեղմելուն։

7) Նախատեսել խաղողի մթերման ծավալների ավելացում (օժանդակել մարզում խաղողագործության ոլորտի զարգացմանն ու ծավալային աճին՝ շեշտը դնելով հատուկ տեխնիկական տեսակների ավելացման վրա)։ Այս առաջարկությունը բխում է մարզում բազմաթիվ մթերողների առկայությունից և մթերման պատրաստակամությունից։

8) Աջակցել գինեգործության օժանդակ արտադրությունների (օրինակ տակառագործության) զարգացմանը։

9) Ուսումնասիրել Հայաստանում (Արարատի մարզում) ձկան կերերի արտադրության հիմնման հնարավորություն, ինչը թույլ կտա նվազեցնել ձկան ինքնարժեքը։

10) Օժանդակել Արարատի մարզում ձկան վերամշակման (պահածոների արտադրություն, ձկան սառեցում, չորացում, ծխեխաշում և այլն) արտադրության ստեղծմանը, նախապես իրականացնելով իրագործելիության հետազոտությունը։

11) Օժանդակել Արարատի մարզում բնական քարերի արդյունահանման և վերամշակման ընկերությունների միության ստեղծմանը։

4.3. ՓՄՁ .ոլորտի իրավիճակի վերլուծություն

143. Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ:

144. ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում ՀՀ Կառավարության որոշմամբ (19.03.2002թ. N282 որոշում) հիմնադրվեց Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը որպես Հայաստանում ՓՄՁ պետական աջակցություն իրականացնող հիմնական կառույց, իսկ ՓՄՁ ԶԱԿ-ի Արարատի մասնաճյուղը հիմնադրվել է 2005 թ. դեկտեմբերի 5-ին ՓՄՁ պետական աջակցության 2005թ. ծրագրի շրջանակներում որպես ծրագրային միջոցառում:

145. ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2008թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է 41.7% 2006թ. 41.0% դիմաց՝ կրկնակի գերազանցելով 1999 թվականի մակարդակը: Դրա հետ մեկտեղ, ավելացել է նաև ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 17% 2007 թվականի 16.9%-ի և 2003 թվականի 14.3%-ի դիմաց:

146. Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2008թ. ընթացքում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 23 հազար, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 27.1 հազար նոր աշխատատեղ, որից 14.0 հազարը՝ ՀՀ մարզերում, իսկ 13.1 հազարը՝ Երևանում:

147. ՓՄՁ սուբյեկտների հանրապետական բաշխվածքը ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց հետևյալն է՝ գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է աղյուսակ 4.7. –ում:

Աղյուսակ 4.7 Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց

Մարզեր	ՓՄՁ սուբյեկտներ					
	Ա/Ձ		ԻԱ		Ընդամենը	
	քանակ	[%]	քանակ	[%]	քանակ	[%]
Երևան	19,775	39.6%	18,018	56.0%	37,793	46.0%

Ընդամենը մարզեր	30,143	60.4%	14,185	44.0%	44,328	54.0%
Արագածոտն	1,956	3.9%	912	2.8%	2,869	3.5%
Արարատ	3,732	7.5%	1,523	4.7%	5,255	6.4%
Արմավիր	3,843	7.7%	1,238	3.8%	5,081	6.2%
Գեղարքունիք	2,892	5.8%	1,575	4.9%	4,467	5.4%
Լոռի	4,051	8.1%	2,133	6.6%	6,184	7.5%
Կոտայք	4,254	8.5%	2,282	7.1%	6,536	8.0%
Շիրակ	3200	6.4%	1661	5.2%	4861	6.0%
Սյունիք	2,661	5.3%	1,461	4.5%	4,122	5.0%
Վայոց Ձոր	1,126	2.3%	463	1.4%	1,589	1.9%
Տավուշ	2,428	4.9%	937	2.9%	3,365	4.1%
Ընդամենը ՀՀ	49,918	100%	32,203	100%	82,121	100.0%

148. Արարատի մարզում ՓՄՁ սուբյեկտների թիվը կազմում է 5255, որից անհատ ձեռնարկատերերի քանակը կազմում է 3732, իսկ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտների թիվը կազմում է 1523 ։ Ընդ որում Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր թվում Արարատի մարզի ՓՄՁ սուբյեկտները կազմում են ընդամենը 6.4 %։ Հատկանշականը այն է, որ նախկինում գործող խոշոր ձեռնարկությունները աստիճանաբար իրենց տեղը զիջեցին փոքրերին, որոնք աշխատում են ավելի ճկուն և ապահովում են ավելի բարձր արդյունքներ։

149. ՓՄՁ պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը։

150. Արարատի մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսվում է իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում։ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Արարատի մասնաճյուղի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունները և ծրագրերը՝

1) Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր
2) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
3) ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղման աջակցություն

4) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

5) ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

6) Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնի գործունեության կազմակերպում

151. ՓՄՁ-ներին ցուցաբերած աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմով /աղյուսակ 4.8./:

Աղյուսակ 4.8. **ՓՄՁ աջակցման մեխանիզմները**

Աջակցության ուղղություններ	Աջակցության մեխանիզմները ըստ ՓՄՁ սուբյեկտների	
	Գործող ՓՄՁ-ներ	Սկսնակ գործարարներ
Ֆինանսական աջակցություն	Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70%-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10 մլն. դրամ: Վարկային տոկոսի մասնակի սուբսիդավորում: Սեփական կապիտալի ֆինանսավորում:	Մինչև 2 մլն. դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130% չափով:
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն, Ուսուցողական դասընթացներ	Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար
Իրացման աջակցություն	Գովազդային վահանակների պատրաստում Պիտակների տպագրություն Ինտերնետային կայքի պատրաստում Մասնակցություն ցուցահանդեսներին:	

Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Արարատի մարզային կենտրոն:

152. 2006-2009թթ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Արարատի մասնաճյուղի կողմից ՓՄՁ պետական աջակցության ծրագրերով նախատեսված բոլոր ուղղություններով բավարարվել է 1772 աջակցության հայտ: Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ աջակցության ուղղությունների ներկայացված է աղյուսակ 4.9.-ում:

Աղյուսակ 4.9

	2006	2007	2008	ԸՆԴԱՄԵՆԸ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	395	669	488	1552
Ուսուցողական աջակցություն	14	14	55	83
Թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն	5	18	15	38
Վարկային երաշխավորությունների տրամադրում	0	5	2	7
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	0	24	12	36
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	0	1	2	3
ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն	0	3	0	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**414**	**734**	**574**	**1722**

153. ՀՀ Արարատի մարզում 2007-2008թթ. ընթացքում վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի մանրամասները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 4.10.-ում:

Աղյուսակ 4.10

	Քանակը	Երաշխավորություն	Վարկային փաթեթ
2007	5	22,772,500	50,470,915
2008	2	11,200,000	19,453,333
Ընդամենը	7	33,972,500	69,924,248

154. ՀՀ Արարատի մարզում 2007-2008թթ. ընթացքում սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրի մանրամասները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 4..11.-ում:

Աղյուսակ 4.11.

	Քանակը	Երաշխավորություն	Ստացված վարկը
2007	1	1,172,450	980,000
2008	2	2,248,790	1,880,000
Ընդամենը	3	3,421,240	2,860,000

155. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում վարկավորումն իրականացվել է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» բանկի միջոցով տարեկան 12% տոկոսադրույքով:

4.4. Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները

156. Աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են մարզկենտրոնում և քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Ծրագրի սկզբնական փուլում այս հանգամանքը թերևս հասկանալի է, սակայն հետագայում պետք է տարածաշրջանների ավելի համամասնական ընդգրկում ապահովել: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմները ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության հաջորդ տարիների պլաններում:

157. Ծրագրի շահառուների շրջանակները ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

4.5. ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնախնդիրները

158. ՓՄՁ-ի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի ուսումնասիրությունների և վարչական մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ-ի սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով. մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

159. ՓՄՁ-ի զարգացման հիմնախնդիրները պայմանականորեն կարող են դասակարգվել ըստ օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնների, որոնք իրենց ազդեցությունն ունեն թե՛ սկսնակ և թե՛ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության վրա:

160. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող օրենսդրական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ-ի սուբյեկտների և պետական մարմինների միջև փոխհարաբերություններում դեռևս առկա մի շարք վարչարարական բնույթի խնդիրներին, մասնավորապես՝ կապված տնտեսավարող

սուբյեկտների (ՓՄՁ-ի սուբյեկտների) ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի, տնտեսավարող սուբյեկտներում (ՓՄՁ-ի սուբյեկտներում) անհարկի ստուգումներ իրականացնելու հաճախականության փաստերի հետ և այլն:

161. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցներից օգտվելու անհնարինությանը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարվանից ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությանը, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար:

162. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը: Այս ենթատեքստում լուրջ խնդիրներ են տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը:

163. ՓՄՁ-ի սուբյեկտների համար լուրջ հիմնախնդիր է իրենց բիզնեսի կազմակերպումն ու կառավարումը: Այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը դեռևս բավարար չէ: Մյուս կողմից առկա է ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից նման ծառայությունների կարևորության չգիտակցման փաստը: Այս համատեքստում որակյալ խորհրդատվական ծառայությունների կարիք ունեն հատկապես սկսնակ գործարարները և գործող այն ՓՄՁ-ի սուբյեկտները, որոնք փորձում են շուկայում ներկայացնել նորարարական արտադրանք կամ ծառայություն:

164. Ընդհանրացնելով վերը շարադրվածը կարելի է փաստել, որ մարզի տնտեսական զարգացման ներկայիս փուլում ՓՄՁ-ի սուբյեկտների զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝

1) ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարուց ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես արտադրության գիտատարր ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար,

2) սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակասը,

3) գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները,

4) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են թողարկվող արտադրանքի որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, ինչին էականորեն խոչընդոտում է ժամանակակից լաբորատորիաների բացակայությունը, որոնց փորձաքննության արդյունքները կընդունվեն արտահանող երկրներում,

5) միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը,

6) տեղեկատվական հոսքերի անմատչելիությունը և դրանց ընկալման, մշակման ու փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը,

7) շուկայական և մասնավորապես արտարժութային ռիսկերից ապահովագրման և դրանք կառավարելու հետ կապված բարդությունները, ինչը հատկապես խնդիրներ է ստեղծում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար,

8) ՓՄՁ-ի սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ընձեռվող հնարավորությունների թերի և ոչ բավարար օգտագործման հետևանքով շուկայում թույլ մրցակցային դիրքերը, ինչը մասամբ պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիությամբ և դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ ոչ բավարար պատկերացումներով:

4.6. Մասնավոր հատվածի զարգացման առաջնահերթությունները

165. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները

արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

4) Անհրաժեշտ է օժանդակություն ցույց տալ Արարատի մարզի ՓՄՁ-ին՝ շուկայավարման ռազմավարության մշակման և իրականացման հարցում: Դա կարող է իրականացվել համապատասխան ծառայության կամ կենտրոնի ստեղծման միջոցով:

5) Օժանդակել Արարատի մարզի ՓՄՁ-ին՝ ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների հայտնաբերման և արտաքին ֆինանսավորման ներգրավման հարցերում: Այդ նպատակով անհրաժեշտ է բանակցություններ վարել բանկերի և ներդրումային հիմնադրամների հետ՝ ռեսուրսների հայթայթման կամ առկա միջոցների ուղղորդման նպատակով:

6) Գյուղմթերքներ մթերող կազմակերպությունների համար ստեղծել տարբերակված (երկարաժամկետ և կարճաժամկետ) ֆինանսական (հիմնականում վարկային)ռեսուրսներից մատչելի պայմաններով (ցածր տոկոսադրույք, մարման համապատասխան գրաֆիկ և այլն) օգտվելու հնարավորություններ:

7) Օժանդակել արտադրողների այլընտրանքային ֆինանսավորման կամ լիզինգային ծրագրի իրականացման հարցում:

8) Օժանդակել Արարատի մարզի տարածքում տեղեկատվական կենտրոնի հիմնադրման գործին:

9) ՓՄՁ-ին տեղեկություններ ապահովել ոլորտների ժամանակակից տեխնիկական զարգացումների, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև շուկայական վերջին զարգացումների վերաբերյալ:

10) Հնարավորինս օժանդակել տնտեսություններին՝ արդյունաբերական արտադրություն կազմակերպելու հարցում, միավորելով նրանց միությունների մեջ, ինչը թույլ կտա շուկա (արտաքին) մտնել արտադրանքի ավելի մեծ խմբաքանակով, համապատասխան դիզայնով, փաթեթավորմամբ և գովազդի ռազմավարությամբ:

166. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների

իրագործման փուլային սխեման ներկայացված է Գծապատկերում.



5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

5.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

167.Համաձայն ԿԶԾ-ի՝ կրթության բնագավառը դիտվում է որպես տնտեսության առաջընթացն ապահովող և մարդկային աղքատության հաղթահարման առաջնային գործոն: Կրթության ոլորտը ներառում է կրթական մի շարք օղակներ, որոնց համագործակցված գործունեությունը հանգեցնում է որակյալ կրթության ապահովմանը: Ստորև ներկայացվում է կրթության տարբեր օղակներում առկա իրավիճակը:

168. **Նախադպրոցական կրթություն.** Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջին և կարևորագույն աստիճանն է: Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ռազմավարության պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը տարբերակված ծրագրերով /այլընտրանքային ծառայություններով/, ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: 2004թ. մարզում ներդրվեց «Այլընտրանքային ծառայության» փորձնական 5 տարբեր ծրագրեր, որը բերեց երեխաների մանկապարտեզ հաճախման թվի աճի:

169. Խիստ արդիական է դարձել նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակման և ներդրման հարցը: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով ՀՀ կառավարության կողմից կիրականացվի նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակում և ներդրում: Ոլորտում գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

170. Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը Արարատի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը և մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը նվազել է անկախության առաջին տարիներին, ինչը շարունակվել է նաև հետագա տարիներին, թեև Հայաստանի Հանրապետության տնտեսական դրությունը կայունացման միտում ուներ, էներգետիկ ճգնաժամը ջեռուցման այլընտրանքային միջոցները /փայտ կերոսին և այլն/ ձեռք բերելու դժվարությունները, իսկ հետո նաև ֆինանսական

ռեսուրսների սղությունը բերեցին մանկապարտեզ հաճախող երեխաների թվի նվազմանը: Բացի այդ, մանկապարտեզների փակման և երեխաների հաճախման թվաքանակի ներառման վրա իր ազդեցությունն ունեցավ նաև Արցախյան հակամարտությունը, հատկապես սահմանամերձ բնակավայրերում /Երասխ, Պ.Սևակ/, ինչպես նաև նախադպրոցական հաստատությունները ՏԻՄ-երի ենթակայության հանձնելը:

171. Ինչպես հանրապետությունում, այնպես էլ Արարատի մարզում 2003-2009թթ. ընկած ժամանակահատվածում մեծ տատանումներ են եղել և մանկապարտեզների թվի և մանկապարտեզ հաճախող երեխաների թվերի միջև, իսկ վերջին տարիների վիճակագրական տվյալները ցույց են տալիս որ դրանց թիվը աճի միտում ունի:

Աղյուսակ 5.1.Նախադպրոցական հաստատությունների գործունեությունը

	Նախադպրոցական հիմնարկների քանակը							Հաճախող երեխաների թիվը						
	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Հայաստանի Հանրապետություն	682	637	623	623	617			46141	45470	47791	47908	49777		
ք. Երևան	187	180	175	172	172			20915	21006	21530	21371	22173		
Արագածոտն	24	32	25	23	17			895	903	782	1471	802		
Արարատ	74	59	65	72	66	67	68	3001	3359	3679	3725	3904	4252	4810
Արմավիր	79	58	52	49	53			3089	3082	3312	3369	3754		
Գեղարքունիք	43	43	44	45	45			2314	2469	2593	2404	2461		
Լոռի	53	52	54	56	53	54		3522	2915	3179	3283	3221	3373	
Կոտայք	52	52	50	50	50			2940	2614	3326	2529	3839		
Շիրակ	50	46	45	45	46			3337	3168	3378	3271	3516		
Սյունիք	60	55	52	50	55	47		3565	3399	3303	3137	3467	3413	
Վայոց Ձոր	17	17	17	17	17			714	684	669	778	628		
Տավուշ	43	43	44	44	43			1849	1871	2040	1970	2012		

Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2003-2005, և 2008-2009 ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության , մշակույթի և սպորտի վարչության տվյալներ:

172. Նախադպրոցական համակարգում նկատելի է աղքատ և ոչ աղքատ խավերի ընդգրկվածության զգալի անհավասարություն, մինչդեռ հիմնական կրթությունում տարբեր խավերի ընդգրկվածությունը բավական բարձր է և համասեռ:

173. Մարզի 82 նախադպրոցական հաստատություններից գործում են 68-ը, որից 67-ը համայնքային ենթակայության, 1 գերատեսչական /Արարատ ցեմենտ ՓԲԸ-ի մանկապարտեզ/: Մանկապարտեզներում երեխաների թիվը 4810 է, խմբերի թիվը 181, մանկավարժների թիվը 410: Մարզի 31 գյուղական համայնքներում չկան նախադպրոցական հաստատություններ, իսկ Այնթապ գյուղը, որն ունի 2 դպրոց, անհրաժեշտություն ունի նաև երկրորդ՝ նոր մանկապարտեզի հիմնադրման, 14 գյուղական համայնքներում պահպանվել են մանկապարտեզի շենքերը, բայց գտնվում են ոչ բարվոք վիճակում: Մանկապարտեզների մեծամասնությունում անհրաժեշտություն կա հիմնանորոգման և լոկալ ջեռուցման:

Աղյուսակ 5.2, 2009թ. Արարատի մարզում գործող մանկապարտեզներ

N	Մանկապարտեզի թիվը	Խմբերի թիվը	Երեխաների թիվը	Վերանորոգված է, թե ոչ
1	2	3	4	5
1.	Արտաշատ ք.N1	6	145	մասնակի
2.	Արտաշատ ք.N3	5	135	մասնակի
3.	Արտաշատ ք.N4	6	130	մասնակի
4.	Արտաշատ ք.N5	4	110	մասնակի
5.	Արտաշատ ք.N6	2	45	մասնակի
6.	Արտաշատ ք.N7	2	45	վերանորոգված չէ
7.	Արտաշատ ք.N8	2	50	վերանորոգված չէ
8.	Արևշատ	1	40	մասնակի
9.	Արաքսավան	1	20	վերանորոգված չէ
10.	Այգեզարդ	2	55	վերանորոգված է
11.	Այգեստան	2	42	վերանորոգված չէ
12.	Բաղրամյան	2	50	վերանորոգված չէ
13.	Դալար	3	60	վերանորոգված չէ
14.	Դիմիտրով	1	26	վերանորոգված չէ
15.	Կանաչուտ	1	30	մասնակի
16.	Մխչյան	3	93	վերանորոգված է
17.	Մրգավետ	2	60	վերանորոգված չէ
18.	Նարեկ	2	43	մասնակի
19.	Դվին	1	25	վերանորոգված չէ
20.	Նորաշեն	1	35	վերանորոգված չէ
21.	Նշավան	2	52	մասնակի
22.	Շահումյան	2	65	մասնակի
23.	Ոստան	1	28	մասնակի
24.	Հովտաշեն	1	25	մասնակի
25.	Վ.Արտաշատ	3	90	մասնակի
26.	Քաղցրաշեն	2	70	մասնակի
27.	Մրգավան	2	50	վերանորոգված է
28.	Գետազատ	0	0	մասնակի
29.	Արարատ ք N1	4	120	վերանորոգված չէ
30.	Արարատ ք N2	6	170	մասնակի
31.	Արարատ ք N3	4	120	վերանորոգված չէ
32.	Արարատ ք N5 ց/շ	6	140	վերանորոգված է

33.	Այգավան	4	75	վերանորոգված չէ
34.	Ավշար	3	66	ընթացքում է
35.	Արարատ գ.	3	95	մասնակի
36.	Արմաշ	3	75	մասնակի
37.	Եղեգնավան	2	45	մասնակի
38.	Գոռավան	2	50	մասնակի
39.	Լուսառատ	3	97	մասնակի
40.	Նոյակերտ	3	67	վերանորոգված չէ
41.	Նոր կյանք	1	25	վերանորոգված չէ
42.	Ոսկետափ	3	65	մասնակի
43.	Սուրենավան	3	75	մասնակի
44.	ՈՒրցա՝ձոր	2	55	մասնակի
45.	Տափերական	3	96	վերանորոգված չէ
46.	փ. Վեդի	4	104	ընթացքում է
47.	Վանաշեն	2	55	մասնակի
48.	Վեդու N1	4	130	մասնակի
49.	Վեդու N2	4	140	մասնակի
50.	Վեդու N3	4	130	մասնակի
51.	Մասիս ք N1	3	75	մասնակի
52.	Մասիս ք N2	3	75	մասնակի
53.	Մասիս ք N3	8	195	մասնակի
54.	Մասիս ք N4	5	115	մասնակի
55.	Մասիս ք N5	4	95	մասնակի
56.	Մասիս ք N7	2	45	վերանորոգված չէ
57.	Գեղանիստ	1	27	վերանորոգված չէ
58.	Դարակերտ	3	75	մասնակի
59.	Հովտաշատ	3	71	վերանորոգված չէ
60.	Մարմարաշեն	2	55	վերանորոգված չէ
61.	Նորամարգ	1	33	մասնակի
62.	Նորաբաց	2	40	մասնակի
63.	Նոր Կյուրին	1	40	վերանորոգված չէ
64.	Նոր Խարբերդ	3	110	մասնակի
65.	Ջրահովիտ	1	30	վերանորոգված է
66.	Սիս	1	25	մասնակի
67.	Ղուկասավան	2	60	վերանորոգված չէ
68.	Հայանիստ	1	30	մասնակի
	ԸՆԴԱՄԵՆԸ	181	4810	

174. Քաղաքային մանկապարտեզներում վիճակը համեմատաբար բարվոք է, դրանց մեծամասնությունը աշխատում են նաև ձմռանը, որը նույնպես նպաստում է երեխաների թվի կայունացմանը և աճին:

Աղյուսակ 5.3, Արարատի մարզի քաղաքային համայնքների մանկապարտեզներ

ՔԱՂԱՔ	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԽՄԲԵՐԻ ԹԻՎԸ	ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ	ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԹԻՎԸ
ք.Արտաշատ	7	27	660	58
ք.Արարատ	4	20	550	40

ք.Վեդի	3	11	400	26
ք.Մասիս	6	25	600	41
ընդամենը	20	83	2210	165

175. Մարզում 3-6 տարեկանների ընդգրկվածությունը մանկապարտեզներ կազմում է 33%: Անմատչելիությունը, որպես չընդգրկվածության պատճառ առավել սուր է արտահայտված գյուղական բնակչության շրջանում, որտեղ բացակայում են նախադպրոցական հաստատությունները, առկա է նյութական անմատչելիությունը, համայնքների բյուջեի սղությունը և մանկապարտեզների սեզոնային բնույթի աշխատանքը:

176. Նախադպրոցական հաստատությունները քաղաքային համայնքներում գործում են 2-ից 8 խմբերով, իսկ գյուղական համայնքներում 1-ից 3 խմբերով:

Աղյուսակ 5.4. Արարատի մարզի գյուղական համայնքների մանկապարտեզների

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԽՄԲԵՐԻ ԹԻՎԸ	ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ	ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԹԻՎԸ
48	**143**	**2600**	**245**

177. Նախադպրոցական հաստատությունների առջև այսօր ծառացած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

1) Կապիտալ վերանորոգում: Նախադպրոցական հաստատությունների գերակշռող մեծամասնության շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում:

2) Անբավարար ջեռուցում: Կենտրոնական ջեռուցման համակարգը գրեթե չի գործում և մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի և վառելիքասարքերի միջոցով, ինչը մեծ տարածքի միջանցքների և դահլիճների պայմաններում արդյունավետ չէ:

3) Սնունդը: Չնայած, որ նախադպրոցական հաստատությունների գերակշռող մասը աշխատում է 8-ժամյա ռեժիմով, երեխաների համար կազմակերպվում է սննդի 3-անգամյա պարտադիր մատուցում, որի տեսականին մնում է գրեթե միատար և անհրաժեշտություն է առաջանում մանկական սննդակարգում առաջնությունը տալ տեսականու բազմազանությանը և կալորիականությանը:

4) Գույք: Մանկապարտեզներում օգտագործվող կոշտ և փափուկ գույքը բարոյապես և ֆիզիկապես մաշված է: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատություններն ունեն կոշտ և փափուկ գույքի, ուսուցողական դիդակտիկ պարագաների, խաղալիքների, բակային խաղերի, խմբասենյակների և դահլիճների կահավորման անհրաժեշտություն:

5) Մասնագիտական կադրեր: Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են մանկավարժների վերապատրաստման ակտիվ միջոցառումներ, ապա նախադպրոցական ոլորտի կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է և անհրաժեշտ: Չնայած մանկապարտեզներն ապահովված են մասնագետ կադրերով, այնուամենայնիվ զգացվում է

համապատասխան վերապատումների անհրաժեշտություն: ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի Արտաշատի մասնաճյուղի միջոցով իրականացվել են վերապատրաստման որոշ միջոցառումներ, որոնք կրում են սահմանափակ բնույթ: Փորձը ցույց է տալիս, որ մարզում կարևորվում է այլընտրանքային ծառայությունների մատուցումը նախադպրոցահասակ երեխաներին, որոնք կարող են լրացնել կրթության այս օղակում առկա բացերը:

178. Մարզի նախադպրոցական հաստատությունների 2011-2014թթ. զարգացման ռազմավարությանֆինանսավորումըներկայացվածէ հավելված 5.1-ում:

179. ***Հանրակրթություն.*** Վերջին տարիներին կառավարության կողմից կրթության ոլորտում իրականացված միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի, աշխատուժի օգտագործման արդյունավետության բարելավում) ուղղված են համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հանրակրթության որակի բարելավմանը: Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:

180. Մարզի հանրակրթական համակարգում գործում են 112 պետական հանրակրթական դպրոցներ՝ 4-ը՝ հիմնական, 108-ը միջնակարգ: Դպրոցներից 21-ը(18.7%) գործում են մարզի 4 քաղաքներում, 91-ը(81.3%) գյուղական համայնքներում: Քաղաքային դպրոցներում սովորում են 9286 աշակերտներ (22.6 %) գյուղական՝ 25205 :

181. Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտը Արարատի մարզում ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես. զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում Արարատի մարզում կազմում է 100%:

182. 2009-2010 ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել են միջն հաշվով 35114 աշակերտ, որը անցած ուսումնական տարվա /2008-2009թթ./ համեմատ պակաս է 1597 աշակերտով; Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում պակասել է 39-ով կազմելով 1710: Աշակերտների բնական աճի պակասի հետևանքով /2001 թվականի համեմատությամբ մարզում պակասել է շուրջ 12 հազար աշակերտ/ յուրաքանչյուր տարի պակասում է դասարանների թիվը: Վերջին տարիներին ծնելիության ցածր մակարդակը, արտագաղթը հանգեցրել է դասարանների միջին խտության անկման: Դասարաններում աշակերտների միջին խտությունը բարձրացնելու համար անհրաժեշտություն է առաջանում կոմպլեկտավորել երկկոմպլեկտ և եռակոմպլեկտ դասարաններ: 2008-2009 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում տարբեր պատճառներով դպրոցից դուրս են եկել 244 աշակերտ:

183. Դպրոցներում աշխատում են 3036 մանկավարժներ: Բարձրագույն կրթություն ունեն 2338 մանկավարժներ / 77%/, իսկ միջին մասնագիտական կրթություն՝ 698 /23%/:

184. 2007թ-ին ուսուցչի միջին աշխատավարձը մարզում բարձրացել է 23 %-ով 2008թ՝ 14.1%-ով իսկ 2009թ՝ 23 %-ով: Ուսուցչական անձնակազմի հիմնական ծանրաբեռնվածությունը մարզում կազմում է 18.1 ժամ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝11.6, դասարանների միջին խտությունը՝ 20.5 աշակերտ:

185. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը էականապես կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևոր է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը:

186. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից Համաշխարհային բանկի ֆինանսական միջոցներով իրականացվող «Կրթության որակի և համապատասխանության» /ԿՈՀ/ ծրագրի իրականացման նպատակով մարզի տարածքը բաժանված է 4 քլաստերների՝ Արտաշատի, Արարատի, Վեդու և Մասիսի որոնցից յուրաքանչյուրի տարածքում գտնվող դպրոցներից «Դպրոց կենտրոններ» են ընտրվել համապատասխանաբար Արտաշատ քաղաքի թիվ 6, Արարատ գյուղի թիվ 2, Վեդի քաղաքի թիվ 2 Այնթապի թիվ 2 դպրոցները:

187. Դասավանդման մեթոդիկայի կատարելագործման նպատակով մարզի բոլոր ուսուցիչները մասնակցել են դպրոց կենտրոններում և Կրթության ազգային ինստիտուտի Արարատի մասնաճյուղում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

188. Մարզում նպատակային աշխատանք է տարվել 1997թ. հիմնադրված «Դասագրքերի շրջանառու հիմնադրամի» շրջանակներում աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցների պահանջարկի հիման վրա աշակերտները ապահովվում են դասագրքերով և կատարում համապատասխան ներդրումներ դպրոցի բանկային իրենց ենթահաշիվներին՝ ապահովվելով դասագրքերի 100 տոկոս վերարտադրություն:

189. Մարզի բոլոր դպրոցներն անցել են ֆինանսավորման նոր կարգի: Այդ կապակցությամբ մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հետ համատեղ ըստ տարածաշրջանների, անց են կացվել հաշվապահների վերապատրաստման դասընթացներ« որի ժամանակ ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերի վարման և ֆինանսավորման նոր կարգի հետ կապված խնդիրները:

190. Թեև հանրակրթական ոլորտը պետության գերակա ուղղություններից է և հատկացվող բյուջետային միջոցները տարեցտարի ավելանում են, սակայն դրանք դեռևս բավարար չեն դպրոցների լիարժեք պահպանման և գործարկման համար:

191. Մարզի դպրոցական շենքերի և շինությունների պահպանումը և շահագործումը՝ հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում են ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալները ավելացվում է:

192. Մարզի հանրակրթության ոլորտում իրականացվել են մի շարք ծրագրեր /շենքերի վերանորոգման, աշակերտական գույքի և համակարգիչների ձեռքբերման, ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր/, որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթության որակի վրա:

Աղյուսակ 5.5

	Նախարարության պատվիրատուի, օբյեկտի անվանումը	Նախորդ տարիներին կատարված աշխատանքներ			Մնացորդը առ 01,01,09թ,	2009թ.ծրագրի նախագիծ	
		մինչև 01.01.07թ	2007թ.	2008թ.		կապիտալ ներդրում	սպասվող կատարող.
	2	6	7	8	9	10	11
	Շինարարություն						
	ք.Արտաշատի ՈԿՖ բանավանի դպրոց		200 000,0	90 900,0	656 300,0	114 450,0	114 450,0
	գ.Վարդաշենի դպրոց			200 000,0	250 000,0	141 700,0	141 700,0
	գ.Սիփանիկի դպրոց				140 000,0	70 000,0	70 000,0
	Հիմնանորոգում						
1	գ.Մարմարաշենի դպրոց			20 000,0	307 720,0	70 850,0	70 850,0
2	Մասիս քաղաքի Մաշտոցի անվան թիվ 1 դպրոց	25000,0		15 000,0	160 960,0	87 200,0	87 200,0
3	գ.Գեղանիստի դպրոց			30 000,0	230 876,0	109 000,0	109 000,0
4	գ.Արալեզի դպրոց			50 000,0	243 598,0	98 100,0	98 100,0
5	գ.Սուրենավանի դպրոց			70 000,0	180 908,0	87 200,0	87 200,0
6	գ.Ոսկետափի թիվ 2 դպրոց	16105,19			244 394,8	66 000,0	66 000,0
7	ք.Արտաշատի թիվ 6 դպրոց	41120,0			160 480,0	80 000,0	80 000,0
8	գ.Դեղձուտի դպրոց				196 200,0	34 000,0	34 000,0
9	գ.Բերդիկի դպրոց				188 860,0	33 000,0	33 000,0
10	ք.Մասիսի թիվ 3 դպրոց				225 000,0	25 000,0	25 000,0
11	գ.Սայաթ Նովայի դպրոց				220 000,0	25 000,0	25 000,0
12	գ.Նոյակերտի դպրոց		30000,0	16 740,0	167 300,0	76 300,0	76 300,0
13	գ.Արգավանդի դպրոց				250 000,0		
14	գ.Դաշտավանի դպրոց	10 000,00			160 000,0		
15	ք. Մասիսի թիվ 2 դպրոց				220 000,0		
16	գ.Նոր Խարբերդի թիվ 2				230 000,0		
17	ք.Արտաշատի թիվ 1 դպրոց	154300,0			110 000,0		
18	ք.Արտաշատի թիվ 3 դպրոց		42120,0		170 000,0		
19	գ.Վ.Դվինի դպրոց				150 000,0		
20	գ.Աբովյանի դպրոց	11790,0			150 000,0		
21	գ.Ջրաշենի դպրոց				220 000,0		
22	գ.Կանաչուտի դպրոց	10000,0			180 000,0		
23	գ.Այգեպատի դպրոց	12900,0			120 000,0		
24	գ.Երասխավանի դպրոց				90 000,0		
25	գ.Շաղափի դպրոց				70 000,0		
26	ք.Արարատի թիվ 4				200 000,0		

27	ք.Արարատի թիվ 2	20000,0			280 000,0		
28	գ.Քաղցրաշենի դպրոց				200 000,0		
29	ք.Արտաշատի թիվ 4				170 000,0		
30	գ.Վերին Արտաշատի դպրոց				160 000,0		
31	գ.Խաչփարի դպրոց				200 000,0		
32	գ.Նոր Ողու դպրոց				200 000,0		
33	գ.Սիսավանի դպրոց				220 000,0		
34	գ.Մրգավանի դպրոց	18970,0			165 000,0		
35	գ.Փոքր Վեդու դպրոց	5000,0			235 000,0		
36	գ.Այգեզարդի դպրոց	36350,0			90 000,0		
37	գ.Դիտակի դպրոց				120 000,0		
38	գ.Նարեկի դպրոց	9860,0			110 000,0		
39	գ.Բյուրավանի դպրոց				180 000,0		
40	գ.Գետազատի դպրոց	4050,0			180 000,0		
41	գ.Ն.Դվինի դպրոց				205 000,0		
42	գ.Լանջազատի դպրոց	25000,0			200 000,0		
43	գ.Բարձրաշենի դպրոց				260 000,0		
44	ք.Արարատի թիվ 1				200 000,0		
45	ք.Վեդու թիվ 1	6499,4			220 000,0	10 000,0	10 000,0
46	գ.Արարատի թիվ 1	49760,0			200 000,0		
47	գ.Ուրցաձորի թիվ 1	34028,0			160 000,0		
48	գ.Լուսառատի դպրոց				100 000,0		
49	գ.Պ.Սևակի դպրոց				7 000,0		
50	գ.Ջրահովիտի դպրոց				180 000,0		
51	գ.Ազատաշենի դպրոց				110 000,0		
52	գ.Դարակերտի դպրոց	3000,0			170 000,0		
53	գ.Նորամարգի դպրոց	23500,0			160 000,0		
54	գ.Նիզամու դպրոց	20000,0			160 000,0		
55	գ.Այնթապի թիվ 2				200 000,0		
56	գ.Լանջարի դպրոց	10000,0			30 000,0		
57	գ.Լուսաշողի դպրոց	23500,0			1 811 500,0		
58	գ.Սիսի դպրոց				200 000,0		
59	*Ավագ դպրոց*						
60	ք.Մասիսի թիվ 5			100 000,0	112 445,5	112 445,5	112 445,5
61	**Ընդամենը**	**570 733**	**272 120**	**592 640**	**13 088 542**	**1 240 246**	**1 240 246**

193. Մինչև 2010թ. դպրոցների կառուցման, հիմնանորոգման և արդիականացման ծրագրով մարզում կատարվել է 8819.961 մլն . դրամի կապիտալ ներդրում:

194. Մարզի 52 դպրոցներ ունեն իրենց սեփական կաթսայատները,որոնցից աշխատում են 47-ը: Մնացած դպրոցներից՝ 10–ում իրականացվում է վառարաններով, իսկ 55-ում էլեկտրական մարտկոցներով ջեռուցում:

195. Ավագ դպրոցների փորձնական ծրագրում ընդգրկված Մասիս քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի վերանորոգման և նոր մասնաշենքի կառուցման համար 2010թ. պետ.բյուջեի միջոցներով նախատեսվում է ներդնել 212 մլն դրամ:

196. 2007-2008թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներից մարզին հատկացված 137855,3 հազար դրամ գումարով ձեռք է բերվել 12-ամյա կրթության անցման կապակցությամբ 6 տարեկան երեխաների ուսուցման կազմակերպման համար

անհրաժեշտ դպրոցական գույք: 2008-2009թթ մարզի դպրոցները համալրվել են 1500 կոմպլեկտ տարրական դասարանների սեղան նստարաններով:

197. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդի գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության հիմնական մասը հնամաշ է, իսկ մի մասը օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

198. Մարզի 68 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ, 88 դպրոցներ ապահովված են ինտերնետ կապով, 6-11-րդ դասարաններում սովորող 26 աշակերտին բաժին է ընկնում մեկ ժամանակակից համակարգիչ: Այս ցուցանիշները դեռևս բավարար չեն: Մարզի 5 դպրոցներ չունեն ժամանակակից համակարգիչներ: Մարզի ոչ բոլոր դպրոցներն են ընդգրկվել դպրոցների համակարգիչների շրջանառու համակարգում:

199. Այնուամենայնիվ, չնայած իրականացված միջոցառումներին, մարզի կրթական հաստատություններում ներկայումս համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մեծ մասը դեռևս խիստ կարիք ունի աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, գրատախտակների, փափուկ գույքի: Դպրոցները խիստ կարիք ունեն նաև առարկայական դիդակտիկ պարագաների, համակարգչային տեխնիկայի: Հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

200. Մարզպետարանի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքների համաձայն, այսօր մարզի դպրոցների համար պահանջվում է դպրոցներն ապահովել.

1) մոտ 4500 աշակերտական սեղան-աթոռներով,

2) 500 գրատախտակով,

3) լաբորատոր սարքավորումներով և գույքով,

4) 500 ուսուցչական սեղաններով:

201. Վերանորոգել և կահավորել դպրոցների

1) բացօթյա խաղահրապարակները,

2) բուֆետներն ու ճաշարանները,

3) մարզադահլիճները,

4) կաբինետներն ու ուսուցչանոցները:

202. Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և իրականացնել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթի լրամշակում: Չնայած 2006թ. դպրոցների խորհուրդների մոտ 610 անդամներ անցել են վերապատրաստումներ համաշխարհային բանկի «ԿՈՀ» ծրագրի շրջանակներում, սակայն դրանց կազմի փոփոխության պատճառով խորհուրդների նոր անդամները տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Այսպես; դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին, համարելով, որ դա պետության խնդիրն է:

203. Մասնագիտական կրթություն.Մարզում գործում է մեկ հավատարմագրված ոչ պետական ԲՈՒՀ «Արտաշատ» համալսարան :

204.Ներկայումս Արարատի մարզում գործում են տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, այդ թվում.

1) Արտաշատի պետական քոլեջը
2) Արտաշատի բժշկական քոլեջը
3) Արարատի պետական քոլեջը
4) Արարատի բժշկական քոլեջը
5) Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջը
6) Վեդի քաղաքում գործող Եվրոպական քոլեջի մասնաճյուղը։

205. Վերջին տարիներին իրավիճակն այս բնագավառում էլ ավելի է վատթարացել։ Անընդհատ և սրընթաց նվազում է մասնագիտական-տեխնիկական կրթության պետական պատվերը, որը բերում է ինքնաֆինանսավորմամբ զարգանալու անհրաժեշտության։ Այդ հաստատությունները ունեն անբավարար ուսումնանյութական բազա և անբավարար շենքային պայմաններ։

206. Այսօր այդ կրթական հաստատություններն իրենց առկա տեսքով այլևս մրցունակ չեն կրթական ծառայությունների շուկայում, ինչպես և դրանց շրջանավարտները մրցունակ չեն աշխատանքի շուկայում։

207. Ընդհանրացնելով մարզի կրթության ոլորտի իրավիճակի նկարագրությունը ամփոփ ձևով ներկայացվում է նրա հիմնական խնդիրները և նրանց միջև փոխկապվածությունը (տես՝ Գծապատկեր):

Գծապատկեր 1. Կրթության ոլորտի խնդիրների «ծառը»



5.1.2. Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

208. Կրթության ոլորտի իրավիճակի բարելավման նպատակով, ԿԶԾ-ի սույն ոլորտի ռազմավարական մոտեցումները կիրառվելու են նաև Արարատի մարզում: Մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնածրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման, մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և համապատասխան միջոցառումները:

209. Ելնելով Արարատի մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվելու հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը: Անհրաժեշտ է նաև իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ:

210. Կարևոր պայման է դպրոցներում հեռահաղորդակցման կենտրոնների ստեղծումը: Դրա միջոցով ակնկալվում է դպրոցը վերափոխել ինտերնետային կապով ապահովված համակարգչային, հեռահաղորդակցման, կրթական համայնքային կենտրոնի՝ ամրագրելով տեղեկատվություն ստացող և փոխանակող, մշակութային և կրթական բազմապիսի ծառայություններ, ինչպես նաև համայնք-դպրոց շարունակական կապի հնարավորությունները:

211. Մարզի կրթության ոլորտի զարգացման տեսանկյունից չափազանց կարևորվում է նաև նախադպրոցական կրթության համակարգի կատարելագործումը, զարգացումը, այլընտրանքային ծառայությունների մշակումը և մատուցումը: Ստորև գծապատկերում ներկայացված է կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները

Կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



212. ***Կրթության ոլորտի ֆինանսավորումը*** 2011-2014թթ Արարատի մարզի կրթության ոլորտին պետության կողմից ուղղված ծախսերը ներկայացվում են ստորև

Աղյուսակ 5.6 /հազ.դրամ/

Կրթության ոլորտ	2008թ.	2009թ.	20010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Հանրակրթական դպրոցներ	4777765,9	5817740,1	5803233,3	6285442,0	6137807,0	5959015,0

213. Ինչպես 2008-2010 թվականներին, այնպես էլ 2011-2014 թվականներին՝ իրականացվող ծրագրերով կրթության բնագավառի հիմնական գերակայությունը հանրակրթության ոլորտն է: Հանրակրթության զարգացման համար նախատեսված են նաև Համաշխարհային բանկի վարկային ծրագրի միջոցները: Թեև տարեցտարի այդ հատկացումները պակասում են, այնուամենայնիվ, դա զգալի ներդրում կլինի Արարատի մարզի հանրակրթական համակարգի իրավիճակի բարելավման գործում:

214. Մարզի հանրակրթական համակարգի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 5.1.1-ում:

Կրթության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ` Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արարատի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում 100% 2. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը` հանրակրթության բնագավառում-1/14 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը -9 4. 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռն այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում, 60 %	Կրթության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
1.1 Դպրոցական շենքերի վերանորոգում, ջրամատակարարում, ջրահեռացում	Վերանորոգված դպրոցների թիվը - 112	Կառավարության կողմից դպրոցական շենքերի վերանորոգման և նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով հատկացվող ֆինանսական միջոցները տարեցտարի ավելանում են:
1.2 Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, 40%	
1.3 Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում	Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, 80 %	
1.4 Դպրոցական գույքի տրամադրում (ներառյալ 12-ամյա կրթությանը համապատասխան)	Նորացված գույք ունեցող դպրոցների թիվը - 60	
1.5 Լաբորատոր սարքավորումների և նյութերի, դիդակտիկ պարագաների ձեռքբերում, գրադարանային ֆոնդի համալրում և թարմացում	Համալրված և արդիականացված լաբորատորիաներ ունեցող դպրոցների թիվը - 45 Թարմացված գրադարաններ ունեցող դպրոցների թիվը 30	
1.6 Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը - 112 Ինտերնետային կապով ապահովված դպրոցների թիվը -112	
1.7 Դպրոցական արհեստանոցների վերազինում (հաստոցներ, գործիքներ և	Վերազինված արհեստանոց ունեցող դպրոցների թիվը 20	

նյութեր)		
1.8 Դպրոցական բուֆետ-ճաշարանների ստեղծում և համապատասխան գույքով ապահովում	Նոր բուֆետ-ճաշարաններ ունեցող դպրոցների թիվը - 85	
	Ավագ դպրոցների թիվը -5	
	Ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը - 5	
2. Ուսուցչական անձնակազմի որակավորման բարձրացում		
2.1 Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը - 3000 Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվը -3000	Ուսուցիչների վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀՀ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում:
2.2 Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով		
2.3 Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցում		
2.4 Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Ատեստավորված ուսուցիչների թիվը 2400	
3. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում		
3.1 Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը 112 Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում /10%/	Դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀՀ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում:
3.2 Դպրոցական խորհուրդների անդամների վերապատրաստում՝ խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով	Վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցական խորհրդի անդամների թիվը 784	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում		
6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ջրամատակարարում, ջրահեռացում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը 60%	Պետությունը հետևողական է նախադպրոցական կրթության օրենքի կիրարկման, ենթաօրենսդրական ակտերի մշակման և գործարկման հարցում:

6.2 Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի նորացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիկական բազա ունեցող մանկապարտեզների թիվը 50%	
6.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվը Վերապատրաստված ղեկավար կադրերի թիվը 410	
6.4 Նախադպրոցական այլընտրանքային ծառայությունների մատուցում	3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ընդգրկվածության 80%	

5.2 ՄՇԱԿՈՒՅԹ

5.2.1 Մշակույթի ոլորտի իրավիճակի վերլուծություն

215. Մշակույթն ի թիվս հասարակական զարգացման այլ գործոնների, ձևավորում է այն միջավայրը, որը հնարավոր է դարձնում մարդկանց խաղաղ համակեցությունը, նպաստում է տնտեսական գործունեության բարձրացմանը, հասարակության հիմքում ընկած արժեքների շարունակական կատարելագործմանը:

216. Արարատի մարզում մշակութային ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակույթի տների, գրադարանների, թանգարանների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, պատմամշակութային հուշարձանների, ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ:

217. Մարզերում մշակույթի զարգացման խնդիրները ներառված են մի շարք ծրագրերում, մասնավորապես՝ «ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրում», ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 5-ի «ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 589-Ն որոշմամբ հաստատված ծրագրում, ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 3-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պահպանության հայեցակարգից բխող միջոցառումների մասին» N 17 արձանագրային որոշմամբ ընդունված ժամանակացույցի միջոցառումներում:

218. Մարզի տարածքում գործող մշակութային բոլոր օբյեկտները համայնքային ենթակայության են, բացառությամբ թանգարանների, որոնք մարզային ենթակայության են, և Ամո Խարազյանի անվ. պետական դրամատիկական թատրոնի և մարզային գրադարանի, որոնք գործում են ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության ներքո:

219. 2009թ. մարզի տարածքում գործել են 89 մշակույթի տուն, 10 երաժշտական, 5 արվեստի, 3 գեղարվեստի դպրոց, 1 պատկերասրահ, 95 հանրային և

1 մարզային գրադարան, 2 տուն-թանգարան, 1 պետական դրամատիկական, 3 տիկնիկային և 2 մանկական թատրոն:

220. ***Մշակույթի տներ.*** Պետական մշակութային քաղաքականության իրականացման հիմնական օղակը մշակույթի տներն են, որոնք կոչված են պահպանելու և սերունդներին փոխանցելու հայ մշակույթը, նրա արժեքներն ու ավանդույթները: Սա հենց պետական մշակութային քաղաքականության իմաստն է, և պետք է դիտվի որպես աշխատանքները կազմակերպելու կարևորագույն ու հիմնական սկզբունք: Մարզում կան մասնագետ կադրերի, մշակույթի օջախների վերանորոգման և տեխնիկական վերազինման խնդիրներ:

221. 2000-2009թթ. վերանորոգվել է 38 մշակույթի տուն 1մլդ.68մլն.870հազ. դրամ ընդհանուր արժողությամբ, որից պետ. բյուջեից՝ 639մլն.870 հազ.դրամ: 2008թ.-ից ընթանում է Ուրցաձոր համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները՝ 200մլն. դրամ արժողությամբ:

Աղյուսակ 5.7. ***2000- 2009թթ. վերանորոգված մշակույթի տներ***

N	*Մշակույթի տունը*	*Կառուց. տարեթիվ*	*Պետական բյուջե /հազ. դր./*	*Այլ միջոցներով /հազ. դր./*
1	գ. Արևշատ	1951	18000,0	
2	գ. Աբովյան	1946	10000,0	
3	գ. Արաքսավան	1966	5000,0	
4	գ. Բարձրաշեն	1980	25000,0	
5	գ. Բերդիկ	1973	20000,0	
6	գ.Բերքանուշ	1963	20000,0	
7	գ. Դիտակ	1960	6000,0	
8	գ. Կանաչուտ	1966		36000,0
9	գ. Հովտաշեն	1954	10000,0	
10	գ. Մասիս	1960	30000,0	
11	գ. Մրգավան	1960		10000,0
12	գ. Մխչյան	1957		30000,0
13	գ. Մրգանուշ	1961	10000,0	
14	գ. Ներքին Դվին	1948	10000,0	
15	գ. Նարեկ	1983		66000,0
16	գ. Վերին Արտաշատ	1964		60000,0
17	գ. Վերին Դվին	1964	20000,0	7000,0
18	գ. Քաղցրաշեն	1980	25000,0	
19	գ. Արմաշ	1966	20000,0	
20	գ. Ավշար	1964	120250,0	
21	գ. Արալեզ	1964		40000,0
22	գ. Գոռավան	1976	20000,0	

23	գ. Եղեգնավան	1964		60000,0
24	գ. Ջանգակատուն	1972	30000,0	
25	Լուսառատ	1976	83620,0	
26	գ. Լուսաշող	1962	15000,0	
27	գ. Նոյակերտ	1966	20000,0	
28	գ. Նոր-ուղի	1964	10000,0	
29	գ. Շաղափ	1963	15000,0	
30	գ. Ոսկետափ	1968	30000,0	
31	գ. Սիսավան	1972	10000,0	
32	Վարդաշեն	1968	5000,0	
33	գ. Վանաշեն	1968	22000,0	

34	գ. Ուրծալանջ	1985	5000,0	
35	գ. Արևաբույր	1958	15000,0	
36	գ. Հովտաշատ	1958	10000,0	
37	գ. Նոր- կյանք	1964		40000,0
38	գ. Նոր Խարբերդ	1961		80000,0

222. Գրեթե բոլոր մշակույթի տները ձմեռային սեզոնին՝ շուրջ 4—5 ամիս չեն գործում, քանի որ ունեն ջեռուցման խնդիր:

223. Մարզի մշակույթի տները հիմնականում անցյալ դարի 60-70 ական թթ. կառույցներ են, այդ իսկ պատճառով կարիք ունեն վերանորոգման: Համայնքը միայն իր սեփական միջոցներով չի կարող իրականացնել վերանորոգում:

224. Մշակութային գործունեություն կազմակերպելու համար առաջնային է տեխնիկապես վերազինելու խնդիրը: Գրեթե բոլոր մշակույթի տներում եղած, ինչ-որ չափով պահպանված տեխմիջոցները արդեն վաղուց անօգտագործելի են: Շատ համայնքներում դրանք դուրս չեն գրված և որպես գույք հաշվառված են: Միայն ք.Արարատ, ք.Վեդի, Արալեզ համայնքներն են իրենց միջոցներով 2007թ. կարողացել վերազինվել:

225. Մշակութային քաղաքականություն իրականացնելու կարևորագույն խնդիրը համարվում է կադրային խնդիրը: Մշակույթի տների 161 աշխատողների մոտ 60%-ը ոչ մասնագետներ են, 20%-ը խորհրդային ժամանակներում աշխատած թոշակառուներ՝ դրանից բխող հետևանքներով /ոչ մասնագիտական մոտեցում, հնացած մեթոդներ, մտածողություն/:

226. Չնայած վերը նշված դժվարություններին մարզի մշակութային կյանքը հագեցած է՝ Արտաշատ քաղաքի Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում մշտապես կազմակերպվում են մարզային և հանրապետական նշանակության միջոցառումներ: Մարզային փառատոներին, կամ ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ունենում մարզի համայնքներում գործող ինքնագործ խմբերը, ՝հիմնականում՝ մանկական պարային, ասմունքի, թատերական, ժողովրդական գործիքների և անհատ կատարողները: Մարզի մշակույթի տներում գործող ինքնագործ համույթների ուժերով կազմակերպվում է բոլոր մարզային միջոցառումների գեղարվեստական մասը

Աղյուսակ 5.8. *Մարզի մշակույթի տներում գործող ինքնագործ համույթներ*

N	Մշակույթի տունը	*Գործող ինքնագործ խմբերը*
1	ք. Արտաշատ, Ծ. Ազնավուրի անվան մշ. կենտրոն	1. Ժողովրդական պարերի մեծ. «ՀԱՅՔ» համույթ 2 . «Գուսան Ռազմիկ» Ժողգործիք. համույթ
	ք. Արտաշատի ԱԱԿ	1. Մանկական թատրոն և տիկնիկային թատրոն
	ք. Արտաշատի «Մանկան մոլորակ» ՍՊԸ	1. մանկական տիկնիկային թատրոն
2	ք. Արարատի մշ. տուն	1. Ժողովրդական պարերի համույթ 2 Տիկնիկային թատրոն
3	ք. Արարատ մշ. տուն	1. Վոկալ գործիքային համույթ
4	ք. Վեդի	1.Գեղ. դպրոցի պարային մանկական համույթ 1. Մշակույթի տան մանկ. «Աստղիկներ» վոկալ ստուդիա
5	ք. Մասիս մշ. տուն	1. Պարային մանկ համույթներ
		2. Մանկական թատրոն
6	գ. Նոյակերտ մշ. տուն	1. Վոկալ գործիքային համույթ
7	գ. Քաղցրաշեն մշ. տուն	1. Մանկական պարային համույթ
8	գ. Այգեզարդ մշ. տուն	1. Մանկական երգչախումբ 2. Մանկական ժող. պարի համույթ
9	գ. Արգավանդ մշ. տուն	1. Մանկական պարային համույթ
10	գ. Նոր Խարբերդ մշ. տուն	1. Մանկական ժամանակակից պարերի համույթ
11	գ. Մրգավան մշ. տուն	1. Մանկական պարի համույթ
12	գ. Մխչյան մշ. տուն	1. Մանկական երգչախումբ 2. Մանկական պարի համույթ
13	գ. Զանգակատուն մշ. տուն	1. Ասմունքի խմբակ
14	գ. Ջրաշեն մշ. տուն	1.Մանկական ժող. պարի համույթ
15	գ. Շաղափ մշ. տուն	1. Ազգագրական պարի համույթ
16	գ. Նշավան մշ. տուն	1. Շվիահարների մանկական համույթ
17	գ. Մրգավետ մշ. տուն	1. Մանկական պարի համույթ
18	գ. Արևշատ մշ. տուն	1. Մանկական երգչախումբ
19	գ. Արալեզ մշ. տուն	1. Էստրադային համույթ
20	գ. Ոսկետափ մշ. տուն	1. Ազգագրական պարերի համույթ
21	գ. Բերդիկ մշ. տուն	1. Մանկական ժող. պարի համույթ
22	գ. Եղեգնավան մշ. տուն	1. Մանկական պարային համույթ
23	գ. Գոռավան մշ. տուն	1 . Ազգագրական պարային համույթ
24	գ. Տափերական մշ. տուն	1. Հայկական ժող. պար. համույթ 2. Ժող. գործիք համույթ
25	գ. Փոքր Վեդի մշ. տուն	1. Մանկական 2 պարային ժող.համույթներ
26	գ. Հովտաշեն մշ. տուն	1. Ժող. պարերի մանկական համույթ

27	գ. Վերին Արտաշատ մշ. տուն	1. Մանկական պարային համույթ
28	գ. Բուրաստան մշ. տուն	1. Մանկական երգի—պարի խմբակ
29	գ. Վերին Դվին մշ. տուն	1. Ասորական երգի պարի համույթ
30	գ. Բյուրավան մշ. տուն	1. Ժող.գործիքների համույթ Գուսան Մեխակ
31	գ. Սուրենավան մշ. տուն	1. Տիկնիկային թատրոն

227. ***Գրադարաններ*** Մարզում առկա է **96** գրադարան՝ 1-ը մարզային, 7-ը՝ քաղաքային, 2-ը՝ մանկական և 86-ը՝ գյուղական համայնքների: Ընդհանուր գրական ֆոնդը կազմում է 907191 կտոր գրականություն, աշխատողների թիվը՝ 156 մարդ: Գրադարաններում տարվա ընթացքում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, մասնավորապես մարզային գրադարանում կազմակերպվել է ավելի քան 50 գրական միջոցառում՝ գրքային շնորհանդեսներ, մեծարման ու գրական ցերեկույթներ, գրքերի մատենագիտական տեսություններ ու շնորհանդեսներ, գրական ու պոեզիայի երեկոներ, հանդիպումներ գրողների, բանաստեղծների, գիտնականների, արվեստի, գրականության, կրթության ու մշակույթի անվանի գործիչների հետ: Մարզի բոլոր գրադարանները մասնակցում են Գրադարանավարի օրվան, Թարգմանչաց տոնին, Մայրենի լեզվի միջազգային օրվան, Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթվան, Գիրք նվիրաբերելու օրվան, Գիտելիքի և դպրության օրվան, Հաղթանակի և խաղաղության տոնին, Դպրոցական գրադարանների միջազգային օրվան նվիրված միջոցառումներին:

228. ՀՀ մշակույթի նախարարության միջոցներով մարզային գրադարանում 2008-2009թթ. ընթացքում իրականացվել է գրադարանային ֆոնդի 1/10-ի թվայնացում էլեկտրոնային քարտադարանի օգնությամբ: Աշխատանքները շարունակվում են:

229. Գրադարանները հիմնականում հարմարեցված են մշակույթի տներում: Գրադարանների շենքային պայմաններն անբարենպաստ են, գրապահոցներում բացակայում են հավաքածուների պահպանությունն ապահովող տեխնիկական սարքավորումները, ինչը խոչընդոտում է տարածաշրջանի բնակչության՝ տեղեկույթի մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացմանը: Պարբերական հրատարակությունները գրեթե մատչելի չեն բնակչությանը: Մարզի համայնքային գրադարանների նյութատեխնիկական անկատար վիճակը խոչընդոտում է տնտեսական և կազմակերպական խնդիրների արդյունավետ իրականացմանը: Ինտերնետի բացակայությունը տարածաշրջանում խոչընդոտում է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Արդյունքում կրճատվում է գիտության, կրթության և արտադրության վերաբերյալ տեղեկատվության ապահովվումը, արգելակվում միասնական տեղեկատվական գործընթացների ներգրավումը, խորանում տնտեսական, սոցիալական անհավասարությունը, ինչը խոչընդոտ է տարածաշրջանի բնակչության զարգացման համար: Համայնքային գրադարանների ընթերցասրահները կահավորված չեն ըստ պատշաճի, չկան հարմարավետ պայմաններ, ինչը չի նպաստում ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը: Մարզի գրադարանային կադրերի պատրաստվածության որակը հետ է մնում ժամանակակից գրադարանների զարգացման դինամիկայից ու պահանջ-

ներից, ինչը խիստ խանգարում է գրքային ֆոնդի լիակատար օգտագործմանը: Մի շարք գրադարաններում չկան ընթերցասրահներ: Վերջին 10-15 տարիների ընթացքում մասնակիորեն վերանորոգվել են ընդհանուր թվով 33 գրադարանի հատկացված տարածք, 63 գրադարան կարիք ունեն վերանորոգման, որոնցից առաջնային են Արարատի մարզային, Արաքսավանի և Գետազատի համայնքային գրադարանները, վերջին երկուսը գտնվում են վթարային վիճակում:

230. Մարզում գործող գրադարանների գրքային ֆոնդը հնամաշ է և կարիք ունի համալրման: Վերջին տարիներին այդ ուղղությամբ ձեռնարկվել են քայլեր, մասնավորապես 2008-2009թթ. մարզային գրադարանը ստացել է 2309 կտոր գրականություն, որից 313-ը (պետ. բյուջե) 1996-ը (նվիրատվություն), 2009թ. Վեդու քաղաքային գրադարան՝ 250 կտոր գրականություն (համայնքային բյուջե), Արարատի քաղաքային գրադարան 200 կտոր գրականություն (համայնքային բյուջե), մանկական գրադարաններ՝ 1302 կտոր (պետական բյուջե) :

231. ***Թանգարաններ:*** Մարզի տարածքում գործում են հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի և սպարապետ Վազգեն Սարգսյանի տուն - թանգարանները՝ 950-ից ավելի մշակութային արժեքներով:

232. 2009թ. թանգարանները պետության կողմից սուբսիդավորվել են 12 մլն 314 հազ. դրամով (Պ. Սևակի տուն- թանգարան՝ 5 մլն.277 հազ.600 դրամ, Վ.Սարգսյանի տուն-թանգարան՝ 7 մլն 36հազ. 800 դրամ):

233. Վ. Սարգսյանի տուն - թանգարանը հիմնադրվել է 2000թ. և գտնվում է բարվոք վիճակում (առկա են ջերմախոնավային կայունությունը պահպանող համակարգեր):

234. Պ.Սևակի տուն-թանգարանը հիմնադրվել է 1981թ. բանաստեղծի ծննդավայր Զանգակատուն (նախկին Չանախչի) համայնքում: Տուն-թանգարանի շենքը մինչ այսօր չի վերանորոգվել, միայն 2008թ. թանգարանին պետ. բյուջեից տրամադրվել է 7 մլն. դրամ՝ ներքին ձևավորման և կահավորման համար:

235. Պ.Սևակի տուն-թանգարանում բացակայում են ջերմախոնավային կայունությունը պահպանող համակարգեր: Թանգարանը ունի միայն ցուցասրահ, զգացվում է ֆոնդադարանի կառուցման անհրաժեշտություն : Շրջակայքը կարիք ունի բարեկարգման:

236. ***Պատմամշակութային և բնության հուշարձաններ*** Արարատի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Մարզի տարածքում են գտնվում «Խոր Վիրապ» վանքային համալիրը, պատմական Հայաստանի երկու մայրաքաղաքները՝ Արտաշատը և Դվինը, «Խոսրովի անտառ» արգելանոցը, նշանավոր եկեղեցիներ, խաչքարեր, բնության հուշարձաններ, գյուղատեղիներ և այլ արժեքավոր հուշարձաններ: Առանձնակի պատմական արժեք են ներկայացնում Խոսրովի արգելանոցի տարածքում գտնվող 10—15-րդ դարերի հնություն ունեցող Մանկուքի խաչքարերը և տապանաքարերը:

237. ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի թիվ 65 որոշմամբ մարզի տարածքում հաշվառված են 906 հուշարձան՝ 224 պահպանական միավորով: Կան 200–ից ավելի հաշվառված, սակայն ցուցակում չընդգրկված հուշարձաններ: Նշված հուշարձաններից բոլորը չեն, որ ունեն պահպանական գոտիներ: Պահպանական գոտիներ ունեն 112 հուշարձաններ, որից.

1) Արտաշատի տարածաշրջանում -- 52
2) Արարատի տարածաշրջանում -- 44
3) Մասիսի տարածաշրջանում -- 16 :

238. Մարզում եղած պատմամշակութային հուշարձանները վերականգնվում և վերանորոգվում են և՛ պետական բյուջեի միջոցներով և՛ այլ միջոցներով: 2008թ-ից ընթացքի մեջ է Գնորզ Մարզպետունի ամրոցի պատերի մասնակի վերականգնման և ամրակայման աշխատանքները, որի վրա ծախսվել է 49.200.000 դրամ գումար: Այժմ իրականացվում են ամրոցի ներսում գտնվող եկեղեցու վերականգնման աշխատանքները:

239. Մայր աթոռի կողմից ընթանում են վերանորոգման աշխատանքներ «Խոր վիրապ» վանքային համալիրում: Հայ Առաքելական եկեղեցու և բարերարների միջոցներով վերակառուցվել և վերականգնվել են Կանաչուտ, Արևշատ, Վ.Արտաշատ, Շահումյան, Մխչյան, Բուրաստան, Բերքանուշ, Վ.Դվին, Վարդաշատ համայնքների եկեղեցիները: Մարզի մի շարք համայնքներում, անհատ բարերարների միջոցներով կառուցվել են նոր եկեղեցիներ: Դրանք են Արտաշատ և Վեդի քաղաքների, Ն.Դվինի, Մարմարաշենի, Մասիսի եկեղեցիները:

240. Պատրաստ է հրատարակման «Արարատի մարզի պատմական հուշարձաններ» գիրք--ալբոմը:

241. Մարզի տարածքը հարուստ է նաև բնության հուշարձաններով, դրանք հիմնականում գտնվում են մարզի արևելյան՝ ավելի բարձրադիր հատվածում: Արարատի մարզի բնության հուշարձաններ՝

1) « Ցախշխան» քարանձավ --- Վեդի քաղաքից մոտ 20կմ. հս-արլ. ՌԻխտաակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ. հոսանքով վեր, 40մ. գետի հունից բարձր, ծ/մ 2100մ. բարձր. վրա:

2) « Դաշտաքար » քարանձավ --- Դաշտաքար գյուղից 02.կմ հվ. Անահավատքար հս. լանջին լեռան հիմքից 400մ բարձր. վրա:

3) « Խոր հոր» անձավ ---- Շաղափ գյուղից 3կմ հս-արլ. ծ/մ-ից 2200մ բարձր. վրա:

4) Անանուն ----- Տիգրանաշեն – Պ. Սևակ գյուղ. ճանապարհի 17կմ-ի վրա:

5) Անանուն --- Երևան - Մեղրի խճուղու 81-րդ կմ.

/ Տիգրանաշեն – Պ. Սևակ հատվածի 15-րդ կմ. /

6) Անանուն --- ՈՒրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս. Վեդի գետի աջ ափին:

7) Հորթունի բրածո ֆլորա --- Զանգակատուն գյուղից 8 կմ. հս-արլ:

8) Ջերմանիսի բրածո ֆլորա --- Ռանչպար գյուղից 4 կմ հս- արմ:

9) Վեդի գետի ավազանի --- Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ /բրածո ֆլորա/

10) « Արարատ» հանքային ջուր ---- Վեդի քաղաքից 2,5 կմ հս-արլ, Բորոտաղբյուր գետի կիրճում:

242*. **Գեղարվեստական կրթություն.*** Արարատի մարզում գործում են 10 երաժշտական, 5 արվեստի, 3 գեղարվեստի դպրոց, որտեղ գեղարվեստական կրթություն են ստանում 1940 երեխա:

243. Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները աշակերտներին տալիս են գեղարվեստական մասնագիտական նախնական կրթություն, հաղորդակից դարձնում համաշխարհային արվեստի գանձարանին, որոնց նմուշների ուսումնասիրման միջոցով նպաստում սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը, դաստիարակում հասարակության լիիրավ անդամ: Սրա հետ մեկտեղ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները կոչված են բացահայտելու առավել օժտված, շնորհալի աշակերտներին և ապահովելու նրանց հետագա ուսումը այլ հաստատություններում: Շնորհալի երեխաների բացահայտման նպատակով ՀՀ մշակույթի նախարարությունը ստեղծել է «ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկ», որտեղ ընդգրկված են մարզի 81 սովորող, նրանց թվում են մարզային, հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոնների դափնեկիրներ՝ Հասմիկ Շահբազյան, Մարիա Գասպարյան, Նարեկ Ավագյան («Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն), Մոնա Դանիելյան (Ալ. Սպենդիարյանի անվ. պատանի երաժիշտ-կատարողների հանրապետական II մրցույթ-փառատոն), Վարդուհի և Մարիամ Բարսեղյաններ («Գուսանական երգի մարզային փառատոն» և «Աստղիկ» նախագիծ), Գուրգեն Թովմասյան (Ազգային ժող. երաժշտության հանրապետական մրցույթ), Էդվարդ Ղազարյան, Լիանա Գյուլնազարյան, Մանե Բաղդյան (Մանկապատանեկան նկարչական ստեղծագործությունների հանրապետական I մրցույթ), Արպյիկ Ավանեսյան («Ես և տիեզերքը» հանրապետական մանկ. նկարչական ցուցահանդես), Նինա Գևորգյան (Բեյրութի միջազգային մանկ. նկարչական ցուցահանդես) և այլն:

244. 2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված «Մշակութային կրթության աջակցման հիմնադրամ»-ը, մարզի բոլոր դպրոցներում պարբերաբար կազմակերպում է «Վարպետաց դասեր», որի շրջանակներում ուսումնամեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներին:

245. 2007-2009թթ. երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով իրականացվում է ուսման վարձավճարի փոխհատուցում:Այս ծրագրով մարզի 10 երաժշտական և արվեստի դպրոցի 111 աշակերտ անվճար ուսման հնարավորություն է ստանում, որն էլ մեծապես նպաստում է ազգային նվագարանների պահպանմանը, խթանում է դրանց տարածումն ու զարգացումը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում երաժշտական և արվեստի դպրոցներին, տնտեսումների առկայության դեպքում, ֆինանսական միջոցներ ուղղել ազգային նվագարանների ուսուցման ծախսերին՝ ներառյալ նվագարանների ձեռքբերմանը: Վերջին երկու տարում նկատվում է ազգային նվագարանների բաժիններում սովորողների թվի աճի միտում, սակայն փոխհատուցման չափը, աշակերտների քանակի առումով, անփոփոխ է, որն էլ անհավասար պայմաններ է ստեղծում սովորողների համար:

246. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները անցան համայնքային ենթակայության: Անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, համայնքների ոչ բավարար տնտեսական ներուժը և պատրաստվածությունը, առկա սոցիալ-տնտեսական պայմանները և գործունեության ընդհանուր չափորոշիչների բացակայությունը դպրոցների համար առաջացրեցին մի շարք խնդիրներ.

1) Գեղարվեստական կրթական հաստատությունների մեծ մասը վերանորոգման, գույքի համալրման, գործիքների ձեռքբերման կարիք ունեն: Սակայն, ելնելով սոցիալ-տնտեսական իրավիճակից, համայնքների մեծ մասը չեն կարողանում համայնքային բյուջեներում նախատեսել բավարար ֆինանսական միջոցներ՝ դպրոցների պահպանման ծախսերը և աշխատավարձերը ապահովելու համար:

2) Դպրոցներում բացակայում են լոկալ ջեռուցման համակարգերը: 9 դպրոց (Քաղցրաշենի երաժշտական դպրոց, Շահումյանի արվեստի դպրոց, Այգեզարդի արվեստի դպրոց, Արևշատի երաժշտական դպրոց, Վ.Արտաշատի արվեստի դպրոց, Ն.Խարբերդի երաժշտական դպրոց, Փ.Վեդու արվեստի դպրոց, Վեդի քաղաքի երաժշտական դպրոց և Արտաշատ քաղաքի գեղարվեստի դպրոց) գործում է հարմարեցված շենքերում, որտեղ մեծամասամբ բացակայում են տարրական շենքային պայմանները:

3) Համայնքների ֆինանսական դժվարությունները առաջացնում են նաև սոցիալական խնդիրներ՝ ուսուցիչների ցածր աշխատավարձի հետևանքով մեծ է դպրոցներից որակյալ կադրերի արտահոսքը; ելնելով սոցիալական պայմաններից սահմանվում են ցածր ուսման վարձավճարներ, ինչը չի ապահովվում դպրոցի պահպանման անհրաժեշտ ծախսերը, իսկ առանձին

դեպքերում, սահմանված բարձր վարձավճարը բերում է սովորողների թվաքանակի նվազման:

4) Ուսումնական պլանները հաստատում են համայնքների ղեկավարները, ինչի հետևանքով ուսումնական ծրագրերից դուրս են մնում հիմնական առարկան:

247. ***Արվեստ /թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կե**ե **րպարվեստ/*** Բնագավառի հիմնական նպատակը պետք է համարել թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, մշակույթային օջախներում գործող համերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողստեղծագործությանը աջակցություն ցուցաբերելը:

248. ***Թատերական կյանքը*** *մարզում* ապահովում է Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը: Սա միակ մշակույթի օջախն է, որը ջեռուցվում և գործում է ամբողջ տարին: Տարվա ընթացքում ներկայացումներով պարբերաբար հանդես է գալիս մարզի համայնքներում, ինչպես նաև հյուրախաղերով լինում է Երևանում և ՀՀ մարզերում: 2009թ. ընթացում ընդհանուր հաշվով թատրոնում բեմադրվել է 9 ներկայացում, որոնք խաղացվել են 68 անգամ՝ շուրջ 13600 հանդիսատեսի համար:

249. Այսօր թատրոնի առջև ծառացած է ժամանակակից լուսային սարքավորումներ չունենալու հարցը: Թատրոնում եղածը բավականին հին է, տեղադրվել է անցած դարի 60 -- ականներին և չի բավարարում այսօրվա պահանջներին:

250. Ակտիվ գործում են Արտաշատ քաղաքի «Մանկան մոլորակ» մանկական-- տիկնիկային, ԱԱԿ – ի մանկական, Մասիս քաղաքի թիվ 1, Այնթափի և Նոր Խարբերդի դպրոցների մանկական թատրոնները, որոնք մշտապես ներկայացումներով հանդես են գալիս մարզի դպրոցներում և մանկապարտեզներում:

251. ***Երաժշտարվեստի և պարարվեստի*** բնագավառում մարզում տարվում է բավականին լուրջ աշխատանք: Մարզում գործում է ՀՀ պարարվեստի գործիչների միության մարզային մասնաճյուղը, որը կոորդինացնում է մարզի բոլոր պարային համույթների գործունեությունը: Պարբերաբար կազմակերպվում են պարուսույցների վերապատրաստման դասընթացներ:

252. 2009թ ապրիլի 30 – ին պարի միջազգային օրվա կապակցությամբ մարզի պարային համույթների մասնակցությամբ Արտաշատ քաղաքում կազմակերպվել է: պարի փառատոն: Ամեն տարի սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին կազմակերպվում է ժողովրդական պարերի մարզային փառատոն: Մարզի պարային համույթները և անհատ կատարողները մշտապես մասնակցում են մարզկենտրոնում և մայրաքաղաքում կազմակերպվող միջոցառումներին:

253. ***Մշակութային միջոցառումներ.*** Մարզում մշակութային կյանքը հիմնականում ապահովում և զարգացնում են մասսայական և մշակութային

միջոցառումները, որոնց կազմակերպման ողղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Դրանց նպատակն է աշխուժացնել մարզերում և համայնքներում մշակութային կյանքը, խթանել մշակութային փոխանակումները մայրաքաղաքի և մարզերի մշակութային կազմակերպությունների միջև:

254. 2009թ. մշակութային միջոցառումների կազմակերպման համար պետական բյուջեից հատկացվել է 3 մլն. 195 հազ. 400 դրամ :

255. Մարզում նշվում են բոլոր պետական, ազգային և ծիսական տոները, այդ թվում՝ ՀՀ Անկախության, ՀՀ Սահմանադրության, ՀՀ Բանակի, Հաղթանակի և Շուշիի ազատագրման, Կանանց միջազգային, Երեխաների պաշտպանության տոները, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրը, «Տեառնընդառաջի», «Վարդավառի», «սբ. Մարիամ Աստվածածնի վերափոխման» տոները, որոնք կազմակերպվել են մարզի տարբեր համայնքներում գործող եկեղեցիների բակերում՝ մասնակից դարձնելով համայնքների բնակիչներին:

256. Վերջին 2 տարիների ընթացքում մարզի տարածքում մեծ շուքով նշվել են ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 100, կաթողիկոս Վազգեն I-ի 100, Վ. Սարոյանի 100, Հ.Թումանյանի 140, Դ.Վարուժանի 125, Կոմիտասի 140, Խ.Աբովյանի 200, Պ.Սևակի 85, Վ.Սարգսյանի 50--ամյակները, ինչպես նաև մայիսին կազմակերպվել է ՀՀ ժողովրդական արտիստ Ժենյա Ավետիսյանի ասմունքի երեկոն: Հյուրախաղերով մարզկենտրոնում և մարզի քաղաքներում հանդես է եկել ժողովրդական արտիստ Վարդուհի Վարդերեսյանը: Համերգային ծրագրով Արտաշատ քաղաքում հանդես եկավ գուսան Հայկազունին իր «Հայեր միացեք» համույթով:

257. «Դեպի մարզեր» ծրագրի շրջանակներում Արտաշատ քաղաքում համերգային ծրագրով հանդես են եկել ՀՀ մշակույթի նախարարության ժողովրդական գործիքների համույթը, ՀՀ պետական կամերային նվագախումբը, «Միեր Մկրտչյանի» արտիստական, Երևանի Հր.Ղափլանյանի անվան դրամատիկական և Թբիլիսիի Ս.Շահումյանի անվ. թատրոնները:

258.ՀՀ նախագահի 2008թ. նոյեմբերի 14-16-ը ԼՂՀ կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում 2009թ. հուլիսի 30-ից օգոստոսի 2-ը մարզպետ Վ. Հովակիմյանի գլխավորությամբ մարզի պատվիրակությունը այցելեց ԼՂՀ Մարտակերտի շրջան, որտեղ կազմակերպվեցին մշակութային տարաբնույթ միջոցառումներ, այցելություններ Մարտակերտի պատմա-մշակութային հուշարձաններ:

259. ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող «Արի տուն» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է սփյուռքահայ երիտասարդների հետ չորս հանդիպում մարզկենտրոնում և մարզի համույթների և անհատ կատարողների ուժերով տրվել է համերգ:

260. Պարբերաբար կազմակերպվում են «Երգող Հայաստան», «Գուսանական երգի», «Հայրենասիրական երգի», «Ժողովրդական պարի», Պարի միջազգային օրվան նվիրված

փառատոններ, գեղարվեստի դպրոցների սաների ցուցահանդեսներ, մրցույթներ, երաժշտական և արվեստի դպրոցների հաշվետու համերգներ:

261. 2009թ. հոկտեմբերին մարզկենտրոն Արտաշատում ամփոփվեց ապրիլ ամսին մեկնարկած, ՀՀ ԱԺ նախագահի բարձր հովանու ներքո կազմակերպված ասմունքի հանրապետական փառատոնը:

262. Մշակութային զարգացումը գլոբալ առումով ենթադրում է պետական մոտեցում մշակութային արժեքների պահպանման, զարգացման և տարածման համար: 2011-2014թթ. մարզում վերոնշյալ միջոցառումները կկրեն շարունակական բնույթ:

5.2.2 Մշակույթի ոլորտի ռազմավարություն

263. Արարատի մարզի մշակույթի բնագավառում զարգացման հիմնական գերակայություններն են.

1) Մշակութային հաստատությունների ջեռուցում, դահլիճների կահավորում և տեխնիկական միջոցներով համալրում:

2) Մարզի մշակույթի տներում բացել ավանդական արհեստների, ժողովրդական արվեստի խմբակներ: Ստեղծել բոլոր պայմանները և տալ հնարավորություն արվեստի գործիչներին և ժողովրդական վարպետներին իրենց ողջ գիտելիքները և հմտությունները մատաղ սերնդին փոխանցելու համար:

3) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերաորակավորում, հարկավոր է մարզային իշխանություններին տալ համայնքներում մշակույթի բնագավառում կադրային քաղաքականություն իրականացնելու լիազորություններ:

4) Գրադարաններին անհրաժեշտ է համալրել նոր գրականությամբ, ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ /համակարգիչներ, վճարովի ինտերնետային կապ/ այն կնպաստի աշխատանքների որակի բարձրացմանը և բնակչության տեղեկատվական դաշտի ընդլայնմանը:

5) Հարկավոր է մարզային գրադարանի հենքի վրա Արտաշատ քաղաքում բացել գրախանութ-գրատուն:

6) Մարզում տուրիզմի զարգացմանն ու գովազդային, նշանավոր մարդկանց ու հայրենագիտական աշխատանքների կազմակերպման առթիվ անհրաժեշտ է ստեղծել պայմաններ (հիմնականում ֆինանսական) հրատարակչական գործունեություն ծավալելու համար:

7) Թանգարանային ֆոնդի համալրման և պահպանման, ցուցահանդեսների կազմակերպման ու անցկացման, թանգարանային հավաքածուների հանրամատչելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է պետ. բյուջեից տրամադրել 1մլն 350հազ. դրամ:

8) Պարույր Սևակի անտիպ աշխատությունների ուսումնասիրության ու հրատարակման համար հարկավոր է պետական միջոցներից տրամադրել 500.000 դրամ, ծրագիրը կնպաստի թանգարանային ֆոնդի համալրմանը, ցուցանմուշների տեսականու և քանակի ավելացմանը, մշակութային ժառանգության պահպանմանն ու տարածմանը:

9) Մարզի տարածքում են գտնվում պատմական Հայաստանի 2 մայրաքաղաքները՝ Արտաշատը և Դվինը: Մարզում զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է մարզկենտրոն Արտաշատում բացել հնագիտական թանգարան, որտեղ կզետեղվեն 2 մայրաքաղաքների պեղածո-գտածոները: Անհրաժեշտ է պետական աջակցություն թանգարանի շենքի ձեռք բերման և բարեկարգման համար:

264. Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է կառուցել համապատասխան շենք՝ 95 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

265. Անհրաժեշտ է, որ բոլոր հուշարձանները ունենան պահպանական գոտիներ, որպեսզի ճիշտ կազմակերպվեն հուշարձանների պահպանման, օգտագործման և վերականգման աշխատանքները.

1) Հարկավոր է պետական բյուջեի միջոցներով առաջնահերթ վերանորոգել Ջնջղլու /Մոշ աղբյուր/ գյուղատեղի տարածքում գտնվող սուրբ Կարապետ վանքահամալիրը, որի համար անհրաժեշտ է 42 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

2) Շտապ ամրակայման կարիք ունեն Արտաշատ և Դվին պատմական մայրաքաղաքների պեղված հատվածները՝ Արտաշատի միջնաբերդի պատերը, Դվինի պալատը, որի համար անհրաժեշտ է 63 մլն դրամ:

3) Հարկային քաղաքականություն վերանայում: Չի կարող մշակութային կազմակերպությունը կամ անհատ ստեղծագործողը իր հարկային պարտականությունների բեռի տակ լիարժեք զբաղվել իր մասնագիտական գործունեությամբ:

266. Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մոտեցում և ներդրումներ՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով:

267. 2011-2014թթ. ընթացքում նախատեսվում է կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել 68 մշակութային օբյեկտներ՝ 5մլրդ 623մլն 687 հազ. ընդհանուր արժողությամբ:

268. Մարզի մշակույթի ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 5.2., 5.2.1 և 11.1 հավելվածներում:

5.3 ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

5.3.1 Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի իրավիճակի վերլուծություն

269. 2009թ. մարզի տարածքում գործել են համայնքային ենթակայության 5 և «Սևան» ԳՄԸ 2 մանկապատանեկան մարզադպրոց՝ 187 մարզական խմբերով, 1 մարզական ակումբ և շախմատի դպրոցի մասնաճյուղը:

270. Մարզում կա 106 մարզադահլիճ, 2 ստադիոն, 13 ֆուտբոլի խոտածածկ խաղադաշտ, 3 լողավազան, 2 հրաձգարան:

271.Նկատի ունենալով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերն ու նշանակությունը, որպես բնակչության առողջության կոփման, պատանիների և երիտասարդների ֆիզիկական և բարոյական դաստիարակության կարևորագույն գործոն, մարզպետարանի կողմից կարևորվել է ազգաբնակչության ֆիզիկական ակտիվության բարձրացումը, այդ նպատակով համայնքային բյուջեների տարեսկզբյան հաստատման ժամանակ, մարզպետի անմիջական հսկողությամբ, համայնքների բյուջեներից տրամադրվել են ֆինանսական միջոցներ միջավայրի կանաչապատման, կանաչ գոտիների ստեղծման և ընդլայնման, խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների, զբոսայգիների, հետիոտների (ոտքով և հեծանվով երթևեկողները կազմում են մարզի բնակչության 60%) համար: Համայնքների կողմից զգալի միջոցներ են տրամադրվում նաև ճանապարհների պահպանման և նորոգման համար (վերջին 5 տարիների ընթացքում ոտքով և հեծանվով երթևեկողների ճանապարհներին գրանցվել է 148 վրաերթի դեպք): Ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ անվասայլակներով զբոսնող հաշմանդամների համար (զբոսայգիներում՝ աստիճաններին կից, հարթեցված թեք հատվածներ և այլն):

272. Քանի որ կարևորվում է ֆիզիկական դաստիարակության դերը մատաղ սերնդի կրթության գործում, պետական ծրագրով մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրայի դասաժամերը ընդգրկված են բոլոր դասարանների ամենօրյա դասացուցակներում: Նախադպրոցական բոլոր հիմնարկները ունեն համապատասխան աշխատանքային տարեկան ծրագիր, որով պարտադիր նախատեսված է դրսում ամենօրյա զվարճալի խաղերի անցկացում:

273. Մարզի քաղաքների բոլոր դպրոցների աշակերտների անվտանգ երթևեկությունը ապահովելու նպատակով դպրոցների ճանապարհներին կից հատվածներում սահմանված են ցածր արագություն և կազմակերպվում են հերթապահություններ պետավտոտեսչության աշխատակիցների կողմից՝ ապահովելու համար դպրոցականների անվտանգ անցումները: Դպրոցների տնօրենության կողմից վերահսկվում է փոքր տարիքի երեխաներին ծնողների կամ չափահաս հարազատների կողմից դպրոց ուղեկցելը՝ հիմնականում ոտքով և այդ սովորության ամրապնդման և զարգացման ուղղությամբ տարվում են համապատասխան քարոզչական աշխատանքներ:

274. ***Մարզադպրոցներ.*** Մարզադպրոցները հիմնականում վերանորոգված են, գտնվում են բարվոք վիճակում, ունեն բավարար մարզագույք և համալրված են բարձրակարգ մարզիչներով: Նշված մարզադպրոցներից ջեռուցվում է ք.Արտաշատի Ռ.Գոլեցյանի անվան օլիմպիական հերթափոխի մարզադպրոցը: Արտաշատի քաղաքի համալիր մարզադպրոցում հիմնականում խաղային ձևեր են /աթլետիկա, ֆուտբոլ/ և պարապմունքները անց են կացվում մարզադաշտում, որտեղ մարզիկների համար ապահովված են լավագույն պայմաններ, մյուս մարզաձևերի /սամբո, ձյուդո,/ պարապմունքները անց են կացվում ՕՀ մարզադպրոցի դահլիճում: Միջոցներ են ձեռնարկվել անհատ բարերարների միջոցները ներգրավելու մարզի բնակչության ֆիզիկական ակտիվության զարգացման նպատակով՝

1) բոլոր 7 մարզադպրոցներում մարզական բոլոր խմբերում պարապող զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները պարապում են անվճար հիմունքներով

2) 1999թ. Արարատ քաղաքում ֆիզիկական անձանց կողմից կատարված ներդրումներով հիմնադրվել «Այգ» մարզական համալիրը, որը առ այսօր հանդիսանում է մազի լավագույն սպորտային համալիրը /մարզվում են օլիմպիական մարզիկներ/: «Այգ» մարզական համալիրը գործում է միջոցառումներից ստացված գումարների շնորհիվ:

275. Մյուս 5 մարզադպրոցները՝ Արարատի, Վեդու, Մասիսի քաղաքապետարանների, Մասիսի և Տափերականի «Սևան» ԳՄԸ-երի մարզադպրոցները ջեռուցվում են միայն պարապմունքների օրերին էլ. ջեռուցիչների կամ գազօջախների միջոցով, դա բնականաբար ազդում է մարզադպրոցի նորմալ աշխատանքային ընթացքի վրա:

276. Ստորև ներկայացված է Արարատի մարզի գործող մարզադահլիճները

Աղյուսակ 5.10

	Մարզադպրոցի անվանումը	Մարզակառույցի անվանումը	Չափերը	Ջեռուցման վիճակը	Երբ է կառուցվել
1	Արտաշատի քաղաքապետարանի համալիր մարզադպրոց	ստադիոն	104---69	------	1960
2	Արտաշատի քաղաքապետարանի Օ Հ մարզադպրոց	ըմբշամարտի մ. դահլիճ	42.5 -- 24	ջեռուցվող	1986
		խաղային մարզադահլիճ	36 -- 18		1965

		մարզադահլիճ	18 --- 12		
3	Ք.Արարատի մանկապատանեկան մ / դ	մարզադահլիճ	----	---	----
	Ջող-բանավանի մասնաճյուղ	հարմարեցված	30 -- 10		2006
4	Վեդու քաղաքապետարանի մ / դ	մարզադահլիճ	36 -- 18	---	1965
5	“Սևան” ԳՄԸ Տափերականի մ / դ	հարմարեցված	-------	---	…..
6	“Սևան” ԳՄԸ Ք. Մասիսի մ / դ	հարմարեցված	17--7	վառարան	-----
7	Մասիսի քաղաքապետարանի մ / դ	մարզադահլիճ	17--9	էլ. ջեռ.	…..

277. Մարզի Արտաշատ, Արարատ և Մասիս քաղաքներում գործում են ստադիոններ՝ 3000, 1000 և 500 նստատեղերով, 10 համայնքներում կան խոտածածկ, ստանդարտ չափերի մարզադաշտեր:

278. Մարզում գործող մարզադպրոցներից միայն ք.Արտաշատի համալիր մարզադպրոցն է, որ ունի լողավազան, մնացած լողավազանները մասնավոր են: Չնայած եղած գործող լողավազաններին՝ լողը, որպես մարզաձև, չի ուսուցանվում, քանի որ լողավազանները բաց են և գործում են միայն ամառվա ամիսներին:

279. ***Մարզական միջոցառումներ.*** Մարզը ապրում է բավական հագեցած սպորտային կյանքով: 2008-2009թթ. մարզի 25 համայնքներում վերականգնվել են ֆիզկուլտուրայի կազմակերպիչների հաստիքները, որոնք մարզային «Սևան» ԳՄԸ- ի հետ համատեղ համայնքներում կազմակերպում են իրենց աշխատանքները:

280. Տարեցտարի ավելանում են մարզում անցկացվող մարզական մրցումներ և միջոցառումների թիվը: 2009թ. մարզում անցկացվել է շուրջ 60 մարզական մրցում և միջոցառում, որոնց մասնակցել են շուրջ 5300 մարզիկ և 60 000 –80 000 մարդ:

281. Մարզի 4 քաղաքներում և 6 գյուղերում կազմակերպվել են առողջարարական մասսայական միջոցառումներ՝ «Առողջ ապրելակերպ» կրոսավազք, «Մաշտոցյան խաղեր» «Ֆիզկուլտուրայի օր», «Օլիմպիական օր», մանկապարտեզի սաների համար առանձին ծրագրով հեծանվավազք և այլ միջոցառումներ:

282. 2009թ. մարզը Գյուղական պատանեկան հանրապետական 8-րդ խաղերի ծրագրով 11 մարզաձևերից ընդհանուր թիմային հաշվարկով գրավել է 1-ին տեղը:

283. 2009թ. ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի հանրապետական փուլում մարզը գրավեց 2-րդ տեղը: Արտաշատ քաղաքը «Լավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսին գրավեց 3-րդ տեղը:

284. Ամեն տարի մեծ շուքով նշվում է ֆիզկուլտուրայի միջազգային օրը, որին մասնակցում է մոտավորապես 500 մարզիկ:

285. Մեծ շուքով նշվում են հուշամրցաշարեր տարբեր մարզաձևերից՝ նվիրված արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկներին՝ Գառնիկ Ղուկասյանին նվիրված հուշամրցաշարը դարձել է միջազգային նշանակություն ունեցող մրցաշար:

286. Հանրապետական նշանակություն ունեցող մրցաշար է համարվում սպորտի վարպետ ըմբշամարտիկ Ռազմիկ Գոլեցյանի հիշատակին նվիրված ավանդական հուշամրցաշարը:

287. Մարզում մեծ ուշադրություն է հատկացվում շախմատ մարզաձևին, որի մարզային ֆեդերացիայի նախագահն է մարզպետ Վ.Հովակիմյանը: Տարվա ընթացքում անց է կացվում երկու մարզային առաջնություն:

288. 2009թ. մարզի շախմատի հավաքականը Գյուղական պատանեկան հանրապետական 8-րդ խաղերի եզրափակիչ մրցափուլում գրավել է 1-ին տեղը:

289. Համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության մարզական միջոցառումների տարեկան օրացուցային պլանի, մարզը մշտապես լավագույն մասնակցություն է ունեցել կազմակերպվող միջոցառումներին:

290. Մարզի մարզիկները ունեն նաև ակտիվ մասնակցություն միջազգային մրցաշարերին հիմնականում ազատ և հունահռոմեական ոճի ըմբշամարտեր, աթլետիկա, ծանրամարտ մարզաձևերից: Շոշափելի առաջընթաց է արձանագրվել նաև բռնցքամարտ, կանանց ըմբշամարտ, ֆուտբոլ մարզաձևերում: Մարզում զարգացած է կանանց բասկետբոլը՝ ք.Արարատի «Ավարայր» ակումբ :

291. 2009թ. դեկտեմբերին ամփոփվել են սպորտի բնագավառի արդյունքները և մարզից ընտրվել են 10 լավագույն մարզիկներ, որոնցից 7 –ը՝ Եվրոպայի և աշխարհի տարբեր առաջնությունների մեդալակիրներ, իսկ 3 –ը՝ ՀՀ չեմպիոններ:

292. Անվտանգ զբոսայգիների, ոտքով և հեծանիվով երթևեկելու համար նախատեսված ճանապարհների, խաղահրապարակների, լողավազանների և ֆիզկուլտուրայով ու սպորտով զբաղվելու այլ հնարավորությունների, հովանավորչական միջոցներով իրականացվող ծրագրերի, մարզական միջոցառումների մասին տեղեկատվությունը լուսաբանվում է մարզպետարանի լրատվության բաժնի և մարզային հեռուստակենտրոնի միջոցով: Աշխատանքներ են տարվում դրանք մարզպետարանի կայք էջում տեղադրելու ուղղությամբ:

293*. **Երիտասարդության հարցեր**.* Երիտասարդական քաղաքականության նպատակը երիտասարդ մարդու ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորման, երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպական պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է:

294. Արարատի մարզում ապրում են 18-30 տարեկան մոտ 75000 երիտասարդ, որոնցից 20000-ը ուսման կամ աշխատանքի բերումով ամենօրյա կապ ունեն

մայրաքաղաքի հետ: Մարզում կան 8 միջն. մասնագիտական ուսումնական հաստատություն և Բուհ, որտեղ սովորում են մոտ 4000-ից ավել երիտասարդ: .

295. Մարզի տարածքում գործում են 7 երիտասարդական հասարակական կազմակերպություն, ինչպես նաև Արարատի մարզի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնը, որն անմիջական կապ է ապահովում մարզի երիտասարդության և հասարակական կազմակերպությունների միջև: 2009թ. մարզի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի կողմից ընդունվել է 4 ծրագիր, որոնց նպատակը հիմնականում ուղղված է եղել երիտասարդների հոգևոր և ֆիզիկական զարգացմանը: Համաձայն այդ ծրագրերի կազմակերպվել են ուխտագնացություններ, դասախոսություններ, հանդիպումներ, օտար լեզվի և համակարգչային դասընթացներ, ինչպես նաև սեմինարներ, թրեյնինգներ, հանդիպումներ գործատուների հետ: Կազմակերպվում է ամենամյա «Տարվ ն երիտասարդ» մրցանակաբաշխությունը, որը խթանում է երիտասարդության ա լավագույ ակտիվացմանը:

296. ***Սպորտի և երիտասարդության հարցերի հիմնախնդիրներն են.*** Նոր աշխատատեղերի բացակայություն, որոնց առկայությունը կնպաստի զբաղվածության բարձրացմանը:

1) Բնակարանների պակաս և դրանց ձեռք բերելու դժվարություններ, որոնք նվազեցնում են ամուսնությունների քանակը և երիտասարդ ընտանիքների ձևավորումը:
2) Նորաստեղծ երիտասարդ ընտանիքներին պետական հոգածություն ցուցաբերելու շրջանակներում որոշակի արտոնությունների բացակայություն՝ կոմունալ վարձավճարների զեղչեր, ամառային հանգստի անվճար ուղեգրերի տրամադրում:
3) Մարզում սպորտի զարգացմանը հիմնական խոչընդոտ է հանդիսանում՝
4) մարզադպրոցների ոչ մշտական գործելը /ձմռան սեզոնին ջեռուցման բացակայության պատճառով չեն աշխատում մարզի բոլոր մարզադպրոցները/,
5) մարզի լավագույն մարզիչները ցածր աշխատավարձի պատճառով խուսափում են մարզադպրոցներում հիմնական աշխատելուց:
6) Երիտասարդական ժամանցային կենտրոնների բացակայությունը:

297. Կարելի է առանձնացնել մի քանի հիմնական սկզբունքներ, որոնք կարող են ընկած լինել երիտասարդական պետական քաղաքականության հիմքում.

1) Երիտասարդ անձի իրավունքների և շահերի համադրումը պետական քաղաքականության ձևավորման և իրականացման գործում՝ նրա անմիջական մասնակցությունը այդ ծրագրերի ձևավորման և իրականացման գործընթացին

2) Պետական աջակցություն երիտասարդ ընտանիքներին

3) Երիտասարդների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը

4) Երիտասարդների աշխատանքի, նրանց զբաղվածության, մասնավորապես գյուղական երիտասարդության, սահմանամերձ գյուղերի և բնակավայրերի երիտասարդության աշխատանքի, նրանց սեփականության երաշխիքների ապահովում:

5) Սերտ համագործակցություն միջազգային նույնատիպ կառույցների հետ:

6) Տեղեկատվական ցանցի զարգացում մարզերում, մարզային երիտասարդական կառույցների հետ:

5.3.2. Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի ռազմավարություն

298. Արարատի մարզի սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում զարգացման հիմնական գերակայություններն են.

1) Սպորտային հաստատությունների ջեռուցում, դահլիճների կահավորում:

2) Մարզադաշտերի կառուցում և բարեկարգում:

3) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերաորակավորում:

4) ՀՀ մրցաշարերին, առաջնություններին մարզային հավաքական թիմերի և անհատ մարզիկների մասնակցությունը ապահովելու համար անհրաժեշտ է պետական բյուջեից հատկացնելել որոշակի ֆինանսական միջոցներ:

299. Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մոտեցում և ներդրումներ՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով: 2011-2014թթ. ընթացքում նախատեսվում է կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել 9 սպորտային օբյեկտներ՝ 147մլն. 500 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ:

300. Մարզի սպորտի ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 5.3, 5.3.1 և 11.1 հավելվածներում:

5.4 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

5.4.1. Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն.

301. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը կարևորելով առողջապահության ոլորտի դերը, հիմնական նպատակների շրջանակներում առանձնացնում է առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: ԿԶԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բուժօգնության ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով` հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանումը, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում մեծ դեր է վերագրվել առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացմանը, դրանց ներոլորտային վերաբաշխմանը` ի օգուտ առաջնային բուժօգնության օղակի, ինչպես նաև համակարգի կառավարման բարեփոխումների արդյունքում ակնկալվող արդյունավետության բարձրացմանը: Մարզի բնակչության բուժսպասարկումը լիարժեք մատչելի և որակյալ կազմակերպելու համար իրականացվել են մի շարք միջոցառումներ:

302. Արարատի մարզի առողջապահական համակարգի ընդհանուր ցուցանիշները
Նախկինում առողջապահական համակարգը գերկենտրոնացված էր: Ամբողջ բնակչության համար երաշխավորված էր անվճար բուժօգնությունն անկախ սոցիալական կարգավիճակից: Մարզում գործում էին 4 կենտրոնական շրջանային հիվանդանոցներ (մարզի յուրաքանչյուր քաղաքում` մեկական), որոնց կազմում ընդգրկված էին բոլոր բուժհաստատությունները` պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, բուժամանկաբարձական կետեր և այլն: Համակարգն ամբողջովին ֆինանսավորվում էր պետական բյուջեի միջոցներից` ելնելով սահմանված նորմատիվներից:

303. Անցումային շրջանում և շուկայական մեխանիզմների ներդրման գործընթացի ներքո պարզ դարձավ, որ առողջապահության առկա համակարգի պահպանումը բյուջետային ֆինանսավորմամբ անարդյունավետ է և անհնար: Համակարգի ֆինանսական ծախսերի օպտիմալացման և ինքնաֆինանսավորման բաղադրիչի զարգացման նպատակով, սկիզբ դրվեց առողջապահության համակարգի կառուցվածքային բարեփոխումներին:

304. Առողջապահական համակարգի ապակենտրոնացման արդյունքում 1996թ. Արարատի մարզի առողջապահական հաստատությունների կառավարման իրավասությունները փոխանցվեցին մարզպետարանին: Կենտրոնական շրջանային հիվանդանոցները բաժանվեցին առանձին հիմնարկների, որոնց տրվեց ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտների կարգավիճակ:

305. Շարունակելով առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացը՝ 2006թ. կառավարության թիվ 1911-Ն որոշմամբ իրականացվել են հետևյալ փոփոխությունները՝

306. ***Արտաշատի տարածաշրջան*** «Արտաշատի հիվանդանոց», «Արտաշատի պոլիկլինիկա», «Արտաշատի ծննդատուն» և «Արտաշատի հակատուբերկուլյոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են ստեղծելով «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական և ախտորոշիչ ծառայությունները ինտեգրվել են ստացիոնար ծառայություններին՝ պոլիկլինիկան ապագայում վերածելով ընտանեկան բժշկության կենտրոնի:

307. Արտաշատի պոլիկլինիկայում ստեղծվել է տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ վերապահելով՝ նրան դիսպանսեր հսկողության գործառույթ: Արտաշատի պոլիկլինիկայից առանձնացման ձևով վերակազմակերպվել են «Ազատավանի, Այգեստանի, Այգեզարդի, Արևշատի, Բուրաստանի, Գետազատի, Դալարի, Կանաչուտի, Դվինի, Նորաշենի, Նշավանի, Ջրաշենի, Քաղցրաշենի, Դիմիտրովի առողջության առաջնային պահպանման կենտրոններ» փակ բաժնետիրական ընկերությունները: Օպտիմալացման արդյունքում «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 275-ից կրճատվել է 155-ի:

308. ***Մասիսի տարածաշրջան*** «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին միաձուլման ձևով միացել է «Մասիսի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական և ախտորոշիչ ծառայությունները ինտեգրվել են ստացիոնար ծառայություններին՝ պոլիկլինիկան ապագայում վերածելով ընտանեկան բժշկության կենտրոնի:

309. Մասիսի պոլիկլինիկայում ստեղծվել է տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ վերապահելով նրան դիսպանսեր հսկողության գործառույթ: Մասիսի պոլիկլինիկայից առանձնացման ձևով վերակազմակերպվել են «Նոր-Խարբերդի, Մարմարաշենի, Նորամարգի, Սայաթ-Նովայի, Դարակերտի, Դաշտավանի, Գեղանիստի, Արգավանդի, Հովտաշատի, Հայանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոններ» փակ բաժնետիրական ընկերությունները: Օպտիմալացման արդյունքում «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 170-ից կրճատվել է 110-ի

310. ***Արարատի տարածաշրջան*** «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն առանձնացման ձևով վերակազմակերպվել է ստեղծելով «Զանգակատան և ՌԿՖ բանավանի առողջության առաջնային պահպանման կենտրոններ» փակ բաժնետիրական ընկերությունների: Օպտիմալացման արդյունքում «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 80-ից կրճատվել է 50-ի:

311. «Վեդու հիվանդանոց» և «Վեդու պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել է ստեղծելով «Վեդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության: Պոլիկլինիկայի նեղ

մասնագիտական և ախտորոշիչ ծառայությունները ինտեգրվել են ստացիոնար ծառայություններին՝ պոլիկլինիկան ապագայում վերածելով ընտանեկան բժշկության կենտրոնի:

312. Վեդու պոլիկլինիկայում ստեղծվել է տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ վերապահելով նրան դիսպանսեր հսկողության գործառույթ: Վեդու պոլիկլինիկայից առանձնացման ձևով վերակազմակերպվել են «Նոյակերտի, Փոքր Վեդու և Ուրցաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոններ» փակ բաժնետիրական ընկերությունները: Օպտիմալացման արդյունքում «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 80-ից կրճատվել է 40-ի:

313. «Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում օպտիմալացման արդյունքում փակվել է սոմատիկ հիվանդների համար նախատեսված 25 մահճակալը: Առողջության կենտրոնը դարձել է 100 մահճակալանոց հոգեկան առողջության կենտրոն:

314. «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ն 50 մահճակալով թողնվել է անկախ իրավաբանական անձի կարգավիճակով:

315. Ընդհանուր մահճակալային ֆոնդը մարզում 765—ից կրճատվել է 505-ի:

316. Օպտիմալացումից հետո Արարատի մարզի առողջապահական հիմնարկների քանակը 31-ից դարձել է 55՝

1) բժշկական կենտրոն - 4
2) ծննդատուն - 1
3) առողջության կենտրոն - 1
4) բժշկական ամբուլատորիա - 49
5) բուժակ-մանկաբարձական կետ - 44

317. Արարատի մարզի տարածքում գործում է տարբեր թեքումներով այլ առողջապահական հիմնարկներ՝

1) Մասիսում - «Մասիս» օրթոպեդիկ հիվանդանոց ՓԲԸ, որն իրականացնում է հանրապետության 0-14 տարեկան երեխաների օրթոպեդիկ բուժօգնությունը:

2) Արտաշատում - «Հովակիմյաններ» ՍՊԸ ակնաբուժական կենտրոնը, որն իրականացնում է ամբուլատոր և վիրահատական բուժօգնությունը:

318. Հարկ է նշել, որ բուժհաստատությունների միավորման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման արդյունքում զգալիորեն բարելավվել է նրանց ֆինանսական վիճակը: Սակայն, վերոհիշյալ ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները բավարար չէին համակարգի լիարժեք վերագործարկման համար: Տարիների ընթացքում մարզի առողջապահական համակարգի առջև կուտակվել են նաև այլ կարևոր խնդիրներ, որոնց լուծումից է այսօր կախված ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացումը:

319. ***Բժշկական կադրեր*** Մարզում օպտիմալացման հետևանքով բուժանձնակազմի թվաքանակը թե ամբուլատոր-պոլիկլինիկական և թե հիվանդանոցային համակարգում կրճատվել է: Սակայն վերջին երկու-երեք տարիների ընթացքում կրկին այդ թիվն սկսել է աճել. 2004-2006թթ.-ի ընթացքում բժիշկների թվաքանակն ավելացել է 19-ով, իսկ միջին բուժանձնակազմի քանակը՝ 91-ով: Միևնույն ժամանակ բուժմասնագետ /սպասարկվող բնակչություն հարաբերակցությունը պահպանվել և նույնիսկ որոշ չափով աճել է: Համեմատած ՀՀ այլ մարզերի հետ Արարատի բժիշկ/բնակչություն հարաբերակցության ցուցանիշը բարձր է:

Աղյուսակ 5.11. Բժշկական կադրեր և նրանցով ապահովվածությունը.

Բժիշկներ բոլոր մասնագիտություններով																	
2001		2002		2003		2004		2005		2006		2007		2008		2009	
Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով
486	17.7	438	15.9	440	16	438	15.9	440	16	455	16.5	416	15.1	418	15.2	415	15

Միջին բուժանձնակազմ																	
2001		2002		2003		2004		2005		2006		2007		2008		2009	
Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով	Բացարձակ թվեր	10000 բնակչի հաշվով
1250	45.4	1200	43.6	1220	44.4	1020	37	1064	38.7	1071	38.9	1105	40.2	1102	40	1127	41

320. Այսօր Արարատի մարզը բժիշկների և միջին բուժանձնակազմի թափուր հաստիքներ չունի, ապահովված է բժշկական կադրերով:

321. ***Ընտանեկան բժիշկներ.*** Ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը մեծապես նպաստեց գյուղական համայնքների բուժսպասարկման մատչելիության բարձրացմանը: Մարզում ընտանեկան բժշկության կայացման համար, ըստ բնակչության

թվի, անհրաժեշտ է ունենալ առնվազն 140 ընտանեկան բժիշկ և 140 բուժքույր: Վերապատրաստվել են 132 բժիշկ և 134 բուժքույր:

322. Լիովին գործում է ՀՀ առողջապահության նախարարության (ՀՀ ԱՆ) և Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագրի օժանդակությամբ ԱԱՊ բժշկի մոտ բնակչության գրանցման ավտոմատացված համակարգը:

323. Բնակչության մեկ շնչի տարեկան միջին հաճախումների դինամիկան ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 5.12. Ամբուլատոր - պոլիկլինիկական հաստատություններում բնակչության մեկ շնչի տարեկան միջին հաճախումների դինամիկան 2003-2009 թթ.. Արարատի մարզում

Մարզ	հազ մարդ.						
	2003	2004	2005	2006	2007	2008	2009
ԱՐԱՐԱՏ	1.65	1.9	2.16	2.3	2.65	3.3	3.2

324.Ներկա իրավիճակի գնահատումը ցույց է տալիս որ մարզի մի շարք առողջապահական իրավաբանական անձեր գտնվում են բավականին ֆինանսատնտեսական բարդ վիճակում և ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության դերը պետք է լինի նրանց ֆինանսատնտեսական վիճակի առողջացման գործընթացի կազմակերպումը՝ ճգնաժամից հնարավորին չափ շուտ դուրս գալու համար:

325.**Արարատի մարզի հիվանդացության և մահացության վիճակագրությունը.** Առողջապահական բնագավառում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ Արարատի մարզում դեռևս բարձր են մնում հիվանդացության և մահացության մակարդակները: Վերջին տարիներին տարբեր հիվանդություններով հիվանդացությունը ենթարկվել է էական ներկառուցվածքային և քանակական փոփոխությունների: Հասարակության համար լրջագույն խնդիր է դարձել այնպիսի սոցիալական հիվանդությունների աճը, ինչպիսիք են տուբերկուլյոզը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, իսկ ալկոհոլամոլությունը և թմրամոլությունը սկսվել են դասվել հասարակության համար խնդիր դարձած ախտերի շարքում:Մարզի բնակչության առողջական վիճակի մասին կարելի է դատել՝ ելնելով նաև հիվանդությունների տարածման միտումներից: Այսպես, հիվանդությունների տարածման մասին վկայող տվյալները ցույց են տալիս, որ մարզում վերջին տարիներին մեծ տարածում ունեն դիաբետի (հատկապես ինսուլինաանկախ) բարդություններով

հիվանդությունները, նորագոյացությունները: Բացի դրանից, մարզի համար լրջագույն խնդիր են սոցիալական հիվանդությունները՝ տուբերկուլյոզը, հոգեկան խանգարումները, ինչպես նաև մինչև 1 տարեկան երեխաների հիվանդացությունը՝ հատկապես անեմիայով, որոնց հայտնաբերման բարելավման արդյունքում այդ հիվանդությունները բնութագրող ցուցանիշներում թվացյալ աճ է գրանցվել:

326. Վերջին տարիներին տարածված ինֆեկցիոն հիվանդությունների շարքում առանձնանում է աղիքային ինֆեկցիաները, վիրուսային հեպատիտը, ջրծաղիկը, շնչական օրգանների տուբերկուլոզը, վերին շնչուղիների սուր ինֆեկցիաները:

327. Ինչ վերաբերում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածմանը, ապա մարզում վարակի գրանցված դեպքերի թիվը աճել է:

328. Մարզի համար պոտենցիալ վտանգ է ներկայացնում այն փաստը, որ բնակչության մեծ զանգված են կազմում աշխատանքային միգրանտները, որոնք մեկնում են ՁԻԱՀ-ի բարձր ցուցանիշ ունեցող երկրներ: Այս առումով տարափոխիկ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկման անհրաժեշտությունն ակնհայտ է:

329. Հաշվի առնելով, որ մարզում ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային համակարգի, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացություններ և քրոնիկական շնչառական հիվանդությունների, տարածվածությունը դրսևորում է աճի միտում, և այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը, ինչպես նաև, բնակչության ոչ լիարժեք տեղեկացվածությունը նշված հիվանդությունների և ռիսկերի վերաբերյալ, ապա առաջնահերթ խնդիր է դառնում այդ հիվանդությունների վաղ հայտնաբերման և հետևանքների նվազեցման ուղղված միջոցառումները;

330. 2001-2009թթ. տվյալները, որ ներկայացված են ստորև, ցույց են տալիս, որ Արարատի մարզում առկա է շաքարային դիաբետով, նորագոյացություններով, սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով հիվանդացության աճ: Չնայած տուբերկուլոզով հիվանդների ընդհանուր թիվը նվազել է, այնուամենայնիվ նկատվում է տուբերկուլոզով հիվանդների աճ, որը պայմանավորված է հիվանդների հայտնաբերման գործընթացի լավացումով:

Աղյուսակ 5.13.

Հիվանդություն	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Շաքարային դիաբետ ինսուլինակախյալ	447	492	500	523	562	586
Շաքարային դիաբետ ինսուլինաանկախ	6706	6912	7005	7128	7239	7300
Հոգեկան խանգարումներ	3413	3455	3482	3507	3528	3711
Նորագոյացություններ	1415	1390	1361	1363	1392	1416

Տուբերկուլոզով հիվանդներ	787	805	802	828	839	848
Հղիների սակավարյունություն	417	426	442	437	429	516
Երկաթադեֆիցիտ անեմիաներ	188	162	221	299	338	410

331. **2007-2009թթ. առողջապահության ոլորտում իրականացված աշխատանքներ.** Արարատի մարզում գործող բարեգործական և միջազգային կազմակերպությունների գործունեությունը էական արդյունք է տվել առողջապահության բնագավառում, մասնավորապես՝ տեխնիկական համագործակցության շրջանակներում տարբեր բարեգործական կազմակերպությունների կողմից կազմակերպվում են՝

1) վերապատրաստման դասընթացներ,

2) «Բաց դռների օրեր»,

3) մարզի տարածաշրջանների բուժհաստատություններում ազգաբնակչության (այդ թվում նաև մանկական) բժշկախորհրդատվական անվճար ընդունելություններ,

4) հաշմանդամ երեխաների բուժսպասարկում,

5) շարժական բժշկական խմբերի կողմից այցելություններ տարածաշրջանների գյուղական համայնքներ:

332. Համաշխարհային բանկի ներդրումային ծրագրով մարզում կառուցվել և վերանորոգվել են 18 բժշկական ամբուլատորիաներ, որոնք հագեցվել են բուժսարքավորումներով և կահույքով: Նրանց տրամադրվել են նաև բուժօգնության մեքենաներ: Մարզի բոլոր առողջության առաջնային պահպանման կենտրոնները հագեցվել են բժշկական սարքավորումներով, բժշկական պարագաներով և կահույքով:

333. Նույն ծրագրով ներկայումս վերանորոգվում է «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքը 382 միլիոն դրամ արժողությամբ: «ՆՕՎԱ» ծրագրով ծրագրի շրջանակներում բժշկական կենտրոնին կտրամադրվեն անհրաժեշտ բժշկական կահույք և սարքավորումներ: Արարատի տարածաշրջանի 11 բուժակմանկաբարձական կետեր և Վեդու ծննդատան կանանց կոնսուլտացիան ենթարկվել են հիմնանորոգման, հագեցվելով համապատասխան գույքով և սարքավորումներով: Առողջության առաջնային պահպանման զարգացման ծրագրով Արտաշատի տարածաշրջանում վերանորոգվել է 12 բուժակմանկաբարձական կետեր և 1 ամբուլատորիա: Ներկայումս ընթանում է «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիմնական մասնաշենքի վերանորոգման աշխատանքները՝ պետական բյուջեից 650 միլիոն ընդհանուր արժեքով: Նախատեսվում է շինարարական աշխատանքները ավարտել 2012թ-ին:

334. ***Մարզի բնական աճի ցուցանիշները (ծնելիություն և մահացություն)*** Վիճակագրությունը վկայում է, որ վերջին տարիներին կայունացել է ծնելիությունը:

Ծնելիության ցուցանիշը 24-ից (1986 թ. միջին հանրապետական) նվազել է 11-ի (2005թ.) 1000 բնակչի հաշվարկով: Վերջին երեք տարում նկատելի է որոշակի աճ; Դեռևս բարձր է մնում մահացությունը, այն 5.7-ից (1986 թ. միջին հանրապետական) աճել է 11.2-ի (2008թ.) 1000 բնակչի հաշվարկով:

335. Բնական աճի ցուցանիշը բարձրացել է 18.3 –ից (1986 թ. միջին հանրապետական) մինչև 18.6-ի (2008թ.): Դեռևս հեռու են Եվրոպական միջին ցուցանիշներից մայրական և մանկական մահացության ցուցանիշները:

336. 2004-2009թթ. Արարատի մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 5.14.-ում

Աղյուսակ 5.14.

Արարատի մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2004	բացարձակ թվով	3231	1981	1250
	ըստ 1000 բնակչի	11.7	7.2	
2005	բացարձակ թվով	3197	2042	1155
	ըստ 1000 բնակչի	11.6	7.4	
2006	բացարձակ թվով	3222	2030	1192
	ըստ 1000 բնակչի	11.7	7.4	
2007	բացարձակ թվով	3624	2090	1534
	ըստ 1000 բնակչի	13.2	7.6	
2008	բացարձակ թվով	3594	2157	1437
	ըստ 1000 բնակչի	13.0	7.8	
2009	բացարձակ թվով	3831	2124	1707
	ըստ 1000 բնակչի	13.9	7.7	

337. **Արարատի մարզում առողջապահության ոլորտում առկա հիմնախնդիրները.** Բնակչության առողջապահական հիմնական ցուցանիշների բացասական տեղաշարժի միտումը շատ բանով պայմանավորված է առողջապահական համակարգի արդի վիճակով, որի հիմնախնդիրները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

1) անբավարար շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազան
2) ծառայությունների զարգացման ֆինանսական խթանների բացակայություն և բուժաշխատողների ցածր վարձատրություն
3) ազգաբնակչության ցածր տեղեկացվածություն
4) կառավարման և վերահսկման մեխանիզմների թերություններ:

338. Մոր և մանկան առողջության բարելավումը բնակչության առողջության պահպանման կարևորագույն նախադրյալներից է: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը սոցիալ-տնտեսական անկման պայմաններում առաջին հերթին տուժում են երեխաները և կանայք՝ հասարակության առավել խոցելի այն խավը, որն ապագայի կրողն է: Չնայած վերջին տարիներին մանկական ծառայությունում արձանագրված որոշակի առաջընթացին (պատվաստումների գործընթացի, կրծքով սնուցման ցուցանիշի բարելավում և այլն), դեռևս մանկական մահացության կառուցվածքում զնալով ավելի է մեծանում շուրջծննդյան հիվանդություններից և զարգացման արատներից մահացության տեսակարար կշիռը.

1) Մասնագետների որակավորման անբավարար մակարդակ

2) Առաջին անհրաժեշտության սարքավորումներով և պարագաներով ոչ լիարժեք հագեցվածություն

3) Ցուցաբերվող բուժօգնության որակի լուրջ խնդիրներ, երբեմն հակասող ապացուցողական բժշկության դրույթներին:

4) Նախածննդյան խնամքի և հղիության հսկողության ընդգրկվածության ոչ բավարար մակարդակ, հղիության ախտաբանությունների վաղ հայտնաբերման և նորածնային պաթոլոգիաների ներարգանդային ախտորոշման թույլ համակարգ

5) Մանկական և մինչև 5 տարեկան երեխաների մահացության ու հիվանդացության դեռևս բարձր մակարդակ

6) Նորածնային և պերինատալ մահացության աճի ակնհայտ միտում

7) Մանկական մահացության կառուցվածքում պերինատալ պատճառներից և վաղ նորածնային շրջանում մանուկների մահացության մեծ տեսակարար կշիռ

8) Երեխաների տնային մահացության և մինչ շուրջօրյա մահաբերության բարձր ցուցանիշներ

9) Երեխաների պատվաստումներով ժամանակին և ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վատացում

10) Երեխաների սնուցման վիճակի շարունակական վատացում՝ կրծքով կերակրման ցուցանիշների իջեցում, հավելյալ սնուցման կազմակերպման սխալ գործելակերպ

11) Վաղ հասակի երեխաների թերսնուցման և սակավարյունությունների բարձր տարածվածություն, ցածր քաշով ծնված երեխաների տեսակարար կշռի մեծացում

12) Մանկան զարգացման գնահատման և մոնիտորինգի համակարգի անբավարար մակարդակ

13) Մանկան զարգացման շեղումների, անկարողության, հաշմանդամության վաղ հայտնաբերման, վաղ միջամտության ծրագրերի և վերականգնողական բուժման կազմակերպման անհրաժեշտ պայմանների անբավարար մակարդակ

14) Համայնքային կառույցների/ընտանիքի անբավարար ներգրավվածություն երեխաների առողջության պահպանման, մասնավորապես վաղ մանկության

զարգացման ապահովմանը նպաստող ծրագրերում, ինչպես նրանց գիտելիքների մակարդակի, այնպես էլ մասնակցության առումով:

15) Անբավարար վիճակում է գտնվում հղիների նախածննդյան հսկողության և խնամքի կազմակերպման գործընթացը, զգալի աճել են հղիության ախտաբանությունները և բարդացած ընթացքով ծննդաբերության դեպքերը: Բավարար վիճակում չի գտնվում կանանց մոտ սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների նկատմամբ հետազոտությունները, մեծանում է սեռական օրգանների քաղցկեղով հիվանդ կանանց թիվը:

339. Մասնագիտացված հիվանդանոցային բուժօգնության հիմնախնդիրներն են.

1) Չնայած 2001թ. օպտիմալացման ծրագրի առաջին փուլով բավականին կրճատվեց մահճակալային ֆոնդը, (2000թ՝. 765 մահճակալ) 2007թ՝ օպտիմալացման ծրագրի երկրորդ փուլում ՝ 505 մահճակալ, սակայն դեռևս բավականին ցածր է մահճակալային ֆոնդի զբաղվածությունը՝ 45%-ից 50%,

2) Չկան բուժօգնության որակի վերահսկման չափորոշիչներ, հիվանդանոցները կարիք ունեն վերանորոգման և տեխնիկական վերազինման:

340. Հիվանդանոցային ծառայության քառամյա զարգացման ծրագրի համար առկա են չորս հիմնախնդիրներ

341. ***Կառուցվածքային փոփոխություններ*** «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ–ում բացել անոթային վիրաբուժության ծառայություն, որը հնարավորություն կտա ավելի ընդգրկուն բուժելու հիվանդանոցում արդեն առկա դիաբետիկ մակրո անգիոպաթիաները, սրտային և ուղեղային անոթային հիվանդությունները: Կադրերի վերապատրաստման խնդիր: Ցանկալի կլիներ, որ մշակվեին և տրամադրվեին հիվանդությունների բուժման ժամանակակից ուղեցույցները (guideline), նրանց բուժման «ոսկյա ստանդարտները» (golden standarts), որը հնարավորություն կտար ճիշտ ախտորոշելու և բուժելու հիվանդներին:

342 Այս խնդրին լուծում տալով՝

1) կնվազի անհրաժեշտ մասնագետների դեֆիցիտը մարզում,

2) ավելի որակյալ կդառնա բուժումը (կմեծանա առողջացման ցուցանիշը, կփոքրանան կրկնակի հոսպիտալացումները, ինչպես նաև կնվազեն պաթանատոմիական և կլինիկական ախտորոշումների անհամապատասխանելիությունները, մահճակալ օրերը, մեկ հիվանդության բուժման միջին տևողությունը, մահճակալային ծանրաբեռնվածությունը և այլն),

343. ***Բուժսարքավորումներով վերազինում.*** Վերջին տարիներին կենտրոնացած գնումների միջոցով ՀՀ ԱՆ բավականին բուժսարքավորումներ է հատկացնում հիվանդանոցներին, սակայն դա հեռու է դեռ բավարար լինելուց: Անհրաժեշտություն կա կարիքները ուսումնասիրելով հատկացնել կոնկրետ այն բուժսարքավորումները, որի պահանջարկը առաջնահերթ է տվյալ հիվանդանոցի համար:

344*. Ինֆորմացիոն փոխանակման ցանցի ստեղծում.* Միջազգային որևէ դոնորական կազմակերպության կողմից դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստեղծել Արարատի մարզի առողջապահական կազմակերպությունների միջև գործող ինֆորմացիայի փոխանակման ցանց, որը.

1) հնարավորություն կտա կազմակերպելու մարզի գլխավոր մասնագետների կոնսուլտացիաները մարզի հեռավոր շրջաններում,

2) ազգաբնակչությանն ավելի բարձրորակ բժշկական սպասարկում և մարզի բժիշկներին նորագույն նվաճումների հետ ծանոթություն

3) միջազգային ասպարեզ դուրս գալու հնարավորություն

4) հնարավորություն կտա կազմակերպել բժշկական կոնսիլյումներ` հենց տեղում:

345*. Բուժաշխատողների վերապատրաստում`* Առողջապահության ոլորտի հիմնախնդիրներից է նաև բուժաշխատողների վերապատրաստման գործընթացը: Չնայած համաշխարհային բանկի ներդրումային ծրագրով մարզի բոլոր ընտանեկան բժիշկները և ընտանեկան բուժքույրերը ավարտել են վերապատրաստումները, սակայն այսօր գերխնդիր է նեղ մասնագետների վերապատրաստման կազմակերպումը:

346.Արարատի մարզի առողջապահության ոլորտի հիմնախնդիրների ծառը ներկայացված է գծապատկերում:

Առողջապահության ոլորտի հիմնախնդիրների «ծառը»



5.4.2. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

347. ՀՀ կառավարության կողմից հաստատված ԿԶԾ-ի առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Արարատի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, տարափոխիկ, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների կանխարգելման, հիվանդացության ու մահացության իջեցմանն ուղղված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածքային մակարդակով լրացնելու և հետևաբար ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

348. Մատուցվող բժշկական ծառայությունների որակը էապես կախված է ֆինանսական հատկացումներից և չնայած վերջին տարիներին նկատվում է ֆինանսական հատկացումների աճ, սակայն այն դեռևս հեռու է իրական պահանջարկից: 2002 թվականի համեմատ գրեթե կրկնակի ավելացել է մարզի առողջապահությանը ուղղված պետական ֆինանսական հատկացումները, ընդ որում էականորեն աճել են առաջնային բուժօգնությանն ուղղված ֆինանսական հատկացումները:

349. Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվում բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է առողջության առաջնային պահպանման մակարդակի բարելավման, առաջնային և երկրորդային բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները: Ստորև ներկայացված է մարզի բնակչության առողջական վիճակի բարելավման գործընթացը:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ



350. Խիստ կարևորվում են հետևյալ խնդիրները.

1) Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի մանկաբարձագինեկոլոգիական ծառայությունը որակյալ կադրային և տեխնիկական ներուժով հագեցման կարիք ունի: Բուժօգնության որակի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նպատակահարմար է կազմակերպել ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համատեղ վերապատրաստման դասընթացներ:
2) Մարզի տարածքի հիվանդանոցների կազմում գործող մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքները նորագույն ժամանակակից տեխնիկայով վերազինման և կահավորման խիստ կարիք ունեն:
3) Ստեղծել շտապ բուժօգնության մարզային կայան՝ իր ենթակայաններով մարզի երեք տարածաշրջաններում (Մասիս, Վեդի և ք. Արարատ):

351. Շտապ բուժօգնության և սպասարկման որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1) շտապ բուժօգնության մարզային կենտրոնի ստեղծում, որը կունենա միասնական կապ, ապահովված կլինի առնվազն 1 ռեանիմոբիլով,

2) մարզային կենտրոնի ապահովում վերապատրաստված բժիշկ դիսպետչերներով (4 մասնագետ),

3) տարածաշրջանների շտապ բուժօգնության ենթակայանների վերազինում անհրաժեշտ ժամանակակից բժշկական սարքավորումներով և տրանսպորտով,

4) շտապ բուժօգնության ծառայություններում բարձրորակ բժշկական կադրերի ապահովում (ընդգրկել առաջնային օղակի նեղ մասնագետներին),

5) վերապատրաստման դասընթացների կազմակերպում (ՊԲ և այլ միջոցների հաշվին),

6)շտապ բուժօգնություն իրականացնող բաժանմունքներին շտապ օգնության թվով 11 ավտոմեքենաներով ապահովում (Արտաշատին 4 մեքենա՝ 1 ռեանիմոբիլ, Մասիսին 2 մեքենա, Վեդիին 3 մեքենա, Արարատին 2 մեքենա):

352.Արարատի մարզի առողջապահության ոլորտում առաջնահերթ լուծում է պահանջում մի շարք բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավման հարցը

Աղյուսակ 5.15.

1.	«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկա	Ենթակա է հիմնավերանորոգման
2.	«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
3.	«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
4.	«Վեդու ծննդատուն» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
5.	«Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
6.	«Ազատավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
7.	«Այգեստանի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
8.	«Արևշատի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
9.	«Գետազատի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
10.	«Դալարի ԱԱՊԿ» ՓԲԸ	Շենքի կառուցում
11.	«Դիմիտրովի ԱԱՊԿ» ՓԲԸ	Շենքի կառուցում
12.	«Մրգավանի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
13.	«Նշավանի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
14.	«Նորաշենի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
15.	«Քաղցրաշենի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
ՄԱՍԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
16.	«Արբաթի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
17.	«Գեղանիստի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
18.	«Դաշտավանի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
19.	«Խաչփարի ԲԱ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
20.	«Հայանիստի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
21.	«Հովտաշատի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
22.	«Մարմարաշենի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
23.	«Նորաբացի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
24.	«Նորամարգի ԱԱՊԿ» ՓԲԸ	Շենքի կառուցում

25.	«Նոր-Խարբերդի ԱԱՊԿ» ՓԲԸ	Շենքի կառուցում
26.	«Ռանչպարի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
27.	«Մայաթ-Նովայի ԱԱՊԿ» ՓԲԸ	Շենքի կառուցում
ՎԵԴՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
28.	«Արալեզի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
29.	«Լուսառատի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
30.	«Նոր-Կյանքի ԲԱ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
31.	«Ոսկետափի ԲԱ» ՓԲԸ	Շենքի կառուցում
32.	«Փ. Վեդու ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
33.	«Զանգակատան ԱԱՊԿ» ՓԲԸ	Շենքի կառուցում
34.	«ՌԿՖ բանավանի ԱԱՊԿ» ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման

353. Մարզի առողջապահական ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելվածներ 5.4 և 5.4.1 -ում:

Առողջապահության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Ռիսկեր
Ոլորտային նպատակ՝ Բարելավել բուժսպասարկման մատչելիությունը և որակը Արարատի մարզում	1. Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով 2. Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով 3. Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով 4. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, հազ. մարդ 5. Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ բնակչի հաշվով 6. Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդները 7. Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով 8. ՄԻԱՎ տարածվածության աստիճանը, վարակակիրների թիվը՝ 100000 բնակչի հաշվով 9. Բնակչության հիվանդացությունն ակտիվ տուբերկուլյոզով՝ դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով	ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների համաձայն՝ Առողջապահության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացությունների և մահացության նվազմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը:		
1.1 Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ առավելագույնս ուշադրություն դարձնելով գյուղական բուժամբուլատորիաների աշխատակազմին	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի թիվն ամբուլատոր-պոլիկլինիկական մակարդակի անձնակազմի ընդհանուր թվում, %	Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է վերապատրաստումից ստացած գիտելիքները: Մասնագետների արտահոսքը ցածր է:
1.2 Մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածինների հաշվով Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով	Երեխաներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մասնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից: Բուժանձնակազմը և ծնողները

1.3 Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդների տեսակարար կշիռը, % Մայրական մահացություն, 100000 կենդանածինների հաշվով	համագործակցում են միմյանց հետ:
1.4 Մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների կանխարգելիչ զննումների հաճախակի իրականացում	Երեխաների քրոնիկ թերսնուցման և սակավարյունության դեպքերի քանակը Պատվաստված երեխաների տեսակարար կշիռը երեխաների ընդհանուր թվում, %	
2. Գյուղական բնակավայրերում առողջության պահպանման առաջնային ծառայությունների մատչելիության բարձրացում, որի արդյունքում մարզի բնակչության գերակշռող մեծամասնությունը հնարավորություն կունենա օգտվելու որակյալ առաջնային բուժօգնության ծառայություններից:		
2.1 Գյուղական համայնքներում (հատկապես հեռավոր և սահմանամերձ) շրջիկ բժշկական խմբերի կանոնավոր այցելությունների կազմակերպում	Գյուղական համայնքների բնակչության %, որն օգտվել է շրջիկ բժշկական խմբերի ծառայություններից Շրջիկ բժշկական խմբերի ծառայությունների որակից գյուղական բնակչության բավարարվածության աստիճանը	Կառավարության կողմից հաստատված առողջապահական ծրագրերն իրագործվում են գյուղական բնակավայրերում: Շրջիկ բուժսպասարկման ծառայություն իրականացնող անձնակազմն առկա է:
3.Բուժսպասարկման ենթակառուցվածքի (առաջնային և երկրորդային) և նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը:		
3.1 Բժշկական հաստատությունների (հատկապես գյուղական) շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված բուժհիմնարկների տեսակարար կշիռը, %	Շենքերի, սարքավորումների, շրջիկ բուժսպասարկման պարագաների պահպանման և կառավարման կարողությունները մարզում առկա են:
3.2 Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Ախտորոշիչ սարքավորումներով ապահովված հիմնարկների (պոլիկլինիկական-ամբուլատոր, հիվանդանոցային) տեսակարար կշիռը,%	
3.3 Գյուղական համայնքների (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ) ամբուլատորիաների, բուժկետերի ապահովում առաջին օգնության պարագաներով	Առաջին օգնության պարագաներով ապահովված պոլիկլինիկական-ամբուլատոր հիմնարկների տեսակարար կշիռը, %	
3.4 Հիվանդանոցների ապահովում ժամանակակից սարքավորումներով	Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռը, % Երևան ուղեգրված հիվանդների տեսակարար կշիռը բուժօգնություն ստացածների ընդհանուր թվում, %	

4. Բուժհաստատությունների կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում:		
4.1 Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում ժամանակակից կառավարման մեթոդների և այլընտրանքային ֆինանսական աղբյուրների ներգրավման հմտությունների վերաբերյալ 4.2 Առողջապահական հաստատութ-յունների օպտիմալացման ծրագրի շարունակում: Հիվանդանոցային համակարգի օպտիմալացման արդյունքում համակարգի ներքին աուդիտի կազմակերպում՝ նյութատեխնիկական բազայի ուսումնասիրման և գույքագրման նպատակով:	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը, % Բուժհաստատության կողմից մատուցվող մասնավոր ծառայություններից գոյացող միջոցների տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում, % Վերամիավորված բուժհաստատությունների թիվը	Բուժհիմնարկների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ: Բուժհիմնարկների ղեկավար անձնակազմը կանոնավոր մասնակցում է դասընթացների:
5. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պայքարի ուժեղացում, ինչը կնպաստի սեռավարակակիրների թվի կրճատմանը և մահացության դեպքերի նվազմանը		
5.1 Անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ դպրոցներում դասընթացների կազմակերպում	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակված հիվանդների թիվը՝ 100000 բնակչի հաշվով Դասընթացներին ներգրավված դպրոցների տեսակարար կշիռը, %	Տեղական իշխանությունները, դպրոցները, բուժհիմնարկները շահագրգռված են կանխարգելման միջոցառումների շարունակելիության մեջ:
5.2 ԶԼՄ-ների միջոցով տարափոխիկ հիվանդությունների (հատկապես պալարախտի), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում	ՄԻԱՎ վարակակիրների թիվը՝ 100000 բնակչի հաշվով ՄԻԱՎ տարածվածությունը հղի կանանց շրջանում Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակարար կշիռը, %	Մշակութային արժեքները չեն խոչընդոտում անվտանգ սեռական հարաբերությունների, բեղմնականխիչ միջոցների, ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը:

5.5 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5.5.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն

354. Արարատի մարզում գործում են.

1) Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ՝ (մարզպետարանի աշխատակազմում ՝ 3 և Արարատում՝ քաղաքապետարանի բաժին) - 4
2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՆ) աշխատակազմ՝ «ՀՀ աշխատանքի պետական տեսչության» Արարատի մարզի տարածքային կենտրոն - 1
3) Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) տարածքային բաժիններ - 3
4) «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության» գործակալության Արարատի մարզային բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովներ (ԲՍՓՀ) - 2
5) «Հայաստանի Հանրապետության Զբաղվածության պետական ծառայություն» մարզային և տարածքային կենտրոններ - 4
6) ՀՀ ԱՍՀՆ ենթակայությամբ գործող Նոր-Խարբերդի մասնագիտացված մանկատուն - 1
7) «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպություն -1

355. Պետական քաղաքականության նպատակը հասարակության անդամների բարեկեցության բարձրացումն է արդյունավետ կենսապայմանների շարունակական բարելավման, մարդու իրավունքների և ազատությունների տնտեսական, սոցիալական, իրավական պաշտպանության միջոցով: Հասարակական կյանքում սոցիալական բնագավառը էական դեր ունի մարդկանց կենսագործունեության պայմանների ապահովման, կենսական պահանջմունքների գնահատման և բավարարման գործում: Սոցիալական ապահովության բնագավառի զարգացումը Հայաստանի համար կարևորվում է նաև աղքատության հաղթահարման տեսանկյունից: Աղքատությունը որպես բազմաչափ երևույթ, պայմանավորվում է ոչ միայն բնակչության եկամուտների, այլև սպառման և ծախսերի ցածր մակարդակով: Աղքատության մակարդակի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ (մասնավորապես՝ բնակչության կրթություն ստանալու, առողջության բավարար մակարդակ ապահովելու, երկրի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու սահմանափակ հնարավորությունները, տարբեր սոցիալական և այլ ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճանը և այլն): Կայուն զարգացման ծրագիրը (ԿԶԾ) փաստում է, որ մեր երկրում աղքատության հաղթահարումը հնարավոր է մարդկանց կենսաբանական (սնունդ, բնակարանի առկայություն, ջրի, էլեկտրաէներգիայի սպառում և այլն), սոցիալական (առողջություն, կրթություն, աշխատանք, նվազագույն տեղեկացվածություն և այլն) և հոգևոր (կարդալու, մշակութային արժեքներին հաղորդակից

լինելու հնարավորություն) պահանջմունքների համակցված բավարարման ճանապարհով:

356. Հիմնվելով այդ տրամաբանության վրա, նշենք, որ Արարատի մարզի բնակչության աղքատության հաղթահարման և բարեկեցության բարելավման կարևոր պայմաններից է մարզի սոցիալական բնագավառների՝ առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի լիարժեք ու արդյունավետ գործունեությունն ու զարգացումը: Իսկ ծրագրի հիմքում դրված են մի շարք գաղափարական հիմնադրույթներ (մասնավորապես՝ հավատարիմ լինելը ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին, եկամուտների արդար վերաբաշխման ապահովումը և աղքատության հաղթահարումը, աշխատունակ աղքատներին սեփական գործ հիմնելուն, եկամուտների ավելացմանը և սեփական աշխատանքով աղքատությունը հաղթահարելու հնարավորությունների ընդլայնումը, բնակչությանը՝ հատկապես աղքատ ընտանիքների և խոցելի խմբերի սոցիալական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը նվազագույն կենսական պայմանների երաշխավորությամբ և աղքատանալու վտանգից ապահովագրման միջոցով և այլն), որոնք երաշխիք են հանդիսանում մինչև 2015թ.-ը կրճատել աղքատությունը կրկնակի, ծայրահեղ աղքատությունը՝ քառակի անգամ:

357. Աղքատության վերլուծության տվյալները փաստում են, որ աղքատ են բնակչության հետևյալ սոցիալական խմբերը.

1) Բազմանդամ, հատկապես բազմազավակ ընտանիքների անդամները
2) Գործազուրկները և ցածր աշխատավարձով աշխատողները (ներառյալ մշակույթի և արվեստի աշխատողները)
3) Փախստականները և հետբախումային խմբերը, հատկապես հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում բնակվողները
4) Միայնակ կենսաթոշակառուների և հաշմանդամների այն մասը, որոնք բացի կենսաթոշակային ապահովումից, եկամտի այլ աղբյուրներ չունեն
5) Չաշխատող երիտասարդ ընտանիքները (այդ թվում՝ ամուսնալուծված, միայնակ մայրերի և ծնողազուրկ):

358. Աղքատությունը անմիջական ազդեցություն է ունեցել բնակչության ոչ միայն ավանդաբար կարիքավոր խմբերի (ծերեր, հաշմանդամներ, երեխաներ), այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես բյուջետային հիմնարկներում (կրթության և մշակույթի ոլորտներում զբաղված) և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների վրա:

359. ՄԱԿ-ի կողմից 2001թ.-ին անցկացված համայնքային զարգացման կարիքների ուսումնասիրությունը փաստել է, որ ՀՀ բնակչության շուրջ 17.3%-ը պատկանում է որևէ սոցիալապես խոցելի խմբի: Ըստ որում, սոցիալապես խոցելի բնակչության շուրջ կեսը կենտրոնացած է Երևան քաղաքում (17%-ը) և երկու խոշոր՝ Գեղարքունիքի (16%-ը) և Լոռու (14%-ը) մարզերում:

Աղյուսակ 5. 16. Աղքատության ցուցանիշների դինամիկան %-ներով ըստ մարզերի և ք. Երևանի, 2004-2008թթ.

Մարզեր	2004թ.		2005թ.		2006թ.		2007թ.		2008թ.		2008թ./2004թ.	
	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ	Ծայրահեղ աղքատներ	Աղքատ
ք. Երևան	6.1	29.2	3.6	23.9	3.5	21.0	3.2	20.0	3.2	19.7	-47.6	-32.5
Արագածոտն	5.6	35.4	3.1	32.3	2.6	27.5	3.0	22.2	1.5	20.7	-72.8	-41.6
Արարատ	**6.4**	**32.7**	**7.4**	**30.9**	**5.5**	**27.0**	**3.5**	**25.5**	**2.8**	**24.9**	**-55.6**	**-23.9**
Արմավիր	6.6	36.0	3.8	31.6	3.4	30.8	3.8	30.7	2.6	26.7	-60.7	-25.8
Գեղարքունիք	4.5	41.9	2.9	36.8	2.6	29.8	2.5	29.6	1.2	24.8	-73.7	-40.8
Լոռի	4.5	31.3	5.8	28.8	5.5	27.0	3.6	26.8	4.1	25.1	-8.2	-19.7
Կոտայք	9.2	39.3	8.7	34.5	8.1	32.0	6.1	30.0	3.2	29.5	-65.3	-24.8
Շիրակ	10.4	48.8	4.3	42.5	3.7	37.3	6.0	32.1	6.0	30.6	-41.9	-37.3
Սյունիք	5.9	36.5	2.3	28.9	2.1	25.3	3.7	24.0	1.7	19.6	-71.6	-46.4
Վայոց Ձոր	4.1	28.9	1.8	19.2	1.3	11.4	2.3	13.7	1.1	16.6	-74.1	-42.6
Տավուշ	3.3	30.5	3.8	25.8	3.3	23.5	3.3	21.6	2.6	19.8	-21.5	-35.0
Ընդամենը՝	**6.4**	**34.6**	**4.6**	**29.8**	**4.1**	**26.5**	**3.8**	**25.0**	**3.1**	**23.5**	**-51.2**	**-32.1**

ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը - 2009» 2009թ., էջ 35

360. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) տնային տնտեսությունների կենսամակարդակի իրականացված հետազոտությունների արդյունքների համաձայն աղքատության ցուցանիշներով Արարատի մարզը միջին աղքատության շրջանում է (աղյուսակ 5.17.)։ Ուսումնասիրության տվյալների վերլուծությամբ փաստվում է, որ աղքատ բնակչության թիվը՝ 24.9 բարձր է հանրապետական միջինից՝ 23.5։ Արարատի մարզում աղքատության խորությունը՝ 3.6 զիջում է միայն Լոռու՝ 4.6, Կոտայքի՝ 4.5 և Շիրակի՝ 4.2 մարզերին, իսկ հանրապետական միջինը՝ 3.1 է։ Նույնպիսի համեմատության դեպքում կարելի է արձանագրել, որ աղքատության սրությունը Արարատի մարզում 0.9 է, որը գերազանցում է հանրապետական միջինը՝ 0.8 և զիջում է միայն Շիրակի՝ 1.1 և Կոտայքի՝ 1.1 մարզերին։

Աղյուսակ 5. 17. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևան, 2008թ.

Մարզեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ-ների մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ	Աղքատութ յան խորու-թյուն	Աղքատու-թյան սրացում
ք. Երևան	3.2	19.7	28.4	33.9	2.6	0.7
Արագածոտն	1.5	20.7	3.6	4.1	1.5	0.3
Արարատ	**2.8**	**24.9**	**8.6**	**8.2**	**3.6**	**0.9**
Արմավիր	2.6	26.7	9.7	8.6	3.2	0.8
Գեղարքունիք	1.2	24.8	7.2	6.8	1.4	0.2
Լոռի	4.1	25.1	10.1	9.5	4.6	1.4
Կոտայք	3.2	29.5	12.3	9.7	4.5	1.1
Շիրակ	6.0	30.6	11.7	9.0	4.2	1.1
Սյունիք	1.7	19.6	3.6	4.4	1.8	0.4
Վայոց Ձոր	1.1	16.6	1.4	1.9	2.0	0.5
Տավուշ	2.6	19.8	3.4	4.1	1.9	0.4
Ընդամենը՝	**3.1**	**23.5**	**100**	**100**	**3.1**	**0.8**

ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը - 2009» 2009թ., էջ 35

361. ԿԶԾ-ի համաձայն առաջիկա տարիներին կշարունակվեն սոցիալական ապահովության բնագավառի հետագա կատարելագործման և դրամական փոխատվությունների բարձրացման միջոցառումները:

362. Այս առումով Արարատի մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում են հետևյալ միջոցառումները.

1) հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,
2) ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տնային պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,
3) փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,
4) խնամատար ինստիտուտի կայացումը,
5) սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա ընտանեկան կենտրոնների հիմնում (որոնք կզբաղվեն կյանքի դժվարին պայմաններում հայտնված անապահով, բազմազավակ, միայնակ մոր կարգավիճակով ընտանիքների, որբ և մուրացիկ երեխաների խնդիրներով, նաև ծնողական հմտությունների ուսուցմամբ),
6) գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց առնվազն ժամանակավոր զբաղվածության ապահովումը՝ վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի ընդլայնումը,
7) սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

363. Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, որի համար հարկավոր են՝

1) ***Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում,*** որի համար նախատեսվում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ:

2) ***Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստումներ.*** Ծրագրերի իրականացման արդյունավետության հիմնական գործոն է կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը: Կարևորվում է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամվողների վերապատրաստումը հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

3) ***սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա ընտանեկան կենտրոնների հիմնում (որոնք կզբաղվեն կյանքի դժվարին պայմաններում հայտնված անապահով, բազմազավակ, միայնակ մոր կարգավիճակով ընտանիքների, որբ և մուրացիկ երեխաների խնդիրներով, նաև ծնողական հմտությունների ուսուցմամբ):*** Սա ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական (սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացում) աջակցության ցուցաբերում:

4) ***Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների նյութատեխնիկական պայմանների բարելավում և արդիականացում.*** ՄԾՏՄ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բարելավել նաև այդ կենտրոնների նյութատեխնիկական բազան:

5) ***Սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավումը.*** Այստեղ կարևորվում են՝ ՀԿ-ների, ՏԻՄ-երի և ՄԾՏՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը, ինչպես նաև պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը, սոցիալապես խոցելի բնակչության տվյալների շտեմարանի ստեղծումը:

364. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները ներկայացված է գծապատկերում.



365. Համաձայն ԿԶԾ-ի սոցիալական պաշտպանությունը, ըստ միջազգայնորեն ընդունված սահմանման, պետական և ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է տնային տնտեսությունների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը: Ըստ մեթոդաբանության դասակարգվում են հետնյալ սոցիալական ռիսկի խմբերը.

1) ***վատառողջություն*** (ընդգրկում է ժամանակավոր անաշխատունակության / հիվանդության հետ կապված դրամական օժանդակությունը՝ բացի հաշմանդամությունից),

2) ***հաշմանդամություն*** (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված հաշմանդամների՝ տնտեսական և սոցիալական կյանքում ներգրավվելու դժվարությունների հաղթահարման հետ),

3) ***ծերություն*** (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված ծերության հետ),

4) ***վերապրում /հարազատին կորցրածներ*** (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված ընտանիքի անդամի մահվան հետ),

5) ***ընտանիք /երեխաներ*** (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական, առողջապահական օժանդակությունը՝ կապված հղիության, ծննդաբերության, որդեգրման, երեխաներին մեծացնելու և ընտանիքների ու երեխաների սոցիալական օժանդակության և պաշտպանության հետ),

6) ***գործազրկություն*** (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված գործազրկության հետ),

7) ***բնակարանային ապահովություն*** (ընդգրկում է պետական հոգածության տարբեր մեխանիզմներ՝ ուղղված տնային տնտեսությունների կամ անհատների կողմից բնակարանային խնդիրների լուծման օժանդակությանը),

8) ***սոցիալական մեկուսացվածության այլ տեսակներ*** (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված սոցիալական մեկուսացվածության վերը չնշված դեպքերի ու տեսակների հետ՝ «Կայուն զարգացման ծրագիր», Ե., 2008թ., էջ 213):

366. Հիշյալ բոլոր խմբերի համար սոցիալական ապահովության պետական համակարգի գործառույթները հստակորեն սահմանված են: Այսպես՝

1) ***Պետական սոցիալական աջակցության ծրագրերը,*** ներառյալ՝ ընտանեկան նպաստները, երեխայի ծնվելու հետ կապված միանվագ նպաստները և դրամական օգնությունները, երեխային խնամելու նպաստները, ինչպես նաև այլ դրամական և ոչ դրամական սոցիալական ծառայությունները:

2) ***Սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար,*** մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնման ծրագրեր՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի տվյալներից, հաշմանդամների, վետերանների և երեխաների տնային պայմաններում և համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրեր:

3) ***Պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր,*** որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստներից:

4) ***Զբաղվածության ծրագրեր՝*** ներառյալ գործազրկության նպաստները, գործազուրկների վերապատրաստման, ինչպես նաև վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերը:

5) ***Բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ:***

367. Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ:

368. Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստումը մասնավորապես կարևորում է սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տան պայմաններում խնամք կազմակերպելու համար խնամողների վերապատրաստումը:

369. Մարզի ՄԾՏՄ-ների աշխատանքների բարելավմանն են միտված՝

1) ՄԾՏՄ-ների նյութատեխնիկական պայմանների բարելավումը.

2) սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը, որտեղ կարևորվում է՝ ՄԾՏՄ-ների, ՏԻՄ-երի և ՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդրումը,

3) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը.

4) մասնագետ կադրերի վերապատրաստումը,

5) կամավորների շարժման (կենտրոնի) զարգացումը:

370. **Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն.** Հանրապետությունում շուկայական տնտեսավարման նոր հարաբերությունները հանգեցրին բնակչության գերակշիռ մասի կենսամակարդակի կտրուկ անկմանը: ՀՀ կառավարությունը այս բնագավառը դիտեց առաջնային և ձեռնամուխ եղավ դրա առողջացման գործընթացին: Օգնության բաշխման «Փարոս» համակարգում ներառվեց բնակչության գրեթե 95 տոկոսը (ընտանիքների վերաբերյալ կամավոր և փոխադարձ վստահության տեղեկատվության հավաքման ճանապարհով), որը նկատելիորեն նվազեց 1999թ. (ընտանեկան նպաստի ներդրում՝ ֆինանսական աջակցության միջոցով) և հետագա տարիներին, երբ գործի դրվեցին աղքատությունը գնահատող տարբեր չափորոշիչներ: Բնակչության մի ստվար մասն էլ ներգրավվեց վարձատրվող հասարակական աշխատանքներում «Սնունդ՝ աշխատանքի դիմաց» և «Նպաստ՝ աշխատանքի դիմաց» (հետագայում՝ վարձատրվող հասարակական աշխատանքներ) ծրագրերում: Ապա 2003թ. ամփոփվեց սահմանված աշխատավարձերի, կենսաթոշակների, նպաստների և կրթաթոշակների միջև համամասնությունների ձևավորման, ընտանիքի տնտեսական, սոցիալական պաշտպանության կազմակերպմանն ուղղված աշխատանքների նախնական փուլը և 2004թ.-ից ըստ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» աշխատանքները ընթացան առավել նպատակաուղղված: Մասնավորապես արդյունավետ և ֆինանսավորման տեսանկյունից առավել հուսալի միասնական համակարգ ձևավորվեց սոցիալական ապահովագրության համակարգի պետականորեն կարգավորման, կենսաթոշակային, գործազրկության, արտադրությունում աշխատանքային խեղման, մասնագիտական հիվանդության, ժամանակավոր անաշխատունակության դեպքերի, ինչպես նաև պարտադիր բժշկական ապահովագրություն համատեքստում: ՀՀ կառավարությունը իր 2004-2008թթ. գործունեությունը մեծապես նպատակաուղղեց սոցիալական բնագավառի օրենսդրական բարեփոխումներին: Այդ աշխատանքներին մեծապես նպաստեց սոցիալական ապահովության քարտերի կիրառման գործընթացը: 2008թ.-ից ՀՀ կառավարությունը «Կայուն զարգացման ծրագրում» համալիր վերլուծության արդյունքում փաստեց, որ պետությունը նպատակադրում է ավելացնել բնագավառին ուղղվող պետական ծախսերը:

371. Սոցիալական մոնիտորինգի համակարգի ներդրումով, ընտանեկան նպաստի համակարգի հասցեականության մեծացմամբ և նպաստի միջին չափի բարձրացմամբ,

մանկատան շրջանավարտներին ցուցաբերվող պետական աջակցության ծրագրերով, ընտանիքին ուղղված և երեխաների իրավունքների պաշտպանության միջոցառումներով, ինչպես նաև կենսաթոշակների աստիճանական բարձրացումով առավել նպատակային և կայուն հեռանկար կարող է ապահովվել սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառի բարեփոխման համար:

372. Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն ոլորտի հիմնական նպատակն է նպաստել հանրապետության բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով:

373. Սոցիալական աջակցության ծրագրերը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպաստներն են, և ՀՀ մարզերում իրականացվում են «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով այդ ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված են և ներկայումս երկրում իրականացվում են հետևյալ նպաստների նշանակման և վճարման աշխատանքները.

1) ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության,

2) մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ,

3) երեխայի ծննդյան միանվագ նպաստ,

4) զոհված՝ ՀՀ ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքի նպաստ:

374.Որպես աղքատության հաղթահարման կարևորագույն գործիք առանձնահատուկ դեր և նշանակություն ունի ՀՀ կառավարության կողմից սահմանված ընտանեկան նպաստը: Գրեթե պահպանելով նպաստառու ընտանիքների թվաքանակը վերջին հինգ տարիների ընթացքում ընտանեկան նպաստի չափը աստիճանաբար ավելացվել է:

375. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառի հիմնական գերակայություններն են՝

1) բնակչության աշխատանքի իրավունքի պաշտպանությունը,
2) բնակչության զբաղվածության ապահովվածությունը,
3) պետական կենսաթոշակային ապահովությունը,
4) սոցիալական աջակցության տրամադրումը,
5) ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությունը,
6) հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանությունը:

376. Այս առումով կարևորվում են հետևյալ միջոցառումները.

1) բնագավառի օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովումը,
2) սոցիալական ապահովության քարտերի համակարգի արդյունավետ կիրառումը

3) սոցիալական մոնիտորինգի համակարգի ներդրումը

4) ընտանեկան նպաստի համակարգի հասցեականության մեծացումը և նպաստի միջին չափի բարձրացումը,

5) մանկատան շրջանավարտներին ցուցաբերվող պետական աջակցությունը

6) ընտանիքին և երեխաների իրավունքների պաշտպանության ուղղված միջոցառումները

7) կենսաթոշակների աստիճանական բարձրացումը, առավել նպատակային և կայուն հեռանկար կարող է ապահովվել սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության բնագավառի բարեփոխման համար:

377. Տարաբնույթ է բնագավառի գործունեությունը, որում կենտրոնացվածը թերևս պետության կողմից երաշխավորված ընտանեկան նպաստն է:

378. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են ցուցանիշներ ու չափորոշիչներ, որոնց կշիռը որոշվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ամենամյա հետազոտությունների տվյալների հիման վրա: Յուրաքանչյուր տարի այդ հետազոտությունների արդյունքների օգտագործմամբ ամբողջ հանրապետության համար վերանայվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը, ինչպես նաև սահմանվում են նպաստի բազային չափը, երեխաների համար տրվող հավելման և միանվագ դրամական օգնության չափերը:

379. Համալիր վերլուծություն կատարելու համար նպատակահարմար է Արարատի մարզի տվյալները վերլուծել ՀՀ-ի մյուս մարզերի հետ մեկ ամբողջությունում (5.18. աղյուսակում): Եթե համադրենք տվյալները, ապա 2005թ.-ի համեմատությամբ 2009թ. նպաստառուների թիվը կրճատվել է գրեթե 11 տոկոսով:

Աղյուսակ 5. 18. Նպաստառու ընտանիքների քանակը (2005-2009թթ.)

Մարզեր	*Նպաստառու ընտանիքների քանակը*				
	2005թ.	*2006թ.*	*2007թ.*	*2008թ.*	*2009թ.*
ք.Երևան	25340	25122	23829	22802	19358
Արագածոտն	5619	5991	5911	5798	4939
Արարատ	**7244**	**7690**	**7876**	**8293**	**7712**
Արմավիր	5412	5664	5574	5738	5316
Գեղարքունիք	11721	12834	12983	13307	12732
Լոռի	22652	23312	21929	20744	18704
Կոտայք	8583	9232	9161	9577	8944
Շիրակ	25263	25067	23005	20942	18108
Սյունիք	5669	5673	5324	5038	4257
Վայոց Ձոր	2466	2557	2509	2581	2138
Տավուշ	6977	7050	6588	6339	5284
Ընդամենը` ՀՀ	**126945**	**130190**	**124689**	**121160**	**107493**

380. Թե ինչպիսի ազդեցություն կարող է թողնել ընտանեկան նպաստը աղքատության մակարդակի վրա ներկայացված է աղյուսակ 5.19-ում՝

Աղյուսակ 5. 19. Ընտանեկան նպաստի ներգործությունն աղքատության մակարդակի վրա ըստ մարզերի %-ներով), 2008թ.

Մարզեր	*Հետտրանսֆերտային մակարդակ (վճարվել են կենսաթոշակները և սոցիալական աջակցությունը)*		*Նախքան ընտանեկան նպաստի (ԸՆ) վճարումը (նախա-ԸՆ, հետկենսաթոշակային և այլ սոց. աջակցություն)*		*Ընտանեկան նպաստի չվճարման ազդեցությունը (անգամ)*	
	Ծայրահեղ աղքատու-թյան մակարդակ	*Աղքատության մակարդակ*	*Ծայրահեղ աղքատու-թյան մակարդակ*	*Աղքատու-թյան մակարդակ*	*Ծայրահեղ աղքատու-թյան մակարդակ*	*Աղքատու-թյան մակարդակ*
ք.Երևան	3.2	19.7	4.7	20.7	31.9	4.8
Արագածոտն	1.5	20.7	3.3	22.0	54.5	5.9
Արարատ	**2.8**	**24.9**	**8.0**	**26.7**	**65.0**	**6.7**
Արմավիր	2.6	26.7	6.6	27.5	60.6	2.9
Գեղարքունիք	1.2	24.8	5.8	32.0	79.3	22.5
Լոռի	4.1	25.1	11.9	30.6	65.5	18.0
Կոտայք	3.2	29.5	8.1	33.1	60.5	10.9
Շիրակ	6.0	30.6	13.8	38.5	56.5	20.5
Սյունիք	1.7	19.6	3.2	19.7	46.9	0.5
Վայոց Ձոր	1.1	16.6	3.8	19.7	71.1	15.7
Տավուշ	2.6	19.8	5.8	21.9	55.2	9.6
Ընդամենը՝ ՀՀ	**3.1**	**23.5**	**7.0**	**26.3**	**55.7**	**10.6**

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը - 2009», 2009թ., էջ 139

381. Արարատի մարզում նախքան ընտանեկան նպաստի վճարումը առկա է 8.0 % ծայրահեղ աղքատության և 26.7%՝ աղքատության մակարդակ: Առաջին ցուցանիշով Արարատի մարզը երրորդն է Հայաստանում, իսկ երկրորդով՝ քիչ է տարբերվում հանրապետական միջինից: Աղքատության ցուցանիշները կտրուկ իջնում են հետտրանսֆերտային մակարդակում, այսինքն ընտանեկան նպաստը անմիջական ազդեցություն են թողնում աղքատության մակարդակի վրա:

382. 2009թ. ընթացքում մարզում ընտանեկան նպաստի համակարգում յուրաքանչյուր ամիս ընդգրկվել են միջին հաշվով 7864 նպաստառու ընտանիքներ և միջին հաշվով 1190 հրատապ օգնություն ստացող ընտանիքներ:

Աղյուսակ 5. 20. Արարատի մարզում ՄՕՏՄ-ների կողմից վճարված գումարները (ներառյալ՝ պետական նպաստները և միանվագ դրամական օգնությունները)՝ ըստ տարածաշրջանների (2006-2009թթ.) (հազար դրամ)

	Արարատի Մարզ	Արարատ	%-ը (ընդհ. գումարից	Արտաշատ	%-ը (ընդհ.	Մասիս	%-ը (ընդհ.	Վեդի	%-ը (ընդհ.

					գումարից		գումարից		գումարից
2006 թ	1625421.5	116101.5	7.1	521570.0	32.1	500625.5	30.8	487124.5	30.0
2007 թ	1830543.5	127588.0	7.0	571729.5	31.2	587633.0	32.1	543593.0	29.7
2008 թ	2214460.0	138671.0	6.3	691348.5	31.2	715466.5	32.3	668974.0	30.2
2009 թ	2205867.0	136371.0	6.2	690563.0	31.3	712314.0	32.3	666619.0	30.2

383. 2006-2009թթ. վերլուծությամբ փաստվում է, որ աստիճանական և կայուն նվազում է արձանագրվել Արարատում և Արտաշատում, իսկ աստիճանական աճ՝ Վեդիում և Մասիսում: Բնակչության համամասնությամբ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվածների հարաբերակցությունը մեծ է Արտաշատի և Արարատի և նվազ՝ Մասիսի և Վեդու տարածաշրջանում: Ասվածը առավել ցայտուն հիմնավորելու համար ստորև ներկայացվում է բնակչության թիվը՝ ըստ տարածաշրջանների: Բնակչության թվաքանակի վերլուծությամբ փաստվում է, որ 100 բնակչից 7-ը Արարատի տարածաշրջանի բնակիչ է, 37-ը՝ Արտաշատի, 29-ը՝ Մասիսի, 27-ը՝ Վեդի քաղաքի տարածաշրջաններից են:

Աղյուսակ 5.21. Արարատի մարզում բնակչության բաշխվածությունը՝ ըստ տարածաշրջանների 2009թ. դրությամբ

	Արարատի մարզ	Արարատ	Արտաշատ	Մասիս	Վեդի
Բնակչության թիվը	277.7	20.8	103.4	79.5	74.0
Տոկոսային ցուցանիշը (ընդհանուր թվից)	100	7.5	37.2	28.6	26.7

384. 2004թ. ՀՀ պետական բյուջեում ընտանեկան նպաստների համար նախատեսված միջոցներին զուգահեռ, տարբերակվեց նաև ընտանեկան նպաստի չափը՝ այն պայմանավորելով ընտանիքի անապահովության միավորով: ՀՀ ԱՎԾ-ի իրականացրած տնային տնտեսությունների բյուջեների հետազոտության տվյալներով այս միջոցառումների արդյունքում բարձրացել է ծրագրի հասցեականությունը: Միաժամանակ այդ հետազոտության արդյունքներով երեխաները մնում են աղքատության տեսակետից ամենախոցելի խումբը և որպես առավել խոցելի խումբ առանձնանում են բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում ապրող, նաև բազմազավակ (չորս և ավելի մինչև 18 տարին չլրացած անդամ ունեցող) ընտանիքները: «Պետական նպաստների մասին» և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով կանոնակարգվող ընտանեկան նպաստի համակարգը շրջադարձային ուղղություն վերցրեց դեպի երեխաները:

385. Վերջին տարիներին ուշադրության կենտրոնում են հայտնվել երեխաները՝ որոնցից շատերի ընտանիքները չեն ընդգրկված ընտանեկան նպաստի համակարգում և փաստորեն, դեռևս լիարժեք չի ապահովվում հատկապես դեռահասների սոցիալական պաշտպանվածությունը: Տարեցտարի ավելացվեցին ընտանեկան նպաստների չափերը

և ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումները: Երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող 35.000 դրամ նպաստը և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի 3.000 դրամ նպաստը 2009թ. դարձան համապատասխանաբար՝ 50.000 դրամ և 18.000 դրամ: Իսկ 2005թ.-ից սահմանվեցին նպաստի իրավունք ունեցող ընտանիքում միանվագ դրամական օգնություններ՝ երեխայի ծննդյան կապակցությամբ (2009թ.՝ ծննդյան նպաստի նույն չափով՝ 50.000 դրամ) և ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում (2009թ.՝ 25.000 դրամ) տրվող միանվագ դրամական օգնություն, իսկ 2006թ.-ից՝ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50.000 հազար դրամ (եթե այդ անդամը կենսաթոշակառու, աշխատող կամ գործազուրկ չէ):

386. Վերջին տարիներին պետական աջակցություն են ստանում նաև ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար, որը տարեցտարի ավելանում է՝ 2007թ. 200 000 դրամ, 2008թ.՝ 300 000 դրամ, 2009թ.՝ 430 000 դրամ: Ստորև ներկայացվում է ամփոփ տեղեկատվություն Արարատի մարզի 2009թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական նպաստների և ավանդի փոխհատուցման վերաբերյալ ըստ գործակալությունների:

Աղյուսակ 5.22. 2009 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգով տրվող օգնությունների վերաբերյալ

Արարատի մարզի ՄՏՏՄ-ներ	Նպաստառու ընտանիքների թիվը	Հրատապ դրամական օգնություն ստացող ընտանիքների թիվը	Ընտանիքում Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ դրամական օգնություն ստացածների թիվը	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացածների թիվը	Ավանդների փոխհատուցում ստացած ընտանիքների թիվը
Արարատ	530	53	28	43	30
Արտաշատ	2460	219	83	187	117
Մասիս	2155	272	90	160	96
Վեդի	2454	259	74	146	90
Ընդամենը	7600	803	275	535	333

387. Բնագավառը պարբերաբար պետք է գտնվի մոնիտորինգի և գնահատման փուլերում, որպեսզի կատարված աշխատանքները նկատելի և ազդեցիկ լինեն:

388. «Կայուն զարգացման ծրագրի» համաձայն ընտանեկան նպաստի համակարգում աճ է նախատեսված: Ստորև բերվում է 2009-2015թթ. ընտանեկան նպաստների համեմատական պատկերը նվազագույն և միջին աշխատավարձերի նկատմամբ՝

Աղյուսակ 5. 23. Ընտանեկան նպաստների հարաբերակցությունը նվազագույն և միջին աշխատավարձերի նկատմամբ 2009-2015թթ.

Ցուցանիշներ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2015թ.
Նպաստի միջին ամսական մեծությունը մեկ շնչի հաշվով, դրամ	5914	5914	7390	8480	11321
Նվազագույն ամսական աշխատավարձ, դրամ	30000	30000	41560	45400	57300
Միջին ամսական աշխատավարձ, դրամ	103313	103313	128692	139792	176338
Մեկ շնչի հաշվով նպաստ /նվազագույն աշխատավարձ հարաբերակցություն, %	19.7	19.7	17.8	18.7	19.8
Մեկ շնչի հաշվով նպաստ /միջին աշխատավարձ հարաբերակցություն, %	5.7	5.7	5.7	6.1	6.4

389. «Կայուն զարգացման ծրագրով» ընտանեկան նպաստի համակարգում աճ է նախատեսված: Հիմք ընդունելով 2008թ տվյալները 2009-2015թթ. համար կատարվել են կանխատեսումներ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի չափի վերաբերյալ:

Աղյուսակ 5. 24. Կանխատեսումներ 2009-2015թթ. երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի չափի վերաբերյալ (2008թ. տվյալների հիման վրա)

Ցուցանիշներ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2015թ.
Առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեծությունը, դրամ	50.000	50.000	58.000	64.000	81.000
Նվազագույն սպառողական զամբյուղ, ամսական, դրամ	38.500	38.500	41.325	42.566	46.509
Նպաստի չափ/նվազագույն սպառողական զամբյուղի հարաբերակ-ցություն, %	129.9	129.9	140.4	150.4	174.2
Երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի մեծությունը, դրամ	430.000	430.000	496.000	1.000.000	1.000.000
Երեխայի ծննդյան միանվագ նպաստի գծով պետական ծախսեր, մլրդ դրամ	4.1	4.3	5.1	8.2	9.1

390. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանել է, որ սոցիալական աշխատանքը դա մարդու անհատական սոցիալական խնդիրների լուծմանը նպատակաուղղված հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման համալիր մասնագիտական գործունեություն է: Սոցիալական աշխատանքի մասնագետների կրթական ուղղությամբ առաջիկայում կտարվի ուղղորդված քաղաքականություն: 2008-2009թթ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվեց սոցիալական աշխատանք իրականացնող անձանց վերապատրաստումը (երկու փուլով): Վերապատրաստման դասընթացներում

ընդգրկվեցին նաև համայնքային աշխատողներ (քաղաքապետարանների մասնագետներ): ՀՀ կառավարությունը բնագավառը դիտեց առաջնային և նկատելի աշխատանքներ իրականացվեց այն բարելավելու ուղղությամբ: Բնակչության մի մասն ներգրավվեց վարձատրվող հասարակական աշխատանքներում:

391. Համաձայն ՀՀ կառավարության 16.03.2006թ. «Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» N352-Ն որոշման 2006 թվականի ապրիլի 12-ից մինչև մայիսի 12-ը ընկած ժամանակահատվածում ընդունվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել 6274 դիմում 3846 քաղաքացիներից: Ավանդների դիմաց փոխհատուցման վճարման աշխատանքները ընթացքի մեջ են:

392*. **Կենսաթոշակային ապահովություն.*** Կենտրոնացված պլանային համակարգից շուկայական հարաբերություններին անցման հետևանք են արտադրական ծավալների անկումը և ցածր տեմպերով դրանց վերականգնումը, զբաղվածության մակարդակի կրճատումը, ստվերային տնտեսության առկայությունը ուղղակիորեն են նպաստում համակարգի վիճակի վատացմանը:

393.ՀՀ-ում կենսաթոշակային օրենսդրության միասնական քաղաքականության վերջնական նպատակներն են.

1) կատարած ներդրումներին համապատասխան կենսաթոշակի նշանակումը,

2) սոցիալական ապահովության ոլորտում լարվածության մեղմացումը:

394. Ներկայումս ընթացող աշխատանքները երկու ուղղություն են նախանշել՝ սերունդների համերաշխության սկզբունքով գործող կենսաթոշակային համակարգի շարունակական կատարելագործում և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում՝ կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի ներդրում:

395. Ելնելով ՀՀ կառավարության «Կայուն զարգացման ծրագրի» պահանջներից հատկապես կարևորվում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման բազան մեծացնելուն ուղղված ներկայիս գործընթացը: Այս համակարգը հնարավորություն է տալիս իրականացնել ապահովագրվածների իրավունքների հստակ հաշվառում (յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի չափը, գործատուի և վարձու աշխատողի կողմից կատարված սոցիալական վճարների չափը, ապահովագրական ստաժի տևողությունը և այլն) և կենսաթոշակ նշանակել՝ անհատական հաշվում պահպանվող անհատական հաշվառման տվյալների հիման վրա, ելնելով կենսաթոշակային օրենսդրությունից: Քաղաքացիների անձնական ապահովագրական հաշիվների ներդրման միջոցով ապահովում է կենսաթոշակների նշանակման ապահովագրական սկզբունքների իրականացումը, ապահովագրական բյուջեի հաշվեկշռվածությունը, կարգավորվում է ապահովագրական վճարների հավաքագրման բազայի ընդլայնման հիմնահարցերը, կատարելագործվել է կենսաթոշակների նշանակման գործընթացը, միաժամանակ բացառելով ապահովագրողի և ապահովագրվածի միջամտությունը կենսաթոշակի չափի հաշվարկմանը:

396. Աստիճանաբար որպես կենսաթոշակների հաշվարկման սկզբունք ամրագրվում է աշխատանքային տարիքից կախված տարիքային կենսաթոշակների տարբերակումը, որը «Կայուն զարգացման ծրագրով» նախատեսված պահանջներից է՝ որքան շատ աշխատանքային ստաժ, այնքան ավելի բարձր կենսաթոշակ: Ծրագրի վերլուծականը փաստում է, որ 2002-2006թթ. տնտեսական աճի արդյունքներից թերևս ամենաքիչը օգտվել են կենսաթոշակառուները: Կենսաթոշակների բացարձակ ավելացումները, որոնք հիմնականում համընկել են ՀՀ կառավարության ռազմավարությանը, զգալիորեն հետ են մնացել հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպերից, որոնք իրենց հերթին զգալիորեն գերազանցել են կանխատեսումները:

397. 2005թ. ապրիլին կենսաթոշակի չափը (համեմատությունը կատարվում է 20 տարվա ապահովագրական ստաժի դեպքում) կազմեց 6.560 դրամ, 2006թ. հունվարին՝ 7.130 դրամ, 2007թ. հունվարին՝ 7.930 դրամ, 2008թ. հունվարին՝ 13.120 դրամ, 2009թ. հունվարին՝ 15.200 դրամ: Փաստում ենք, որ նշված տարիներին աստիճանաբար աճել է կենսաթոշակի հիմնական չափը՝ կրկնապատկվելով 4000 դրամից դառնալով 8000 դրամ, իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը գրեթե եռապատկվելով 160 դրամից՝ 450 դրամ:

398. Փաստելով նույնատիպ տեղեկատվությունը վիճակագրական տվյալներով կունենանք հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 5. 25. Կենսաթոշակառուների թվաքանակը և միջին կենսաթոշակի չափն ըստ տարիների և կենսաթոշակի տեսակների

Կենսաթոշակի տեսակը	Կենսաթոշակառուների թիվը				Միջին կենսաթոշակի չափը, դրամ			
	01.01. 2007թ.	01.01. 2008թ.	01.01. 2009թ.	01.01. 2010թ	01.01. 2007թ.	01.01. 2008թ.	01.01. 2009թ.	01.01. 2010թ
Ապահովագրական	**473612**	**469107**	**469747**	**467555**	**11380**	**13380**	**21842**	**26056**
Սոցիալական	**46233**	**47140**	**48632**	**50470**	**5495**	**5455**	**8765**	**10066**
Զինծառայության հետ կապված	**13889**	**12009**	**10425**	**9176**	**10756**	**10675**	**10200**	**10200**
Ընդամենը՝ կենսաթոշակառուներ (ապահովագրական, սոցիալական, զին.)	**527496**	**528256**	**518379**	**522835**	**10912**	**12746**	**21370**	**24617**

Աղյուսակ 5. 26. Զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թվաքանակը և նրանց նշանակված կենսաթոշակի միջին չափը 2008թ.

Կենսաթոշակի տեսակը	Ընդամենը	Կենսաթոշակի միջին չափը, դրամ

Զինծառայության հետ կապված կենսաթոշակառուներ	**10425**	**17063**
այդ թվում՝ Հայրենական պատերազմի հաշմանդամներ և նրանց հավասարեցված անձինք	**4182**	**25600**
Զոհված զինծառայողի ընտանիք (կերակրողին կորցրած)	**4976**	**10009**

399. Համալիր վերլուծություն կատարելու համար նպատակահարմար է Արարատի մարզի տվյալները վերլուծել ՀՀ-ի մյուս մարզերի հետ մեկ ամբողջությունում: Արարատի մարզը Երևանից հետո կենսաթոշակառուների առումով երրորդ ցուցանիշ ունեցողն է և նման պատկերը փաստվել է վերջին չորս տարիների վերլուծության արդյունքում: Դիտելով կենսաթոշակառուների թիվը բնակչության ամբողջ թվաքանակի հետ համեմատության արդյունքում խոցելի բնակչության համատեքստում, ապա կարելի է փաստել, որ 1000 բնակչին ընկնող հաշվարկով Արարատի մարզի թիվը՝ 150.7 է:

Աղյուսակ 5.27. Կենսաթոշակառուների թվաքանակը՝ ըստ մարզերի (2006-2009թթ.)

Մարզերը	**2006թ.**		**2007թ.**		**2008թ**		**2009թ**
	Ընդամենը	1000 բնակչի հաշվով	Ընդամենը	1000 բնակչի հաշվով	Ընդամենը	1000 բնակչի հաշվով	Ընդամենը
ք.Երևան	178049	161.2	177274	160.2	179546	161.8	180777
Արագածոտն	22743	162.8	22544	160.8	22636	160.9	22174
Արարատ	**42005**	**152.9**	**41796**	**151.5**	**41769**	**150.7**	**41589**
Արմավիր	39698	141.9	39353	140.1	39216	139.0	38900
Գեղարքունիք	37701	157.4	37300	155.5	37281	155.1	37140
Լոռի	54258	191.7	53401	189.2	52998	188.0	52613
Կոտայք	39538	143.5	39041	140.9	38941	139.8	39036
Շիրակ	49977	177.6	49525	176.2	49514	176.2	49197
Սյունիք	26303	172.0	25916	169.6	25750	168.5	25610
Վայոց Ձոր	10665	191.1	10478	187.8	10433	187.0	10371
Տավուշ	26559	197.8	26034	194.0	25755	191.9	25428
Ընդամենը՝ ՀՀ	527496	163.8	522662	162.0	523839	162.0	522835

400. Համաձայն «Կայուն զարգացման ծրագրի» հիմնադրույթների ժողովրդագրական կանխատեսումները երկարաժամկետ հեռանկարում հետզհետե ավելի զգալի է դառնալու կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության առումով բնակչության անբարենպաստ կառուցվածքի՝ բնակչության «ծերացման» ազդեցությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային համակարգի պարամետրիկ բարեփոխումները և կուտակային համակարգի ներդրումը կարող են զգալիորեն մեղմել բնակչության ծերացման հետևանքով ուժգնացող ֆիսկալ ճնշումները:

401. Արարատի մարզում 01.01-2009թ. դրությամբ բնակվում են 41.589 կենսաթոշակառուներ, որոնցից` 12.199 հաշմանդամ են (2008թ),

402. Կենսաթոշակային ապահովության տարածաշրջանային կենտրոններից հավաքագրված տվյալների հիման վրա ստորև ներկայացվում է տեղեկատվություն 2006-2009թթ. կենսաթոշակ ստացողների վերաբերյալ` ըստ տարածաշրջանների:

Աղյուսակ 5. 28. Արարատի մարզի կենսաթոշակառուների, հաշմանդամների, մանկուց հաշմանդամների, զինհաշմանդամների, ՀՊՀ և նրանց հավասարեցված անձանց, զոհված զինծառայողի (կերակրողին կորցրածի) թվական տվյալները (2006-2009թթ.)

Ցուցանիշներ		Արարատ	Արտաշատ	Մասիս	Արարատի ՄԱՐԶ
Կենսաթոշակառուների թիվը	2006թ.	13760	16588	12024	42342
	2007թ.	13791	16209	12005	42005
	2008թ.	13829	15950	12017	41796
	2009թ.	13835	15645	12109	41589
Հաշմանդամների թիվը	2006թ.	3928	3830	2731	10489
	2007թ.	4304	4030	3010	11344
	2008թ.	4675	4235	3289	12199
Մինչև 18 տարեկան հաշմանդամների թիվը	2006թ.	345	307	202	854
	2007թ.	327	295	210	832
	2008թ.	327	304	210	841
	2009թ.	312	294	219	825
Զինհաշմանդամների թիվը	2006թ.	206	195	186	587
	2007թ.	193	186	170	549
	2008թ.	164	175	161	500
	2009թ.	131	140	127	398
Հայրենական պատերազմի հաշմանդամների և նրանց հավասարեցվածների թիվը	2006թ.	159	142	149	450
	2007թ.	147	132	135	414
	2008թ.	121	123	128	372
	2009թ.	95	92	98	285
Զոհված զինծառայողի ընտանիք (կերակրողին կորցրածի)	2006թ.	132	169	140	441
	2007թ.	121	153	124	398
	2008թ.	112	135	112	359
	2009թ.	91	106	89	286

404. Ոլորտի առաջիկա տարիների զարգացման միտումները պայմանավորված կլինեն նաև բարեփոխումների շարունակական իրականացման ապահովմամբ, մասնավորապես ապահովագրական կենսաթոշակների չափերը՝ համակարգին կատարված վճարումների չափերով պայմանավորելու և բոլոր կենսաթոշակների չափերի շարունակական բարձրացում ապահովելու ուղղությամբ:

405. ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու՝

1) նվազագույնի հասցնել, ապա՝ բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում,

2) շարունակաբար նվազեցնել աշխատող բնակչության և կենսաթոշակառուների (ներառյալ՝ հաշմանդամների) կենսամակարդակների միջև առկա մեծ տարբերությունը՝ թույլ չտալով վերջինիս հետագա խորացումը:

406.Համաձայն «Կայուն զարգացման ծրագրի» հիմնադրույթների փաստվում է, որ առաջնային նպատակներից է միջին ժամկետ հեռանկարում զգալիորեն նվազեցնել աղքատության ռիսկը կենսաթոշակառուների բոլոր խմբերի համար: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում են հետևյալ թիրախները. ա) ապահովագրական կենսաթոշակների ծրագրված միջին մակարդակը 2012 թվականից՝ հասցնել առնվազն սպառողական զամբյուղի 100 տոկոսին, իսկ 2018 թվականից սկսած՝ 150 տոկոսին:

407*. **Տարեցներ*** Համաձայն միջազգայնորեն ընդունված սահմանման սոցիալական պաշտպանության առարկա է ծերությունը, որը ընդգրկում է դրամական ու ոչ դրամական առողջապահական օժանդակությունը՝ կապված ծերության հետ: Տարեցների հիմնախնդիրը ևս դիտարկելով կենսաթոշակառուների թվակազմում կարելի է փաստել, որ առկա է ծերացման միտումը: Այս հանգամանքը նաև իր ազդեցությունը ունեցավ կենսաթոշակային տարիքի բարձրացմամբ, որոշ տեսակներով կենսաթոշակի անցման դժվարացմամբ, երիտասարդ ընտանիքների արտագաղթով, ծնելիության կտրուկ անկմամբ, որը և հանգեցրեց տարեց բնակչության չափաբաժնի ավելացմանը:

408.Պետական քաղաքականությամբ մեծ ուշադրություն է դարձված նաև տարեցներին:ՈՒշադրության կենտրոնում են կարիքավոր տարեց քաղաքացիները. ոչ մի դժվարություն չկա կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքից զուրկ տարեցներին տուն ինտերնատներում տեղավորվելու հարցում: Գործընթացն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցված:

409. Խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամների շուրջօրյա խնամքը և սոցիալական սպասարկումը իրականացվում է ստացիոնար և տնային պայմաններում: Հանրապետությունում ստացիոնար սպասարկում իրականացնում են համակարգի տարեցների տուն-ինտերնատները, որտեղ սպասարկվում են ավելի քան 1000 տարեցներ, որոնց խնամքը լրիվ իրականացվում է պետության կողմից: 2006-2008թթ. միջնաժամկետ ծրագրով մեծ ուշադրություն է դարձվել տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկմանը:

410. Հանրապետությունում տնային պայմաններում սպասարկվել են ավելի քան 1000 միայնակ ծեր և հաշմանդամ: Այս բնագավառում անհրաժեշտ է համարվել ընդլայնել տնային սոցիալական սպասարկման ձևը՝ 2010 թվականի պետական բյուջեով ծախսերը նախատեսվել են 1500 ծերերի համար, որն ավելի ընդունելի կլինի քաղաքացիների համար, քանի որ նրանք չեն կտրվի իրենց միջավայրից, միաժամանակ հենց տանը սպասարկելով ավելի քիչ պետական միջոցներ կպահանջվեն:Ներկայումս միայնակ ծեր հաշմանդամների տնային պայմաններում սպասարկումը իրականացվում է միայն Երևան քաղաքում:

411. Տնային պայմաններում մեկ միայնակ տարեցի սոցիալական սպասարկման միջին օրական ծախսը գրեթե 22 անգամ ավելի խնայողական է, քան տարեցների տուն-

ինտերնատներում շուրջօրյա խնամքի դեպքում: Տնային պայմաններում սպասարկվողները ստանում են նաև կենցաղային, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն, անհրաժեշտ բժշկական օգնություն և այլ ծառայություններ:

412. Ահա թե ինչպիսի տեսք ունի կենսաթոշակառուների քանակական տվյալները` ըստ տարիքային սանդղակի:

Աղյուսակ 5.29. Արարատի մարզի կենսաթոշակառուների թիվը՝ ըստ տարիքային խմբերի և ըստ տարածաշրջանների (2006-2008թթ.)

		Արարատ	Արտաշատ	Մասիս	Արարատի ՄԱՐԶ
Կենսաթոշակառուներ	2006թ	13760	16558	12024	42342
	2007թ	13791	16209	12005	42005
	2008թ	13829	15950	12017	41796
Կենսաթոշակառուներ մինչև 63 տարեկան	2006թ	4670	4576	3286	12532
	2007թ	4916	4680	3460	13056
	2008թ	5200	4850	3673	13723
Կենսաթոշակառուներ 63-70 տարեկան	2006թ	3838	4713	3579	12130
	2007թ	3343	4032	3126	10501
	2008թ	2882	3352	2693	8927
Կենսաթոշակառուներ 70-75 տարեկան	2006թ	2374	3207	2381	7962
	2007թ	2503	3190	2470	8163
	2008թ	2544	3162	2471	8177
Կենսաթոշակառուներ 75-80 տարեկան	2006թ	1931	2813	1847	6591
	2007թ	1930	2810	1843	6583
	2008թ	1946	2893	1930	6769
Կենսաթոշակառուներ 80 տարեկան և բարձր	2006թ	947	1249	931	3127
	2007թ	1099	1497	1106	3702
	2008թ	1257	1693	1250	4200

413. 2006-2008թթ. վերլուծությունը փաստում է, որ կենսաթոշակառուների թիվը նվազել է 546 մարդով, իսկ 1073 մարդով աճել է 80-ն անց կենսաթոշակառուների թիվը: Մինչև 63 տարեկան կենսաթոշակառուների թվի ավելացումը (1191 մարդ) կարելի է բացատրել նոր կենսաթոշակների նշանակումով: Վերոնշյալից կարող ենք հանգել հետևյալ եզրակացության, որ 80 անց կենսաթոշակառուների թիվն աճում է երկարակեցության պայմանավորվածությամբ, միաժամանակ հավաստելով հասարակության ծերացման փաստը:

414. Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում տարեցների լիարժեք սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

415. Քանի որ ծերությունը կյանքի յուրահատուկ կենսաբանական փուլերից է, ապա տարեցների խոցելիությունը օբյեկտիվ է: Նրանք համարվում են բժշկական և սոցիալական ծառայությունների ամենախոշոր սպառողները, սակայն կենսաթոշակների ցածր մակարդակի պատճառով տարեցներն այսօր բնակչության ամենաանպաշտպան խմբերից են:

416. Տարեցներն ավելի զգայուն են հասարակական փոփոխությունների նկատմամբ և դրա համար կրում են սոցիալական, քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական փոփոխությունների ամբողջ բեռը:

417. Քանի որ բնակչության կատեգորիան սոցիալականացվել է բոլորովին այլ միջավայրում, ապրելակերպի փոփոխությունները, սոցիալական և տնտեսական համակարգերի տրանսֆորմացիան նպաստել են տարեցների, հատկապես միայնակ ծերերի, հասարակությունից օտարմանը, մեկուսացմանը:

418. ***Հաշմանդամներ.*** Նախկինում բնակչության երկու տասնյակից ավելի սոցիալական առավել մեծ ռիսկի կատեգորիաների ընտանիքներ պետության կողմից ստանում էին պետական նպաստ կամ դրամական փոխհատուցում, որը, սակայն, ըստ էության չէր արտացոլում այդ ընտանիքների իրական կարիքավորությունը: Պետության կողմից սոցիալական աջակցության համար նախատեսված միջոցների բաշխումը նպատակային դարձնելու համար սոցիալական հավասարության սկզբունքից անցում կատարվեց սոցիալական արդարության սկզբունքին. 1999թ. ներդրվեց ընտանեկան նպաստի համակարգը՝ հիմքում ունենալով ընտանիքների անապահովության աստիճանը: Խնդրի լուծումը թեև որոշակիորեն բարելավվեց աղքատության ընտանեկան նպաստի համակարգի ներդրումով, սակայն այդ համակարգին անցնելով բնակչության մի մասը (հատկապես՝ հաշմանդամները՝ «Հաշմանդամների մասին» ՀՀ օրենքով) զրկվեցին իրենց ամրագրված արտոնություններից: Հաշմանդամների հիմնահարցերը մասամբ լուծվում են «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքին համապատասխան, հաշմանդամները օգտվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով անվճար ապահովման իրավունքից:

419. Ստորև ներկայացվում է Արարատի մարզի հաշմանդամների թվաքանակը՝ 2007-2009թթ. համար վիճակագրական վերլուծության համար՝ ըստ տարածաշրջանների և խմբերի: Վերլուծությամբ կարելի է փաստել, որ 2007թ. համեմատ 2008թ. աճել է հաշմանդամների թիվը՝ 12283-ից հասնելով 13484-ի:

Աղյուսակ 5.30. Արարատի մարզում հաշմանդամների թվաքանակը՝ ըստ խմբերի և ըստ տարածաշրջանների բաշխվածության (2007-2009թթ.)

Տարածաշրջանները	Ըստ տեսակների	2007թ.	2008թ.	01.07.2009թ. դրությամբ
Արարատ	1-ին խումբ	67	68	13
	2-րդ խումբ	681	684	187
	3-րդ խումբ	588	689	428
	հաշմ. երեխա	91	98	26
Արտաշատ	1-ին խումբ	232	248	68
	2-րդ խումբ	2167	2264	745
	3-րդ խումբ	1298	1512	995
	հաշմ. երեխա	310	311	110

Մասիս	1-ին խումբ	319	366	71
	2-րդ խումբ	1910	2155	824
	3-րդ խումբ	904	1183	783
	հաշմ. երեխա	267	299	118
Վեդի	1-ին խումբ	244	238	49
	2-րդ խումբ	1627	1617	588
	3-րդ խումբ	1329	1498	1039
	հաշմ. երեխա	248	254	94
Արարատի մարզ	**1-ին խումբ**	**862**	**1539**	**201**
	2-րդ խումբ	**6386**	**4335**	**2344**
	3-րդ խումբ	**4119**	**4003**	**3245**
	հաշմ. երեխա	**916**	**3607**	**348**
	Ընդամենը	**12283**	**13484**	**6138**

420. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում են հետևյալ ծրագրերը, որոնք նախատեսված են հանրապետության բոլոր մարզերում բնակվող հաշմանդամների համար, թեպետ, այդ ծառայությունները կենտրոնացված են Երևանում.

1) պրոթեզաօրթոպեդիկ օգնության, վերականգնողական պարագաների, սայլակների և լսողական սարքերի տրամադրում,

2) աչքի պրոթեզավորում,

3) ձայնաստեղծ սարքերի տրամադրում,

4) տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցանում և համակարգչային տեխնիկայով ապահովում,

5) մեծ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար ձայնագրության ծառայությունների ձեռքբերում,

6) հոգեկան առողջության վերականգնում «Սթրես» կենտրոնում,

7) բժշկասոցիալական վերականգնում և հիվանդանոցային բուժում «Արթմեդ» բժշկական կենտրոնում:

421. Վատ լսող երեխաների զարգացման ցերեկային կենտրոնը գտնվում է Երևանում և սպասարկում է ողջ հանրապետությանը: Ծրագրի իրականացնողը՝ «Հավատ» վատ լսող երեխաների մայրերի հասարակական կազմակերպություն է, ծրագրի իրականացմանն աջակցում է ԱՄՆ ՄԶԳ Հայաստան սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիրը:

422. Միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում խնամքի ծառայություններ են տրամադրվում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից:

423. Հաշմանդամների պրոթեզավորումը և վերականգնողական պարագաներով ապահովումը նպաստում է նրանց հասարակություն ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության ռազմավարության պահանջներից է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցված աշխատանք է իրականացվել մարզի հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով

(վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզի և օրթոպեդիկ կոշիկներ, հենակներ, արմնկահենակներ, ձեռնափայտեր, բուժական սեղմիրաններ և աղեկապեր, սուպինատորներ և այլն)։ Նման պարագաների կարիքավորների հերթագրումը կատարվում է մարզի ՄՇՏՄ-ների կողմից՝ մարզի բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովների (ԲՍՓՀ) կողմից լրացված վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա։ Նրանց միջոցով կազմակերպվում է նաև պետական բյուջեի միջոցներով գնված վերականգնողական պարագաների (սայլակներ, քայլակներ, լսողական սարքեր, աչքի և կրծքագեղձի պրոթեզներ։ Վերջին տարիներին Արարատի մարզում պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով բավարարվել են ավելի քան 200 մարդ, անվասայլակներ և լսողական սարքեր են ստացել 120-ից հաշմանդամներ։

424. «Պրոթեզաօրթոպեդիկ» ՓԲԸ-ի և «Ինտերօրթո» ՍՊԸ-ի կողմից վերականգնողական պարագաների բաշխման գործընթացն իրականացվում է Արարատի մարզի ԲՍՓՀ-ների և ՄՇՏՄ-ների կողմից։ Բացի այդ, նշված կազմակերպություններում իրականացվում է պրոթեզների վերանորոգումը։ Հաշմանդամների գրեթե 5 %-ը կարիք ունի տարբեր տիպի պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաների, որպիսիք են պրոթեզները (այդ թվում՝ վերանորոգումներ), օրթեզները (կորսետ, բանդաժ, ռեկլինատոր, տուտոր և այլն), օրթոպեդիկ կոշիկը, պրոթեզի կոշիկը, ձեռնափայտը, հենակը։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ շատ վերականգնողական պարագաների համար պիտանելիության ժամկետներ են սահմանված, ապա ակնհայտ է, որ մեր առջև խնդիր է դրված նաև դրանց վերանորոգման հարցը։

425. Նպատակահարմար է, որ հաշմանդամների գույքի վերանորոգման ծառայություն ստեղծվի նաև Արտաշատում։

426. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովին աջակից է նույնատիպ Արարատի մարզային հանձնաժողովը, որը բավականին կառուցողական գործառույթներ է մշակել։ Մասնավորապես, ներկայացվել է 2009թ. հաշմանդամների խնդիրների լուծմանն ուղղորդված ծրագրերի նախագծեր, որոնք պետք է իրականացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան վարչության հետ համատեղ։

427. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական ռազմավարական նպատակը նրանց առավելագույնս և համակողմանի ինտեգրումն է հասարակայնության լիարժեք կյանքին, նրանց մասնակցության ապահովումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներին։ Ի տարբերություն մայրաքաղաքում եղած հնարավորությունների, մարզերում դեռևս լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն կա։ Հիմնախնդիր է մնում այնպիսի տարրական հարցերի կարգավորումը, ինչպիսին շարժողական խնդիրներ ունեցող հաշմանդամների մուտքի մատչելիության ապահովումն է դեպի պետական ու տեղական ինքնակառավարման հիմնարկներ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն։

428. Համաձայն մարզի ՍԾՏՄ-ներից ստացված տեղեկատվությունների՝ 2009թ. ընթացքում Արարատի մարզում 180 հաշմանդամների տրվել է համապատասխան ուղեգրեր տարաբնույթ վերականգնողական պարագաներ ստանալու համար։

429. ***Աշխատանքի և զբաղվածության ոլորտ.*** Գործազրկությունը աղքատության ամենակարևոր պատճառներից է։ Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, երեք գործազուրկներից մոտավորապես երկուսը ենթակա են աղքատության ռիսկի։ Սակայն, նույնիսկ զարգացած երկրների համար միայն զբաղվածության ապահովումը դեռ բոլոր հիմնախնդիրների լուծումը չէ։ Զբաղվածության և աղքատության մակարդակների համեմատությունը վկայում է, որ աղքատությունը կարող է տարածված լինել նույնիսկ զբաղվածության բարձր մակարդակի դեպքում։ Այս առումով կարևորվում է նաև ակտիվ սոցիալական այն միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են աշխատուժի վերարտադրմանը, նրա որակավորման բարձրացմանը և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխանող պայմանների ստեղծմանը։

430. Վերջին տարիներին շարունակվել են «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված զբաղվածության ոլորտի ակտիվ քաղաքականության իրականացումը զբաղվածության կարգավորման պետական ծրագրին համապատասխան՝ հիմքում ունենալով տարբեր նպատակային հետազոտությունների արդյունքները։ Օրենսդրական փոփոխությունների հետևանքով շարունակվեցին աշխատաշուկայի կառուցվածքի որակական և քանակական փոփոխությունները, գործազրկության կառուցվածքը, հաշվառման մեջ մնացին հիմնականում ակտիվ աշխատանք փնտրողները, շարունակվեց ավելանալ գործազուրկ երիտասարդների թվաքանակը։

431. Զբաղվածության ոլորտի գերակայություններ են.

1) աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացում,
2) աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների մեղմում,
3) երիտասարդների (այդ թվում՝ գյուղական երիտասարդության) զբաղվածության ապահովման աջակցություն,
4) աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի ծավալների մեծացում,
5) սոցիալական գործընկերության ամրապնդում և զարգացում։

432. Զբաղվածության մարզային կենտրոնի հիմնական խնդիրը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացումն է, որոնք ուղղված են բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը։

433. Հանրապետության բոլոր մարզերում (այդ թվում՝ Արարատի մարզում) զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով իրականացվում են հետևյալ ծրագրերը.

1) «Մասնագիտական ուսուցման կազմակերպում»,

2) «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին»,

3) «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում»,

4) «Ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին պետական աջակցություն»,

5) «Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկի նյութական ծախսերի հատուցում»,

6) «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում»:

434. Համաձայն վիճակագրական տվյալների կարող ենք փաստել թե ինչպիսի հարաբերակցություն կա չզբաղված աշխատանք փնտրող քաղաքացիների և գործազուրկների թվաքանակների միջև.

Աղյուսակ 5.31. Չզբաղված քաղաքացիների և գործազուրկների թվաքանակի բաշխումը՝ ըստ մարզերի (2006-2009թթ.)

Մարզեր	Չզբաղված քաղաքացիների թիվը /01.01/				Նրանցից՝ գործազուրկներ /01.01./			
	2006թ.	2007թ	2008թ.	2009թ	2006թ.	2007թ	2008թ	2009թ.
ք.Երևան	25773	18882	17066	18401	22443	17832	16736	18086
Արագածոտն	1796	1512	1337	1357	1257	1437	1310	1311
Արարատ	**4065**	**2759**	**2910**	**3105**	**3086**	**2674**	**2860**	**3061**
Արմավիր	5111	3806	3234	3310	3422	2902	3158	3268
Գեղարքունիք	6750	5918	5760	6150	4471	5414	5454	5875
Լոռի	24235	18798	11102	12094	19000	17670	10673	11772
Կոտայք	6411	4899	5806	6617	4872	4723	5676	6516
Շիրակ	19872	18600	16306	12518	16071	16321	15422	11814
Սյունիք	11481	10031	8495	7294	9745	9829	8341	6912
Վայոց Ձոր	1774	1392	1104	1082	1298	1321	1050	1040
Տավուշ	4649	4674	4460	5092	3326	4448	4370	5043
Ընդամենը՝	111917	91271	77580	77020	88991	84571	75050	74698

435. Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների գործազրկության մակարդակի ցուցանիշներով Արարատի մարզը ցածր աղքատության շրջանում է՝

Աղյուսակ 5.32. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի

/Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը, %/

Մարզեր	2008թ. %	2009թ. %

ք.Երևան	5.7	6.5
Արագածոտն	2.2	2.0
Արարատ	**2.6**	**2.7**
Արմավիր	2.7	2.9
Գեղարքունիք	5.6	5.6
Լոռի	11	11.3
Կոտայք	7.3	9.2
Շիրակ	12.5	12.9
Սյունիք	14	11.6
Վայոց Ձոր	4.1	4.1
Տավուշ	8.5	8.9
Ընդամենը՝	6.7	7.1

436. Վերոնշյալ աղյուսակում ներկայացված է գործազրկության մակարդակը՝ գործազրկության գրանցումը զբաղվածության պետական ծառայությունում:

437. Մարզի տարածքում գրանցված գործազուրկների ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ և միջին տարիք (30-50 տարեկան) ունեցողներն են: Գործազրկությունը սերտորեն կապված է աղքատության հետ: Թվական տվյալներով այսօր շատ աղքատ է յուրաքանչյուր հինգերորդը: Աղքատ է զբաղված բնակչության գրեթե չորսից մեկը, որը հետևանք է ցածր վարձատրության (հատկապես մշակույթի և արվեստի բնագավառների):

438. Արարատի մարզում 01.01.2010թ. դրությամբ

1) Աշխատանք փնտրողների թիվը կազմում է 4122 մարդ,
այդ թվում՝
2) Չզբաղված անձինք 3450 մարդ
3) Գործազուրկներ 3419 մարդ

439. Որոշ ցուցանիշների վերջին շրջանի աճը բացատրվում է խոշոր կազմակերպությունների զանգվածային կրճատումներով:

440. Ստորև ներկայացվում են ՀՀ Արարատի մարզի 2006-2009թթ. գործազուրկների թիվն ըստ տարբեր բնութագրիչների և տարածաշրջանների՝ հավաքագրված Արարատի մարզի զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններից:

Աղյուսակ 5.33. Արարատի մարզի գործազուրկների, աշխատանք փնտրողների և չզբաղված, աշխատանք փնտրող քաղաքացիների թվական տվյալները՝ ըստ տարածաշրջանների (2005-2009թթ.)

		Մասիս	Արտաշատ	Վեդի	Արարատ	Արարատի Մարզ
Աշխատանք	01.01.2006թ	1473	1301	962	1078	**4814**

փնտրողների թիվը	01.01.2007թ	1102	1101	818	715	**4814**
	01.01.2008թ	1014	1191	517	900	**3622**
	01.01.2009թ	1010	1094	627	1068	3799
Զբաղված, աշխատանք փնտրողների թիվը	01.01.2006թ	1301	1030	676	1058	**4065**
	01.01.2007թ	798	709	545	707	**2759**
	01.01.2008թ	817	768	437	888	**2910**
	01.01.2009թ	867	795	378	1065	**3105**
Գործազուրկ-ների թիվը	01.01.2006թ	1019	745	655	667	**3086**
	01.01.2007թ	783	663	535	693	**2674**
	01.01.2008թ	810	734	430	886	**2860**
	01.01.2009թ	864	776	370	1051	**3061**

441. Ստորև ներկայացվում են Արարատի մարզի 2006-2009թթ. գործազուրկների տվյալները ըստ տարբեր բնորոշիչների և ըստ տարածաշրջանների հավաքագրված զբաղվածության Արարատի մարզային տարածքային կենտրոններից:

Աղյուսակ 5.34. Արարատի մարզի գործազուրկների տվյալները ըստ տարբեր բնութագրիչների և ըստ տարածաշրջանների (2006-2009թթ.)

Ցուցանիշներ		Վեդի	Արարատ	Արտաշատ	Մասիս	Արարատի ՄԱՐԶ
Գործազուրկների թիվը	2006թ	655	667	745	1019	**3086**
	2007թ	535	693	663	783	**2674**
	2008թ	430	886	734	810	**2860**
	2009թ	370	1051	776	864	**3061**
	2010թ	506	874	908	1131	**3419**
Ըստ տարիքի՝						
16-18 տարեկան	2006թ	0	5	3	3	**11**
	2007թ	1	15	3	6	**25**
	2008թ	2	64	3	3	**72**
	2009թ	5	23	3	14	**45**
31-34 տարեկան	2006թ	265	372	435	498	**478**
	2007թ	67	156	51	65	**946**
	2008թ	57	185	55	74	**946**
	2009թ	50	160	94	98	**402**
35-45 տարեկան	2007թ	151	353	226	270	**1000**
	2008թ	99	307	200	244	**850**
	2009թ	139	256	249	294	**938**
46-54 տարեկան	2007թ	104	156	253	241	**754**
	2008թ	94	179	247	253	**773**
	2009թ	129	128	268	327	**852**
54 տարեկանից բարձր	2007թ	34	85	78	70	**267**
	2008թ	48	98	124	134	**404**
	2009թ	64	63	161	156	**444**
Ըստ կրթության՝						
բարձրագույն	2006թ	28	48	50	42	**168**
	2007թ	37	91	75	70	**273**
	2008թ	34	133	83	86	**336**
	2009թ	35	81	76	96	**288**
միջնակարգ մասնագիտական	2006թ	150	143	146	160	**599**
	2007թ	78	213	183	200	**674**
	2008թ	72	273	187	200	**732**
	2009թ	122	225	225	252	**824**
միջնակարգ	2006թ	331	397	326	467	**1521**
	2007թ	242	563	359	457	**1621**
	2008թ	201	615	366	522	**1703**
	2009թ	34	82	164	65	**345**

թերի միջնակարգ	2006թ	26	105	141	114	**386**
	2007թ	73	19	117	83	**292**
	2008թ	63	31	140	56	**290**
	2009թ	46	32	191	42	**311**

442. Ակնհայտ է, որ գործազրկությունը լրջագույն խնդիր է այսօր, հատկապես՝ կանանց շրջանում և իր բացասական ազդեցությունն է ունենում բնակչության կենսագործունեության վրա: Ակնառու տնտեսական հետևանքներից (անհատի, ընտանիքի եկամտի կորուստ) բացի, այն այսօր ունի մի շարք սոցիալական հետևանքներ, մանավանդ եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին: Այսպես.

1) մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի,

2) եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյազրկման պատճառ է դառնում,

3) աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների տարբեր ձևերի դրսևորման (հարբեցողություն և այլն) պատճառ են դառնում:

443.Վերջին տարիներին նկատելի է գործազուրկների թվաքանակի նվազումը:

444. Սա բացատրվում է՝

1) «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքի այն դրույթով, որ եթե աշխատանք փնտրողը 6 ամսվա ընթացքում գոնե մեկ անգամ չի ներկայանում Զբաղվածության պետական ծառայություն, ապա նա հանվում է հաշվառումից,

2) տարեցտարի ավելանում են աշխատանքի տեղավորման ցուցանիշները:

445. Քննարկենք նաև գործազուրկների տարիքային և կրթական համեմատական ցուցանիշները: Գործազուրկների թվի մեջ գերակշռում են 30-50 տարեկանները: Այս տարիքի մարդիկ հիմնականում երկարատև գործազուրկներ են (1-ից ավելի տարի մնացել են գործազուրկի կարգավիճակում), որի պատճառով կորցրել են իրենց մասնագիտական հմտությունները և ունակությունները: Այս ցուցանիշի վրա ազդում է նաև այն հանգամանքը, որ երիտասարդները ավելի ակտիվ են կողմնորոշվում աշխատաշուկայում և ավելի հեշտությամբ տեղավորվում հարմար աշխատանքի: Միաժամանակ քանի որ 30-ից 50 տարեկանները կորցրել են իրենց մասնագիտական հմտությունները և ունակությունները զբաղվածության տարածքային կենտրոններ են դիմում ընդգրկվելու այնպիսի աշխատանքներում, որոնք մասնագիտական

ունակություններ չեն պահանջում, մասնավորապես դիմում են «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերում՝ ժամանակավոր աշխատանքներում ընդգրկվելու համար /1-3 ամիս տևողությամբ/:

446. Քանի որ գործազրկության նպաստ են ստանում ոչ բոլոր գործազուրկները, ապա եթե համեմատություն կատարենք գործազուրկների և նպաստառու գործազուրկների թվերի միջև 2009թ. համար կունենանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5.35.

Ցուցանիշներ	Վեդի	Արարատ	Արտաշատ	Մասիս	Արարատի մարզ
Գործազուրկների թիվը	506	874	908	1131	3419
%-յին ցուցանիշը՝ մարզի ընդհանուր գործազուրկների թվից	14.8	25.6	26.6	33.0	
Նպաստառու գործազուրկների /ցուցակային թվի/ և նպաստի իրավունք ունեցող անձանց հարաբերակցությունը	248/195	211/165	395/336	474/382	1328/1078
Նույն ցուցանիշի ընդհանուր մարզային թվերից /% ցուցանիշը/	18.7/18	15.9/15.3	29.7/31.2	35.7/35.5	

447. Միայն 2008թ. ընթացքում Արարատի մարզի զբաղվածության կենտրոնների կողմից իրականացվել են աշխատաշուկայում աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացման և աշխատանքի տեղավորման 6 ծրագրեր:

Աղյուսակ 5. 36.

հ/հ	Ծրագրերի բովանդակու-թյունը	Արարատի մարզ	Արարատ	Արտաշատ	Մասիս	Վեդի
		Միջոցառման մեջ ընդգրկվածների թիվը				
1	Ընդամենը՝ մասնագիտական ուսուցման կազմակերպում (մարդ), այդ թվում՝	134	28	31	31	44
2	Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին մանակի փոխհատուցում (մարդ)	5	1	2	1	1

3	**Աշխատաշուկայում անմրցունակ խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին (մարդ)**	18	3	7	6	2
6	**Աշխատանքի տեղավորում**	490	106	149	164	71

448. Մասնագիտական ուսուցման մեջ ընդգրկված են 134 աշխատանք փնտրողներ: Մասնագիտական ուսուցման, վերամասնագիտացման, որակավորման բարձրացման դասընթացներն անցել են հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Վարսահարդար», «Մատնահարդար», «Դիմահարդար», «Խոհարարություն», «Հրուշակագործություն», «Սեղանի ձևավորում», «Ծաղկի դիզայներ», «Համակարգչային դիզայն», «Համակարգչային գործավարություն, ղեկավարի օգնական ռեֆերենտ», «Տեքստերի համակարգչային ձևավորում և տպագրություն» և այլն:

449*. **Փախստականների հիմնահարցեր.*** Որպես առանձնահատկություն ունեցող սոցիալապես անապահով առանձին խումբ փախստականները սոցիալական օժանդակության խնդիր ունեն: Արարատի մարզը մեծաթիվ փախստականներ է ընդունել, որոնցից մեծ մասը կրկնակի արտագաղթի են ենթարկվել: Այսպես, նախորդ դարի 90-ական թվականներին փաստված ավելի քան 62 հազար փախստականներից այսօր մարզում բնակվում են դրանց սոսկ մեկ երրորդը: Նվազումը մասամբ բացատրվում է նաև ինտենսիվ արտագաղթով: Հատկանշական է, որ տարվա ընթացքում փախստականների թիվը փոփոխվում է նաև կապված նրանց սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու փաստի հետ: Փախստականաբնակ են մարզի բոլոր տարածաշրջանները հատկապես Մասիսի տարածաշրջանը:

450*. Ներկա իրավիճակը.*01.01-2009թ.դրությամբ մարզում փաստացի բնակվում է

1) փախստական՝ 843,
2) քաղաքացիություն ստացած նախկին փախստականներ՝ 10230,
3) բնակարանի կարիքավոր են փախստականի 771 ընտանիքներ:

451. Ժողովրդագրական առումով փախստականները բնութագրվում են որպես՝

1) Բնական վերարտադրության խաթարումներով ու ինտենսիվ «ծերացող համակցություն»: Փախստականների 60-69 տարեկանների տեսակարար կշիռը մոտ 1.5-3.5 անգամ ավելի մեծ է, քան 0-4 տարեկան երեխաներն ու 25-29 տարեկան երիտասարդներինը: Փախստականների մոտ տեղաբնակների համեմատ 3-4 անգամ շատ են միայնակ ընտանիքները, հատկապես միայնակ ծերերը, 1.5 անգամ պակաս են երիտասարդ տղամարդիկ, 2-3 անգամ պակաս են 5-14 տարեկան երեխաները:

2) Միգրացիոն մեծ ակտիվությամբ, փախստականների միգրացիան 2-3 անգամ բարձր է տեղաբնակներից, որով և բացատրվում է նրանց թվաքանակի նվազումը:

3) Փախստականների ամենաբնութագրական հատկանիշներից մեկը ժամանակավոր կացարաններում ապրող ընտանիքների մեծ տոկոսն է: Մարզում այս պահին բնակարանի կարիք ունեցող հաշվառված փախստական ընտանիքների 54.1%-ը բնակվում է ժամանակավոր կացարաններում, 45.9%-ը՝ վարձով կամ ազգականների մոտ:

4) Տնային գույքի աղքատիկությունը կամ բացակայությունը:

5) Զբաղվածության ցածր մակարդակը: Փախստականների մեջ տեղաբնակների համեմատ 1.7 անգամ քիչ են գործատուները, 2 անգամ քիչ են արտադրության մեջ զբաղվածները, 3 անգամ պակաս են մշտական աշխատանք ունեցողները:

6) Աղքատության ավելի մեծ խորություն: Մարդկային աղքատության (ուսում, առողջություն, ջուր) ցուցանիշը 1.7 անգամ բարձր է, ծայրահեղ աղքատությունը 1.4 անգամ ավելի տարածված:

7) Կանանց առանձնահատուկ վիճակը: Յուրաքանչյուր 10 երիտասարդ կանանցից 2-3-ի պոտենցիալ փեսացուն կամ ամուսինը բացակայում է, այսինքն մեծ թիվ են կազմում կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները:

8) Քաղաքային կենսաձև կրողների բնակություն գյուղական վայրերում:

9) Բարեկամական-ազգակցական թույլ կապեր:

10) Լեզվական տարբերություններ:

11) Աշխարհընկալման և ծիսա-սովորութային տարբերություններ:

452. Փախստականների համար ամենահրատապ լուծում պահանջող հարցը բնակարանային հիմնահարցն է, քանի որ այսօր հարյուրավոր փախստական ընտանիքներ բնակվում են անբարեկարգ ժամանակավոր կացարաններում, հանրակացարաններում:

453. Զոհված (մահացած) կամ հաշմանդամ (վիրավոր) ազատամարտիկների բնակարանային ապահովության հիմնահարցեր 01.01-2009թ. դրությամբ Արարատի մարզում հաշվառված են բնակարանի 199 կարիքավոր ընտանիքներ (անօթևան, բնակարանի բարելավում)

1) զոհված զինծառայողի 79 ընտանիքներ (որից՝ 23 անօթևան)
2) հաշմանդամ զինծառայողի 120 ընտանիքներ (որից՝ 37 անօթևան):

454. ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման պահանջներով մարզի համայնքներից պարբերաբար (ամեն տարի) հավաքագրվել է մարզի զոհված (մահացած) կամ հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանային հիմնախնդիր ունեցող ընտանիքների փաստաթղթերը: ՀՀ պաշտպանության նախարարության (ՀՀ ՊՆ) հատուկ հանձնախմբի հետ համատեղ ուսումնասիրվել է հիշյալ բնակարանի կարիքավոր ընտանիքների փաստաթղթերը, կատարվել տնայցեր:

455. 2009 թվականի ընթացքում վերոնշյալ կատեգորիայից բնակարան ձեռք բերելու համար գումար են ստացել 57 ընտանիքներ։

456. ***«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագիր.*** Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում աղքատությունը մեղմելու և ժամանակավոր զբաղվածություն ապահովելու նպատակով 2001թ.-ից պետությունն իրականացնում է հասարակական աշխատանքների կազմակերպմանն ուղղված միջոցառումներ։ Այդ նպատակով պետբյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվում է 700 մլն դրամ։

457. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ծրագրով 2006թ-ին հանրապետությունում իրականացվել է 504 ծրագիր՝ 418421 մարդ/օր ծավալով և ընդգրկվել է 9260 մարդ։

458. 2006թ. յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանվել է 1200 դրամի վճար՝ նախորդ տարվա 1100 դրամի փոխարեն։ Նախորդ տարվա համեմատ ավելացել է գյուղական համայնքների ընդգրկվածությունը։ 2007թ. յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանվել է 1400 դրամ, 2008թ-ին՝ 2000 դրամ։

Աղյուսակ 5. 37. Տվյալներ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի վերաբերյալ

		2006թ.	2007թ.	2008թ.
1	Վարձատրվող հասարակական աշխատանքների թիվը	30	34	27
2	Հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը	716	715	418

Աղբյուրը՝ Արարատի մարզպետարան

459. Մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի խնդիրները և նրանց միջև փոխկապվածությունը ներկայացված է Գծապատկերում։

Սոցիալական պաշտպանության ոլորտի խնդիրների «ծառը»



5.5.2. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

460. Տվյալ ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

461. ԿԶԾ-ի համաձայն՝ ընտանեկան նպաստների ծրագրի և կենսաթոշակային ապահովության համակարգի հետագա կատարելագործման և միանվագ դրամական օգնության վճարների բարձրացման միջոցառումները կշարունակվեն և ուղղված կլինեն մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

462. Մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

1) հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,
2) ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տան պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,
3) կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների խնամքի ցերեկային/ընտանեկան կենտրոնների ստեղծումը,
4) խնամատար ինստիտուտի ներդրումը,
5) փախստականներին հասարակությանն ինտեգրելու ծրագրերի իրագործումը,
6) սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը,
7) գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց առնվազն ժամանակավոր զբաղվածության ապահովումը՝ վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի միջոցով:

463. ***Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը*** նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ:

464. ***Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում.*** Կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը

շարունակում է հանդիսանալ ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն: Այս պայմաններում ՄԺԾԾ բոլոր երեք տարիների ընթացքում կադրերի վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն (2008-2010թթ.՝ սոցիալական ապահովության բնագավառում կադրերի վերապատրաստման և գիտահետազոտական աշխատանքների իրականացման խթանման հարցում):

465. Մասնավորապես, կարևորվում է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

466. ***Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ցերեկային/ընտանեկան կենտրոնների ստեղծում,*** որը ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական (սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացում) աջակցության ցուցաբերում:

467. ***Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը.*** ՍԾՏԳ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է բարելավել նաև այդ կենտրոնների նյութատեխնիկական բազան:

468. ***Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը***. Այստեղ կարևորվում է.

1) ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը,
2) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը, սոցիալապես խոցելի բնակչության տվյալների բազայի ստեղծումը:
3) Մարզի սոցիալական ապահովության ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 5.5-ում:

469. Տվյալ ոլորտի զարգացման գերակա ուղղությունները պատկերված են Գծապատկերում:

Գծապատկեր . **Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները**



Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Արարատի մարզում	1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճանը 2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճանը 3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը, % 4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը, % 5. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, %	Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է։ Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված։
1. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում, ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար աշխատանքի նպատակայնության բարձրացմանը		
1.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումների թիվը Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռը, % Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում, %	Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել տեղեկատվություն իրենց սոցիալական ծրագրերի մասին։
1.2 Մարզպետարանի սոցիալական ապահովության վարչության/ ՄԾՏԳ-ների կանոնավոր հաշվետվությունների հրապարակային ներկայացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ		
2. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում		
2.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում (դասընթացներ, միջազգային փորձ և այլն)	Մատուցվող ոչ նյութական ծառայությունների թիվը Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը	
2.2 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական և ոչ պետական) կադրերի վերապատրաստում կարիքների	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը (մարզպետարան և ՄԾՏԳ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ)	

գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ		
3. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը		
3.1 ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդնում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից:
3.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում		
3.3 Մարզի խոցելի խմբերի քարտեզագրում, տվյալների բազայի ստեղծում` նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	Խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն Խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը	
3.4 Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	Երիտասարդությունը ցանկանում է հասարակական հիմունքներով ծառայություն մատուցել խոցելի խմբերին:
4. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում` ապահովելով սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների համար		
4.1 Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 4.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում	Մարզում դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվը	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը գտնվում է Կառավարության ուշադրության կենտրոնում:
5. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում` համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով		
5.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական և ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, % Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը, %	
6. Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների բազմազանությանը		

6.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամների, ծերերի խնամք, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից։ Անհրաժեշտ փորձ և հմտություններ ունեցող պետական և ոչ պետական սոցիալական ծառայություններ մատուցողների առկայություն։ Պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության բարձր աստիճան։
6.2 Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը, %	
6.3 Ծերերի խնամքի ծառայությունների (տան պայմաններում խնամք, ցերեկային կենտրոն) կազմակերպում և զարգացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	
6.4 Հաշմանդամների (հատկապես հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով Հաշմանդամ երեխաների առողջա-վերականգնողական ցերեկային կենտրոնի ստեղծում	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը Կենտրոնի ծառայությունից օգտվող հաշմանդամ երեխաների թիվը	
6.5 Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում	Հաշվառված խնամատար ընտանիքների թիվը Խնամատար ընտանիքներում տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը	ՀՀ կառավարությունն աջակցում է խնամատար ընտանիքի ինստիտուտի կայացմանը հանրապետությունում։
6.6 Գործազուրկների համար մասնագիտական ուսուցման կազմակերպում (վերամասնագիտացում, որակավորման բարձրացում և նախնական արհեստագործական, մասնագիտական պատրաստում)	Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը, նրանցից աշխատանքի տեղավորվածները	Մասնագիտական ուսուցում կազմակերպելու համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից։ Գյուղական բնակավայրերի բնակչության զբաղմունքների բազմազանեցում, ոչ գյուղական ոլորտի ճյուղերի առաջանցիկ զարգացման խրախուսում և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծում պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ու ուղղությունների մշակման և կիրարկման միջոցով

5.6. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

470. Մինչև 2006թ-ը երեխաների հիմնահարցերով զբաղվել են համայնքներում գործող անչափահասների գործերով զբաղվող հանձնաժողովները: 2006թ.-ին մարզպետարաններում բացվեցին երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ իսկ համայնքներում ձևավորվեց խնամակալության և հոգաբարձության մարմիններ, որոնց միջոցով էլ համակարգվում են երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվող միջոցառումները:

471. 2006թ ՀՀ կառավարությունը հաստատեց կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թ.թ. ռազմավարությունը՝ երեխայի շահերի առաջնահերթության սկզբունքը սահմանելով կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանությունը : Այդ ռազմավարությունը ենթադրում է նման երեխաների համար ընտանեկանին մոտ միջավայրի ապահովում՝ խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման միջոցով: Խնամատար ընտանիքի ինստիտուտն արդեն փորձարկվել է Հանրապետության 2 մարզերում՝ Լոռու, Գեղարքունիքի, որը տվել է իր դրական արդյունքները: Ռազմավարության մեջ կարևորվում է նաև երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացման և համայնքների ներգրավման սկզբունքը՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծումը: Ցերեկային կենտրոնների գործունեության հաշվին կզարգանան անապահով ընտանիքների երեխաներին տրամադրվող սոցիալական ծառայությունների տեսակները, որակը, կմեծանա ընդգրկված երեխաների թիվը: Այս առումով կարևորվում է համայնքների ռեսուրսների լիարժեք օգտագործման, հասարակության իրազեկման և ներգրավվածության խնդիրը երեխաների իրավիճակի բարելավման գործում: Այս միջոցառումների իրականացումը մարզում չափազանց կարևոր է, քանի որ մարզում բնակվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ, որոնց մեջ կան միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաներ: Առաջնային է նաև անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների և հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքները, քանի որ Արարատի մարզում նս կան օրինազանց երեխաներ:

Աղյուսակ 5.38. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ /2007-2008թ.թ./

	2007թ.	2008թ.	2009թ.
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	890	1098	1112
Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	23	32	33
Օրինազանց երեխաներ	53	54	37
Մուրացիկ, թափառաշրջիկ երեխաներ	2	0	0

Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ	6	29	3
Հաշմանդամ երեխաներ	548	780	722

Աղբյուրը՝ Արարատի մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

472. Արարատի մարզում է գործում Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ կա 270 երեխա: Արարատի մարզից 2007-2008թ.թ Խարբերդի մասնագիտացված մանկատուն է ուղարկվել 9 հաշմանդամ երեխա: 2008-2009թթ-ից Արտաշատի թիվ 1 և Խարբերդի թիվ 2 դպրոցներում իրականացվում են ներառական կրթություն, որտեղ հաճախում են 22 երեխա: Երեխաների ընտրությունն իրականացվել է նրանց կարիքների մասնագիտական գնահատման հիման վրա: 2007թ Արարատի մարզում հայտնաբերվել է 2 մուրացիկ երեխա: Տվյալ ընտանիքների հետ աշխատանքի արդյունքում երեխաները մուրացիկությամբ չեն զբաղվում: Վերջին տարիներին ավելի համակարգված է պետության և միջազգային կազմակերպությունների կողմից Արարատի մարզի սոցիալապես անապահով երեխաների ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը: 2007թ.-2008թ.պետական բյուջեի միջոցների հաշվին Հանքավանի «Հեքիաթների կիրճ» ճամբարում իրենց ամառային հանգիստն են անցկացրել սոցիալապես անապահով ընտանիքների 250 երեխա: 2007-2008թ.թ. Արարատյան Հայրապետական թեմի բարեգործական ծրագրում Արարատի մարզից ընդգրկվել են 380 միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, որոնք տարվա կտրվածքով 200 ԱՄՆ դոլարի չափով օգնություն են ստանում մինչև 18 տարեկան: Հայաստանի մանկատների հիմնադրամի «Մեկ ընտանիք մեկ հայրենիք» կազմակերպությունը զոհված ազատամարտիկների և ծնողազուրկ 234 երեխաների տրամադրում է 50 ԱՄՆ դոլարի չափով օգնություն՝յուրաքանչյուր կիսամյակ: Հայ օգնության ֆոնդի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնում 2007-2008թթ.-ին ապաստանել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների 27 երեխաներ, որից 25-ը վերադարձել են կենսաբանական ընտանիք, իսկ 2 երեխա տեղավորվել են մանկատուն:

473. Արարատի մարզում երեխաների հիմնահարցերի բնագավառում սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրներ,
2) Հաշմանդամ երեխաների հիմնախնդիրներ,
3) Պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրներ,
4) Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրներ,
5) Աղքատ ընտանիքներում ապրող երեխաների պաշտպանության հիմնախնդիրներ:

474. Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի 2011-2014 թթ. ռազմավարության հիմնական ուղղություններն են՝

Երեխաների խնամքի և պաշտպանության մեկ համակարգի ստեղծում,

1) Երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցում և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելում,

2) Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բարելավում,

3) Արտաշատ քաղաքում հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխաների համայնքային ցերեկային կենտրոնի ստեղծում,

4) Մասիս քաղաքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների այլընտրանքային ծառայության ստեղծում:

6.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

6.1 Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն

475. ՀՀ Արարատի մարզի բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը՝ ազգաբնակչության 70.6%-ը կազմում է գյուղական բնակչությունը:

476. Արարատի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների միջոցով: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում գործում են 54280 գյուղացիական տնտեսություններ: Գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններ մարզում չեն գործում, իսկ գյուղարտադրանքի վաճառքի շուկաների թիվը՝ 4-ն է:

477. Մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակող ձեռնարկություններից առանձնանում են 17 գինու - կոնյակի արտադրության, երկու պահածոների /Արտաշատի ՛՛Արտֆուտ” և Արարատի “Բորոդինո”/ և ծխախոտի մշակության “Մասիս Տոբակո” գործարանները:

478. Գյուղատնտեսական հողատեսքերը ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 75 %-ը /156577հա/: Աղյուսակ 6.1-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական հողատեսքերը և ցուցանիշները:

Աղյուսակ 6.1

Արարատի մարզ	գյուղատնտեսական հողատեսքեր /հա/	այդ թվում				
		վարելահողեր /հա/	բազմամյա տնկարկներ /հա/	խոտհարքեր /հա/	արոտավայրեր /հա/	այլ հողատեսքեր /հա/
1997թ.	93714	35466	8789	2874	46584	-
2009թ.	156577	27947.7	12477	2813	74217.3	39022
հողատեսքերի տեսակարար կշիռը 2009թ. %	100	17.8	8.0	1.8	47.4	25.0

479. Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ հատկապես մեծ կշիռ ունեն արոտավայրերը /47.4%/, վարելահողերը /17.8%/ և բազմամյա տնկարկները /8.0%/:

480. Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2009թ. կազմել է 89.1 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 6.7%-ով: Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում այն կազմում է 16.0%:

481. Արարատի մարզի տարածքը ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիների: Տարվա ընթացքում տեղումները տատանվում են 200-300մմ սահմաններում, իսկ օդի ջերմաստիճանը տատանվում են -30^{0}C-ից մինչև +40^{0}C:

482. Արարատի մարզի բնակլիմայական պայմանները նպաստավոր են խաղողի և պտղի մշակության՝- 124777.0 հա, բանջարեղենի՝- 6174 հա, կարտոֆիլի՝ -9050 հա, բոստանի՝ -1699 հա, կերային մշակաբույսերի՝-5879 հա և հացահատիկի՝ - 5120հա, համար:

483. Վերջին տարիներին մարզում զգալիորեն ավելացել է պտուղ բանջարեղենի արտադրությունը՝ 2009 թվականին այն կազմել է պտղինը՝ 92796.9 տոննա, խաղողինը՝ 88168.3 տոննա, բանջարեղենինը՝ 266527 տոննա, կարտոֆիլինը՝ 28852 տոննա և բոստանինը՝ 67266.4 տոննա:

484. Մարզի գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են բուսաբուծությունը, և անասնապահությունը:

485. ***Բուսաբուծություն*** Մարզի բուսաբուծության արտադրական հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 6.2-ում:

Աղյուսակ 6.2

	ՏԱՐԱԾՔԸ /ՀԱԶ. ՀԱ/			ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ /Ց, ՀԱ/			ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ / ՏՈՆՆԱ/		
	2006	2007	2008	2006	2007	2008	2006	2007	2008
ՀԱՑԱՀԱՏԻԿ									
ՀՀ	182.405	176.213	172.838	11.6	25.6	24.0	212545.0	452522.2	415417.8
ՄԱՐԶ	9.01	6.05	5.46	32.0	43.0	38.9	28801.1	26005.8	21227.5
ՏԵՍ. ԿՇԻՌ %	4.9	3.4	3.2	275.8	168.0	162.1	13.6	5.7	5.1
ԿԱՐՏՈՖԻԼ									
ՀՀ	33.045	31.674	34.298	163	184	189	539476	583934	648562.4
ՄԱՐԶ	0.872	0.840	1.037	305.5	318.8	316.6	26639.6	26776.0	32834.2
ՏԵՍ. ԿՇԻՌ %	2.6	2.7	3.0	187.4	173.2	167.5	4.9	4.6	5.1
ԲԱՆՋԱՐԵՂԵՆ									
ՀՀ	24.361	25.607	24.219	320	330	340	779895	845285.1	825337.6
ՄԱՐԶ	6.195	6.813	6.009	409.3	398.5	441.2	253573	271510.7	265140.0
ՏԵՍ. ԿՇԻՌ %	25.4	26.6	24.8	127.9	120.8	129.8	32.5	32.1	32.1
ԲՈՍՏԱՆ									
ՀՀ	4.025	5.884	5.446	335	350	334	134935	206295.1	182159.4
ՄԱՐԶ	0.858	1.112	1.159	379	376	431	32515	41832.4	49984.5
ՏԵՍ.	21.3	18.9	21.3	113.1	107.4	129.0	24.1	20.3	27.4

ԿՇԻՌ %									

ՊՏՈՒՂ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂ

ՀՀ	35.403	38.02	36.748	80.8	68.4	86.4	286133	260239	317834.8
ՄԱՐԶ	7.239	7.321	7.500	120	87.7	120.5	86807.3	64205.9	91004.0
ՏԵՍ. ԿՇԻՌ %	20.4	19.3	20.4	148.5	128.2	139.5	30.3	24.7	28.6

ԽԱՂՈՂ

ՀՀ	15.746	15.888	16.796	127.8	137.7	110.6	201372	218882	185131
ՄԱՐԶ	4.648	4.659	4.973	162.3	72.7	163.5	75456.2	80483.2	81317.3
ՏԵՍ. ԿՇԻՌ %	29.5	29.3	29.6	127.0	52.8	147.8	37.5	36.8	43.9

486. Աղյուսակում բերված տվյալների վերլուծությունից երևում է, որ մարզի մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները զգալիորեն բարձր են հանրապետության միջին ցուցանիշներից, իսկ հացահատիկի ցանքատարածությունները պակասել են 2006թ համեմատ 3550 հա-ով, որի պատճառը մթերման գների ցածր լինելն է:

487. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները ավելի բարձր կլինեին եթե կիրառվեին ոռոգման նոր եղանակներ՝ կաթիլային, անձրևացման, օգտագործվեն բարձր վերարտադրության սերմեր, որակյալ պարարտանյութեր և թունաքիմիկատներ:

488. 2008թ. համեմատ 2009թ. մարզի համայնքներում վարելահողերը պակասել են շուրջ 254.4հա: Հիմնվել են շուրջ 230հա խաղողի այգիներ և շուրջ 25 հա պտղատու այգիներ: Դա բացատրվում է նրանով, որ խաղողի և պտղատու այգիները ավելի եկամտաբեր կուլտուրաներ են համարվում: Մարզի շուրջ 9300 հա հողատարածքներ չեն մշակվում գերխոնավ, ոռոգման ջրի բացակայության և մանր գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության պատճառով: Արարատի մարզում առկա է մոտ 8000 հա գերխոնավ և աղակալած հողեր, որոնք չեն մշակվում կամ մշակվուն են մասամբ:

489. Անհրաժեշտ է անցկացնել համապատասխան միջոցառումներ հողերը օգտագործելի դարձնելու համար: Մարզի վարչական սահմաններում համայնքների վարչական սահմաններից դուրս պետական սեփականություն հանդիսացող հողերից տրվել է վարձակալության շուրջ 19200հա, որից գանձված վարձավճարի չափը կազմում է 12 600 000 դրամ:

490. Մարզում 2009թ արտադրվել է 266527.0 տոննա բանջարեղեն: Մարզի երկու պահածոների գործարանները /Արտաշատի "Արտֆուտ" և Արարատի "Բորոդինո"/ մթերել են 26760.1 տոննա բանջարեղեն, մնացած արտադրանքի իրացման հարցում գյուղացիական տնտեսությունները դժվարություններ են ունեցել, որն էլ իր հերթին խոչընդոտել է բանջարաբուծության զարգացմանը:

491. Մարզում ավելացել է բոստանային կուլտուրաների ցանքատարածությունները 300 հա-ով: 2009թ. արտադրվել է 67266.4 տոննա բերք, որի իրացման հարցում նույնպես գյուղացիական տնտեսությունները ունեցել են դժվարություններ:

492. Մարզում պտղի և հատապտղի տարածքները ավելացել է 261 հա-ով, 2009թ-ն այն կազմել է 7500 հա: Մարզում՝ հիմնականում Արտաշատի և

Արարատի տարածաշրջաններում, մշակվում է ծիրան՝- 3044.6 հա և դեղձ՝- 2160.0հա: 2009թ. արտադրվել է 92796.9 տոննա պտուղ և հատապտուղ, որից ծիրան՝32248.0 տոննա և դեղձ՝ 27658.3 տոննա:

493. Գյուղացիական տնտեսությունները ծիրանի և դեղձի բերքը հիմնականում իրացնում են անհատ ձեռներեցների միջոցով, որոնք բերքը արտահանում են Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան: 2008-2009թթ. արտահանման դժվարությունների հետ կապված պատճառով նրանք գյուղացիական տնտեսություններից չեն գնել արտադրված բերքը: Քանի որ մարզի երկու պահածոների գործարանները մթերում են ոչ մեծ քանակությամբ արտադրված պտուղ, գյուղացիական տնտեսությունները դժվարությունների են հանդիպում տեղական շուկայում մնացած բերքի իրացման հարցում, որը և խոչընդոտում է մարզի համար շատ կարևոր պտղաբուծության զարգացմանը:

494. 2006թ.-ի համեմատ 2009թ. մարզում խաղողի այգիների տարածքները ավելացել են 325 հա-ով և այն կազմել է 4973 հա, որից 2974 հա՝ տեխնիկական տեսակներ:

495. 2009թ. արտադրվել է 88168.3 տոննա խաղող, նախորդ տարվա 81371 տոննայի դիմաց: Սակայն եթե նախորդ տարում մարզի 17 գինու – կոնյակի գործարանները մթերել են 89486 տոննա խաղող /մթերվել է նաև այլ մարզերից/, ապա 2009թ.-ին ֆինանսական ճգնաժամի հետևանքով մթերվել է 75041.7 տոննա: Գյուղացիական տնտեսությունները շուրջ 20000 տոննա խաղողի բերք /հատուկ տեսակի սորտեր/ պահպանում են սառնարանային տնտեսություններում՝ հետագայում իրացնելու նպատակով: 2009թ. ընթացքում չկարողանալով արտահանելու պահպանված խաղողի բերքը, առ այսօր դժվարություններ են ստեղծվել սառնարանային տնտեսություններում պահպանվող շուրջ 15000 տոննա բերքի իրացման հարցում, քանի որ տեղական շուկայում հնարավոր է իրացնել միայն դրա 20-30%-ը: Որոշ գինու գործարաններ օգտվելով այն հանգամանքից, որ 2009թ. հանրապետությունից խաղողի բերք համարյա չարտահանվեց 1կգ խաղողը մթերեցին 70-90 դրամով, նախորդ տարիների 120-130 դրամի փոխարեն:

496. Խաղողի բերքի իրացման տարեցտարի ավելացող դժվարությունները կարող են պատճառ հանդիսանալ դժվարությամբ աճեցրած արդեն բերքատու խաղողի այգիների քանդվելուն:

497. Աղյուսակ 6-3-ում ներկայացված են մարզի հիմնական մշակաբույսերի 2009թ. ցանքատարածությունները ըստ մարզի երեք տարածաշրջանների:

Աղյուսակ 6.3

Մշակաբույսի անվանումը	Արարատ /հա	Արտաշատ /հա/	Մասիս /հա/
հացահատիկ	**2965**	**1198**	**957**
բանջարեղեն	**2017**	**2325**	**1832**
կարտոֆիլ	**92**	**232**	**581**
բոստան	**1187**	**70**	**442**
պտուղ	**2935**	**4195**	**369**
կերային մշակաբույսեր	**907**	**1871**	**3101**

խաղող	2131	2563	283
ծխախոտ	82	13	5

498. Աղյուսակից երևում է, որ մարզի Արարատի տարածաշրջանում զարգացած է խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջար-բոստանային կուլտուրաների մշակությունը, Արտաշատի տարածաշրջանում՝ խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարեղենի մշակությունը, իսկ Մասիսի տարածաշրջանում հիմնականում զարգացած է բանջար-բոստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությունը:

499. Աղյուսակում ներկայացված ցուցանիշներից երևում է նաև, որ մարզում մշակվում է ընդամենը 100 հա ծխախոտ, այն դեպքում երբ Խորհրդային միության տարիներին միայն Ռիրցաձորի և Շաղափի գյուղական համայնքներում մշակվել է շուրջ 400 հա ծխախոտ:

500. Ռիրցաձոր համայնքում է գտնվում «Մասիս Տոբակո» գործարանի ծխախոտի չորանոցները, որոնց սահմանափակ հզորությունները խոչընդոտում են մարզում ծխախոտի ցանքատարածությունների ընդլայնմանը, չորանոցների հզորությունները մեծացնելու դեպքում հնարավոր է ավելացնել նաև ցանքատարածությունները:

501. Արարատի մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է, բարձրորակ սերմերի և տնկանյութերի արտադրությունը՝ պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:

502. Մարզի Դարակերտ համայնքում գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սերմնաբուծական տնտեսությունը, սակայն գյուղացիական տնտեսությունները գերադասում են ներկրված սերմերը, որոնց բերքատվությունը անհամեմատ բարձր է տեղականից: Անհրաժեշտ է , որ Դարակերտի սելեկցիոն սերմնաբուծարանում մշակվեն բարձր բերքատվություն ունեցող այնպիսի սորտեր, որոնք մրցունակ կլինեն տեղական շուկայում:

503. Արարատի մարզի գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում, որտեղ գրեթե ամեն տարի անպակաս են տարերային աղետները՝ ցրտահարությունը, կարկտահարությունը, տևական երաշտը, հեղեղումները՝ որոնց հետևանքով տուժում է մարզի գյուղատնտեսության ոլորտը, հատկապես գյուղացիական տնտեսությունները: Հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումը մարզի գյուղատնտեսության ոլորտի համար ունի կարևորագույն նշանակություն: Ապահովագրական համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել մարզի գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսվարողների շահերը:

504. Ստորև ներկայացվում են ապահովագրական համակարգի ձևավորման և հակակարկտային համակարգի տեղադրման անհրաժեշտությունը փաստող՝ 2006-2009թթ.-ի տվյալներ.

1) 2006-2007թթ. ձմռան տնական ցրտերի, ինչպես նաև գարնանը ծառերի ծաղկման շրջանում տեղացած տնական անձրևների, հեղեղումների ու 2007թ. ապրիլի 20-24 ընկած ժամանակահատվածում ջերմաստիճանի կտրուկ անկման պատճառով մարզը կրել է 13100 մլն դրամի վնաս:

2) 2008թ. տեղացած տնական և խոշոր չափերի կարկուտի հետևանքով մարզը կրել է 3200 մլն դրամի վնաս:

3) 2009թ. գարնանը տեղացած տնական կարկուտի հետևանքով մարզը կրել է 901.8 մլն. դրամի վնաս, իսկ հեղեղների պատճառով վնասի չափը կազմել է 27.4 մլն. դրամ:

505. 2006-2008թթ. գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 9950տ ազոտական պարարտանյութ, իսկ 2007-2009թթ. մկնանման կրծողների դեմ պայքարի համար 1497կգ թունաքիմիկատ: 2006-2008թթ. պարարտանյութերի ձեռքբերումն իրականացվել է պետության կողմից հատկացված դոտացիոն միջոցների և ազգաբնակչության վճարումների հաշվին, իսկ թունաքիմիկատները պետության կողմից տրամադրվել են անվճար:

506. Կտրուկ գնաճի դեմ ուղղված նախաձեռնության սահմաններում մարզի 57 համայնքների 430 գյուղացիական տնտեսություններին անվճար հատկացվել է 64.5 տոննա ցորենի սերմացու:

507. Գյուղացիական տնտեսությունները ցածր վճարունակ լինելու պատճառով չեն կարողացել բավարար քանակությամբ պարարտանյութեր և թունաքիմիկատներ ձեռք բերել, որի հետևանքով, չնայած մարզի բերքատվության ցուցանիշները բարձր են հանրապետության միջինից, այն կարող էր էլ ավելի բարձր լինել: Բերքատվության ցուցանիշների վրա մեծ ազդեցություն ունի նաև մարզում գյուղմթերքների իրացման մեծածախ շուկաների բացակայությունը, որի հետևանքով գյուղացիական տնտեսությունները չեն կարողանում իրացնել արտադրված ամբողջ բերքը:

508. ***Գյուղատնտեսության տեխնիկայի ապահովվածությունը*** Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար շատ կարևոր է գյուղատնտեսական մեքենաներով և գյուղատնտեսական գործիքներով ապահովվածության մակարդակը, նրանց տեխնիկական վիճակը: Գյուղացիական տնտեսությունների գյուղ մեքենաներով ապահովվածության վերաբերյալ 2004թ. և 2009թ. համեմատական տվյալները ներկայացված են աղյուսակ 6.4-ում:

Աղյուսակ 6.4

N		2004թ. հունվարի 1-ի դրությամբ			2009թ. հունվարի 1-ի դրությամբ		
		առկա քանակը 1 հատ	սարքիննությ ան մակարդակը %	100 տնտեսության հաշվով ապահովվածություն %	առկա քանակը հատ	սարքինության մակարդակը %	100 տնտեսության հաշվով ապահովվածություն %
1	Բեռնատար ավտոմեք.	1302	80	1.71	1095	76.8	1.43
2	Կոմբայն	46	52	0.06	35	85.7	0.06
3	Շարքացան	184	91	0.24	167	86.2	0.27
4	Կցասայլակ	620	82	0.81	571	87.4	0.92
5	Կուլտիվատոր	286	89	0.37	289	88.6	0.47
6	Հավաքիչ –	64	86	0.08	103	90.3	0.17

	մամլիչ						
7	Տրակտոր - գութան	436	87	0.57	394	93.1	0.68
8	Խոտհնձիչ	164	83	0.21	121	88.4	0.2
9	Տրակտոր	1350	85	1.83	1260	76.4	2.33
10	Կերահավաք կոմբայն	16	50	0.02	20	60.0	0.04
11	Հատիկազտիչ մեքենա	32	72	0.04	32	78.1	0.06

509. Ընդհանուր առմամբ տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը գերազանցում է 20 տարին, առկա տեխնիկան իր հզորությամբ չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին:

510. Անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկայի հետևողական թարմացում: Չնայած 2007-2009թթ. մարզ է ներկրվել Չինական արտադրության անիվավոր 8 հատ տրակտորներ, սակայն դա շատ քիչ է և համայնքների գերակշռող մասը ունի տրակտորների, վարող, ցանող, բուժումներ կատարող, հնձող, խոտհավաք և հակավորող գյուղ-գործիքների կարիք:

511. Գյուղտեխնիկայի օգտագործման վիճակի ուսումնասիրությունից երևում է, որ գյուղատնտեսության բնագավառում առաջնահերթ հիմնախնդիր է տեխնիկայով ապահովվածության մակարդակի բարձրացումը և տեխնիկայի համատեղ օգտագործման մեխանիզմների՝ բաժնետիրական ընկերությունների կամ կոպերացիաների ներդրումը:

512. ***Ոռոգման համակարգ.*** Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգի անխափան աշխատանքն է:

513. Արարատի մարզում 1998թ. ոռոգելի հողերի տարածքը կազմել է 37828 հա: Այժմ ոռոգվող հողերի տարածքը կազմում է ընդամենը 28330 հա, պակասել է 9498 հա-ով, որը խիստ ազդում է գյուղատնտեսական մթերքների արտադրության վրա:

514. Արարատի մարզպետարանի ստեղծման օրվանից /1996թ./ աշխատանքներ են տարվում ոռոգելի հողերի ընդարձակման ուղղությամբ: Այս հարցը, ինչպես նաև խորքային հորերի հորատման, մայր ջրանցքների և խոշոր պոմպակայանների վերակառուցման խնդիրները մշտապես քննարկվում են ՀՀ կառավարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ:

515. Մարզում ոռոգման աշխատանքները կազմակերպում են 6 ջրօգտագործող ընկերություններ /"Արտաշատի", "Արարատի", "Ազատի", "Վեդու", "Մխչյանի" և "Մասիսի"/:

516. Աղյուսակ 6.5-ում ներկայացված է 2008թ. մատակարարված ոռոգման ջրի, հասույթի և գանձումների վերաբերյալ ցուցանիշները ըստ ջրօգտագործող ընկերությունների:

Աղյուսակ 6.5

Հ/Հ	ՋՕԸ-ի անվանումը	Ջրտուքը դաշտում	Ջրտուքը դաշտում	Հասույթը հազ. դրամ	Գանձումը հազ. դրամ	%-ը

		ըստ բյուջեի հազ. մ^3	փաստացի հազ. մ^3			
1	Արտաշատ	38356.8	31153.3	280379.8	217430.0	77.5
2	Արարատ	33774.0	25416.2	228745.8	217130.0	94.9
3	Ազատ	18612.0	9150.0	82350.0	59500.0	72.3
4	Վեդի	36000.0	23312.0	209808.0	177587.0	84.6
5	Մխչյան	21190.0	15044.0	135396.0	47820.0	55.3
6	Մասիս	12400.0	12681.0	114129.0	88429.7	77.5
	Ընդամենը	160332.8	116756.5	1050808.6	834896.7	79.4

517. 2009թ. մարզում “Ազատ” և “Մխչյան” ջրօգտագործող ընկերությունների սպասարկած համայնքներում ոռոգման աշխատանքները բարելավելու նպատակով այս երկու ընկերությունները միավորվել են մեկ ընկերության մեջ, իսկ Այնթապ, Նորաբաց և Բարձրաշեն համայնքների որոշ հողատարածքներին ջուր է մատակարարելու “Երևան” ՋՕԸ-ն:

518. Մարզում աշխատանքներ են տարվում ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրումը հասցնելու 100 %-ի:

519. ՀՀ կառավարության և այլ դոնոր կազմակերպությունների ծրագրերով իրականացվել են բավականին աշխատանքները:

520. Ստորևը ներկայացվում են վերջին երկու տարիներին ոռոգման համակարգում կատարված աշխատանքները.

1) Մարզի 15 համայնքներում ներտնտեսային ցանցերը վերանորոգելու համար կատարվել է 450.26 մլն դրամի աշխատանքներ:
2) Մարզի 3 համայնքներում միջտնտեսային ջրատարների վերակառուցման համար կատարվել է 88.86 մլն դրամի աշխատանքներ:
3) Մարզի 3 համայնքներում միջտնտեսային ջրատարների կառուցման համար կատարվել է 74.03 մլն դրամի աշխատանքներ:
4) Մարզի 3 համայնքներում ոռոգման նպատակով հորատվել է 4 հատ խորքային հորեր:

521. Չնայած մարզում ոռոգման աշխատանքները բարելավելու նպատակով կատարված աշխատանքներին, ոռոգման համակարգում կան շատ անելիքներ:

522. Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

1) Գործող ոռոգման համակարգերի պահպանումը, շահագործումը և գույքագրումը:
2) Ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորվում, համակարգում ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգակիրների ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում:
3) Փոքր ջրամբարների կառուցում համայնքներում, ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

523. Ոռոգման համակարգի բարելավման համար նախատեսված աշխատանքները և ֆինանսավորման ծավալները ընդգրկված են հավելված 6-ում:

524*. **Անասնաբուծություն.*** Արարատի մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնա - մսամթերքի արտադրությունն է: Աղյուսակ 6.6-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը և անասնապահական մթերքի արտադրության համեմատական ծավալները:

Աղյուսակ 6.6 2009թ. հունվարի 1-ի դրությամբ

	Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը	*Այդ թվում կովեր*	*Խոզեր*	*Ոչխարներ և այծեր*	*Իրացված միս կենդանի քաշով հազ.տոննա*	*Կաթ հազ. տոն*	*Ձու մլն հատ*
2005	43041	19609	8833	74833	8.8	44.5	42.9
2006	42868	18980	14387	67998	16.5	43.0	43.0
2007	43393	18876	15905	69721	14.8	44.0	45.0
2008	43620	19048	13061	72006	13.0	45.5	35.5
2009	40681	17300	13441	68859	13.7	42.0	37.0

525. Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2009թ-ին 2005թ-ի համեմատ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը պակասել է շուրջ 2360 գլխով, կովերինը 2309, պակասել է նաև ոչխարների և այծերի գլխաքանակը՝ 2005թ-ին 74833-ից, 2009թ-ին կազմել է 68859-ը, նվազել է 5974 գլխով:

526. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազեցումը կապված է մարզը մայրաքաղաքին մոտ գտնվելու, ինչպես նաև անասնապահական մթերքների գների ցածր լինելու հետ, իսկ մանր եղջերավորների գլխաքանակի նվազումը կապված է 2009թ մեծ քանակությամբ ոչխարների և այծերի բարձր գներով արտահանման հետ, որը սակայն հետագայում, ըստ մեր վերլուծությունների, կխթանի մանր եղջերավոր անասունների գլխաքանակի ավելացմանը:

527. Անասնապահության կայուն զարգացման համար, չնայած որ մարզի կաթի և մսի արտադրությունը հանրապետության միջինից բարձր է, անհրաժեշտ է, որ ներկրվող կերերի գները լինեն մատչելի ֆերմերային տնտեսությունների համար, կազմակերպվի մսի արտահանում և կերերի էժան ներմուծում՝ նպատակահարմար է երկաթուղիով:

528. Նոր բարձրորակ սերմացուների ցանքը կազմակերպելուց հետո /գարի, ցորեն, եգիպտացորեն/ անհրաժեշտ է ունենալ սեփական կերարտադրություն: Կապված Աֆրիկյան ժանդախտ հիվանդության հետ 2008թ.-ին 2005թ-ի հետ համեմատած նվազել է խոզերի գլխաքանակը շուրջ 1300 գլխով, սակայն 2009թ-ից սկսած նկատվում է բարձրացման միտումներ:

529. Կայուն աճի միտում է ապահովվում նաև թռչնաբուծությունը: Կապված թռչնագրիպ հիվանդության հետ 2007թ-ին նկատվել է թռչունների թվաքանակի

պակասում, սակայն 2009թ. նորից սկսվել է այն զարգանալ: Վերջին 2 տարիներին լայն թափով զարգանում է նաև մեղվաբուծությունը, մեղվաընտանիքների քանակները 2007թ-ի նկատմամբ 2009թ-ին աճել է 3340-ով հասնելով 7857-ի:

530. Մարզի գյուղացիական տնտեսությունների մեջ առանձնանում են 234 ֆերմերային տնտեսություններ, որոնք ունեն տասը և ավելի կովեր, 100-ից ավել ոչխարներ և այծեր, 5 և ավելի խոզամայրեր, որից Արտաշատի տարածաշրջանում՝ 152-ը, Արարատի տարածաշրջանում՝ 51-ը և Մասիսի տարածաշրջանում՝ 31-ը:

531. Մարզում կաթի և մսի մթերման կետեր չլինելու պատճառով գյուղացիական տնտեսությունները իրենց արտադրանքը իրացնում են տեղական շուկաներում և մանր արտահանողների միջոցով, գլխաքանակի նվազման պատճառներից մեկն էլ նաև դա է:

532. Մարզում անասնակերի բազայի ապահովման հետ կապված խնդիրները չկան: Տարեկան կուտակվում է 170-180 հազ տոննա չոր խոտ: Որոշ խոշոր տնտեսությունների կողմից ուշադրություն է դարձվում նաև կերի արմատական պտուղների և եգիպտացորենի կանաչ կերի վրա, այդ նպատակով արտադրվում է շուրջ 1000 տոննա հյութալի կերեր: Մարզը ունենում է նաև չոր խոտի ավելցուկ , որը վաճառվում է ՀՀ տարբեր մարզերին:

533. ***Անասնաբուժություն.*** Վերջին 2007-2009թթ-ին մարզում ՀՀ կառավարության կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները:

534. 2008թ. մարզի համայնքներում պետական բյուջեի միջոցների հաշվին արհեստական եղանակով սերմնավորվել է շուրջ 2000 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ:

535. 2008թ. սկզբին մարզում կատարվել են պետ պատվերի շրջանակներում ընդգրկված խոշոր անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումներ: Դրա շնորհիվ համայնքներում պետ պատվերի մեջ ընդգրկված ինֆեկցիոն հիվանդությունների դեպքեր չեն արձանագրվել: Բուժ կանխարգելիչ միջոցառումները բոլոր տարածաշրջաններում ցանկալի արդյունք են տվել:

536. 2009թ. ախտորոշիչ հետազոտություններից բրոցելյոզ հիվանդության նկատմամբ ստուգման են ենթարկվել 30990 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ և 67668 մանր եղջերավոր անասուններ:

537. Սիբիրախտ հիվանդության նկատմամբ նախազգուշական պատվաստումների են ենթարկվել 64336 գլուխ խոշոր եղջերավոր 88035 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 19807 գլուխ խոզեր:

538. Դաբաղ հիվանդության նկատմամբ հակահամաճարակային միջոցառումների մեջ ընդգրկվել են 118420 գլուխ խոշոր եղջերավոր և 130415 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ:

539. Պետական բյուջեի միջոցներով 2008 թվականին «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի մարզային կենտրոնի շենքը ենթարկվել է հիմնանորոգման և գազիֆիկացվել է, իսկ «ՀԱՀԱԿ» ՊՈԱԿ-ի տարածաշրջանային Արարատի և

Մասիսի շենքերի հիմնանորոգումները նախատեսվել է ներառել «2011-2013թթ. ՄԺԾԾ-ում:

540. Մարզի համայնքները սպասարկող 78 անասնաբույժ մասնագետի ծառայությունը կենդանիների հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների ուղղությամբ առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով պետական միջոցների հաշվին 2007-2009թթ. ձեռք են բերվել և հատկացվել են 78 սառնարան և անասնաբուժական գործիքներ, ավտոմատ անասեղ ներարկիչներ, ինչպես նաև ախտահանիչ նյութեր:

541. Մարզում ներկայումս գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնը, որն իր լիազորությունների շրջանակում իրականացնում է սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության բնագավառում «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքների ու իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան վերահսկողություն:

542.«Հանրապետական անասնաբուժական պետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային աշխատակիցները սիստեմատիկ իրականացնում են ախտորոշիչ աշխատանքներ:

543. 2009թ. ընթացքում պետպատվերի շրջանակներում կատարվել է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պատվաստումներ, ինչպես նաև ախտորոշիչ բոլոր հետազոտությունները և մնացած անասնաբուժական և անասնաբուժասանիտարական միջոցառումները:

544. Ստեղծված իրավիճակում Արարատի մարզում առաջնահերթ խնդիր է համարվում անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ներառվող հիվանդությունների ցանկի ընդլայնումը, սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի բազայի ամրապնդումը: Մարզի համայնքներում գործող անասնաբույժերի ծառայության արդյունավետության ապահովումը պահանջում է ներդրումներ, որոնք կուղղվեն համայնքներում գործող անասնաբույժերի գործունեության համար անհրաժեշտ բազայի ստեղծմանը:

545. **Ձկնաբուծություն.**Արարատի մարզում 2009 թ. առկա է 110 ձկնաբուծական տնտեսություններ, որից գործում է 98 տնտեսություն: 374 հա տարածության վրա պահվում է կարպ, ծածան, պնդաճակատ և բելոմոր տեսակի ձկնատեսակներ: Քանի որ տվյալ ձկնատեսակների գները շուկայում համեմատաբար ցածր է, իսկ ձկան կերը բավականին բարձր ուստի ձկնաբուծությամբ զբաղվողները խուսափում են տվյալ ձկնատեսակների համար կեր գնելուց, ձկներին կերակրելու համար ստեղծվում են բնական աճի պայմաններ՝ պարբերաբար լճակները դատարկվում են հաջորդ տարվա համար կերի պաշար ստեղծելու նպատակով: Դա խոչընդոտ է հանդիսանում տվյալ ձկնատեսակների արտադրության ընդլայնմանը:

546. Մարզի հատկապես Մասիսի տարածաշրջանում վերջին տարիներին արագ ընթացքով զարգանում է լճակային տնտեսությունները շուրջ 76.6 հա

տարածության վրա 104 տնտեսվարող սուբյեկտների կողմից պահվում է իշխան և թառափ տեսակի ձկնատեսակներ, որոնց կողմից տարեկան արտադրվում է շուրջ 8000 տոննա ձուկ, որը հիմնականում արտահանվում է:

547. Սակայն ձկնաբուծական տնտեսությունների զարգացումը հատկապես Մասիսի տարածաշրջանում առաջ է բերում մի շարք դժվարություններ ոռոգման աշխատանքները կազմակերպելու համար: Ձկնաբուծության նպատակով ինքնաշատրվանող հորերի ավելացումը բերում է նրան, որ նախկինում հորատված հորերի մի մասը ցամաքում է առաջ բերելով մի շարք համայնքներում ոռոգման խնդիրներ /Խաչփառ, Հայանիստ, Հովտաշատ, Նիզամի/: Ձկնաբուծական լճակներից արտահոսող ջրերի քանակության աննախադեպ ավելացումը առաջացնում է շատ համայնքներում /Հովտաշատ, Հայանիստ, Սիփանիկ/ գերխոնավ հողերի ավելացում:

548. ***Գյուղատնտեսական մթերքների իրացումը և ապրանքայնության մակարդակը*** Գյուղատնտեսության կայուն զարգացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որով և բնութագրում է արտադրության ապրանքայնության մակարդակը:

549. Աղյուսակում 6.7-ում ներկայացված է մարզում վերջին տարիներին գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի աստիճանական աճը և Արարատի մարզի գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը:

Աղյուսակ 6.7

Գյուղ մթերքների անվանումը	*Ապրանքայնության մակարդակը %*			
	Արարատի մարզում			*ՀՀ –ում*
	2003	***2008***	***2009***	
Հացահատիկ	31.0	17.2	26.3	23
Կարտոֆիլ	67.9	77.1	73.4	42.3
Բանջարեղեն	76.8	88.7	78.2	75
Պտուղ	73.0	79.9	85.3	53.1
Խաղող	85.5	89.3	83.6	83.7
Բոստան	96.0	95.2	88.7	92.0
Միս	84.3	91.5	76.6	80.3
Կաթ	60.9	64.9	40.7	45.1
Ձու	48.6	37.1	30.5	44.2
Բուրդ	44.4	72.8	55.4	48.6
Մեղր	64.8	54.3	47.1	50.9

550.Աղյուսակից երևում է, որ Արարատի մարզի որոշ գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բարձր է հանրապետության միջինի համեմատ:

551. Գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի օգտագործումը և գյուղատնտեսների մասնագիտական կարողությունները. Արարատի մարզի գյուղատնտեսությունն ապահովված է անհրաժեշտ հմտություններ ունեցող

աշխատուժով: Միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին ընկնող աշխատող /16-62 տարեկան/ անդամների թիվը կազմում է 2.5: Սակայն համայնքներում առկա աշխատուժը գյուղատնտեսության ոլորտում լիարժեք չի օգտագործվում: Գյուղացիական տնտեսություններում աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման մարզային ցուցանիշը կազմում է 0.54-0.58:

552. Արարատի մարզի գյուղատնտեսության զարգացման գործում իր համեստ տեղն ու դերն ունի ԳԱՄԿ–ը, որի առաքելությունը կայանում է հիմնականում ֆերմերների շրջանում խորհրդատվական ծառայությունների մատուցումը: ԳԱՄԿ-ը տարեկան միջին հաշվով կազմակերպում է 210 ուսուցողական սեմինարներ, որոնց մասնակցում են 3500 ֆերմերներ, 4800 խորհրդատվական հանդիպումներ, որոնց մասնակիցների թիվը հասնում է 19500-ի: Ամեն տարի ԳԱՄԿ-ի կողմից /վերջին 2 տարիներին 2-3 անգամ կրճատվել է/ իրականացվում է 4-5 նոր տեխնոլոգիաների ներդրման, գնահատման, ցուցադրման ծրագրեր և մոտ 15 այլ ցուցադրական ծրագրեր: Յուրաքանչյուր եռամսյակը 2 անգամ հրապարակվում է ԳԱՄԿ-ի «Երկրագործ» տեղեկատվական պարբերականը, 1000 օրինակ տպաքանակով:

553. Մշակվում, հրատարակվում և բոլոր համայնքներին բաժանվում է 50 տեսակի բուկլետներ, 48 տեղեկատվական թերթիկներ՝ համապատասխանաբար 4000 և 7800 օրինակով:

554. **Գյուղատնտեսության վարկավորումը.** Գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրական գործընթացում ունեն խոշոր ներդրումների և շրջանառու միջոցների անհրաժեշտություն:

555. Վերջիններով ապահովվելու հիմնական ձևը վարկավորումն է, որն իրականացվում է առևտրային բանկերի միջոցով:

556.Մարզի գյուղատնտեսության ոլորտում վարկավորումն իրականացնում է “Ակբա-կրեդիտ Ագրիկոլ” բանկը: Վարկեր գյուղացիական տնտեսություններին տրվում են կարճատև և շատ բարձր տոկոսադրույքներով, որի հետևանքով գյուղացիական տնտեսությունները բնական աղետների պատճառով, կորցնելով բերքը, հաճախ ընկնում են ծանր կացության մեջ: “Ակբա-կրեդիտ Ագրիկոլ” բանկը վարկեր է տրամադրում Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածաշրջանների ստորաբաժանումների միջոցով: 2009թ. ընդհանուր առմամբ գյուղատնտեսության ոլորտում տրամադրվել է թվով 8400 վարկ՝ շուրջ 6 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

557*. **Մարզի գյուղատնտեսության ոլորտի ուժեղ և թույլ կողմերը***
Գյուղատնտեսության ոլորտի ուժեղ կողմերն են.

1) Գյուղատնտեսական հողային մեծ ռեսուրսների առկայությունը
2) Գյուղատնտեսության մասնագիտացումը պայմանավորող բնական պայմանների բազմազանությունը.
3) Խաղողագործության, պտղաբուծության, բանջար-բոստանային կուլտուրաների և ծխախոտի մշակության զարգացման հնարավորությունների առկայությունը.

4) Մսակաթնային անասնապահության և ձկնաբուծության զարգացման հնարավորությունը.

5) Թռչնի մսի և ձվի արտադրության հնարավորությունը /հաշվի առնելով Բարձրաշենի և Քաղցրաշենի թռչնաբուծական ֆաբրիկաների վերագործարկումը/.

6) Մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրության ծավալների ընդլայնման և արտադրության արդյունավետության բարձրացման ապահովումը:

558. Թույլ կողմերն են.

1) Հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը:

2) Գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների անկատարությունը, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը:

3) Արտադրության մասնատվածությունը /գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը/:

4) Գյուղատնտեսության մեջ օգտագործվող գյուղտեխնիկայի ռեսուրսների սակավության հետևանքով ագրոտեխնիկական և զոոտեխնիկական պահանջների ոչ լիարժեք կատարումը:

5) Գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների ոչ կատարյալ վիճակը և արտադրության պահանջներին համապատասխան դրանց ձևավորման չափազանց դանդաղ ընթացքը:

6) Ոռոգման միջտնտեսային և ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակը, դրանց անհամապատասխանությունը հողօգտագործման չափերին, ոռոգման ջրի մեծ կորուստների առկայությունը, դեռևս մեխանիկական ջրամատակարարման բարձր տեսակարար կշիռը, ջուր մատակարարող և օգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների անկատարությունը:

7) Տոհմային գործի կազմակերպման անբավարար վիճակը, տոհմային տնտեսությունների բացակայությունը, արհեստական սերմնավորման տակ գտնվող անասնագլխաքանակի չափազանց ցածր տեսակարար կշիռը:

8) Տեխնիկական ապահովածության ցածր մակարդակը, առկա տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, դրա հետևանքով մեքենայացված աշխատանքների բարձր ինքնարժեքը և դրանց համապատասխան բարձր սակագների ձևավորումը, համատեղ սկզբունքով տեխնիկայի օգտագործման կազմակերպական ձևերի կիրառման բացակայությունը:

9) Հողերի, մասնավորապես՝ գերխոնավ և ճահճացած, արոտների, խոտհարքների բարելավման ուղղությամբ մելիորատիվ և ջրարբիացման աշխատանքների բացակայությունը:

10) Գյուղատնտեսության սպասարկման ոլորտում կոոպերացիաների բացակայությունը:

11) Գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրական կարողությունների բացակայությունը:

12) Գյուղատնտեսական մեծածախ շուկաների բացակայությունը տարածաշրջաններում:

13) Գյուղատնտեսական մթերքների առևտրով զբաղվող կոոպերացիաների փոքր ձեռնարկությունների բացակայությունը և այդ հարցում պետական աջակցությունը:

14) Գյուղատնտեսական վարկավորման ծավալների անբավարարության և վարկային տոկոսադրույքների, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առկայությունը:

15) Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բացակայությունը:

16) Մարզում սահմանամերձ գյուղատնտեսական հողերի առկայությունը:

6.2. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները ռազմավարությունը և ֆինանսավորումը

559. Ծրագրի հիմնական նպատակն է Արարատի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

560. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆերմերների համար ներկայումս հրատապ է գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը: Այսօր ֆերմերներն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով, ինչպես նշվել է, կարևորվում է ժամանակակից պահանջներին համապատասխան մեծածախ շուկաների ձևավորվումը, որը կօգնի նաև հանրապետության մյուս մարզերի գյուղմթերք արտադրողներին:

561. Խորհրդատվական ծառայությունների բնագավառում Արարատի մարզի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է այդ ծառայությունների մատչելիության բարձրացումը, նրանց առավել նպատակային, հասցեական օգտագործումը:

562. Ծրագրի ռազմավարությունը ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը.

1)Մարզային ուսուցողական-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ:

2)Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսվարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի արմատավորման ուղղությամբ:

3)Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ:

4)Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսությանը վերաբերող մասնագիտական աշխատանքների մասին:

5)Մարզի Արտաշատի «Արտֆուդ» և Արարատի «Բորոդինո» պահածոների գործարանները անհրաժեշտ է, որ աշխատեն ամբողջ հզորությամբ, վերագործարկվի Մասիսի պահածոների գործարանը, համայնքներում ստեղծվեն փոքր ձեռնարկություններ պտղի, բանջարեղենի մթերման և վերամշակման համար:

6) Մարզի բոլոր տարածաշրջաններում անհրաժեշտ է վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող, ծխախոտի ֆերմետացիոն և բուսայուղերի արտադրության փոքր արտադրամասեր, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրամասեր:

563. Այս նպատակներին կարելի է հասնել՝ ընդլայնելով արտադրանքի իրացման հնարավորությունները, ակտիվորեն համագործակցելով գոյություն ունեցող և պոտենցիալ գնորդների հետ: Առաջնահերթությունը պետք է տրվի փոքր ձեռնարկությունների ստեղծմանը և ընդլայնմանը: Մարզում ՓՄՁ –ների գործունեության ակտիվացումը կնպաստի համապատասխան ենթաճյուղերի վերականգնմանը: Անհրաժեշտ է նաև բանջարաբոստանային կուլտուրաների և պտղաբուծության զարգացման հետ համատեղ նախապայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանության և իրացման համար: Այս առումով կարևորվում է մարզում սառնարանային տնտեսությունների ստեղծումը:

564. Գյուղատնտեսական հումքի վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրական ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով:

565. Ծրագրի իրագործման դեպքում կունենանք հետևյալ վերջնական արդյունքները՝

1) մարզի հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովում բուսաբուծական մթերքների՝ հատկապես տարբեր պտղատեսակների, խաղողի բանջարեղենի արտադրության ծավալների ավելացում արդյունավետության բարձրացում, մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացում, հատկապես պտղի և դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում,

2) բույսերի պաշտպանության /հատկապես պտղատու այգիներում/ պայքարի կենտրոնացված միջոցառումների իրականացում,

3) մարզում տոհմային տնտեսությունների ձևավորում, արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայման միջոցով կենդանիների տոհմային

հատկանիշների պահպանում և կատարելագործում, տոհմաբուծական ծառայությունների ձևավորում,

4) մարզի գյուղատնտեսության մասնագիտացմանը համապատասխան փոքր վերամշակող արտադրական կարողությունների ձևավորում,

5) գյուղատնտեսական տեխնիկայով մարզի ապահովվածության մակարդակի բարձրացում, տեխնիկայի համատեղ օգտագործման /կոոպերացման սկզբունքով/ կառույցների ձևավորում,

6) տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում,

7) խոշոր ապրանքային ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորում,

8) մարզում ապահովագրական համակարգի ձևավորման համար նախադրյալների ստեղծում,

9) զարգացած համայնքային ենթակառուցվածքների առկայություն, մասնավորապես ներհամայնքային և միջհամայնքային բարեկարգ ճանապարհների, հուսալի գործող կապի և հաղորդակցության ապահովում,

10) հետևողական և արդյունավետ կերպով կօգտագործվի մարզի հողային և մարդկային ռեսուրսները ինտեսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով,

11) կավելանա բուսաբուծական մթերքների, հատկապես խաղողի պտղի և բանջար-բոստանային կուլտուրաների արտադրության ծավալները, կբարձրանա ապրանքայնության մակարդակը կընդլայնվի խաղողի և պտղատու այգիների տարածքները և բանջար-բոստանային կուլտուրաների ցանքատարածությունները, որը հնարավորություն կտա ամեն տարի ավելացնել գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնապահության արտադրության ցուցանիշները տարեկան համապատասխանաբար 10% և 5%-ով:

12) կավելանա անասնապահական մթերքների, հատկապես մսի, կաթի արտադրության ծավալները, բարձրացնել անասնապահական մթերքների ապրանքայնությունը և արտադրության արդյունավետությունը

13) կընդլայնվի կերային բազան, կավելացնա բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալները, որը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործել խոտհարքները և արոտները,

14) կբարելավվի ոռոգման համակարգը, մասնավորապես կկառուցվի նոր և կվերանորոգվի առկա ջրագծերը, պոմպակայանները, ջրանցքները, կբարելավվի ոռոգման ներտնտեսային համակարգը և կվերանա ջրօգտագործման ասպարեզում առկա թերությունների ու բացթողումները,

15) անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով կբարձրացնա գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը և ապրանքայնության մակարդակը,

16) յուրաքանչյուր տարածաշրջանում կստեղծվի գյուղատնտեսական մթերքների իրացման մեծածախ շուկա, դրանք կահավորելով պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներով,

17) կիրականանա մասնագիտացված սերմնաբուծական տնտեսությունների ձևավորումը՝ մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բարձրորակ սերմացուների նկատմամբ բավարարելու նպատակով,

18) կապահովվի գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական ձեռնարկությունների համար,

19) հնարավորություն կստեղծվի նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության գիտակ մասնագետների ուժերը, խորհրդատվությունը, կբարելավվի նյութատեխնիկական սպասարկումը, մատչելիությունը,

20) կաջակցվի մարզում հողերի խոշորացման և գյուղացիական տնտեսությունների միավորման գործընթացին,

21) մարզի բնակչությանը սիստեմատիկաբար կիրազեկվի գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին

22) ագրոտեխնիկական, զոոտեխնիկական, անասնաբուժական պահանջների կատարման ապահովում,

23) գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում,

24) իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովում,

25) օրենսդրական դաշտի կատարելագործում:

566. Մարզի գյուղատնտեսության ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 6-ում:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն /օրենսդրական դաշտ, ինստիտուցիոնալ համակարգ/

567. Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտում քաղաքականությունն ու օրենսդրությունը հիմնականում ձևավորվել և կատարելագործվել են վերջին 15 տարիների ընթացքում: ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցության գործընթացներին, ստորագրել ու վավերացրել է բնապահպանական մի շարք միջազգային ու եվրոպական կոնվենցիաներ և դրանցից բխող արձանագրություններ:

568. Միջազգային համաձայնագրերի ու կոնվենցիաների շրջանակներում Հայաստանը նպատակ ունի կանխարգելել կամ սահմանափակել մարդու

առողջության ու շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը, վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը, մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները, պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները, չվերականգնվող բնական ռեսուրսների բնական և արդյունավետ օգտագործումը:

569. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները առկա են նաև Արարատի մարզում: Դրանք են հանքային ռեսուրսների արդյունավետ և շրջակա միջավայրի անվնաս օգտագործումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի, անապատացման կանխումը, անապատացմանը նպաստող գործոնների նվազեցումը, կանաչ տարածքների ավելացումը:

570. Վերջին տարիների ընթացքում, օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ, բավականին մեծ աշխատանք է կատարվել նշված խնդիրների լուծման համար, ընդունվել են ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտեր, իրականացվել ծրագրեր: Դրանցից են ՀՀ նոր անտառային օրենսգիրքը /2005թ/ և Հայաստանի անտառների ազգային ծրագիրը /2005թ/ "Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին" ՀՀ օրենքը /2005թ/, "Թափոնների մասին" ՀՀ օրենքը /2004թ/, "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենք /2006թ/, "Բնապահպանական վերահսկողության մասին" ՀՀ օրենքը /2005թ/, ,,Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին" ՀՀ օրենքը /2006թ/, "ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին" ՀՀ օրենքը /2006թ/, "Որսի և որսորդական տնտեսության վարման մասին" ՀՀ օրենքը /2007թ/ և այլն:

571. "Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին" ՀՀ նախագահի 1997թ մայիսի 6-ի 728 հրամանագրի 1.20 կետի համաձայն, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Արարատի մարզպետը՝

1) մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում:

2) մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին:

3) աջակցում է պետական արգելոցների, պետական արգելավայրերի, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը:

4) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

572. Բնագավառի խնդիրներով զբաղվելու իրավասություններ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ նոր օրենքի 32-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով կամ կառավարության որոշմամբ սահմանված կարգով վարում է համայնքի բնապահպանական կադաստրը, 45-րդ հոդվածի համաձայն բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, շրջակա միջավայրի պահպանության կազմակերպման պարտադիր, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները:

1) Հսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքներ ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման պահպանման միջոցառումները:

2) Ապահովում է հողերի պահպանությունը հողօտարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

573. Մարզում բնապահպանությանը հիմնականում առնչվում են հետևյալ կառուցվածքային միավորումները՝

1) ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը

2) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Արարատի տարածքային բաժինը

3) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման Արարատյան ջրավազանային կառավարման տարածքային բաժինը

4) բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

574. ***Հողեր, կենսաբազմազանություն, բնատարածքներ.*** Ըստ հողային հաշվեկշռի Հայաստանի Հանրապետությունում հատուկ պահպանվող տարածքների հողերը կազմում են 229.3 հազ. հա, որից մարզում 29136 հա, շուրջ 13% որը բարձր է Հանրապետության միջինից /10%/:

575. Վերջին տարիներին տեղաշարժ է կատարվել հողերի սեփականության իրավունքի շրջանակներում՝ պետությունը դադարել է հողի սեփականության խոշոր սուբյեկտ լինելուց, եթե նախկինում պետական սեփականություն էր հողերի 80%-ը, ապա այժմ այն ամբողջովին անցել է համայնքներին ձևավորելով հողի նկատմամբ սեփականության իրավունքի նոր խոշոր սուբյեկտներ՝ համայնքները: Նոր իրավիճակը պահանջում է լրացուցիչ գնահատել հողերի կայուն կառավարման գործող մեխանիզմներ:

576. Հողերի պահպանության հիմնախնդիրները խիստ արդիական են և պահանջում են նորարարական մոտեցումներ: Մարզի աշխարհագրական դիրքը նույնպես նորանոր խնդիրներ է առաջացնում հողերի, կանաչ տարածքների և կենսաբազմազանության պահպանման գործում: Հողաշերտի միայն բերրի շերտի պահպանությունը դեռևս անբավարար է հողը որպես բնական էկո համակարգի բաղադրիչ պահպանելու համար:

577. Մարզում հողերի պահպանության հիմնախնդիրներից կարևոր է համարվում հողերի դեգրադացիայի կանխումը: Հեղեղավտանգ, ջրածածկման ենթակա հողատարածքները, որոնք դեգրադացվում են հեշտությամբ և կորցնում վերականգնման հատկությունը իրենց հետ կորցնում են նաև տարածքի կենսաբազմազանությունը:

578. Հողերի դեգրադացիային և կենսաբազմազանության կորստին նպաստում են նաև վաղ գարնանը անասուններին լեռնային արոտներ բարձրացնելը՝ արոտավայրերի գերծանրաբեռնվածությունը, չհամակարգված արածեցումը և ոչ ճանապարհներով տեղափոխումը:

579. Մարզում գրանցված են 60 հանքավայրեր՝ մոտ 190 հա ընդհանուր տարածքով, որոնց կողմից հաճախ չեն պահպանվում հողօգտագործման հանքերի շահագործման կանոնները կամ շահագործում են հանքերը ոչ նոր տեխնոլոգիաներով /,,Փառ,, ՍՊԸ և ,,Նյոլիտա,, ՍՊԸ/:

580. Մարզի հողերի պահպանությանը մեծ վնաս է հասցնում Արարատի ցեմենտի գործարանը, որը նախապատրաստական այրման և աղացման փուլերում մթնոլորտ է արտանետում օգտագործված տեխնիկական հումքի 10-12%-ը՝ ցեմենտի փոշով պատելով հարակից համայնքների հողատարածքները /գ. Արարատ, Սուրենավան, Ավշար և Գոռավան/:

581. Շրջակա միջավայրին զգալի վնաս է հասցնում նաև Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարը՝ մթնոլորտ արտանետելով 0.083 տոննա տարեկան ծծմբային անհիդրիդ, 80 տոննա տարեկան ցիանաջրածին, 17.5 տոննա տարեկան ածխածնի օքսիդ, 1.28 տոննա տարեկան անօրգանական փոշի, 8.04 տոննա տարեկան հանքաքարի փոշի:

582. Շահագործման ընթացքում պոչամբարում վթարային իրավիճակ դեռևս չի արձանագրվել, սակայն դեպի գործարան ձգվող կոլեկտորում արձանագրվել են մի քանի վթարներ, որի հետևանքով այդ հողատարածքները դուրս են մնացել հետագա գյուղատնտեսական մշակությունից: Պոչամբարի կառուցվածքի վիճակը կայուն պահպանելու համար օգտագործվում են վերահսկելու համար նախատեսված ստուգիչ և չափիչ սարքեր, կատարվում է տեսչական հսկողություն և ներկայացվում է հաշվետվություն:

583. Մարզում կենսաբազմազանությունը պահպանող հատուկ տարածքները 4-ն են՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Գոռավանի ավազուտներ», «Գիլան», «Խոր Վիրապ» պետական արգելավայրեր:

584. ***«Խոսրովի անտառ» պետական արգելոց***- տարածքը կազմում է 23095.5 հա, որի ֆլորան պարունակում է 1686 բուսատեսակ որը կազմում է Հանրապետության ֆլորայի մոտ 50% , դրանցից 146 գրանցված են

Հայաստանի Հանրապետության և նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում: Պահպանված են մշակաբույսերի վայրի ցեղակիցները, պտղատուներից վայրի տանձենին, խնձորենին, սալորենին, բալենին, արոսենին, սզնին, նշենին և այլն, հացազգիներից՝ «Վավիլովի» աշորան: Արգելոցում պահպանվում են գիհու և կաղնու նոսր անտառները, լեռնային քսերոֆիտները, լեռնատափաստանային և օշինդրային կիսաանապատային ֆորմացիաները, որոնք հետագայում կարող են հարուստ բազա դառնալ կլիմայի փոփոխության դեպքում նոր չորադիմացկուն սորտեր ստանալու համար:

585. Պետական արգելոցի տարածքում կաթնասունները ներկայացված են 55 տեսակով, որոնցից են անդրկովկասյան գորշ արջը, վարազը, լայնականջ ոզնին, հայկական մուֆլոնը, բելուարյան այծը, լուսանը, գայլը, աղվեսը և այլն: Հանդիպում են թռչունների՝ 142, սողունների՝ 33 ձկների 5 և մի շարք երկկենցաղների տեսակներ:

586. ***«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր*** - տարածքը կազմում է 95.99 հա, գտնվում է Վեդի գետի ձախ ափում Խոսրովի արգելոցի հատվածներից մեկի անմիջական հարևանությամբ: Պահպանության օբյեկտներն են ավազային անապատին բնորոշ կենդանաբանական աշխարհը և տիպիկ պսամոֆիլ բուսականությունը:

587. ***«Խոր Վիրապ» պետական արգելավայր*** - տարածքը՝ 50.28 հա է, գտնվում է պատմական Արտաշատի հարևանությամբ: Կան արժեքավոր ջրային բույսերի տեսակներ:

588. ***«Գիլան» պետական արգելավայր*** - ստեղծվել է ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 24-ի որոշմամբ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի կազմում, նրան ամրացնելով «Բայբուրդ» կոչված տեղամասը – 118հա տարածքով: Պետական արգելավայրը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավ- արևմտյան մասի նախալեռնային գոտում՝ ծովի մակերևույթից 1330-1400մ բարձրության վրա: Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը կիսաանապատային և նախալեռնային էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի, պատմամշակութային արժեքների ամբողջության պահպանման, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովումն է:

589. Մարզում կան 11 բնության հուշարձաններ, որոնք գրանցված են 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում՝

1) «Յախշուն» քարանձավ /Վեդի քաղաքից 50կմ հյուսիս արևելք/,
2) «Դաշտաքար» քարանձավ /Դաշտաքար գյուղից 02 կմ հարավ/,
3) «Խոր հոր»անձավային համակարգ /Շաղափ գյուղից 3կմ հյուսիս արևելք/,
4) «Անանուն» /Տիգրանաշեն – Պ.Սևակ գյուղ տանող ճանապարհի 17կմ-ի վրա/,
5) «Անանուն» /Երևան- Մեղրի խճուղու 81կմ-ի վրա/,
6) «Անանուն» /Ուրցաձոր գյուղից 4.5կմ դեպի հյուսիս Վեդի գետի աջ ափին/,
7) «Հորթունի բրածո ֆլորա» /Զանգակատուն գյուղից 8կմ հյուսիս արևելք/,
8) «Ջերմանիսի բրածո ֆլորա» /Ռանչպար գյուղից 4կմ հյուսիս արևելք/,

9) «Վեդի գետի ավազանի բրածո ֆլորա» /Վեդի գետի ավազան Ուրցաձոր գյուղից 1.5 կմ հյուսիս արևելք/,

10) Ջրաերկրաբանական հուշարձան՝ Արարատի հանքային ջուր /Վեդի քաղաքից 2.5կմ հյուսիս արևելք Բորոտ աղբյուր գետի կիրճում/,

11) Կենսաբանական հուշարձաններ ՝ Աղակալած ճահճուտ /Արարատ քաղաք հանքային աղբյուրների մոտ ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա/:

590. **Ջրային ավազան.** Մարզի ջրային ռեսուրսները հիմնականում ձևավորվում են մարզի տարածքով հոսող 4 գետերով, 2 ջրամբարներով: Ջրային ռեսուրսները օգտագործվում են որպես ոռոգման, հիդրոէներգիայի և ջրամատակարարման աղբյուր: Այդ պատճառով կլիմայի հնարավոր փոփոխության դեպքում նրանց խոցելիության գնահատումը և անհրաժեշտ հարմարվողական միջոցառումների իրականացումը ունի կարևոր նշանակություն: Մարզի գետերի համար բնորոշ է տարեկան և բազմամյա հոսք, բաշխման անհավասարաչափություն, որը պայմանավորված է հիմնականում խառը՝ ձյունա-անձրևա-գրունտային սնուցմամբ:

591. Մարզի տարածքում սկիզբ են առնում երկու գետեր՝

592. Վեդի գետը , որի երկարությունը՝ 58կմ է, ջրհավաք տարածքը՝ 998կմ^2 , հոսքը՝ տարեկան 64 մլն մ^3:

593. Ազատ գետի երկարությունը՝ 56 կմ է, ջրհավաք տարածքը՝ 952կմ^2 , հոսքը՝ 217մլն մ^3 /տարեկան, որի վրա կառուցված է ,,Ազատ,, ջրամբարը՝ 70մլն մ^3 տարողությամբ:

594. Մարզի սահմանով է հոսում Արաքս գետը, նրա մեջ թափվող Հրազդան և Սև ջուրը գետերը: Կան բազմաթիվ դրենաժային ցանցեր և խորքային հորեր: Եթե մարզի բարձրադիր վայրերում առաջանում է ջրի խնդիր՝ հիմնականում ոռոգման պատճառով, ապա արաքսամերձ հատվածում կա ջրի ավելցուկ, որը զգալի վնաս է հասցնում տնտեսություններին: Ազատ գետի ջրի օ.գ.գ.-ն մեծացնում է Ազատի ջրամբարը: Վեդի գետի օ.գ.գ.-ն շատ ցածր է՝ ջրի մեծ մասը ձմռանը և գարնանը տեղափոխվում է Արաքս գետ, իսկ ամռանը չի բավարարում նույնիսկ մոտիկ համայնքների հողերը ոռոգելուն: Խիստ գերակա է համարվում Վեդի գետի վրա ջրամբարի կառուցումը: Հաշվի առնելով ջրի սակավությունը մարզում կարելի է օգտագործել Ազատ գետի ջուրը՝ նկատի ունենալով ջրի բաղադրությունը և դիրքը, սակայն ինֆիլտրացիոն կայանի բացակայությունը հնարավորություն չի տալիս դրա օգտագործմանը:

595. Բավականին վատ իրավիճակում է մարզի ջրային ավազանը հատկապես Մասիսի տարածաշրջանում: Երևանից և հարակից համայնքներից հոսող կեղտաջրերը իրենց հետ բերելով վտանգավոր նյութեր՝ սոլարայուղ, տեխնիկական յուղ, կիր, լցվում են դրենաժները՝ աղտոտելով շրջապատը, բարձրացնում են ջրի մակարդակը և դանդաղացնելով նրա հոսքը, առաջացնում են ճահճուտներ, որոնք խախտելով հողի կառուցվածքը առաջացնում են

երկրորդական աղակալում: Դրա հետևանքով վերջին տարիների ընթացքում վնասվել է շուրջ 8000 հա տարածք:

596. Շրջակա միջավայրին և ջրային ավազանին մեծ վնաս են հասցվում նաև օրեցօր ավելացող ձկնաբուծական տնտեսությունները, եթե 2008թ. մարզում ձկնաբուծական տնտեսությունների թիվը 99 էր, որից գործող՝ 85-ը /առանց թույլտվության 8-ը/, ապա 2009թ. տնտեսությունների թիվը 110 է , գործող՝ 99-ը /առանց թույլտվության 10/: Միայն ձկնաբուծության նպատակով անցած տարիների ընթացքում հորատվել է 114 ինքնաշատրվանող հոր: Եթե յուրաքանչյուր հոր վայրկյանում 40լ ջուր դուրս մղի, ապա 1վ-ի ընթացքում դուրս կմղվի 4560լ ջուր, որը ճահճացնելով շրջապատը հոսում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որի հետևանքով բարձրադիր վայրերում իջնում է ստորգետնյա ջրերի մակարդակը:

597. Մարզում առկա խորքային հորերի փաստացի վիճակը և ջրօգտագործման օրինականությունը ստուգելու վերաբերյալ 2009թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության կառավարության, բնապահպանության նախարարության, Արարատի մարզպետարանի աշխատակիցների կողմից մարզում կատարվել են ուսումնասիրություններ և գույքագրում:

598. Ջրային ավազանին մեծ վնաս են հասցնում նաև 4 քաղաքների, խոշոր մթերող կազմակերպությունների արտադրական կեղտաջրերը, նաև Ջոդի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարը, որը հարակից է Արարատի ձկնալճակային տնտեսություններին: Նոր պոչամբարի շինարարական աշխատանքները սկսվել և ավարտվել է 1997թ., նախագծային ծավալը 2.4 մլն մ^3 է, զբաղեցրած տարածքը 33.0հա և ըստ նորմատիվային փաստաթղթերի՝ սանիտարա-պաշտպանական գոտին սահմանված է 300մ պոչամբարի սահմանագծից: Նոր պոչամբարը տեղակայված է Արաքս գետի ձախափնյա հարթավայրում և կից է Արարատի նախկին ոսկու կորզման պոչամբարին: Հեռավորությունը գործարանից ուղիղ գծով կազմում է 6 կմ, տղմալիցքային տիպի է, 3մ բարձրությամբ հողային դամբայի տեսքով:

599. Հողային պատվարի տակ նախատեսվել է դրենաժային համակարգ, որի միջոցով ֆիլտրացված ջրերը հավաքվում են և ընդհանուր կոլեկտորով դուրս է բերվում ներքին բյեֆ և պոմպերի միջոցով ետ է վերադարձվում գործարան: Պոչամբարի կից տարածքներում բնակավայրեր չկան հետևաբար մարդկային զանգվածային կուտակումներ բացառվում են: Շահագործման ընթացքում նրան կից տարածքը ներկայումս սեփականության իրավունքով հանձնվել է անհատ ձեռներեցներին, որոնք այդ տարածքում ձկան աճեցման համար կառուցել են լճակներ, որն անթույլատրելի է: Մնացած ձկնարդյունաբերական լճակները պոչամբարից գտնվում են 1000մ –ից ավել հեռավորության վրա և չեն մտնում հնարավոր վթարից ջրածածկվող տարածքների մեջ: Պոչամբարի տարածքը բնութագրվում է մեծ քանակի ներգետնյա ջրերի առկայությամբ, որոնց մակարդակը տատանվում է 0-ից մինչև 3 մ: Նշված գործոնների ազդեցությունը մեղմացնելու նպատակով

կառավարությունը ամեն տարի շարունակական աշխատանքներ է կատարում դրենաժների մաքրման գործում:

600. Մարզի ջրային ավազանի բարվոք վիճակը պահպանելու համար կարևորվում է դրենաժային ցանցի վերականգնումը և մաքրումը: Դրենաժային ցանցի վերականգնման և մաքրման նպատակն է կարգավորել գրունտային ջրերի մակարդակը, կանխել հողատարածքների գերխոնավացումը, աղակալումը և ճահճակալումը, բարելավել այդ տարածքներում հողի որակական հատկանիշները և բարձրացնել գյուղմթերքների արտադրողականությունը: Վերջին տարիներին մարզի դրենաժային ցանցի ոչ բավարար աշխատանքի և չնորմավորված ոռոգման հետևանքով բարձրացել է հանքայնացված գրունտային ջրերի մակարդակը: Մարզում կոլեկտորա-դրենաժային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտավորապես 700 կմ: Արարատի մարզում դրենաժակոլեկտորային համակարգի մաքրումը իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Մելորացիա» ՓԲԸ կազմակերպությունը:

601. Մարզում 2007-2009թթ ընթացքում մաքրվել է շուրջ 600 կմ դրենաժներ, որի արդյունքում որոշ չափով մեծացել է մշակաբույսերի բերքատվությունը, ընդ որում.

1) 2007թ. մարզի 27 համայնքներում իրականացվել է 196կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում՝ 188.5 մլն դրամ արժողությամբ,
2) 2008թ. 18 համայնքներում 215 կմ դրենաժային ցանցի մաքրում՝ 214մլն դրամ արժողությամբ,
3) 2009թ. 13 համայնքներում՝ 170կմ մաքրման աշխատանքներ՝ 165մլն դրամ արժողությամբ: Կատարվող աշխատանքները համաձայնեցվում են համայնքի ղեկավարի և մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ,

602. 2010- 2011թթ. «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ-Հայաստան ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել կոլեկտորա-դրենաժային ցանցի մաքրման և վերականգնման աշխատանքներ:

603. Աշխատանքների իրականացման փուլում առաջանում են տեղային բնույթի բնապահպանական ազդեցություններ կապված դրենաժային ցանցի վերականգման աշխատանքների իրականացման հետ: Այդ ազդեցությունը առաջացնում է փորված, հանված հողի, տիղմի և շինարարական թափոնների խոշոր կուտակումների հեռացման հետ: Առաջանում է լանդշաֆտի դեգրադացիա, վառելիքի և քսայուղերի հնարավոր արտահոսք, ժամանակավոր շինհրապարակների կազմակերպում, օդի ժամանակավոր աղտոտում, փորման աշխատանքների ժամանակ բնակչությանը, բուսական և կենդանական աշխարհին անհանգստություն պատճառող աղմուկի և վիբրացիայի առաջացում: Աշխատանքները ավարտելուց տեղանքը, հաճախ, ոչ ճիշտ է վերականգնվում և դրենաժային ցանցը ոչ պատշաճ ձևով է շահագործվում և սպասարկում, որը

պատճառ է հանդիսանում տարածքների գերխոնավացմանը, ճահճացմանը և աղակալմանը:

604. Վերջին տարիներին բավականին աշխատանքներ են կատարվում սելավատարների և գետերի մաքրման և ափամերձ հատվածների ամրացման ուղղությամբ՝ տարեկան ավելի քան 350 մլն դրամի:

605. **Օդային ավազան.** Մարզի օդային ավազանը կեղտոտվում է մարզին մոտ գտնվող «Նաիրիտ» գործարանի, ինչպես նաև մարզի տարածքում տարեցտարի ավելացող տրանսպորտային միջոցների արտանետումներից, կենցաղային և արտադրական կեղտաջրերից: Շրջակա միջավայրի համար հատկապես վտանգավոր են Արարատի ցեմենտի գործարանի ցեմենտի և ազբոշիֆերի արտադրությունից մթնոլորտ արտանետվող CaO, Al_2O_3, SO_2 նյութերը և Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչամբարից մթնոլորտ արտանետված վնասակար էլեմենտները: Պոչամբարի կառուցվածքի վիճակը վերահսկելու համար տեղադրված են ստուգիչ և չափիչ սարքեր:

606. Օդային ավազանին մեծ վնաս են հասցնում նաև քարի հանքավայրերը և քարի մշակման արտադրամասերը, որոնք մեծ քանակությամբ հանքային փոշի են արտանետում մթնոլորտ՝ հիմնական պատճառներից մեկը հին տեխնոլոգիաների կիրառումն է: Եթե 2008թ. մարզում գրանցված էր 57 հանքավայր և աշխատում էր 28-ը, ապա 2009թ. գրանցվել էր 60 հանքավայր, սակայն տնտեսական ճգնաժամի հետևանքով աշխատել է միայն 23-ը: Բնապահպանական օրենսդրության խախտման համար չեղյալ է համարվել “Փառո” և “Սամվել և Արտյոմ” ՍՊԸ-ների հավաստագրերը :

607. Մարզում գրանցված, սակայն չաշխատող քարի մշակման արտադրամասերի և հանքավայրերի չաշխատելու հիմնական պատճառներն են.

1) Ֆինանսական դժվարությունները.
2) Նոր ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու հնարավորություններ չունենալը:
3) Այս ոլորտին առնչվող օրենսդրական դաշտի թերի լինելը:

7.2. Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը

608. Հաշվի առնելով Արարատի մարզի բնապահպանության ոլորտում առկա հիմնախնդիրները նախատեսվում է Արարատի մարզի 2011-2014թթ. զարգացման ծրագրում իրականացնել հետևյալ միջոցառումները:

1) Մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունում և իրականացում՝ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում՝ Արարատի Ցեմենտի գործարանի և Զոդի ոսկու կորզիչ ֆաբրիկայի հարակից տարածքում անտառ հիմնելու ծրագրի ընդունում:
2) Տնտեսագիտորեն հիմնավորված բնօգտագործման վճարների համակարգի կիրառում և հավաքված գումարների օգտագործում կանաչապատման նպատակով:

3) Մարզում հիմնել տեղեկատվական կենտրոն /"Օրհուս"/, որը հնարավորություն կստեղծի բոլոր ցանկացողներին տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի վերաբերյալ:

4) "Խոսրովի Անտառ" պետական արգելոցում հողատարածքների սեփականության վերացում, որը կխանգարի որսագողությանը, անասնատերերին և ապօրինի մուտք գործողներին:

5) Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ուժեղացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում, համայնքներում շրջակա միջավայրի պահպանության հասարակական խմբերի ստեղծում, դաշտապաշտպան անտառաշերտերի վերականգնում: Բոլոր ճանապարհների երկայնքով անտառաշերտերի հիմնում:

6) Արոտավայրերի կառավարման պլանների մշակում /վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ/:

7) Մարզում կանաչ գոտիների ընդլայնում /անտառի հիմնում, որը կունենա ճանաչողական, ուսուցողական և դաստիարակչական նշանակություն, հետագայում ռեկրեցիոն գոտի ստեղծելու նպատակով/:

8) Արտեզյան ջրերի օգտագործման և շահագործման տնտեսապես հիմնավորված չափաբաժինների և ռեժիմների մշակում և ներդրում:

9) Բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնում, ցանկացած ծրագիր իրականացնելիս, որպես նորմ ունենալ կանաչ տարածքների հիմնումը՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերում առաջնությունը տալ կանաչ տարածքների ստեղծմանը:

10) Աղակալման, ճահճակալման, անապատացման դեմ պայքարելու և կրկին գյուղատնտեսական շրջանառության մեջ դնելու նպատակով դրենաժների մաքրման աշխատանքների ընդլայնում:

11) Մարզի քաղաքներում կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ:

12) Համայնքների միությունների հիմքի վրա ստեղծել թափոնների առաջնային վերամշակման գործարաններ:

13) Համայնքներում կազմակերպել արդյունաբերական և կենցաղային թափոնների առանձնացված հավաքում:

14) Ազատի ջրամբարի հիման վրա ինֆիլտրացիոն կայանի կառուցում:

15) Վեդի գետի վրա ջրամբարի կառուցում:

16) Մարզի տարածքի ընդերքօգտագործման նպատակով օգտակար հանածոների հանքավայրերի, հետախուզվող տարածքների տեղադրվածության, տրամադրված տարածքների վերաբերյալ քարտեզագրման նյութերի կազմում:

8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

8.1. Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն

609. Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է:

610. ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության վիճակագրական տվյալների համաձայն, վերջին տարիներին, մինչև 2008թ. համաշխարհային զբոսաշրջային այցելուների միջին տարեկան աճը կազմել է 4-4.5 %, 2007թ. այն անցել է 6 %-ի սահմանագիծը: 2008թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում համաշխարհային զբոսաշրջության այցելուների այցի տեմպը 2007թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 3.7 %, իսկ տարեկան տեմպի կանխատեսումը 2-3% է, 2009թ. ընթացքում կանխատեսվում է համաշխարհային զբոսաշրջային այցելությունների մինչև 2% աճ:

611. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը:

612. Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելուների թիվը կազմել է 402000՝ 2007թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 10.1%՝ 2009թ. այն կազմելու է 700000:

613. Արարատի մարզում ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի Հանրապետության զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը զուգընթաց կարևորվում է Արարատի մարզում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման ապահովումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա:

614. **Արարատի մարզի զբոսաշրջային ներուժի նկարագրությունը** Մարզի տարածքով անցնում է Վրաստան- Հայաստան-Իրան միջպետական տուրիստական երթուղին, որը ներկայումս մեծ հետաքրքրություն է առաջացնում Եվրոպական տուրիստական շուկայում: Արարատի մարզը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի հայտնվել է այդ երթուղում և այն նպաստավոր է միջպետական և միջմարզային տուրիզմ կազմակերպելու համար:

615. Արարատի մարզը՝ 2.1 հազար քառ. կմ տարածքով, ունի հետաքրքիր ռելիեֆային մակերևույթ, այն բաժանված է 2 հավասար մասերի՝ լեռնային և հարթավայրային: Հարթավայրային մասը կազմված է Արաքս, Ազատ և Վեդի գետի գետաբերուկներից: Մարզի տարածքի 60 %-ը գտնվում է 1000մ-ից 2000մ բարձրությունների վրա: Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների հարավ և

հարավ - արևմտյան լեռնաբազուկները: Գեղամա լեռներին միակցված է մեկ այլ բազուկ Երանոսը, որը ձգվում է Ազատ գետի ձախ ափով: Երանոսի, Ուրծի, Դահնակի և Գեղամա լեռնաշղթաները հարմար են լեռնագնացության, ձիերով արշավների և բնական տուրիզմի համար:

616. Արարատի մարզը գտնվում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան հայոց, Ուրծ և Արած գավառների տարածքում և ունի հարուստ պատմական անցյալ: Այստեղ են գտնվում հին Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքների ավերակները: Մարզի տարածքում պահպանվել են ամրոցներ, եկեղեցիներ, մատուռներ, դամբարանադաշտեր, քարայր-կացարաններ հազարավոր խաչքարեր: Մարզի տարածքում են գտնվում պետական գործիչ Վազգեն Սարգսյանի և մեծանուն գրող Պարույր Սևակի տուն թանգարանները, որոնք սակայն ներկայումս հետաքրքրություն են ներկայացնում հիմնականում ներքին զբոսաշրջության համար:

617. Պատմահուշարձանների առատությունը, որն ունի տուրիստներին հետաքրքրելու որոշակի ներուժ, կարիք ունի վերանորոգման և ամենակարևորը գովազդի:

618. Մարզում կազմակերպվում են մի շարք ազգային տոնակատարություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում տուրիզմի տեսանկյունից՝ գարնանը տոնում են Տերն Ընդ Առաջ և Զատիկ տոնակատարությունները, ամռանը՝ «Ծաղկի տոն»-ը և «Վարդավառ»-ը, աշնանը՝ «Խաղողօրհնեք»-ի և «Բերքի տոն» տոնակատարությունները, որոնք կարող են հետաքրքրել արտերկրյա տուրիստներին, հատկապես հայկական սփյուռքի այն ներկայացուցիչներին, որոնք այցելում են Հայաստան՝ իրենց պատմական հայրենիքի պատմությանը և մշակույթին ծանոթանալու համար:

619. Արարատի մարզում բնական տեսարժան վայրերի և պատմամշակութային հուշարձանների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն «Խոր Վիրապ» պատմաճարտարապետական համալիրը, «Խոսրովի անտառ» արգելոցը, Արաքս գետին հարող ջրաճահճային տարածքները, «Գոռավանի ավազներ» արգելավայրը:

620. ***«Խոր Վիրապ» վանական համալիր*** ___«Խոր Վիրապ» պատմաճարտարապետական համալիրը 17-րդ դարի վանք - ամրոցային համալիր է, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվել հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի անվան հետ: Այս տարածքում է գտնվել Արտաշատ քաղաքը, իսկ Խոր Վիրապի բլուրների վրա՝ միջնաբերդը: Վիրապն օձերով, թունավոր միջատներով լի մի խոր փոս էր, ուր գցում էին դատապարտյալին: Ըստ Ագաթանգեղոսի և մյուս պատմիչների՝ Գրիգոր Լուսավորիչը 13 տարի Խոր Վիրապում է կրել իր չարչարանքները: V-րդ դարում այս վայրում հիմնվել է վանք և հաստատվել միաբանություն, իսկ Ներսես Շինարար կաթողիկոսը Ս.Վիրապի վրա նոր եկեղեցի է հիմնել: Խոր Վիրապ եկեղեցին XIII դ. եղել է դպրության կենտրոն, ունեցել է վարդապետատուն՝ մոտ 40 աշակերտով, ուսուցչապետեր են եղել Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին:

621. «Խոր Վիրապ» պատմաճարտարապետական համալիրի հարակից ջրաճահճային տարածքը տուրիզմի պլանավորման համար առաջնակարգ լանդշաֆտային օբյեկտ է և հարմար է էկոտուրիզմի զարգացման համար:

622. ***«Խոսրովի անտառ» պետական արգելոց*** «Խոսրովի անտառ» պետական արգելոցը ձևավորվել է 1958թ.՝ իր յուրահատուկ ֆլորայի և ֆաունայի պահպանության նպատակով: Զբաղեցնում է շուրջ 29 հազ. հա տարածք: Այստեղ է գտնվում Արարատի մարզի ամենաբարձր գագաթը:

623. Արգելոցի տարածքում հաշվառված են 1800 տեսակի բարձրակարգ բույսեր, ձկների՝ 7, փափկամորթների՝ 60, սողունների՝ 30, թռչունների՝ 130, կաթնասունների՝ 40 տեսակներ: Այստեղ բուսական շատ համակեցություններ եզակի են աշխարհում: Տարածքի 18%-ը անտառածածկ է: Կենդանական աշխարհի բնորոշ ներկայացուցիչներն են բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, անդրկովկասյան գորշ արջը, հովազը: Արգելոցը ունի հարուստ թռչնաշխարհ՝ կասպիական ուլար, սպիտակագլուխ և սև անգղ, բերկուտ, կաքավ: Գետերում կա կարմրախայտ: Նախալեռնային մասում տարածված են օշինդրը, ուխտափուշը, կապառը, անթառամ ծաղիկները, աճում են կաղնի, բոխի: Լեռնային տարածքներում լայն տարածում ունեն գիհու նոսր անտառները, որպես յուրօրինակ լանդշաֆտներ, դրանք ունեն բնապահպանական մեծ նշանակություն: Վեդի գետի վտակներից Խոսրովը հոսում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքով և ունի գեղատեսիլ հովիտ:«Խոսրովի անտառ» պետական արգելոցում են գտնվում Աղջոց և Հավուց թառ վանական համալիրները:

624. «Խոսրովի անտառ» պետական արգելոցը համարվում է արևելյան փոքր Կովկասի առաջնահերթ պահպանվող տարածքներից մեկը:

625. Ազատ և Վեդի գետերի կիրճերում կարելի է առանձին բարձրունքներից իրականացնել թռչունների դիտարկումներ, կենսաբազմազանության ուսումնասիրության շրջանակներում գիտական տուրիզմ:

626*.* ***Արաքս գետին հարող ջրաճահճային տարածքներ*** Արաքսի ողողատների ճահճուտները ներկայացված են ջրասեր և ջրաաղասեր բույսերով՝ վայրի անանուխ, որնախոտ, լայն տարածում ունեն եղեգնուտները: Ջրաճահճային այս տարածքները համարվում են Ռամսար տարածքներ /«Ռամսարի խոնավ տարածքների մասին» կոնվենցիա/ և ունեն բարձր արժեք, որպես էկոհամակարգեր, որոնք համապատասխան ամբողջական փաթեթի առաջարկման դեպքում կարող են հանդիսանալ բարձրարժեք տուրիստական ռեսուրսներ՝ էկոտուրիզմի կազմակերպման և զարգացման համար:

627. Արարատի մարզում առկա բնական տեսարժան վայրերը և պատմամշակութային հուշարձանների առկայությունը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու տուրիզմի հետևյալ ձևերը

1) էկոտուրիզմ /Խոր Վիրապ – ջրաճահճային տարածքներ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց/,
2) գիտական տուրիզմ /ջրաճահճային տարածքներ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց/,
3) բնական տուրիզմ /Գեղամա, Ուրծ, Դահնակ և Երանոս լեռներ/,

4) պատմամշակութային /Խոր Վիրապ, Արտաշատ և Դվին քաղաքատեղիներ, Աղջոց և Հավուց թառ վանական համալիրներ, պատմական այլ հուշարձաններ/,

5) գյուղատնտեսական :

628. ***Մարզում զբոսաշրջության զարգացման խոչընդոտները.*** Մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են.

1) զբոսաշրջային տնտեսության բացակայությունը,
2) գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը,
3) զբոսաշրջության կտրվածքով մարզի վերաբերյալ գովազդային նյութերի սակավությունը,
4) մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների բացակայությունը:

629. Մարզում տուրիզմը թերևս թույլ է զարգացած, պատճառը տուրիզմի հիմնական ենթակառուցվածքների բացակայությունն է և մարզի տուրիստական ռեսուրսների վատ ուսումնասիրությունը: Անհրաժեշտ է մշակել մարզի տուրիստական պոտենցիալը ներկայացնող տուր-փաթեթներ և դրանք առաջադրել տուրիստական միջազգային կազմակերպություններին:

630. Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը հետաքրքիր առավելություն է ներկայացնում գյուղական տուրիզմի զարգացման համար: Էկոլոգիապես մաքուր և համային բարձր արժեքներով օժտված գյուղատնտեսական մթերքները առանձնակի նշանակություն ունեն տուրիզմի տեսանկյունից, որը կարող է դառնալ տուրիստների սպասարկման կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը:

631. Տուրիզմի զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում ինչպես համապատասխան տարածքներում հյուրանոցային հարմարությունների և հյուրընկալական տների սակավությունը /մարզում գործում են ընդամենը 4 հյուրանոցներ/ կենցաղային ոչ բավարար պայմաններով, այնպես էլ ճանապարհների անբարեկարգ վիճակն ու տրանսպորտի բացակայությունը: Իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ ճանապարհների վիճակը վատ է հատկապես նախալեռնային և լեռնային համայնքներում, որտեղ կենտրոնացած են պատմամշակութային հուշարձանների մեծ մասը:

632. Մարզում չկան տուրիզմի հիմնական ենթակառուցվածքներ՝ տուր-օպերատորներ և տուր-գործակալություններ: Վեդի քաղաքում գործում է մարզում միակ տուրիստական «Ասս-կլուբ-սերվիս» կազմակերպությունը, որն իրականացնում է ձիավարության համար ձիերի վարձույթ, լեռնային ուղեկցողների ծառայությունների մատուցում:

8.2 . Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարություն

633. Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից է զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը, որի հեռանկարում Հայաստանը մասնավորապես Արարատի մարզը հետաքրքրություն կառաջացնի միջազգային կազմակերպությունների կողմից մարզում ներդրումներ

իրականացնելու համար, որը իր անմիջական դրական ներգործությունը կունենա մարզի տնտեսական զարգացման վրա:

634. Հաշվի առնելով Արարատի մարզի զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրները նախատեսվում է Արարատի մարզի 2011-2014թթ. զարգացման ծրագրում իրականացնել հետևյալ միջոցառումները:

1) Ստեղծել այցելուների կենտրոն, որը այցելուներին կտրամադրի տեղեկություններ Արարատի մարզի տուրիստական հնարավորությունների վերաբերյալ, կհամագործակցի Հայաստանի և արտերկրի տուր-օպերատորների հետ՝ գործունեությունը կազմակերպելով պրոակտիվ հիմունքներով: Կենտրոնի կողմից կկազմակերպվեն փառատոններ և միջոցառումներ, գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառներ, կիրականացվեն ուսումնական ծրագրեր: Կենտրոնը կիրականացնի նաև ինտերնետային կայքի վարում, քարտեզների, գրքույկների, տեղեկատվական բուկլետների հրատարակում, կհանդիսանա մարզում տուրիզմի խթանման առաջնային պատասխանատուն:

2) Առանձնացնել հենակետային տուրիստական կենտրոններ և դրանց շուրջ ստեղծել ենթակառուցվածքներ (ավտոկանգառներ, սննդի օբյեկտներ, հուշանվերների խանութներ):

3) Ջրաճահճային արգելոցի տարածքում տեղադրել դիտակետեր, կառուցել անցուղիներ, կազմել թռչունների տեսակների ցանկը:

4) Ընդլայնել ամենամյա կազմակերպվող Բերքի, Խաղողօրհնեքի, Տերն Ընդ Առաջի և Զատկի տոնակատարությունները:

5) Կազմակերպել ուսուցում գիդերի, տուր-օպերատորների, ուղեկցողների, «Մահճակալ և նախաճաշ» հյուրընկալական տների տերերի, սպասարկման ոլորտի աշխատողների համար:

6) Կազմակերպել լեռնային հեծանվավազքի, ձկնորսության և կանյոնինգի միջոցառումներ:

7) Որոշել տուրիստական սահմանային թույլատրելի նորմեր «Խոսրովի անտառ» արգելոցի համար:

8) Կազմել և հրատարակել քարտեզներ՝ ըստ թեմատիկ երթուղիների:

9) Ստեղծել Արարատի մարզի տուրիստական ինտերնետային կայք:

10) Խոր Վիրապ տանող ճանապարհի երկարությամբ տեղադրել մարզի տեսարժան վայրերի նկարները, տեղադրել հուշանվերների կրպակներ, կառուցել փոքրիկ սրճարաններ:

11) Կազմակերպել մարզի գովազդը արտաքին և ներքին տուրիստական շուկաներում:

635. Մարզի տարածքում տուրիստական կազմակերպությունների գործունեության խթանումը և նորերի հիմնումը կարող է դառնալ տեխնիկական աջակցություն մատուցվող խնդիրներից մեկը: Դա թույլ կտա նմանապես ինտենսիվացնել համագործակցությունը Երևանյան կազմակերպությունների հետ, որոնք մեծ ներդրում կարող են ունենալ մարզի ներկայացման և տուրիստական հոսքերի ուղղորդման գործում:

9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

636. Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ։

9.1. Բնակավայրերի տարածական պլանավորում

637. Մարզի համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների հաշվարկի հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբեր 3–ի նիստի թիվ 36 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի հիմնադրույթները։

638. Համաձայն համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի հիմնադրույթների 8-րդ կետի 38 ենթակետի՝ մարզի գյուղական համայնքների գերակշիռ մասի համար կարելի է կիրառել պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման օպտիմալացման սկզբունքը, որի արդյունքում գլխավոր հատակագծերի մշակման արժեքը զգալիորեն նվազում է։

639. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 34-րդ կետով սահմանված է, որ պետության կողմից համայնքներին որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից առաջացած ֆինանսական միջոցներն առաջնահերթության կարգով ուղղվում են համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների և գոտևորման այլ փաստաթղթերի մշակմանը։

640. Մարզի բնակավայրերում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգելու, ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայր ստեղծելու համար, նախատեսվում է կազմել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքների գլխավոր հատակագծերը։ Կազմվել են Արարատ, Արտաշատ և Վեդի քաղաքային համայնքների գլխավոր հատակագծերը, իսկ Մասիս քաղաքի գլխավոր հատակագծի մշակումը ընթացքի մեջ է, մյուս 93 համայնքները չունեն գլխավոր հատակագծեր, որոնց համար ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է 325.5 մլն դրամ։

9.2. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

641. Մարզի համայնքներում գործում են 112 հանրակրթական դպրոցներ:

642. ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում դպրոցաշինությունը և դպրոցների հիմնանորոգման խնդիրները:

643. 2000թ.-ից մինչև 2009թ.-ը մարզում իրականացվել են շուրջ 7 մլրդ 479 մլն 337 հազար դրամի հիմնանորոգման աշխատանքներ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

644. Դպրոցների մեծ մասում իրականացվել են ինչպես հիմնանորոգման, այնպես էլ ընթացիկ նորոգման աշխատանքներ՝

1) թվով 112 դպրոցներից նորոգվել են 97 դպրոցների տանիքները՝ ազբոհերձաքարե ծածկերը փոխարինվել են ցինկապատ պրոֆիլավոր թիթեղե ծածկերով,

2) թվով 38 դպրոցներում կառուցվել են լոկալ ջեռուցման համակարգեր, որը շարունակական է, քանի որ դպրոցների ջեռուցման գործընթացը համարվում է առաջնահերթ խնդիր:

3) Ք.Արարատ, գ. Վարդաշեն, գ. Սիփանիկ համայնքներում կառուցվում են նոր դպրոցական շենքեր:

645. Մարզի թվով 23 դպրոցներում ամբողջությամբ ավարտվել են շենքերի հիմնանորոգման աշխատանքները:

646. Մարզի թվով 27 դպրոցներում տարիներ շարունակ հիմնանորոգման աշխատանքներ ընդհանրապես չեն իրականացվել, որի պատճառով ստեղծվել անբավարար պայմաններ ուսումնական գործընթացի իրականացման համար:

1	Լանջազատ	15	Ազատաշեն
2	Լուսաշող	16	Խաչփար
3	Շաղափ	17	Նոր Խարբերդ № 2
4	Տիգրանաշեն	18	ք.Մասիս № 3
5	Դեղձուտ	19	Ջրահովիտ
6	Բյուրավան	20	Ռանչպար
7	Դիտակ	21	Սիս
8	ք.Մասիս № 2	22	Սայաթ-Նովա
9	գ.Արգավանդ	23	Զորակ
10	Ջրաշեն	24	Բարձրաշեն
11	Վ.Դվին	25	ք.Արարատ № 1
12	Ն.Դվին	26	ք.Արարատ № 4
13	Նոր Ուղի	27	ք.Մասիս № 4
14	Միսավան		

647. Թվով 4 դպրոցների շինության կրող կոնստրուկցիաներում առկա են ճաքեր և դասվում են վթարային դպրոցների ցանկում /Լանջառ, Շաղափ, ք.Արտաշատ թիվ 4, Լուսառատ/, որոնց համար «Հայսեյսմշին» ՓԲԸ-ի կողմից կատարվել են հետազոտություններ և տրվել եզրակացություններ, որպես 3-րդ աստիճանի վնասվածության շենքեր:

648. Բացի պետական բյուջեից մարզում հանրակրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ իրականացրել են նաև «Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ»-ը և այլ բարեգործական կազմակերպություններ՝ շուրջ 14 ծրագրեր, ընդհանուր 1 մլրդ 426 մլն 624 հազար դրամ արժողությամբ ։ Այդ բարեգործական կազմակերպություններից են՝ «Փախստականների հարցերով նորվեգական խորհուրդ»-ը - 500 հազ. դոլար, «Հայ կրթական հիմնադրամ»-ը - 60 հազ. դոլար, «Հայրենիք միություն»-ը - 18 հազ. դոլար, «Ղարաբաղ տելեկոմ» կազմակերպությունը – 26 մլն դրամ, «Հայ կանայք» կազմակերպությունը – 19 մլն դրամ, անհատ բարեգործներ՝ Բյուզանդը – 150 հազ. դոլար, Արշալույս Ճգնավորյանը – 50 հազ. դոլար և այլ բարեգործներ ու բարեգործական կազմակերպություններ, որոնք զգալիորեն աջակցում են հանրակրթական օբյեկտների հիմնանորոգման գործընթացին։

649. «Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ»-ի կողմից մարզում իրականացվում են 2 ծրագիր՝ Արտաշատ քաղաքի թիվ 8 մանկապարտեզի շենքի վերակառուցման, ջեռուցման համակարգի կառուցման և Մխչյան համայնքի մանկապարտեզի տարածքի բարեկարգման ծրագրերը։ 2010թ. իրականացվելու են ևս 4 ծրագիր՝ Ուրցաձոր համայնքի կենտրոնի շենքի վերանորոգում, Քաղցրաշեն համայնքի կենտրոնի շենքի վերակառուցում, Այգեստան և Վանաշեն համայնքների մանկապարտեզի հիմնանորոգման ծրագրերը։

650. Հաշվի առնելով հիմնանորոգման աշխատանքների համար իրականացվող ֆինանսական ներդրումների չափը, երևում է, որ նման տեմպերով շարունակելու դեպքում անհրաժեշտ է ևս 18 - 20 տարի մարզի հանրակրթական բոլոր օբյեկտները հիմնանորոգելու համար։

9.3. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում

651. Մարզի կրթական ոլորտի կարևոր խնդիր է նախակրթական ուսուցումը, որի համար պետք է մեծ ուշադրություն դարձնել այդ հաստատությունների հիմնանորոգմանը։

652. Մարզի նախադպրոցական հաստատությունների մեծ մասը երկար տարիներ չեն նորոգվել, որի հետևանքով առաջացել են շահագործման համար անբավարար պայմաններ։

653. 2000-2009թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի թվով 26 մանկապարտեզներում կատարվել են 372 մլն 371 հազար դրամի նորոգման աշխատանքներ, թվով 17 մանկապարտեզներում համայնքի բյուջեների և բարեգործական կազմակերպությունների ներդրումները եղել են փոքր չափերի, որոնք բավականացրել են մասնակի նորոգման աշխատանքներ կատարելու համար։ Այդ ներդրումների գումարը կազմել է 204 մլն 500 հազար դրամ։

654. Շենքային պայմաններ չունենալու պատճառով մանկապարտեզների մեծ մասում օգտագործվում են տարածքների մի մասը՝ մեկ կամ երկու խմբերի համար, որոնք համայնքի բյուջեների սուղ միջոցներով մասնակիորեն նորոգվում են, իսկ չօգտագործվող տարածքները գտնվում են անմխիթար վիճակում։ Մանկապարտեզների մեծ մասում տարիներ շարունակ չի կատարվել

հիմնանորոգման կապիտալ ներդրումներ, այդ պատճառով շարքից դուրս են եկել ներքին էլեկտրական սնուցման, ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգերը:

655. Շենքերի ջեռուցման համար լուրջ խնդիր է առաջացնում պատուհանների և արտաքին դռների խարխուլ վիճակը, որը նպաստում է վատ ջերմամեկուսացմանը:

656. Ներկայումս մարզի 82 մանկապարտեզներից գործում է 68 -ը: Գործող մանկապարտեզներից 7-ն ունի լոկալ ջեռուցում, 10-ը՝ ջեռուցվում է վառարաններով: Մնացած գործող 51 մանկապարտեզները չեն ջեռուցվում, որի պատճառով նրանց գործունեությունը սեզոնային բնույթ է կրում:

657. Նախադպրոցական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի ամբողջականացման համար առաջնահերթ պետք է կատարվի՝

1) շենքային պայմանների ապահովում այն համայնքներում, որտեղ մանկապարտեզ չի գործում,
2) տանիքների հիմնանորոգում,
3) շենքերի ներքին և արտաքին կոմունիկացիաների նորոգում,
4) ջեռուցման աշխատանքներ, որի հետ համատեղ պետք է կատարվի պատուհանների և դռների նորոգում,
5) ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ ,
6) մարզահրապարակների կառուցում և բարեկարգման աշխատանքներ:

658. Անհրաժեշտ է թվով 77 մանկապարտեզներում իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ և կառուցել 5 նոր մանկապարտեզներ, որոնց համար անհրաժեշտ է շուրջ 6 մլրդ 586 միլիոն 935 հազար դրամ:

9.4. Մշակութային օբյեկտների հիմնանորոգում

659.Մարզի մշակութային օբյեկտները գտնվում են համայնքների հաշվեկշռում, իսկ տեղական բյուջեի միջոցներով հնարավոր է լինում իրականացնել միայն մասնակի նորոգման աշխատանքներ: 2000-2009թթ. ՀՀ պետական բյուջեից մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով ներդրումները եղել են բավական սուղ:

660. Արդյունքում՝ մարզի մշակութային օբյեկտների մեծ մասը գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում և չեն շահագործվում:

661. Մի շարք մշակույթի տներ դարձել են վթարային /Վանաշեն, Գետազատ, Շահումյան/:

662. 2007-2009թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներից մարզի առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող 30 մշակույթի օբյեկտների հատկացվել է շուրջ 664 մլն 870 հազար դրամ, իսկ 8 մշակույթի օբյեկտներ նորոգվել են համայնքների տեղական բյուջեների և բարեգործական կազմակերպությունների ֆինանսական ներդրումների միջոցով՝ 357 մլն դրամ գումարով, որի սահմաններում իրականացվել են հիմնականում տանիքների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, սակայն դա բավարար չէ գոյություն ունեցող շինությունները պահպանելու և շահագործելու համար:

663. Մարզի թվով 79 մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագիրը ամբողջությամբ ավարտելու համար անհրաժեշտ է 9 մլրդ 62 միլիոն 263 հազար դրամ գումար:

9.5. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում

664. 2000-2009թթ. Արարատի մարզում իրականացվել են 1 մլրդ 364 մլն 730 հազար դրամի աշխատանքներ՝ պետական բյուջեից ներդրվել է 276 մլն 530 հազ. դրամ գումար, որի շրջանակներում հիմնանորոգել է Արտաշատ քաղաքի հիվանդանոցը /260 մլն դրամ/ և «Մասիս քաղաքի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքը /16 մլն 530 հազ. դրամ/:

665. Համայնքների բյուջեների և բարեգործական կազմակերպությունների ներդրումներով վերանորոգվել է թվով 27 առողջապահական օբյեկտ, որի վրա ծախսվել է 1 մլրդ 88 մլն 200 հազ. դրամ գումար:

666. Մարզի 2011-2014թթ. զարգացման ծրագրով նախատեսվում է իրականացնել Արարատի մարզի թվով 57 առողջապահական օբյեկտներում 3 մլրդ 647 մլն 132 հազ. դրամի կառուցման, հիմնանորոգման և նորոգման աշխատանքներ, որից նոր բժշկական ամբուլատորիաների կառուցում՝ Դիմիտրով համայնք – 47.5 մլն դրամ, Մրգավան - 48.6 մլն դրամ, Արալեզ - 48 մլն դրամ, Լուսառատ – 47 մլն դրամ, Նորամարգ - 45 մլն դրամ, Նորաբաց - 46 մլն դրամ, Նոր Խարբերդ - 43 մլն դրամ, Ռանչպար – 48 մլն դրամ, Սայաթ-Նովա - 42 մլն դրամ:

9.6. Մարզական օբյեկտների հիմնանորոգում

667. 2006-2007թթ.-ին իրականացվել է Արարատի մարզի Արտաշատ քաղաքի մարզադպրոցի հիմնանորոգման աշխատանքներ՝ պետական բյուջեից ներդրվել է 120 մլն դրամ, իսկ բարեգործական ծրագրերով՝ 150 մլն դրամ:

668. Մասիս քաղաքում սկսվել է նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքները, որի սկզբնական նախահաշվային գումարը 534 մլն 972 հազար դրամ է, որից 26 մլն 17 հազ. դրամի աշխատանքներ արդեն իրականացվել են, 20 մլն դրամի՝ պլանավորվել է կատարել 2010 թվականի ընթացքում: Նախատեսվում է Մասիսի քաղաքի մարզադպրոցի կառուցման աշխատանքներն ավարտել 2013 թվականը:

669. Մարզի զարգացման ծրագրով նախատեսվում է Ուրցաձոր համայնքում կառուցել մարզադաշտ, որի սկզբնական նախահաշվային արժեքը կազմում է 20 մլն դրամ:

670. Մարզի մի շարք համայնքներում նախատեսված տեղական բյուջեի միջոցներով 2011-2014թթ. պետք է իրականացվի մարզադաշտերի նորոգման աշխատանքներ, որպեսզի բնակչության շրջանում սպորտի զարգացման և մասսայականացման համար ստեղծվի նպաստավոր պայմաններ: որի համար պահանջվում են շուրջ 531 մլն 455 հազ. դրամ կապիտալ ներդրումներ:

9.7. Բազմաբնակարան բնակելի շենքեր և բնակելի տներ,

բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ

671. Բազմաբնակարան շենքերի թիվը Արարատի մարզում կազմում է 453՝ ք. Արտաշատում՝ 126, ք. Վեդիում՝ 38, ք. Արարատում՝ 176, ք. Մասիսում՝ 79 և գյուղական համայնքներում՝ 34:

672. Մարզում առկա է 57.893 բնակարան, որից 795-ը՝ համայնքային, 57.098-ը՝ մասնավոր:

673. Բնակարանային ֆոնդը կազմում է 5 մլն. 649.7 հազ. ք.մ., որից 5 մլն. 617.1 հազ. ք.մ.՝ մասնավոր, 38.2 հազ. ք.մ.՝ համայնքային:

674. Մարզում առկա են մի քանի կիսակառույց բազմաբնակարան շենքեր, որոնք ավարտին հասցնելու համար պահանջվում է 882.0 մլն դրամի կապիտալ ներդրում:

675. Մարզի քաղաքային և գյուղական համայնքներում առկա բազմաբնակարան բնակելի տները գտնվում են խիստ անմխիթար վիճակում, հատկապես տանիքները, նկուղները և աստիճանավանդակները /բազմաբնակարան բազմահարկ բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները/: Մարզում առաջնահերթ նորոգման կարիք ունի 90 բազմաբնակարան շենքերի տանիքներ՝ ընդհանուր 63.621 քմ մակերեսով, որոնց հիմնանորոգման համար անհրաժեշտ է 954 մլն 315 հազար դրամ: 826 փախստական կարիքավոր ընտանիքներ ունեն բնակարանի կարիք, սակայն պետական բյուջեով այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն նախատեսված Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից նույնպես՝ բնակարանաշինություն չի իրականացվում:

676. Բազմաբնակարան շենքի կամ շենքերի, շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով ձևավորվող համատիրությունների գործընթացը գտնվում է վատ վիճակում /ընդամենը մարզում, քաղաք Արտաշատում գործում է մեկ համատիրություն/, իսկ Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի քաղաքներում գործող մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանային- կոմունալ կազմակերպությունների միջոցները չեն բավարարում անգամ ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

677. Եվս մի քանի տարի և բազմաբնակարան բնակելի ֆոնդը կհայտնվի վթարային վիճակում, որի համար հետագայում կպահանջվեն անհամեմատ ավելի մեծ ներդրումներ:

678. Անհրաժեշտ է ձեռնարկել անհապաղ միջոցառումներ բազմաբնակարան բնակելի տների ընդհանուր օգտագործման տարածքները և բակերը հիմնանորոգելու, ինչպես նաև խաղահրապարակներ, կանաչ և հանգստի գոտիներ ստեղծելու համար:

679. Մարզի առկա բնակֆոնդը պահպանելու համար անհրաժեշտ է տարեկան շուրջ 200.0 մլն դրամ գումար:

680. Բազմաբնակարան շենքերի կառավարման պետական աջակցություն ապահովելու համար անհրաժեշտ է իրավական բարենպաստ դաշտի ստեղծում, ֆինանսական և ներդրումային աջակցություն, բազմաբնակարան շենքերը

սպասարկող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելու համար:

681. Երիտասարդ ընտանիքների ձևավորման, բնակչության աղքատության հաղթահարման, անօթևան մարդկանց հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք լուծելու մեծ բաժինը ընկնում է բնակչության բնակարանային ապահովման, բնակչության համար նորմալ կենսապայմանների ապահովման խնդիրներին:

682. Անհրաժեշտ է մարզում տարեցտարի ավելացնել բնակարանաշինության համար նախատեսվող ներդրումները:

683. Մարզում առկա են 3-րդ աստիճանի վնասվածության թվով 20 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցում անհրաժեշտ է հրատապ իրականացնել ամրացման աշխատանքներ, որի համար ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է 1 մլրդ 91 մլն դրամ գումար:

684. Մարզի մի շարք համայնքներում առկա են սողանքային երևույթներ, որոնց կանխարգելման, վերացման համար մշակվել է միջոցառումների ծրագիր՝ 172.0 մլն դրամի:

685. ՀՀ Արարատի մարզի բազմաբնակարան շենքերի, բնակելի տների, բնակարանաշինության 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 9 հավելվածում:

9.8. Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում

686. Նախատեսում է իրականացնել՝

1) Մարզային պահեստային կառավարման կետերի հիմնանորոգում, տեխնիկական զինվածությամբ և գույքով ապահովում:

2) Առկա քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների վերանորոգում , անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով կահավորում:

3) Բնակչության պատսպարման համար անհրաժեշտ պաշտպանական կառույցների նախագծում և կառուցում:

9.9. Հրշեջ փրկարարական ջոկատների կառույցների հիմնանորոգում

687. Ժամանակակից հրշեջ տեխնիկական միջոցներով հրշեջ փրկարարական ջոկատները վերազինելու նպատակով՝ գոյություն ունեցող հրշեջ փրկարարական ջոկատների շենքերի վերակառուցում և նորերի կառուցում՝

1) Արտաշատ, Մասիս, Վեդի քաղաքների հրշեջ փրկարարական ջոկատների տեղակայման շենքերի վերանորոգում,

2) Արարատ քաղաքում ժամանակակից հրշեջ փրկարարական ջոկատի հիմնում /ավտոմեքենաների երեք կայանատեղով/:

10. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

10.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն

688. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը ինչպես ԿԶԾ, այնպես էլ Արարատի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են մարզային անբարեկարգ ճանապարհների, հատկապես գյուղական բնակավայրերի անմխիթար վիճակում գտնվող ճանապարհների, խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի բարելավման), կոյուղագծերի (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրները հատկապես գերակա են այն համայնքների համար, որոնց բնակչությունը փոքրաթիվ է և բնակչությունը չունի աշխատանք և հեռանում է հայրենի վայրերից:

10.2. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

689. **Ճանապարհաշինության ոլորտի վիճակի վերլուծություն** Արարատի մարզի տարածքով են անցնում 2 միջպետական՝ 103.6 կմ, 21 հանրապետական՝ 313.5 կմ և 50 մարզային /տեղական/ նշանակության՝ 250.0 կմ ավտոճանապարհներ:

690. Մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհային ցանցում գործում են 102 կամուրջներ և 308 երկաթբետոնյա խողովակներ:

691. Մարզային / տեղական / նշանակության ավտոճանապարհների 109.3 կմ-ը ասֆալտբետոնե, 27.4 կմ-ը սև խճային և կոպճային, 84.8կմ-ը կոպճային և 28.5կմ-ը բնահողային ծածկույթով է:

692. Մարզի միջպետական ու հանրապետական նշանակության ավտոճանապարհները գտնվում են համեմատաբար բարվոք, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների մեծ մասը անմխիթար վիճակում:

693. Հայաստանում աղքատության մակարդակը ուղղակիորեն կապված է բնակավայրերի Երևանից ու մարզկենտրոններից հեռավորության հետ և հատկապես այդ բնակավայրերը միմյանց կապող ճանապարհների վիճակի հետ:

694. Ֆիզիկական մեկուսացվածությունը ԿԶԾ-ում սահմանված է որպես կարևորագույն գործոն, որը խոչընդոտում է ազգաբնակչության կենսաբանական, սոցիալական ու մշակութային կարիքները հոգալուն:

695. Համայնքների ֆիզիկական մեկուսացվածությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է ռեսուրսները ուղղել մարզային / տեղական / նշանակության ճանապարհների վերանորոգմանը:

696. Մարզային /տեղական/ նշանակության ճանապարհների զգալի մասը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով տասնյակ տարիներ նորոգման չեն ենթարկվել, որի արդյունքում դրանք քանդվել ու դարձել են տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի:

697. Ստորև ներկայացված է 2007-2009թթ. Արարատի մարզի ճանապարհաշինության ոլորտում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների.

Աղյուսակ 10.1 *մլն. դրամ*

ֆինանսավորման աղբյուրը	2007թ.	2008թ.	2009թ.
ՀՀ պետական բյուջե	1764.0	1241.98	1540.603
Համայնքային բյուջեներ	231.7	143.66	176.467
«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագիր	105.0	214.0	-
«Հազարամյակի մարտահրավեր»	-	500.0	599.2
«Ասիական զարգացման բանկ»	-	162.6	4459.745
Ընդամենը	2100.7	2262.24	6776.015

698. 2007թ-ի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում կատարվել է 1 մլրդ. 764 մլն դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ, որից՝

1) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացված միջոցներով.

ա. միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում՝ 403մլն դրամ,

բ. հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 346.5մլն դրամ,

գ. տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 822.1մլն. դրամ,

դ. համայնքային ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 60.0 մլն. դրամ,

ե. կամուրջների վերանորոգում՝ 93.9 մլն. դրամ:

2) ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված միջոցներով.

ա. մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման համար 22.0 մլն դրամ,

բ. կամուրջների նորոգմանը՝ 16.49 մլն դրամ:

գ. Համայնքային բյուջեների միջոցներով համայնքային նշանակության ավտոճանապարհներին կատարվել է 231.7 մլն դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ:
դ. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի միջոցներով իրականացվել է 105.0մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

699. 2008թ. ընթացքում մարզի միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհներին և կամուրջներին ընդհանուր առմամբ կատարվել է 2 մլրդ.262.24մլն.դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ, որից՝

1) ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 1մլրդ.241.98մլն դրամի պահապանման, շահագործման և նորոգման աշխատանքներ: Վերանորոգվել են 9.28 կմ երկարությամբ 2 հանրապետական, 3.85 կմ երկարությամբ 4 տեղական նշանակության ավտոճանապարհներ, 7 կամուրջներ:

2) ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված 22.0 մլն. դրամով կատարվել է մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

3) «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով կատարվել է 500մլն. դրամի 17.83կմ երկարությամբ 1 հանրապետական նշանակության ավտոճանապարհի վերանորոգում:

4) «Ասիական զարգացման բանկի» ծրագրով կատարվել է 162.6 մլն. դրամի 64.5կմ երկարությամբ 6 հանրապետական նշանակության ավտոճանապարհների վերանորոգում:

5) ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի միջոցներով կատարվել է 214.0 մլն.դրամի 5.3կմ երկարությամբ 1 հանրապետական նշանակության ավտոճանապարհի վերանորոգում:

6) Համայնքային բյուջեների միջոցներով կատարվել է 143.66մլն. դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ:

700. 2009թ. ընթացքում մարզի միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների և կամուրջների նորոգման, պահպանման և շահագործման համար կատարվել է 6 մլրդ 776.015 մլն դրամի աշխատանքներ, որից՝

701. ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 1 մլրդ. 540.603 մլն դրամ, այդ թվում՝

1) միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ 332.641մլն. դրամ,

2) մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում՝ 35.773 մլն. դրամ,

3) հանրապետական նշանակության 2.52կմ երկարությամբ 2 ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 486.9մլն. դրամ,

4) մարզային նշանակության 11.5 կմ երկարությամբ 3 ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 470.8 մլն. դրամ,

5) տրանսպորտային օբյեկտների / 4 կամուրջների / հիմնանորոգում – 106.06 մլն.դրամ,

6) համայնքային ենթակայության ճանապարհների նորոգում /համայնքային բյուջեներին սուբվենցիայի տրամադրում , 4 համայնք / - 108.4 մլն. դրամ:

702. «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրով նախատեսվել է և ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել է 599.2 մլն. դրամի, 6.9 կմ երկարությամբ 1 հանրապետական ավտոճանապարհի նորոգում:

703. «Ասիական զարգացման բանկի» ծրագրով կատարվել է 4 մլրդ 459.745 մլն. դրամի՝ 64.49 կմ երկարությամբ 6 ավտոճանապարհների հիմնանորոգում:

704. Համայնքային բյուջեների միջոցներով կատարվել է 176.467մլն. դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ:

705. 2010թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված է կատարել.

1) մարզային նշանակության 1 ավտոճանապարհի հիմնանորոգում՝ 16.23 մլն դրամ,

2) միջպետական նշանակության 1 և հանրապետական նշանակության 1 կամուրջների հիմնանորոգում՝ 49.115 մլն. դրամ,

3) մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ 35.619 մլն. դրամ:

706. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև 12.10.2009թ. ստորագրված «Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի» շրջանակներում ներառված է նաև Երևան-Արարատ ճանապարհի նորոգման աշխատանքների իրականացման հարցը:

707. 2011-2014թթ. մարզային զարգացման ծրագրով նախատեսվում է.

1) նորոգել 249.8 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական, հանրապետական և մարզային / տեղական/ նշանակության ճանապարհներ, որի համար ըստ նախնական հաշվարկների պահանջվում է 19530.0 մլն. դրամ:

2) մարզի քաղաքային և գյուղական համայնքների փողոցների հիմնանորոգման համար ըստ նախնական հաշվարկների կպահանջվի 2811.5 մլն դրամ,

3) մարզի ամբողջ ճանապարհային ցանցի տարեկան ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջը կազմում է շուրջ 770.0 մլն դրամ:

4) կամուրջների նորոգում՝ 184.0 մլն. դրամ:

708. Ընդամենը կպահանջվի 24546.0 մլն դրամ՝

709. Արարատի մարզի ճանապարհաշինության ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 10.1 հավելվածում:

Աղյուսակ 10.2

Հ/Հ	*Ճանապարհները ըստ նշանակության*	*Չափի միավոր*	*2011-2014թթ.*	*2011թ.*	*2012թ.*	*2013թ.*	*2014թ.*
1.	Միջպետական	կմ	19.7	11.7			8.0
		մլն. դրամ	2350.0	1400.0			950.0
2	Հանրապետական	կմ	114.0	37.3	31.4	34.0	11.3
		մլն. դրամ	9700.0	4570.0	2250.0	2140.0	740.0
3	Մարզային /տեղական/	կմ	116.1	3.3	40.3	29.1	43.4
		մլն. դրամ	7480.0	260.0	3020.0	1850.0	2350.0
	Ընդամենը	կմ	249.8	51.3	81.7	63.1	62.7
		մլն. դրամ	19530.0	6230.0	5270.0	3990.0	4040.0
Մարզի քաղաքային և գյուղական համայնքների փողոցների հիմնանորոգում							
	Համայնքներ	հատ	57	9	17	16	15
		մլն. դրամ	2 811,5	815.5	724.0	664.0	608.0
Ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում							
	Մարզի ամբողջ ճանապարհային ցանց	մլն. դրամ	3080.0	770.0	770.0	770.0	770.0
Կամուրջների նորոգում							
	Կամուրջներ	մլն. դրամ	184.0	69.0	40.0	40.0	35.0
ԸՆԴԱՄԵՆԸ							
	Ճանապարհաշինություն	մլն. դրամ	24546.0	7774.0	6634.0	5114.0	5024.0

10.3. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

710. Մարզի ջրամատակարարման համակարգը կազմված է՝

1) մայրուղի ջրատար – 870 կմ ,
2) ներքին ցանց – 4010 կմ,
3) ջրամբարներ – 26 հատ, տարողությունը 40000 մ³

711. Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» «ԵրևանՋուր» կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից`.

1) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ - 74 համայնք
2) «ԵրևանՋուր» ՓԲԸ - 5 համայնք
3) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից - 18 համայնք

712. Մարզի ջրամատակարարման ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները.

1) Տեխնիկական և տնտեսական տվյալները
2) Հիդրո - տեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ /ծավալ, հզորություններ և այլն/

3) Ջրագծի վերաբերյալ տվյալներ /երկարություն, ինժեներական պարամետրեր/
4) Կարիքներ /օրական ծավալներ խմելու ջրի համար/
5) Սակագներ
6) Որակ
7) Ջրահեռացման ծավալներ:

713. Ջրամատակարարման բարձր մակարդակի ապահովումը կապված է նաև մատակարար – սպառող և ներդնող – շահառու ճիշտ համագործակցության հետ: Փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը: Այստեղ պարզ «ծախսերի և օգուտների» վերլուծությունը բավարար չի կարող լինել ներդրման կենսունակությունը գնահատելու համար:

714. Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչության հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ (դոնոր կազմակերպությունների կողմից, մասնավորապես՝ Ասիական Զարգացման Բանկի միջոցներով), ներառյալ ջրամատակարարման առկա համակարգի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորում:

715. Այնուամենայնիվ, սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսածածկումից: Կապիտալ ծախսերը պետք է իրականացվեն պետության կողմից՝ պետական ներդրումային ծրագրերի միջոցով:

716. Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է:

717. Տարեցտարի բարելավում են խմելու ջրի վարձավճարների գանձման վիճակը:

718. Այսպես՝ 2007թ. գանձումները եղել են՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ՝ - 59.4%, «Երևանջուր» ՝- 57.3%, 2008թ.-ին համապատասխանաբար՝ 63.2%, և 64.4%, 2009թ.-ին կազմել են ՝ 66.75% և 67.1%,:

719. 2007-2009թթ. մարզում կառուցվել և վերակառուցվել են շուրջ 50.7կմ խմելու ջրագիծ:

720. Մարզում ջրամատակարարում ապահովելուն խոչընդոտում են.

1) ջրամատակարարման համակարգի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը,

2) համայնքների կողմից ուշադրության պակասը,

3) արտահոսքը և կորուստը,

4) գանձումների ցածր մակարդակը.

5) որակի խնդիրները,

6) ջրամբարների ոչ բավարար տեխնիկական վիճակը /մարզում կա 26 ջրամբար 32 հազ. խմ տարողությամբ/,

7) ըստ տարածաշրջանների շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը /տատանվում է՝ 4-24 ժամ/,

8) ջրաղբյուրների ջրաքանակության ոչ ռացիոնալ օգտագործումը :

721. Մարզում ջրամատակարարման ոլորտում դեռևս չլուծված հիմնախնդիրներ են՝

722. Եղեգնավան, Նոյակերտ համայնքները չունեն խմելու ջրամատակարարման համակարգեր, խմելու նպատակով գնվում է անհատ անձանց կողմից բերվող ավտոցիստեռների ջուրը,

723. Ռանչպար, Նորամարգ, Սիս, Սիփանիկ, Նիզամի, Սայաթ-Նովա, Հովտաշատ, Հովտաշեն համայնքներում ջրամատակարարումը իրականացվում է համայնքների տարածքում գտնվող ոռոգման նպատակով նախատեսված բազմաթիվ խորքային հորատանցքերից, որոնց ջուրը ներքին ցանցով տրվում է բնակչությանը,

724. Զանգակատուն, Նարեկ, Լանջանիստ, Լանջառ, Լուսաշող, Պարույր Սևակ, Արմաշ, Շաղափ, Վարդաշատ համայնքների ջրամատակարարման համակարգերը շահագործվում են գյուղապետարանների կողմից, ջուրը առանց վարակազերծման տրվում է բնակչությանը,

725. Ուրցալանջ, Տիգրանաշեն համայնքներում չկա կենտրոնացված ջրամատակարարում՝ օգտվում են մոտակա լեռնային աղբյուրներից անցկացված գյուղի կենտրոնում գտնվող ջրի ծորակներից:

726. Ջրամատակարարման ոլորտի կարևորագույն հիմնախնդիր է մարզի ազգաբնակչությանը տրվող խմելու ջրի վարակազերծման, ինչպես նաև ջրմուղու կառույցների (սան. պահպանման գոտու պարիսպ, արհեստական լուսավորություն պահակային հսկողություն), ջրատարների (անցնում են ոռոգման առվակներով, արոտավայրերով) սանիտարական պահպանման հետ կապված հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

727. Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանների կառուցումը մարզի 3 քաղաքներում: Մարզում հրատապ են կոյուղացման գործընթացի հիմնախնդիրները Արտաշատ, Արարատ, Մասիս քաղաքներում, քանի որ չմաքրված կեղտաջրերը էկոլոգիական վնաս են հասցնում շրջապատին:

728. Ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների հիմնական նպատակն է նվազեցնել շրջակա միջավայրի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև բարձրացնել առողջապահական ցուցանիշները՝ կեղտաջրերի մաքրման համակարգի բարելավման միջոցով՝ կիրառելով աէրացման և մաքրման մեխանիկական եղանակներ մարզի բոլոր համայնքներում:

729. Մարզի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի առաջնահերթ հիմնախնդիրներն են՝

1) քաղաքներում և 14 գյուղական համայնքներում ջրամատակարարման համակարգի տեղադրում, այդ թվում ջրահեռացման համակարգի մաքրման կայանների հիմնում,

2) ջրային ցանցի կառավարման համակարգի բարեփոխումները, այդ թվում ֆինանսական կայունության /վճարների հավաքագրման արդյունավետության բարձրացում/ և ջրային ընկերությունների գործունեության կանոնակարգմանն ուղղված միջոցառումները:

730.Մարզի նոր կառուցվող ջրագծերում ըստ գործող նորմերի անհրաժեշտ է կառուցել հրշեջ հիդրատներ և ջրամբարներ, ինչպես նաև վերականգնել ջրագծերում եղած հրշեջ հիդրատները և հրշեջ ջրավազաններ:

731. Ստորև ներկայացվում է Արարատի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման միջոցառումները ըստ առաջնահերթությունների՝

Աղյուսակ 10.3.

Հ/Հ	*Միջոցառման անվանումը*	*Երկարու թյուն կմ*	*Խողովակի տրամագիծ մմ Օկմ ծավալը մ³*	*Պահանջվող ֆինանսական միջոցները /մլն դրամ/*
1	ք. Արտաշատի ներքին ցանցի հիմնանորոգում	35	50-100	70
2	Աբովյանի ներքին ցանցի հիմնանորոգում	1.7	50-100	9
3	Արաքսավանի ներքին ցանցի հիմնանորոգում	1.8	50-100	10
4	Ազատավանի ներքին ցանցի հիմնանորոգում	4	50-100	15
5	Բաղրամյանի ներքին ցանցի հիմնանորոգում	10	50-100	33
6	Բերդիկի ներքին ցանցի հիմնանորոգում	3	50-100	12
7	Բերքանուշի ներքին ցանցի հիմնանորոգում	4.6	50-100	17
8	Բյուրավանի ներքին ցանցի հիմնանորոգում	7.8	100	30
9	Դալարի ներքին ցանցի կառուցում	6	50-100	18
10	Մրգավանի ներքին ցանցի կառուցում	8	50-200	45
11	Նարեկի մայր ջրագծի կառուցում	3	200	8.5
12	Նորաշենի ներքին ցանցի հիմնանորոգում	5.4	50-100	28
13	Ջրաշենի ներքին ցանցի կառուցում	4	50-100	15
14	Վարդաշենի ներքին ցանցի հիմնանորոգում	2.2	50-100	4.5
15	գ.Արարատի ներքին ցանցի հիմնանորոգում	50	50-100	200
16	ք.Արտաշատ կոյուղու մաքրման կայանի կառուցում			200
17	ք.Մասիսի կոյուղու մաքրման կայանի վերակառուցում			80

18	ք.Արարատի կոյուղու մաքրման կայանի կառուցում			200
19	Այգավանի ներքին ցանցի վերանորոգում	6	100-150	32
20	Ավշարի ներքին ցանցի վերանորոգում	2	50-100	20
21	Ջանգակատան ներքին ցանցի կառուցում	25	25-100	60
22	Լուսառատի ներքին ցանցի վերակառուց.	2	50-100	2.4
23	Նոր Ուղի ներքին ցանցի վերակառ.	4.8	50-100	6
24	Նոր Կյանքի ներքին ցանցի վերակառ.	8	75-100	30
25	Շաղափի ջրագծի կառուցում	13	100-150	90
26	Սուրենավանի ներքին ցանցի կառուցում	15	25-200	95
27	Պ.Սևակի ներքին ցանցի, մայր ջրատարի կառ.	5.8	25-300	8.8
28	Վանաշենի ներքին ցանցի կառուցում	4.5	50-100	7
29	Վարդաշատի ներքին ցանցի կառուցում	8	50-100	35
30	Տափերականի ներքին ցանցի կառուցում	11	75-100	45
31	Փ.Վեդու ներքին ցանցի վերակառուցում	3.5	25-100	28
32	Ազատաշենի ներքին ցանցի վերակառուցում	1	75	4
33	Արբաթի ներքին ցանցի վերակառուցում	5.1	63-125	21.2
34	Արևաբույրի ներքին ցանցի վերակառուցում	3	50-100	17
35	Դարբնիկի ներքին ցանցի վերակառուցում	15	100	60
36	Դարակերտի ներքին ցանցի վերակառուցում	4	25-100	20
37	Զորակի ներքին ցանցի վերակառուցում	8	25-100	40
38	Խաչփարի ներքին ցանցի վերակառուցում	6	63-100	30
39	Հայանիստի ներքին ցանցի վերակառուցում	3	50-100	17
40	Մարմարաշենի ներքին ցանցի վերակառուցում	8	50-100	45
41	Նորաբացի ներքին ցանցի վերակառուցում	3	50-160	20
42	Նոր Կյուրինի ներքին ցանցի վերակառուցում	25	100-300	90
43	Նոր Խարբերդի ներքին ցանցի վերակառուցում	11.5	50-300	45
44	Նիզամի համ. ներքին ցանցի վերակառուցում	7.5	50-100	23
45	Ռանչպարի ներքին ցանցի վերակառուցում	60	50-300	170
46	Սիսի ներքին ցանցի վերակառուցում	7.8	50-200	35
47	Ք.Մասիսի ներքին ցանցի վերակառուցում	12	50-200	50
48	Ք.Վեդու ներքին ցանցի վերակառուցում	17	50-200	60
49	Ուրցալանջի մայր ջրատարի կառուցում	2	300	20
50	Արմաշի ներքին ցանցի վերակառուցում	20	100-120	70

732. Արարատի մարզի ջրամատակարարման ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 10.2 հավելվածում:

10.4. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

733. Արարատի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 97 համայնքներից գազիֆիկացված են 82-ը: Մարզի տարածքում կառուցվել է 349.4 կմ միջին ճնշման և 903.76 կմ ցածր ճնշման գազատար: Բաժանորդների թիվը մարզում 2009թ. հասել է՝ 41137, 2008թ. համեմատությամբ այն աճել է 9 %-ով:

734. Այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում է բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար:

Հետևաբար, համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը /մարզի չգազիֆիկացված մնացած 15 համայնքներում/: «ՀայՌուսԳազԱրդ»-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարներին կից համայնքներում, իսկ նման միջոցառումները փոքր համայնքներում տնտեսապես ձեռնատու չեն: Վերջապես ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը:

735. Իրականացվել է Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը երկու փուլով՝ Մեղրի-Քաջարան (40 կմ) հատված և Քաջարան-Արարատ (187կմ) հատված: Գազամուղի Քաջարան-Արարատ (187կմ) հատվածի շինարարությունը սկսվել է 2006թ. վերջին և իրականացվել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից: Ներկայումս գազամուղը Իրանից գազ է ընդունում: Իրան–Հայաստան մայրուղային գազատարի կառուցման արդյունքում հնարավորություն է ստեղծվում հետագայում կատարել գազատարի ուղեգծին հարակից մարզի համայնքների գազիֆիկացման աշխատանքները:

1) Նախատեսվում է կառուցել Իրան-Հայաստան 12 դյույմ տրամագծով նավթամթերքների տեղափոխման խողովակաշարը՝ Թավրիզից-Արարատ, ինչպես նաև նավթամթերքների պահեստավորման տերմինալ:
2) <u>Հիդրոէներգետիկա</u>

736. Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտադրության լիցենզիաների համաձայն մարզում մոտ 3.523 ՄՎտ ընդհանուր հզորությամբ տարեկան 6.75 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա են արտադրում 2 փոքր հիդրոէլեկտրակայաններ:

<u>Աղյուսակ 10.4</u> 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Արարատի մարզում տրված լիցենզիաների համաձայն էլեկտրական էներգիա արտադրող փոքր հիդրոէլեկտրոկայանների հիմնական ցուցանիշները ըստ շահագործող ընկերությունների

Շահագործող ընկերության և ՓՀԷԿ-ի անվանումը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը	Հզորությունը	Էլեկտրական էներգիայի փաստացի օգտակար առաքումը
			ՄՎտ	մլն.կՎտժ
2	4	5	6	7
«Ջրվաշեն ՀԷԿ» ՍՊԸ-ի «Ջրվաշեն» ՓՀԷԿ	31.07.2002	31.07.2017	1,520	3,64
«Բիթլիս Մեն» ՍՊԸ-ի «Այգեզարդ» ՓՀԷԿ	27.06.2006	27.06.2021	2,000	3,11

737. ՀՀ կառավարությունը դոնորների աջակցությամբ նախաձեռնել է Հայաստանում փոքր ՀԷԿ-երի զարգացման ծրագիրը: ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի թիվ 3 արձանագրային որոշման մեջ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում նաև Արարատի մարզում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման: Հետագայում մարզում նախատեսվում է կառուցել ևս 5 փոքր ՀԷԿ-եր՝ 5.023 ՄՎտ տեղակայված հզորությամբ և տարեկան 18.73 մլն. կՎտժ տարեկան գումարային արտադրանքով:

<u>Աղյուսակ 10.5</u> ՀՀ Արարատի մարզում նախատեսվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրաէներգետիկական ցուցանիշները

	ՓՀԷԿ-ի անվանումը	Վերին բյեֆի նիշը, մ	Ներքին բյեֆի նիշը, մ	Դերիվացիայի երկարությունը, մ	Դերիվացիայի տրամագիծը, մ	Հաշվարկային ճնշումը, մ	Հաշվարկային ելքը, մ³/վրկ	Դրվածքային հզորությունը, կՎտ	Էլ. էներգ. տարեկան արտադրանքը, մլն. կՎտժ
	2	3	4	5	6	7	8	9	10
	Ազատ գետի ավազան								
1	Ազատ ՓՀԷԿ*	1190.0	1120.0	3350.0	1.42	62.8	3.00	1510	7.21
2	Գիլանլար ՓՀԷԿ	1650.0	1385.0	2350.0	0.53	244.9	0.40	784	2.68
3	Սնջուր ՓՀԷԿ	1800.0	1550.0	1150.0	0.53	235.4	0.50	941	2.68
4	Ուխտակունք ՓՀԷԿ	1965.0	1750.0	3400.0	0.72	200.4	0.70	1122	3.84
	Վեդի գետի ավազան								
5	Վեդի ՓՀԷԿ	1460.0	1380.0	3150.0	0.92	69.4	1.2	666	2.32
	Ընդամենը Արարատի մարզ							**5023**	**18.73**

738. Փոքր ՀԷԿ-երի կառուցումը մարզում նոր աշխատատեղերի բացման հնարավորություն կստեղծի:

739. ՀՀ նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆՀ-128-Ա կարգադրության հանձնարարականով՝ Արարատի մարզում 2008-2009թթ.-ին իրականացվել են գազամատակարարման հետևյալ աշխատանքները.

1) Ավարտվել է Արարատ քաղաքի 40 բազմաբնակարան շենքերի 948 բնակարանների գազիֆիկացումը: Այդ նպատակով ծախսվել է 56.3 մլն դրամ, որից 47.3 մլն-ը համայնքի բյուջեից, 9 մլն-ը «ՀՌԳ» ՓԲԸ-ի կողմից:

2) Նորամարգ և Սիս համայնքների միջին ճնշման գազատարի կառուցման աշխատանքներն իրականցրել է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկը՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի շրջանակներում:

3) Ռանչպար և Արբաթ բնակավայրերի գազատարների կառուցման համար մարզպետարանը ծրագրի հայտ է ներկայացրել համապատասխան

կազմակերպությանը՝ նշված բնակավայրերի գազիֆիկացման աշխատանքները 2011-2013թթ. ծրագրերում ընդգրկելու համար:

4) Ջրաշեն համայնքի միջին ճնշման գազատարը կառուցվել է 2008թ, «ՀՌԳ» ՓԲԸ-ի կողմից /35.8 մլն դրամ/: Ներքին ցանցի կառուցման համար անհրաժեշտ է 112 մլն դրամ: 2010թ Ջրաշեն համայնքի գազիֆիկացման աշխատանքների ավարտման համար անհրաժեշտ գումարը հատկացվելու է համայնքի /35.0 մլն/ և «Գյուղական համայնքների զարգացման հիմնադրամի» կողմից:

5) 2009թ. «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի վերլուծության և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկի և համայնքի միջոցներով ավարտվել են Սիփանիկ համայնքի գազիֆիկացման աշխատանքները /80 մլն դրամ/:

740. Բնական գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 8-10խմ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին, նշանակում է հանրապետության էկոհամակարգի բարելավում: Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով ջերմամատակարարման լոկալ համակարգի ներդրման վրա:

741. Բազմաբնակարան շենքերի արդյունավետ կառավարումը նույնպես կարևոր հարց է ջերմամատակարարման ծառայությունների հասանելիության և արդյունավետության բարելավման առումով:

742. Անկախ պատճառներից, պետական գազամատակարարման ընկերության կողմից ծառայությունների կրճատումը համայնքներում հանգեցրել է սպասարկվող բաժանորդների թվի կրճատմանը /այժմ գազ ունի խորհրդային շրջանի քաղաքային բազմաբնակարան շենքերի միայն 58 %/: Այն բնակավայրերում, որտեղ չկա գազ ջեռուցման համար օգտագործվում է վառելափայտ, որն ունի ակնհայտ անբարենպաստ բնապահպանական հետևանքներ:

743. 2011-2014թթ. Արարատի մարզում կգործարկվի 38կմ գազատար, որի մոտավոր արժեքը կազմում է 200մլն դրամ: Ստորև ներկայացվում է ջրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման ոլորտներում 2011-2014թթ. իրականացվելիք միջոցառումները և պահանջվող ֆինանսավորումները:

Աղյուսակ 10.6.

Միջոցառում	*Գնահատված արժեքը մլն դրամ*
1.Ջրամատակարարում – ջրահեռացում	2291.4
-Խմելու ջրի մատակարարում	1966.4
-Ջրահեռացում	325.0
2.Գազամատակարարում	3187.0
Ընդամենը	***7769.8***

744. Արարատի մարզի գազամատակարարման ոլորտի 2011-2014թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 10.3 հավելվածում:

11. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

11.1. Տարածքային կառավարում

11.1.1. Վարչատարածքային բաժանում

745. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկա համակարգը սահմանվել է 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված և 2005 թվականի նոյեմբերի 27-ին փոփոխությունների ենթարկված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 11.1-րդ հոդվածի՝ ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները: 1995թ. նոյեմբերի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը:Մասիսի, Արտաշատի, Արարատի նախկին վարչական 3 շրջանների միավորումից ձևավորվեց Հայաստանի Հանրապետության Արարատի մարզը, որն ընդգրկում է 97 համայնք՝ 4 քաղաքային և 93 գյուղական:

746. ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի համաձայն, մարզպետները նշանակվում և ազատվում են ՀՀ կառավարության որոշմամբ և իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ տարածքային կառավարման գործող համակարգի մեջ, մարզի կտրվածքով, մարզպետից և մարզպետարանից բացի, մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները: Վերջինները մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, մյուս կողմից՝ հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են մարզպետի համակարգման ոլորտում:

11.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ

747. Տարածքային կառավարման հարաբերություններն առանձին կարգավորող օրենք գոյություն չունի: Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման ներկա համակարգի օրենսդրական հիմքը կազմում են մի շարք առանցքային իրավական ակտեր, որոնց միջոցով էլ կարգավորվում են այդ հարաբերությունները:

748. Բնագավառում դեռևս չլուծված կարևոր խնդիրներից մեկը

մարզպետարանների իրավասությունների հստակ սահմանումն է: Մարզպետների գործունեությունը հիմնականում կարգավորող «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի համաձայն մարզպետներին իրավասություններ են վերապահված տնտեսական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, սակայն դրանց իրականացումը պարզաբանող դրույթների ձևակերպումը հստակ չէ:

749. Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը օրենսդրության վերափոխումների շնորհիվ կամրապնդի տարածքային կառավարման իրավական հիմքերը, կհստակեցնի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխումը, թույլ կտա խուսափել կրկնվող գործառույթներից, կապահովի մարզերում սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացումը:

750. Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզի խորհրդի դերի ակտիվացումը, հաշվի առնելով այն, որ մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմնախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող ու հաստատող կարևոր խորհրդակցական մարմին է /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածով նախատեսված է, որ մարզի խորհրդի գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով/:

751. Տարածքային կառավարման բնագավառում 2011-2014թթ. զարգացման ծրագրի ռազմավարությունը հետևյալն է:

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի գործառույթների, առանձին պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, ստորաբաժանումների վերակազմակերպում կամ նոր ստորաբաժանումների ստեղծում, որը պետք է հաշվի առնի երկրում, մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) Քաղաքացիական կամ համայնքային ծառայության անալոգիայով անհրաժեշտ է ունենալ նաև մարզպետի, մարզպետի տեղակալների և այլ հայեցողական պաշտոնների հաստատված անձնագրեր: Իրականում այս պաշտոնների՝ օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների, իրավասությունների թվարկումը հենց այդ պաշտոնների անձնագրերի տվյալներն են: Անհրաժեշտ է համակարգել դրանք մեկ փաստաթղթի մեջ:

3) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կառավարության կողմից անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից

պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանմանը:

4) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով ԿԶԾ-ով ամրագրված զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:

5) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականություններն ու իրավասությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնորոշել «Տարածքային կառավարման մարմին» հասկացությունը: Այս բնորոշումը չի հստակեցված: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նշված է, որ տարածքային կառավարման մարմիններ են մարզպետները

6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բանկ, որը կհանդիսանա մարզային կյանքի բոլոր բնագավառների համար պաշտոնական տեղեկատվության աղբյուր, մասնավորապես կարևորվում է փոխհարաբերությունների հստակեցումը մարզային վիճակագրական վարչության հետ:

7) Մարզային զարգացման գործընթացներում Արարատի մարզի խորհրդի դերը բարձրացնելու անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օրենսդրական հիմքեր ապահովելու նպատակով, ուսումնասիրել Արարատի մարզի խորհրդի գործող իրավասությունների շրջանակը: Արարատի մարզպետարանում կուտակվել է մեծ փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների իսկապես արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար :

8) Պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը, դրա տրամադրման մեխանիզմը:

11.1.3. Մարզպետարանի կառավարում

752. ՀՀ Արարատի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը հաստատված է «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1795 որոշմամբ /հետագա փոփոխություններով ու լրացումներով/: Նշված որոշման մեջ վերջին փոփոխությունները և լրացումները

կատարվել են ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի N329-Ն որոշմամբ: Համաձայն վերջին փոփոխությունների՝ ընթացել է մարզպետարանի կազմակերպչական նոր կառուցվածքի ձևավորումը ներկայացված տեսքով:

753. Մարզպետարանի գոյություն ունեցող կառավարման կազմակերպական կառուցվածքը հնարավորություն չէր տալիս ամբողջությամբ լուծելու առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնելու մարզպետի լիազորությունները: Հասարակական հարաբերությունների անընդհատ փոփոխությունները և պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումները թելադրեցին կառուցվածքի վերափոխություններ: Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի աշխատակիցների աշխատանքային պայմանների համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնել մարզպետարանը համապատասխան տեխնիկայով՝ յուրաքանչյուր աշխատակցին մեկ համակարգիչ սկզբունքով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջինս ենթադրում է նաև նոր որակական պահանջների ձևավորում մարզպետարանի աշխատակիցների նկատմամբ՝ առաջացնում է լրացուցիչ ուսուցման անհրաժեշտության, քանի որ որոշակի մակարդակի հասնելու համար քաղաքացիական ծառայության կողմից իրականացվող ներկայիս ուսուցման մակարդակը դեռ բավարար չէ:


Մարզպետ
Մարզպետի տեղակալ
Մարզպետի օգնական
Մարզպետի օգնական
Մարզպետի տեղակալ
Աշխատակազմի ղեկավար /1/ տեղ /1/
ֆին. և սոցիալ-տնտեսական զարգացման վարչ./1/
Ֆինանսատնտե սագիտական բաժին /5/
Հաշվապ. հաշվառ. բաժին /3/
Առողջ. և սոցիալ. ապահով. վարչ /1/
Առողջապահ բաժին/4/
Սոցիալ. ապահով բաժին/3/
ՏԻՄ և ՀԳՄ գործ. համակարգ վարչ./1/
ՏԻՄ և համայնք. ծառ. հարց բաժին /3/
ՀԳՄ-ների տարած. ստորաբ. գործ. համակարգ. /1/
Քաղշին վարչ /1/
Ճարտ.պետաշին բաժին /3/
Բնակ և ենթակառուցված քների /1/
Տրանս և ճանշին. բաժին/3/
Գյուղտնտ և բնապահպ վարչ /1/
Գյուղտնտեսության բաժին/3/
Բնապահպանու թյան /1/
Կրթ. մշակ. սպորտի բաժին /1/
Կրթ. բաժ/5/
Մշակ. և սպորտի բաժ/3/
Քարտուղարություն /1/
Ընդհանուր բաժին /5/
Վարչատնտ. /1/
Հողշին և հողօգ. բաժին-մարզային հողային պետ. տեսչ /3/
Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին/3/
Տեղեկ և հասարակ. հետ կապերի բաժին/2/
Զարգաց ծրագրերի և վերլուծ բաժին /2/
Իրավաբ. բաժին /2/
Անձնակազմի կառավարման բաժին /3/
Առանձնացված ստորա-բաժանում Արտաշատի ՄԾՏԳ /13/
Մասիսի ՄԾՏԳ /10/
Վեդու ՄԾՏԳ / 9/

11.1.4. Քաղաքացիական ծառայություն

754. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: 2001 թվականից տարածքային կառավարման համակարգում և հանրապետական գործադիր մարմինների համակարգում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական ծառայողներից, որպես բարձրագույն քաղաքացիական ծառայող ճանաչելով աշխատակազմի ղեկավարներին: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ դասակարգվեցին և նկարագրվեցին մարզպետարանի, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների մարզում գործող տարածքային ծառայությունների քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվող փոփոխությունները ենթաօրենսդրական ակտերի ընդունումը նպաստում է քաղաքացիական ծառայության համակարգի կայացմանը:

755. Ծառայության մյուս տեսակների համար համապատասխան օրենսդրության ստեղծումը և այդ համակարգերի կայացումը խնդիր է առաջադրում վերանայելու քաղաքացիական, համայնքային և ընդհանրապես հանրային ծառայության հայեցակարգը: Ներկայումս անհրաժեշտ է ապահովել այդ ծառայությունների միջև ներդաշնակեցումը, ձևավորել կապ՝ ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու համար: Այս իրավիճակը պահանջում է հանրային ծառայության մասին օրենսդրության ստեղծում՝ ապահովելով հանրային ծառայության միասնական սկզբունքներ:

756. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների համակարգված գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

11.1.5. Էլեկտրոնային կառավարում

757. Մարզպետարանում իրականացվում են տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արարատի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական էջով (http://ararat.region.am):-Դա

հնարավորություն է տալիս որոշակիորեն հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը: Սա առաջին քայլն է, որին պետք է հետևի կայքերում տեղադրված տեղեկատվության անընդհատ թարմացումը:

758. Մարզպետարանի աշխատակիցների մեծ մասի համակարգչային ոչ բավարար գիտելիքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ օգտագործելու գոյություն ունեցող համակարգը: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է լուծել մարզպետարանը՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածությանբ ապահովելու հարցը: Ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բնագավառում արհեստավարժ թիմ: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում տեղեկատվության արհեստավարժ ընդունման, ստացման մշակման և փոխանցման անհրաժեշտությունն ավելի կարևոր է դառնում: Պետական կառավարման ոլորտում ներկայումս տեղեկատվությունը դարձել է հզոր ռեսուրս, որն անհրաժեշտ է ճիշտ կառավարել:

759. 2011-2014 թվականների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը:

1) Ապահովել մարզպետարանի ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառումը:

2) Մարզպետարանի պաշտոնական տեղեկատվության շրջանառությունն իրականացնել էլեկտրոնային տարբերակով:

3) Ստեղծել ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին:

4) Մշակել պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմ:

5) Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց Արարատի մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

6) Մարզին առնչվող մի շարք գործընթացներ, այդ թվում նաև գնումների գործընթացը կազմակերպել Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

760. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ծրագրով գերակա խնդիր է համարվել նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, որի լուծման քայլ է հանդիսանում էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի ներդրումը ՀՀ մարզպետարաններում, ծրագրերի և փաստաթղթերի կազմումը, համակարգողների և օգտվողների ուսուցումը, շահագործման ընթացքում խորհրդատվությունը,

ինտերնետ կապով ապահովված ՀՀ համայնքների թվի մեծացումը, այդ համայնքների կայքերում ավագանիների որոշումների տեղադրման գործընթացի վերահսկողությունը:

11.2. Տեղական ինքնակառավարում

11.2.1. Համայնքային խնդիրներ

761. Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի /հետագա փոփոխություններով ու լրացումներով/՝ Արարատի մարզն ունի 97 բնակավայր, որոնք ընդգրկված են 97 համայնքների կազմում: Համայնքների վարչական սահմանների նկարագիրը հաստատված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով:

Աղյուսակ 11.1 Արարատի մարզի համայնքներն ըստ մշտական բնակչության թվի 2009թ. հունվարի 1-ի դրությամբ ունեն հետևյալ պատկերը

Հ.Հ.	Դասակարգում ըստ բնակչության թվաքանակի	Համայնքների թիվը	Տոկոս մարզի համայնքների թվի նկատմամբ	Բնակչության ընդհանուր թիվը տվյալ համայնքներում /մարդ/	Տոկոս մարզի բնակչության թվի նկատմամբ
1	2	3	4	5	6
1	Մինչև 100 բնակիչ	0	0	0	0
2	101-200 բնակիչ	0	0	0	0
3	201-500 բնակիչ	4	4.1	931	0.34
4	501-1000 բնակիչ	14	14.4	10505	3.8
5	1001-3000 բնակիչ	56	57.8	107117	38.6
6	3001-5000 բնակիչ	13	13.4	41392	14.9
7	5001-10000 բնակիչ	6	6.2	36758	13.2
8	10 000-ից ավելի բնակիչ	4	4.1	80997	29.2
Ընդամենը		**97**	**100**	**277700**	**100**

762. Ներկայացված աղյուսակի վերլուծությունից պարզվում է, որ մարզի 97 համայնքներից 18-ը՝ /18.5 %/ ունեն մինչև 1000 բնակիչ, 1001-3000 բնակիչ ունեն 56 համայնքներ՝ /57.8 %/, 3000-ից ավելի բնակիչ՝ 23 համայնքներ /23.7%/: Մարզի 93 գյուղական համայնքներից 5-ը բնակչության թվով շատ փոքր են: Այդ առումով նպատակահարմար է խոշորացնել համայնքները՝ միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ:

763. Կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումը կարելի է համարել ապակենտրոնացման արդյունավետության բարձրացման որոշակի քայլ: Հայաստանում ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է տարածքային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի

լիազորությունների և իրավասությունների փոխանցմամբ: Ապակենտրոնացման քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքների որոշակի ներուժ, որը փոքր համայնքներում բացակայում է: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել նաև միջազգային կազմակերպություններին:

764. Մարզի համայնքների խոշորացման խնդիրը քննարկվել է մարզպետարանում և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակները:

765. Ստորև ներկայացվում է մարզի համայնքների խոշորացման հնարավոր տարբերակ:

Աղյուսակ 11.2 Արարատի մարզի համայնքների խոշորացման հնարավոր տարբերակներ

Հ.Հ.	Համայնքի կենտրոնը	Միավորվող համայնքները
1	Հովտաշատ	Հովտաշատ
		Սիփանիկ
2	Լուսաշող	ՈՒրցալանջ, Լանջառ,
		Լանջանիստ

766.**Կարողությունների ներկա վիճակը տեղական ինքնակառավարման մարմիններում**. Մարզի համայնքների կայացման կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների բարձրացումը: Չնայած համայնքները իրավական հարթության վրա գոյություն ունեցող սուբյեկտներ են. բայց նրանց կարողությունները դեռևս թույլ են և ենթակա են հզորացման:

767. Համայնքների կարողությունների բարձրացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Դրական տեղաշարժերից է նաև, որ վերջին տարիներին պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Սակայն չլուծված հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովվումը: Երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների ապահովումն է կադրերի հարցում, որը թույլ կտա ստանձնել նոր լիազորություններ և առավել արդյունավետ կառավարել տեղերում:

768. Կարողությունների զարգացման մեթոդներից են ուսուցողական դասընթացները, որոնք պետք է կազմակերպվեն տեղական և կենտրոնական մակարդակով կառավարության կամ դոնորների կողմից:

769. Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսականությունն է և բազաների հստակեցումը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների

բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները:

770. Հայաստանում ՏԻՄ-երն ունեն բազմաթիվ խնդիրներ՝ կապված կարողությունների և ռեսուրսների լուրջ պակասի հետ,որը մասնավորապես վերաբերվում է ինչպես ֆիսկալ և ֆիզիկական կարողություններին, այնպես էլ մարդկային ռեսուրսներին: Ներկայումս տեղական ինքնակառավարման համակարգում բարձրորակ մասնագետների ընդգրկման հսկայական կարիք կա : Հմտությունների պակասն այդ ոլորտում չի կարող խթանել տնտեսության զարգացումը և սոցիալական ծառայությունների մատուցումը: ՌԻսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման ոլորտում ցածր աշխատավարձը պատճառ է ցածր մոտիվացիայի և ցածր արդյունավետության, որը բերում է աշխատակազմի հաճախակի փոփոխության և բացակայությունների՝ լուրջ խոչընդոտներ ստեղծելով ՏԻՄ-երի կարողությունների ձևավորման գործընթացում: Աշխատողների զգալի մասը, հատկապես գյուղական համայնքներում, ստանում է չնչին աշխատավարձ: Գոյատևելու նպատակով նրանցից շատերը ներգրավվում են առևտրի և սպասարկման ոլորտում:

771. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների լիարժեք իրականացման տեսանկյունից անչափ կարևորվում է կառավարման տարբեր մակարդակների միջև լիազորությունների ճիշտ տեղաբաշխումը: Դա իր հերթին կարող է նպաստել գործառույթների կատարման և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը: ՏԻՄ-երի լիազորությունների ընդլայնումը և համապատասխան պատասխանատվության սահմանումը կնպաստի նրանց հզորացմանը և զարգացմանը:

772. ՏԻՄ-երին նոր պարտադիր լիազորությունների տրամադրումն անհրաժեշտ է հետևյալ բնագավառներում.

1) կադաստրի, նոտարների կողմից կատարվող գործողությունները կատարվեն համայնքների կողմից տրված տեղեկանքների հիման վրա:
2) հասարակական կարգի պահպանում,
3) սոցիալական ապահովություն,
4) հարկային ոլորտ,
5) բնակչության հաշվառում և գրանցում

773. ՏԻՄ-երի դերի և հեղինակության բարձրացման առումով կարևոր է համայնքային ոստիկանության ստեղծումը:

774. Ներկայումս ՀՀ-ում սոցիալական ապահովության համակարգը պետական է: Բնակչությանը սոցիալական ծառայություններ են մատուցում կենտրոնական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումները: ”Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքով ՏԻՄ-երին վերապահված համայնքի տարածքում սոցիալական օգնության ծառայության կազմակերպումը,որպես պատվիրակված լիազորություն է, սակայն, դրա փոխանցումը համայնքներին կատարվում է շատ դանդաղ: Անհրաժեշտ է ներկայումս գործող ընտանեկան

նպաստների բաշխման հարցը պատվիրակել ՏԻՄ - երին: Կառավարությունը պետք է սահմանի միայն նպաստառու ընտանիքների որոշման կարգը, պետբյուջեից տրամադրվող ֆինանսների չափը, ինչպես նաև իրականացնի վերահսկողությունը:

775. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ՏԻՄ-երին է պատվիրակվել քաղաքացիության կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպումն այն համայնքներում, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները: Դրանք հիմնականումմ այն քաղաքային համայնքներում են, որոնք խորհրդային տարիներին շրջկենտրոններ կամ հանրապետական քաղաքներ են եղել: Գյուղական համայնքների բնակչությունը տարբեր պատճառներով ոչ միշտ է օգտվում դրանց ծառայություններից: Շատ են դեպքերը, երբ ծնունդներն ու մահերը չեն գրանցվում: Ճիշտ կլինի, եթե այդ լիազորությունը ծնունդների ու մահերի գրանցման մասով տրվի բոլոր ՏԻՄ-երին: Դրա արդյունքում ավելի ճիշտ կկատարվի բնակչության հաշվառումը, ինչպես նաև բոլոր համայնքները կգտնվեն հավասար պայմաններում և դրանցից շատերը կունենան բյուջեի լրացուցիչ եկամուտներ: ՏԻՄ-երին նոր լիազորությունների փոխանցումը պետք է ուղեկցվի համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրմամբ:Այդ խնդիրը կարելի է լուծել 2 ճանապարհով.

1) տվյալ լիազորության իրականացման համար պետական բյուջեով նախատեսված միջոցների հստակեցում համայնքներին նպատակային սուբսիդիաների տրամադրում
2) առկա հարկերից մասնահանումների ամրագրում համայնքների բյուջեներում:

776. **Առաջին** լիազորությունը համայնքներին փոխանցելու դեպքում նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցները փոխանցվում են համայնքների բյուջեներին՝ պայմանով, որ դրանք ծախսվելու են միայն այդ նպատակով: Հետագա տարիներին այդ միջոցները կարող են ավելացվել անհրաժեշտության դեպքում:

777. **Երկրորդ** լիազորությունը անհրաժեշտ է անգամ առանց նոր լիազորությունների փոխանցման, քանի որ ներկայումս համայնքներն իրենց ունեցած բյուջեներով չեն կարողանում իրականացնել շատ լիազորություններ:

778. Համայնքների բյուջեների եկամուտների ավելացում կարելի է ապահովել նաև տեղական տուրքերի և վճարների շրջանակի ընդլայնման միջոցով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր համայնք ունի իր առանձնահատկությունները և շատ քիչ համայնքներ են կիրառում գործող տեղական տուրքերի ու վճարների լայն շրջանակ:

779. Անհրաժեշտ ենք համարում տեղական տուրքերի և վճարների ստորև ներկայացվող տեսակները ամրագրել համապատասխան օրենքում:

780. **Տրանսպորտը կայանելու վճա**ր :Յուրաքանչյուր համայնք կարող է ունենալ տրանսպորտի կայանման համար հատուկ տեղեր:

781. Տեղական ինքնակառավարման համակարգը պետական հատվածի մի մասն է և նույնպես ունի որոշակի ինքնուրույնություն: Իրենց իրավասությունների շրջանակում ՏԻՄ-երը ինքնուրույն են ընտրում իրենց գործընկերներին և ծավալում

համագործակցություն: Համագործակցության շրջանակներում կարող են ընդգրկվել համայնքային ռազմավարության,ծրագրերի և բյուջեի մշակման, դրանց իրականացման ու վերահսկման,տարբեր հիմնախնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման և այլ բնույթի աշխատանքները:

782. Որոշակի հաջողություններ կան համայնքների և տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների փոխհարաբերություններում: Այս կազմակերպությունները ամենօրյա խորհրդատվություն են տրամադրում համայնքներին, պաշտպանում են դրանց շահերը,ինչպես նաև դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ ծրագրեր են իրականացնում համայնքների կարողությունների ձևավորման ու ամրապնդման ուղղությամբ: Համայնքների քաղաքացիական հասարակության մյուս սուբյեկտների ու մասնավոր հատվածի համագործակցությունը տեղական ինքնակառավարման կարողությունների լրացման առումով բավականին թույլ է: Այս ոլորտում դեռևս չեն ձևավորվել մասնագիտացված խորհրդատվական կազմակերպություններ, որի հիմնական պատճառներից է դրանց նկատմամբ պահանջարկի բացակայությունը:

783. ***Տեղեկատվական վերլուծական կենտրոնների ստեղծումը համայնքներում***: Տեղական ինքնակառավարման կարողությունների ձևավորման ու ամրապնդման գործում կարևոր դեր ու նշանակություն ունի համայնքային տեղեկատվական-վերլուծական կենտրոնների ստեղծումը: Այն, մի կողմից կարելի է դիտարկել որպես տեղական ինքնակառավարման կարողություն և մյուս կողմից որպես դրա ամրապնդման կարևոր միջոց:

784.ՏԻՄ-երի կառավարումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվական բանկ, որն իր մեջ կներառի հետևյալ ցուցանիշները`

1) համայնքների բյուջեների կանխատեսում,պլանավորում և վարում
2) համայնքի էլեկտրոնային քարտեզի և հատակագծի մշակում
3) Համայնքի բնակչության ռեգիստր
4) անշարժ գույքի և հողի ռեգիստր
5) գործավարություն և արխիվացում
6) տեղեկատվական համակարգ
7) կառավարման ապարատի աշխատանքների ավտոմատացում
8) տեղեկատվական բազայի ստեղծում`կառավարման խնդիրների հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովվելու համար:

785. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց ,որ անհրաժեշտ է ձևավորել տեղական ինքնակառավարման աշխատակազմի գործունեության գնահատման նոր արժեքային համակարգ, խրախուսման նոր մեթոդներ, բարձրացնել վերջիններիս պաշտպանվածությունը:

786. Ամփոփելով այս բնագավառը առաջարկվում է մի շարք ռազմավարական նպատակներ ոլորտի արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

1) Մշակել վերապատրաստման պարտադիր նվազագույն փաթեթ՝տեղական ինքնակառավարման համակարգ մուտք գործող մարդկանց համար:

2) Աջակցել տեղական իշխանություններին վերապատրաստման սեփական հնարավորությունների ստեղծման գործընթացում: Այս ոլորտում պետք է օժանդակել համայնքների մարդկային ռեսուրսների կառավարման բաժինների զարգացմանը, որոնք աշխատակազմին կօգնեն՝ մշակել պաշտոնների ժամանակակից նկարագրեր գործունեության գնահատման ձևեր, վերապատրաստման անհատական ծրագրեր, ինչպես նաև կապահովեն աշխատանքային առաջխաղացման մասին խորհրդատվությունը:

3) Ուժեղացնել ՀՀ տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտը: Ներկայումս արտահայտված անհամապատասխանություն գոյություն ունի տեղական ինքնակառավարման կարողությունների, համայնքային ծառայությունների մատակարարման որակի և գործող իրավական նորմատիվ դաշտի միջև:

4) Զարգացնել կարողությունների ամրապնդման մեթոդները: Տեղական ինքնակառավարման կարողությունների ամրապնդման և ուսուցման ցանցի ընդլայնման կարևոր մեթոդներից է " Դասավանդողների ուսուցանման " մեթոդը:

5) Մարդկային ռեսուրսների կառավարումը համայնքներում: Հայաստանում անհրաժեշտ է զարգացնել մարդկային ռեսուրսների համակարգը, վերջինիս գնահատման, արժևորման, աշխատակիցների միջև փոխադարձ հավատի ձևավորման արժեհամակարգը կամ սխեման:

11.2.2. Համայնքային ծառայություն

787. 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. փետրվարի 26-ից:

788. Օրենքով ամրագրված են ՀՀ-ում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորված են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, պաշտոնների նշանակման, ատեստավորման, նրանց իրավական վիճակի, կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Համայնքային ծառայության ներդրման գործընթացը ենթադրում էր որոշակի ժամկետներում որոշակի քայլերի հերթականությամբ իրականացում: Մարզի 97 համայնքներում ներդրվեց համայնքային ծառայությունը: ՀՀ տարածքային կառավարման նախարարի համապատասխան հրամաններով հաստատվեցին համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, խմբերում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու և մրցույթ ու ատեստավորում անցկացնելու կարգերը և մի շարք այլ իրավական ակտեր: ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմում 2007 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ստեղծվեց մարզի համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների

շտեմարան, որը յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ նախատեսում է 48 սյունակի լրացում: Շտեմարանի վարումն իրականացվում է մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ ԳՀ վարչության կողմից, տվյալները պարբերաբար թարմացվում են և ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

789. ՀՀ Արարատի մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների թիվը 576-ն է, որից 102-ը՝ գլխավոր պաշտոններ, 137-ը՝ առաջատար պաշտոններ, 337-ը՝ կրտսեր պաշտոններ:

790. Կայացել է մրցույթ՝118 պաշտոնի համար: Ատեստավորվել են 238 համայնքային ծառայողներ: Հայտարարված մրցույթներում դիմողներ չեն եղել ՝ 31 տեղի համար:

791. ՀՀ կառավարության որոշմամբ քաղաքացիական կացության ակտերի գրանցման Արտաշատի, Արարատի, Մասիսի, Վեդու տարածքային բաժինները, որպես առանձնացված ստորաբաժանումներ, մտան իրենց քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի կառուցվածքներ՝ թվով 8 համայնքային ծառայողներով:

792. Ավարտվել են համայնքային ծառայողների ատեստավորումները: Բոլորին շնորհվել են համապատասխան դասային աստիճաններ:

Աղյուսակ 11.3 ՀՀ Արարատի մարզի համայնքային ծառայության պաշտոնների համալրումը 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ

Հ.Հ	Պաշտոնների խմբերի, ենթախմբերի անվանումը	Պաշտոնների քանակը մարզում	Այդ թվում՝		Պաշտոնների համալրման տոկոսը
			զբաղեցրած պաշտոններ	Թափուր պաշտոններ	
1	Գլխավոր պաշտոններ	102	100	2	
1.1	Առաջին ենթախումբ	3	3	0	
1.2	Երկրորդ ենթախումբ	94	92	2	
1.3	Երրորդ ենթախումբ	5	5	2	
2	Առաջատար պաշտոններ	137	127	10	
2.1	Առաջին ենթախումբ	13	13	0	
2.2	Երկրորդ ենթախումբ	2	2	0	
2.3	Երրորդ ենթախումբ	122	112	10	
3	Կրտսեր պաշտոններ	337	319	18	
3.1	Առաջին ենթախումբ	170	165	5	
3.2	Երկրորդ ենթախումբ	106	97	9	
3.3	Երրորդ ենթախումբ	61	57	4	
Ընդամենը համայնքային ծառայության բոլոր պաշտոնները		**576**	**546**	**30**	

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության տվյալներ

793. Ծրագրավորվող 2011-2014 թվականներին, համաձայն օրենսդրության պահանջների, պետք է կազմակերպվի համայնքային ծառայողների շարունակական

վերապատրաստումը, որին կհետևի ատեստավորումը: Դրա համար անհրաժեշտ է Համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովներին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով, համակարգիչներով, ծրագրերով

1) Կազմակերպել համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստում:

2) Ապահովել համայնքային ծառայության օրենսդրական փաստաթղթերի և հարցաշարերի տրամադրումը համապատասխան հանձնաժողովներին:

3) Համայնքային ծառայության գործընթացի ներդրման ընթացքում առաջացած խնդիրները պարբերաբար քննարկել և անհրաժեշտության դեպքում, օրենսդրական նոր փոփոխությունների նախագծեր մշակել և դրանք սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

4) Մարզում համայնքային ծառայության ներդրման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվող տեղեկատվության տրամադրման մեխանիզմները հստակեցնել, տեղեկատվության առանձին ձևերը պարզեցնել, մարզպետարանի կողմից ներկայացվող տեղեկատվության, մասնավորապես՝ համայնքային ծառայողների վերաբերյալ տեղեկատվության ամփոփ ձևեր սահմանել:

11.2.3. Տեխնիկական ապահովվածություն

794. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը: Համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

795. Անհրաժեշտ է խնդիր դնել մինչև 2011 թվականը մարզի բոլոր համայնքները ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով ապահովելու համար: Համակարգչին տիրապետելու հմտությունները պետք է ներառվեն համապատասխան համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում՝ իրականացնելով ծրագրերի ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

796. Համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չէ օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Խնդրի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը Հայաստանի Իրավական Տեղեկատվական համակարգի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակումից օգտվելն է՝ ինտերնետային կայքի միջոցով: Ներկայում գործում է www.arlis.am կայքը: Համակարգի բաց տեղադրումը ինտերնետում հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած իրավական ակտի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակը, որը համայնքների կողմից գործող օրենսդրության վերաբերյալ

տեղեկացվածության մակարդակի բարձրացման կարևոր գործոն է:

11.2.4. Համայնքների զարգացում

797. Տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանում սկսել են խորանալ տնտեսական զարգացմանը զուգընթաց:Դա հիմնականում արտահայտվել է Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով: Արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և Հայաստանի մարզերի, այդ թվում նաև Արարատի մարզի /հատկապես գյուղերի/ միջև անընդհատ աճել է՝ վերջին տարիներին հասնելով անցանկալի չափերի: Տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա չվերահսկվող աճը խիստ անցանկալի է: Մասնավորապես, անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը: Հայաստանի մարզերի՝ մասնավորապես Արարատի մարզի զարգացումը կնպաստի այս հանրապետական նշանակության խնդրի լուծմանը, որի ուղիները նախանշվել են ՀՀ կառավարության կողմից:

798. Մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է մարզի և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովումը: Ոլորտային կտրվածքով մարզի զարգացման ծրագիրը բաժանված է ոլորտների և յուրաքանչյուր ոլորտի ծրագրերի շահառուները բնակվում են կոնկրետ համայնքներում: Մյուս կողմից, մարզի զարգացման ծրագիրը կարելի է բնորոշել որպես մարզի կազմում ընդգրկված համայնքների զարգացման ծրագրերի հանրագումար: Ուստի մարզի և համայնքների ծրագրերի ներդաշնակությունը խիստ կարևոր գործոն է:

799. Մարզի զարգացման ծրագրում համայնքները պետք է դիտարկվեն որպես շահառուներ, իսկ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները կատարողներ: Այս առումով նպատակահարմար է հնարավորինս կոնկրետացնել համայնքների ՏԻՄ-երի, պետական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում: Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմման վրա մարզպետարանի կողմից պատշաճ ուշադրություն է դարձվել: Չնայած նրան, որ տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանել, այնուամենայնիվ, մարզպետարանը համայնքների ծրագրերի կազմման միասնական մեթոդաբանական ուղեցույցներ է պատրաստել և տրամադրել համայնքներին: Դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը որոշակիորեն համապատասխանեցվել են միասնական կառուցվածքային չափանիշներին, ինչի հետևանքով որոշ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը իրատեսական որոշակի հիմնավորումներ ունեն:

800. Մարզի համայնքների մի շարք հիմնախնդիրներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնահատվել են առավել առաջնահերթ,

որոնց լուծման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 27 մլրդ 683 մլն 500 հազ. դրամ (Հավելված 11.1):

801. Նկատի ունենալով ներկա իրողությունը, ինչպես նաև մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը, 2011-2014 թվականներին անհրաժեշտ է իրավական հարթության վրա ունենալ համայնքների զարգացման ծրագրերի մշակման, իրագործման միասնական մեթոդաբանություն, որը թույլ կտա խուսափել կրկնողություններից և բարձրացնել սուղ միջոցների օգտագործման արդյունավետությունը: Արարատի մարզպետի աշխատանքային ծրագրի շրջանակներում, յուրաքանչյուր տարի կատարվում է այցելություններ մարզի տարբեր համայնքներ, որտեղ բարձրացվում են ամենատարբեր բնույթի հարցեր և խնդիրներ: Հիմք ընդունելով մարզպետի այցերի, խորհրդակցությունների ընթացքում բարձրացված խնդիրները և համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, համայնքների ղեկավարների հետ համատեղ կազմվում է յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ հիմնախնդիրների կտրվածքով տվյալների բանկ, որոշվում է ավելի առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող խնդիրների խումբը և այդ հիմքով կազմվում է փաստաթուղթ ՀՀ Արարատի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների մասին, որի հիման վրա էլ հետագայում կազմվում են համայնքների զարգացման ծրագրերը:

802. Համայնքների զարգացման կարևոր նախապայմաններ են.

1) Համայնքային ենթակառուցվածքները. (ճանապարհներ, ջրամատակարարման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ)

2) Համայնքի բնակիչների ներուժը՝ սեփական հմտությունները և գիտելիքները, ընդհանուր նպատակի համար գործելու իրենց ընկալումը, փոխադարձ հանդուրժողականությունը

3) Քաղաքացիական հասարակության և հանրային կազմակերպությունների ցանցի առկայությունը, համայնքի պաշտոնական և ոչ պաշտոնական ինստիտուցիոնալ կազմը

4) Համայնքի բոլոր բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացումը:

5) 2011-2014 թվականներին ջանքեր պետք է ներդրվեն միջհամայնքային համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հաշվի առնելով համայնքների միությունների արդեն իսկ կուտակած որոշակի փորձն ու համագործակցության դրսևորումները, պետք է միջոցներ ձեռնարկվեն նաև միջհամայնքային միավորումների ստեղծման ուղղությամբ:

803. Համայնքների զարգացման խնդիրների լուծմանն օգնում է նաև համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ գործողություններ իրականացնել թույլ կողմերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

804. *Համայնքների ընդհանուր նպատակները և խնդիրները.*

1) պաշտպանել բնակիչների իրավունքներն ու շահերը
2) բարելավել բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները
3) ապահովել շենքերի և շինությունների շահագործումը
4) նպաստել կրթության օջախների նորմալ գործունեությունը
5) աջակցել մշակույթի և մարզական օջախներին
6) ստեղծել նոր աշխատատեղեր
7) բարելավել բնակչության սոցիալական պայմանները

805. ***Համայնքների զարգացման ռազմավարությունը*** Մարզի համայնքների զարգացման ռազմավարության առաջնահերթություններն են.

1) Տարածքային կառավարման բարելավում, տարածքային կառավարման թափանցիկության ապահովում,
2) Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում,
3) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում,
4) Մարզի համայնքների համար տեղեկատվական միասնական բանկի ստեղծում,
5) Միջհամայնքային միավորումների ստեղծում,
6) Մարզի բոլոր գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերին համակարգչով և տպող սարքով ապահովվում:

11.3. Քաղաքացիական հասարակություն

806. Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները: Ըստ փորձագետների կարծիքի՝ քաղաքացիական հասարակության երեք կարևոր բաղադրիչներն են պետության տնտեսական համակարգը, գաղափարախոսությունը և քաղաքական կառուցվածքը:

807. Արարատի մարզում այս երեք տարրերի համադրումը կարող է ապահովել քաղաքացիական հասարակության կայացման արդյունավետ ճանապարհ:

808. Արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը հենց ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երը պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային

գործընթացներն արդյունավետ համակարգելու նպատակով:.

809. 2011-2014 թվականների ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

810. Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար ներկայացնել մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնել գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներ և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրություններ:

811.Պարբերաբար կազմակերպել մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի այցելությունները համայնքներ, որոնց ժամանակ մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

812. Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ պետք է հրապարակվի հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և առաքվեն բոլոր համայնքներ:

813. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ ավելի մասնակից դարձնել մարզի խորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

814. Մարզպետարանի, մարզում գործող պետական մարմինների գործունեությունը հնարավորինս հրապարակային, թափանցիկ և պատասխանատու դարձնելու նպատակով, անհրաժեշտ է ներդնել պատասխանատու մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետվության նոր համակարգ: Այս համակարգի ձևավորումը նույնպես պետք է իրականացվի մարզում գործող ոչ-պետական կազմակերպությունների գործուն մասնակցությամբ:

815. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում արդյունավետ կլինի.

1) առավելագույնս կատարելագործել և հստակեցնել պետական ծառայության հիմքերը,
2) հետևողականորեն բարձրացնել զանգվածային լրատվական միջոցների և հասարակական միավորումների դերը պետական հակակոռուպցիոն ռազմավարության քարոզչության խնդրում:

816. Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի հրապարակային հասարակության իրազեկման և նրա կողմից վերահսկման պայմաններում: Դա պետք է արտահայտվի ինչպես կոռուպցիայի հետևանքների, այնպես էլ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ իրազեկմամբ, ինչը կօգնի վերականգնել

հասարակության վստահությունն ու հավատն արդարացի և անաչառ պետական ծառայության նկատմամբ:

817. Փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպել համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

818. Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

819. Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումները տեղադրել տվյալ համայնքի հանրության համար մատչելի վայրերում:

820. Հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

821. Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր:

822. Համայնքներին խրախուսելու համար մարզպետարանում ստեղծել «Տարվա համայնք» պաշտոնական մրցանակաբաշխություն, որը կնախատեսի որոշակի ֆինանսական և այլ տիպի օգնություններ շահող համայնքին:

823. Տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ տարվում են հետևյալ աշխատանքները.

1) Համայնքային բյուջեների կազմման ուղղությամբ տարեսկզբին կազմակերպվում են քննարկումներ՝ համայնքների կողմից բյուջեների կատարման ցուցանիշների բարձրացման ուղղությամբ:

2) Բոլոր համայնքներում կազմակերպվում են հանրային լսումներ, որոնցում ներկա են մարզպետարանի ներկայացուցիչներ: Խոշոր համայնքների լսումներին մասնակցել են մարզպետը և մարզպետարանի աշխատակազմը:

3) Կազմակերպվում են մարզխորհրդի նիստեր և խորհրդակցություններ մարզի համայնքների ղեկավարների մասնակցությամբ,

4) Կազմակերպվում են մարզային և համայնքային միջոցառումներ, որոնք լուսաբանվում են ԶԼՄ-ներով:

5) Հրավիրվում են սեմինար – խորհրդակցություններ համայնքի ղեկավարների և նրանց աշխատակազմերի մասնակցությամբ՝ պարզաբանվում և մեթոդական օգնություն է ցուցաբերվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման գործում:

6) Տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծման 13-ամյակի առթիվ՝ կարևորելով ՏԻՄ-երի դերը պետության կայացման գործում,կատարած աշխատանքների գնահատման արդյունքում, Խաչփարի համայնքապետը Հայաստանի Հանրապետության համայնքների զարգացման, տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների գործում ներդրած նշանակալի

ավանդի համար պարգևատրվել է Անանիա Շիրակացի հուշամեդալով, Մխչյանի համայնքապետը` Համայնքների միության անվանական ոսկե հուշամեդալով :

824. ՏԻՄ և ՀԳՄՏԾ աշխատանքների նկատմամբ ուշադրությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել համայնքների առկա խնդիրներին և տալ դրանց լուծումները:

825. Մարզում գործում են 15 քաղաքական կուսակցությունների տարածքային և մարզային բաժանմունքներ, 50 հասարակական կազմակերպություններ, որոնք մարզում հասարակական, քաղաքական ակտիվ գործունեություն են ծավալում:

12. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

12.1. Մարզի առավել վտանգավոր տարածքներ

826. Արարատի մարզը գտնվում է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում, այն իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք: Մարզը գտնվում է ծովի մակերևույթից 812-2971 մ բարձրության վրա, իսկ բնակավայրերը` 812-1980մ բարձրության վրա: Ունի կիսաանապատային կլիմա, նախալեռնային գոտիները սակավաջուր են, միջին տարեկան տեղումները կազմում են 250-300 մմ:

827. Բնակելի տարածքների համար արտահայտվում են հետևյալ բնակլիմայական պայմանները`

1) չոր ցամաքային, չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով.
2) բարեխառն, երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով:

828. ***Գետեր.*** Մարզի տարածքով են հոսում Արաքս և Հրազդան գետերը, իսկ մարզի տարածքում սկիզբ են առնում Արացոգետ գետը, Վեդի գետը իր Կոտուց, Խոսրով, Սպիտակաջուր, Քյուսուզ վտակներով և Ազատը իր Գողթ, Գիլան, Դարբանդ վտակներով: Մարզի տարածքով են անցնում նաև Արտաշատի, Կախանովի ջրանցքները և Նարեկ-Քաղցրաշեն-Այգեզարդ, Լանջազատ, Փամբուկ-Դարա սելավատարները: Աղյուսակ 12.1-ում ներկայացվում է գետերի վտանգավոր հատվածներն ըստ բնակավայրերի:

Աղյուսակ 12.1

Գետի անվանումը	Ջրի միջին մակարդակը (սմ) (դիտակետում)	Վարարումների ժամանակ ջրի առավելագույն մակարդակը (սմ)	Վտանգավոր (խոցելի) հատվածներ
1	2	3	4
Արաքս	251 (Արտաշատ)	510	ՌԴ սահմանապահ 4,11,13 ուղեկալներ
Հրազդան	154 (Մասիս)	355	Սիս,Նորամարգ,Գետափնյա,Գեղանիստ, Սիփանիկ, Ղուկասավան
Ազատ	135(Լանջազատ)	210	Լանջազատ,Արևշատ,Կանաչուտ, Դեղձուտ,Ազատավան,Բուրաստան, ՆշավանԴեղձուտ,Ազատավան, Բուրաստան, Նշավան
Վեդի	53(Վեդի)	185	Ուրցաձոր,Դաշտաքար,Գոռավան,ք.Վեդի, Ավշար, Եղեգնավան

829. ***Ջրամբարներ*** Արարատի մարզում են գտնվում Ազատի և Ջանգակատան ջրամբարները: Ազատի ջրամբարը գտնվում է Ազատ գետի վրա՝ Լանջազատ համայնքի տարածքում: Ջրամբարի ջրի ծավալը կազմում է 70 մլն $մ^3$, հայելու մակերեսը 285 հա, պատվարի բարձրությունը՝ 78 մ, երկարությունը գագաթով՝ 620 մ է, առավելագույն խորությունը՝ 73 մ: Ջրի միջին տարեկան հոսքը 229 մլն. $մ^3$ է :

830. Ջանգակատան ջրամբարը գտնվում է Արացոգետ գետի վրա՝ Ջանգակատուն համայնքի տարածքում: Ջրամբարի ծավալը կազմում է 1.4 մլն $մ^3$, պատվարի երկարությունը գագաթով 300մ է , առավելագույն խորությունը 35 մ է, ջրի հայելին 10.7 հա:

831. Ազատի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտում կհայտնվեն մարզի 33 բնակավայրեր, իսկ Ջանգակատան ջրամբարի պատվարի փլուզման դեպքում 2 բնակավայր: Մարզի բնակավայրերին վտանգ է սպառնում նաև Ապարանի և Ախուրյանի ջրամբարները, որոնց պատվարների փլուզման դեպքում ջրածածկման գոտում կարող են հայտնվել մարզի շուրջ 35 բնակավայր:

